



Բաց հասարակության հիմնադրամներ -
Հայաստան
OSF – Armenia



«Համայնքների ֆինանսիստների
միավորում» ՀԿ
CFOA

Ավագ դպրոցներում կրթության ֆինանսավորման և ֆինանսական արդյունավետության մոնիթորինգ

ԶԵԿՈՒՅՑ

- Ավագ դպրոցներում կրթության ֆինանսավորման վիճակի վերլուծություն
- Ավագ դպրոցների ֆինանսական արդյունավետության վերլուծություն և գնահատում

Երևան 2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	3
Հապավումների ցանկ	4
Համառոտագիր	5
Ներածություն	19
Հետազոտության նպատակները	20
Հետազոտության մեթոդաբանությունը	20
1. ՀՀ ավագ դպրոցներում կրթության ֆինանսավորման վիճակի վերլուծություն	23
1.1. ՀՀ ավագ դպրոցների համակարգի ընդհանուր նկարագրությունը	23
1.2. ՀՀ ավագ դպրոցների կառավարումը	25
1.3. ՀՀ ավագ դպրոցների ֆինանսավորումը	26
1.4. Կրթության համակարգի ֆինանսավորման ուժեղ և թույլ կողմերը	33
2. Հանրակրթական մոդելային ավագ դպրոցների ընտրությունը, դրանց վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը	36
3. Հանրակրթական մոդելային ավագ դպրոցների առկա վիճակի բնութագրումը, վերլուծությունը և գնահատումը	38
3.1. Կրթության համակարգային ընդհանուր (ոչ ֆինանսական) ցուցանիշների սահմանումը և գնահատումը	38
3.2. Կրթության որակի (ոչ ֆինանսական) ցուցանիշների սահմանումը և գնահատումը	45
3.3. Կրթության ֆինանսավորման և ֆինանսական արդյունավետության (ֆինանսական) ցուցանիշների սահմանումը և գնահատումը	51
4. Հանրակրթական մոդելային ավագ դպրոցների գործունեության հիմնախնդիրների և ֆինանսական արդյունավետության վրա ազդող գործոնների բացահայտումը, դրանց ազդեցության չափի վերլուծությունը և գնահատումը	59
4.1. Կրթության համակարգային ընդհանուր հիմնախնդիրները և գործոնները	60
4.2. Կրթության որակի հիմնախնդիրները և գործոնները	66
4.3. Կրթության ֆինանսավորման և ֆինանսական արդյունավետության հիմնախնդիրները և գործոնները	81
Եզրակացություններ	87
Առաջարկություններ	99
Հավելվածներ	
1. Մոդելային 18 ավագ դպրոցների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը՝ բացարձակ ցուցանիշների տեսքով	103
2. Մոդելային 18 ավագ դպրոցների վերաբերյալ տեղեկատվությունը՝ հարաբերական ցուցանիշների տեսքով	111
3. Սոցիոլոգիական հետազոտության քանակական և որակական արդյունքները	116

ՆԱԽԱԲԱՆ

Սույն զեկույցում տեղ գտած տեսակետների և վերլուծությունների հեղինակը <Համայնքների ֆինանսիստների միավորում> (ՀՖՄ) ՀԿ-ն է, և նյութի բովանդակության համար պատասխանատու է միայն ՀՖՄ-ն: Դրանք արտահայտում են հեղինակների կարծիքը և հաստատված չեն Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի կամ խորհրդի կողմից, հետևաբար չեն ներկայացնում Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի դիրքորոշումներն ու տեսակետները: Սույն զեկույցի բովանդակությունը կարող է չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի տեսակետներին:

Սույն զեկույցի թողարկումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ <Ավագ դպրոցներում կրթության ֆինանսավորման և ֆինանսական արդյունավետության մոնիթորինգ> թիվ 18704 ծրագրի շրջանակներում:

Սույն ծրագիրը ՀՖՄ-ի կողմից իրականացվել է 2014թ. փետրվար – օգոստոս ամիսների ընթացքում, թիրախային ՀՀ 5 մարզերից և Երևան քաղաքից ընտրված հանրակրթական մոդելային 18 ավագ դպրոցներում:

Սույն զեկույցը <Ավագ դպրոցներում կրթության ֆինանսավորման և ֆինանսական արդյունավետության մոնիթորինգ> ծրագրի շրջանակներում կատարված հետազոտության արդյունքն է և վերաբերում է ՀՀ հանրակրթական ավագ դպրոցների ֆինանսավորման և ֆինանսական գործունեության արդյունավետության հիմնախնդիրներին և դրանց լուծման ուղիներին:

Ծրագրի անձնակազմը շնորհակալություն է հայտնում հետազոտությանը մասնակցած բոլոր աշակերտներին, ծնողներին, մոդելային դպրոցների տնօրեններին, մանկավարժներին, փորձագետներին՝ տվյալներ տրամադրելու, հարցումներին մասնակցելու, իրենց արժեքավոր տեսակետների և գնահատականների համար:

Ծրագրի անձնակազմը շնորհակալություն է հայտնում ՀՀ կրթության և գիտության նախարարության ղեկավարությանը, հանրակրթության և ֆինանսական վարչությունների մասնագետներին՝ հետազոտությանը մեծապես աջակցելու և փորձագիտական կարծիք ներկայացնելու համար:

Հետազոտական թիմը շնորհակալություն է հայտնում Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան գրասենյակին՝ հետազոտության թեման կարևորելու և հետազոտության ընթացքում մշտական աջակցություն ցուցաբերելու համար:

Ծրագրի ղեկավար՝ Վահան Մովսիսյան

Ծրագրի ֆինանսական կառավարման փորձագետներ՝ Դավիթ Թումանյան, Վահրամ Շահբազյան

Ծրագրի սոցիոլոգիական հետազոտության ղեկավար՝ Յուլիանա Մելքունյան

Ծրագրի սոցիոլոգ-մասնագետներ՝ Նվարդ Մելքոնյան, Մարիամ Մխիթարյան, Աննա Խաչատրյան,

Անահիտ Հարությունյան, Արմինե Շահբազյան, Շողիկ Արշակյան

Ծրագրի համակարգող՝ Արթուրյան Արտաշեսյան

<Համայնքների ֆինանսիստների միավորում> ՀԿ, info@cfoa.am

Սեպտեմբեր, 2014թ.

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ ԿԳՆ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
ՀՀ ՖՆ	ՀՀ ֆինանսների նախարարություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ԲՈՒՀ (բուհ)	Բարձրագույն ուսումնական հաստատություն
ՄՄՀ	Միջին մասնագիտական հաստատություն
Ա/դպրոց	Հանրակրթական ավագ դպրոց
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Ներածություն

Ներկայումս Հայաստանում կրթության բնագավառի խնդիրներից են ա/դպրոցի կայացումը և կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունն ու քաղաքացիների՝ իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը¹:

2006-2012թթ. ընթացքում Հայաստանում իրականացվեցին 12-ամյա հանրակրթական համակարգին անցման և եռամյա կրթակարգով առանձին գործող ա/դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագրերը: Այդ բարեփոխումների իրականացման արդյունքում, ՀՀ հանրակրթական միջնակարգ դպրոցների մի մասը վերակազմակերպվեց ա/դպրոցների: Դրան զուգահեռ, որոշակի փոփոխություններ կատարվեցին նաև հանրակրթական դպրոցների ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևում: Մասնավորապես, գործակից սահմանվեց ա/դպրոցների համար: 2014 թվականին նոր փոփոխություններ կատարվեցին ա/դպրոցների ֆինանսավորման բանաձևում, որի նպատակն էր տարանջատել ուսուցչական և ոչ ուսուցչական անձնակազմերի ֆինանսավորումը:

Հետազոտության նպատակները

Սույն հետազոտության նպատակներն են՝

- ուսումնասիրել և վերլուծել ՀՀ ա/դպրոցների ֆինանսավորման գործող համակարգի վիճակը, առավելությունները և թույլ կողմերը, վերհանել առկա հիմնախնդիրները, թերություններն ու բացթողումները, մշակել և ներկայացնել եզրակացություններ ու առաջարկություններ դրանց լուծման վերաբերյալ:
- ուսումնասիրել, վերլուծել և գնահատել պետական հանրակրթական ծրագրեր իրականացնող ա/դպրոցների ֆինանսական գործունեության արդյունավետությունը, բացահայտել և վերհանել այդ ուղղությամբ առկա հիմնախնդիրները, գործոնները և միտումները, մշակել և ներկայացնել եզրակացություններ ու առաջարկություններ դրանց լուծման ուղիների վերաբերյալ:

Հետազոտության մեթոդաբանությունը

Սույն հետազոտությունը կատարելիս օգտագործվել են տարբեր քանակական և որակական մեթոդներ, որոնք հիմնված են տվյալների առաջնային և երկրորդային

¹ <Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիր> ՀՀ օրենք, հավելված, կետ 7

աղբյուրների վրա: Վերլուծություններն արվել են ՀՀ օրենսդրության, ռազմավարական ու ընթացիկ ծրագրերի ուսումնասիրության և փորձագիտական գնահատման, ինչպես նաև սոցիոլոգիական հարցումների անցկացման և ամփոփման հիման վրա:

Դրված խնդիրների լուծման համար օգտագործվել է <ծախսեր-օգուտների վերլուծության> (cost-benefit analysis) մեթոդը: Ընտրված մեթոդաբանությամբ ներդրված ռեսուրսների և ա/դպրոցի կողմից կատարված ծախսերի դիմաց առանձնացվել են ա/դպրոցի շահառուների (սովորողների, ծնողների, հանրության) ստացած օգուտները և դպրոցի ֆինանսավորման ու ֆինանսական արդյունավետության վրա ազդող գործոններն՝ ըստ որոշակի ուղղությունների: Տվյալների հուսալիության բարձրացման և հետազոտության արդյունավետության ապահովման նպատակով՝ համադրվել և փոխլրացվել է տարբեր աղբյուրներից ստացված տեղեկատվությունը:

Հետազոտության դրված նպատակներին հասնելու համար իրականացվել են մի շարք գործողություններ ու միջոցառումներ, որոնք ապահովել են հետազոտության արդյունավետ իրականացումը, դրանք են՝

- 1) ՀՀ ա/դպրոցներում կրթության ֆինանսավորման վիճակի ուսումնասիրություն և վերլուծություն.
- 2) Ա/դպրոցների ուսումնասիրություն և մոդելային ա/դպրոցների ընտրություն, դրանց վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության հավաքագրում և ուսումնասիրում.
- 3) Մոդելային ա/դպրոցների առկա վիճակի վերաբերյալ հարաբերական ցուցանիշների սահմանում և գնահատում.
- 4) Մոդելային ա/դպրոցներում քանակական և որակական սոցիոլոգիական հետազոտությունների անցկացման գործիքների մշակում (հարցաթերթ, հարցաշարեր), քննարկում և փորձարկում.
- 5) Մոդելային ա/դպրոցներում սոցիոլոգիական հետազոտությունների դաշտային աշխատանքների իրականացում (հարցազրույցների վարում), տվյալների հավաքագրում և մշակում.
- 6) Մոդելային ա/դպրոցներում վարված հարցազրույցներից ստացված տվյալների ուսումնասիրություն և վերլուծություն, սոցիոլոգիական քանակական և որակական արդյունքների ձևակերպում.
- 7) Մոդելային ա/դպրոցների գործունեության հիմնախնդիրների և ֆինանսական արդյունավետության վրա ազդող գործոնների բացահայտում, դրանց ազդեցության չափի մոտավոր գնահատում, դպրոցի ծախսերի-օգուտների վերաբերյալ եզրակացությունների հանգում.
- 8) Ա/դպրոցների ֆինանսական արդյունավետության բարելավման վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստում, քննարկում և ներկայացում:

Հետազոտության առանցքային արդյունքները

1. Ա/դպրոցների ֆինանսավորումը, ինչպես բոլոր հանրակրթական ուսումնական հաստատություններինը, հիմնականում կատարվում է ՀՀ պետական բյուջեից՝ հանրակրթության համար նախատեսված միջոցներից՝ ըստ իրականացվող ծրագրերի: Այդ ֆինանսական միջոցները դպրոցների՝ այդ թվում նաև ա/դպրոցների, միջև բաշխվում են ըստ աշակերտների թվով ֆինանսավորման բանաձևի գործակիցների մասին ՀՀ ֆինանսների նախարարի ու ՀՀ կրթության և գիտության նախարարի համատեղ հրամանի հիման վրա: ՀՀ պետական բյուջեով ա/դպրոցների համար նախատեսված ֆինանսական միջոցները ՀՀ ՖՆ-ը ՀՀ ԿԳՆ-ան միջոցով փոխանցում է ա/դպրոցներին:
2. Նկատի ունենալով այն հանգամանքը, որ կրթական ծառայությունների ուղղակի շահառուները աշակերտներն են և որպես մատուցվող ծառայությունների քանակական արդյունքի չափման միավոր ընդունվում է կրթվող աշակերտների թիվը, ապա դպրոցի ֆինանսավորման չափը որոշակի աստիճանով պայմանավորելը հաստատության գործունեության քանակական արդյունքի հետ, ֆինանսական արդյունավետության տեսանկյունից հիմնավոր է: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևը բովանդակային առումով չի բխում հանրակրթության նպատակներից և պետական քաղաքականության սկզբունքներից՝ այսինքն, մատուցվող ծառայությունների ակնկալվող որակական արդյունքից, որը հանգեցնում է բյուջետային միջոցների ծախսման զգալի անարդյունավետության:
3. Հանրակրթական դպրոցների ֆինանսավորման բանաձևի **Սգ** և **Պգ** գործակիցների կոնկրետ մեծությունները յուրաքանչյուր տարի հաստատվում են ՀՀ ֆինանսների և ՀՀ կրթության և գիտության նախարարների համատեղ հրամանով, սակայն որևէ փաստաթղթով ներկայացված չէ դրանց հաշվարկման մեթոդաբանությունը:
4. Հանրապետության մասշտաբով հանրակրթական դպրոցների, այդ թվում ա/դպրոցների, ֆինանսական տվյալների ոչ հասանելիության պատճառով հնարավոր չէ վերլուծություններ կատարել ա/դպրոցների պետական ֆինանսավորման և այդ ֆինանսական միջոցների օգտագործման վերաբերյալ:
5. Հետազոտության շրջանակներում ընտրված մոդելային 18 ա/դպրոցներից հավաքագրվել է վիճակագրական տեղեկատվություն այդ դպրոցների վերաբերյալ (**հավելված 1**), որը ներառում է ընդհանուր, դասաժամաքանակային, առաջադիմության ու ուսման որակի և ֆինանսական ցուցանիշների խմբերը: Այդ տեղեկատվության օգտագործմամբ, սահմանվել և գնահատվել են կրթության համակարգային 5, կրթության որակի 3 և ֆինանսական 5 հիմնական հարաբերական ցուցանիշներ՝ ըստ մոդելային դպրոցների, որոնց հիման վրա կատարվել է համապատասխան վերլուծություն:

6. Մոդելային 18 ա/դպրոցներում առկա են բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնք բացահայտվել են սոցիոլոգիական հետազոտության արդյունքում: Դրանց թվում են՝

Կրթական հոսքերը և ենթահոսքերը. Առկա հիմնախնդիրները կապված են հոսքային դասարանների ձևավորման, հոսքային դասարաններում ուսումնական պլանով նախատեսված հոսքային և ոչ հոսքային առարկաների ժամաքանակների, դրանց գծով փոխադրական և ավարտական քննությունների նպատակահարմարության, լրացուցիչ մասնագիտական առարկաների դասավանդման, ֆակուլտատիվ պարապմունքների, խմբակների կազմակերպման մասնագիտական և ֆինանսական հնարավորությունների հետ:

Հիմնական դպրոցների շրջանավարտների կողմից ա/դպրոցի ընտրության չափանիշները. Ա/դպրոցի 10-րդ դասարանում ակնկալվող սովորողների թիվը հատկապես կանխատեսելի է քաղաքային փոքր և գյուղական համայնքներում, որտեղ ա/դպրոցը միակն է: Հիմնական դպրոցների շրջանավարտների կողմից կոնկրետ ա/դպրոցի ընտրությունը հիմնականում պայմանավորված է եղել հետևյալ չափանիշներով՝

- դա համայնքի միակ ա/դպրոցն է (37.9%),
- դա սովորողի տանը ամենամոտ ա/դպրոցն է (26.3%),
- դա ապահովում է որակյալ կրթություն (23.9%),
- դրա հոսքային ուղղվածությունը համապատասխանում է սովորողի նախասիրություններին / ապագա մասնագիտությանը (6.4%),
- և այլն:

Սովորողների ա/դպրոց ընդունելության, հոսքային դասարանների կոմպլեկտավորման և դպրոցից հեռացման ընթացակարգերը. Ա/դպրոցներ սովորողների ընդունելությունը կատարվում է բացառապես նրանց ծնողների դիմումների հիման վրա: Բոլոր նրանք, ովքեր ցանկանում են շարունակել կրթությունն ա/դպրոցում, կարող են դիմել և ընդունվել: Որոշ ա/դպրոցներում (օրինակ, Երևան քաղաքի, Արարատի և Արմավիրի մարզերի), ա/դպրոցի հիմնադրման առաջին տարիներին կազմակերպվել են սովորողների ընդունելության քննություններ, հարցազրույցներ կամ նախնական թեստավորում, սակայն՝ ստանալով հիմնականում անբավարար արդյունքներ, բոլորին ընդունել են: Այդ պատճառով ներկայումս նման պրակտիկա այլևս չի կիրառվում:

Ա/դպրոց սովորողի ընդունելության կարգի վերաբերյալ տնօրենների և մանկավարժների կարծիքները խստորեն տարբերվում են: Մանկավարժների ճնշող մեծամասնությունն այն կարծիքին է, որ ցանկալի է մշակել և ներդնել ա/դպրոց ընդունվելու ընթացակարգ՝ ստուգելով երեխաների գիտելիքները հարցազրույցի կամ թեստավորման միջոցով: Մյուս կողմից, հանրակրթական դպրոցները ֆինանսավորվում

են ըստ սովորողների թվի, և վերոնշյալ մոտեցումը էապես կկրճատի դպրոցի եկամուտները: Ստացվում է այնպես, որ ա/դպրոցի նպատակը՝ ապահովել որակյալ հոսքային կրթություն, և դրա ֆինանսավորման մեխանիզմն՝ ըստ սովորողների թվի, իրար ուղղակիորեն հակասում են կամ տրամագծորեն հակադրվում:

Ա/դպրոցների տնօրենների մեծամասնության կարծիքով, ա/դպրոց ընդունելության որևէ ընթացակարգի կարիքը չկա, որպեսզի բոլոր ցանկացողներն ընդունվեն, ինչը կնպաստի հանրակրթության ոլորտի սոցիալական սկզբունքների իրագործմանը՝ հավասարության, արդարության և ներառականության ապահովմանը:

Ուսումնական պլանները, առարկայական ծրագրերը և դասագրքերը. Ա/դպրոցի ուսումնական պլանի, առարկայական ծրագրերի և դասագրքերի վերանայման անհրաժեշտության մասին խոսել են համարյա բոլոր հարցված մանկավարժները և սովորողները: Այս հարցում առանցքային հիմնախնդիրն այն է, որ գործող առարկայական ծրագրերի և բուհի ընդունելության քննությունների շտեմարանների միջև առկա են էական տարբերություններ ու անհամապատասխանություններ:

Ա/դպրոցի ապահովվածությունը մասնագիտական կադրերով. Ա/դպրոցներում ներկայումս հիմնականում աշխատում են նույն մանկավարժական կադրերը, որոնք աշխատում էին մինչ միջնակարգ դպրոցի վերակազմավորումը ա/դպրոցի: Ա/դպրոցների մանկավարժները պարբերաբար (հիմնականում 4-5 տարին մեկ անգամ) վերապատրաստվում են, նրանց մի մասը արժանանում է տարակարգերի: Մակայն, մոդելային որոշ ա/դպրոցներում (օրինակ, Արմավիրի թիվ 1, Ձորագյուղի), վերջին տարիներին սովորողների թվի տարեցտարի կրճատման, որոշ առարկաների ծրագրից դուրս գալու և այլ պատճառներով, կրճատվել են նաև մանկավարժների, ոչ մանկավարժական աշխատողների հաստիքները, դրույքները, դասաժամաքանակային ծանրաբեռնվածությունը:

Սովորողների հաճախելիությունը և կարգապահությունը. Մոդելային 18 ա/դպրոցների սովորողների հաճախելիության միջին մակարդակը համեմատաբար բարձր է եղել 10-րդ դասարանում, իսկ 11-12-րդ դասարաններում այն նկատելիորեն նվազել է: Սա նշանակում է, որ ա/դպրոցի սովորողների բացակայությունները դասերից տարեցտարի ավելի հաճախակի բնույթ են կրում: Մոդելային ա/դպրոցների 10-12-րդ դասարանների սովորողների բացակայությունների միջինը մեկ կիսամյակում դասավանդվող ընդհանուր ժամաքանակի մեջ կազմում է 4.2%:

Սոցիոլոգիական հետազոտության արդյունքներով, վերջին մեկ ամսվա ընթացքում 10-րդ դասարանցիները միջինում բացակայել են 1.3 օր, 11-րդ դասարանցիները՝ 1.8 օր, իսկ 12-րդ դասարանցիները՝ 2.7 օր, միջինը՝ մոտ 1.9 օր կամ 12 դասաժամ, որը կազմում է մեկ ամսում ընդհանուր դասաժամերի քանակի (մոտ 150) 8%-ը:

Որոշ ա/դպրոցներում աշխատում են սոցիալական մանկավարժներ, որոնք մշտական հսկողության տակ են պահում դպրոցի հատուկ կարիքներ ունեցող սովորողներին: Մոդելային ա/դպրոցներում խիստ կարիք է զգացվում նաև հոգեբան-մասնագետի, ով կարող է մեծ դերակատարություն ունենալ ինչպես սովորողների միջև, այնպես էլ վերջիններիս և նրանց ծնողների, ուսուցիչների միջև հոգեբանական տարբեր խնդիրները հաղթահարելու, նրանց փոխհարաբերությունները կարգավորելու գործում:

Սովորողների առաջադիմությունը և ուսման որակը. Ա/դպրոցում սովորողների առաջադիմությունը՝ համեմատած հիմնական դպրոցի հետ, նկատելի չափով ընկնում է: Այդ անկումը պայմանավորված է մի քանի գործոններով: Նախ, սովորողների գիտելիքների գնահատման չափանիշներն ա/դպրոցում օբյեկտիվորեն ավելի խիստ են, քան հիմնական դպրոցում: Երկրորդ, ա/դպրոցի ուսուցիչները սուբյեկտիվորեն խիստ են գտնվում հատկապես 10-րդ դասարանի սովորողների գիտելիքները գնահատելիս՝ դժգոհելով հիմնական դպրոցներում կրթության որակից և նպատակ հետապնդելով ցույց տալու հիմնական դպրոցներում սովորողների ստացած գիտելիքների ոչ այնքան բարձր մակարդակը: Երրորդ, ավագ տարիքում բացասաբար է փոխվում սովորողների վերաբերմունքն իրենց ստացած գնահատականների նկատմամբ՝ ցուցաբերելով որոշակի անտարբերություն: Չորրորդ, երբ հիմնական դպրոցի շրջանավարտները գալիս են ա/դպրոցի 10-րդ դասարան, մինչ նրանք ընտելանում են նոր միջավայրին, հասկանում են նոր ուսուցիչների՝ իրենց համար անսովոր պահանջները, 1-ին կիսամյակում, որպես կանոն, նրանց առաջադիմությունը ցածր է լինում:

Մոդելային 18 ա/դպրոցների սովորողների միջին առաջադիմությունը ցածր է եղել հատկապես 10-րդ դասարանում (մոտ 94.0%), որը նշանակում է, որ ա/դպրոց ընդունված՝ հիմնական դպրոցի շրջանավարտների շուրջ 6%-ը վատ առաջադիմություն ցուցաբերած սովորողներ են եղել և հիմնական դպրոցում ստացած նրանց գիտելիքները բոլորովին չեն համապատասխանել ա/դպրոցում ներկայացված պահանջներին ու չափանիշներին: Իսկ 12-րդ դասարանում վատ սովորողների առաջադիմության մակարդակի թվացյալ (նաև՝ խաբուսիկ) բարձրացումը (մոտ 99.0%) պետք է պայմանավորել երեք հանգամանքներով՝ առաջին, ա/դպրոցի մանկավարժական աշխատակազմի լավ աշխատանքով, և/կամ երկրորդ, 12-րդ դասարանում կրկնուսույցների մոտ պարապելու արդյունքում սովորողների գիտելիքների աճով, և/կամ, երրորդ, ավելի հավանական տարբերակը, ա/դպրոցի վատ սովորողներին <դպրոցը մի կերպ ավարտեցնելու> Հայաստանում որոշակիորեն ձևավորված ռիսկային <ավանդույթով>:

Մոդելային 18 ա/դպրոցների սովորողների առաջադիմության միջին մակարդակը կազմել է 95.4%, որը նշանակում է, որ ա/դպրոցների սովորողների շուրջ 4.6%-ի գիտելիքները բացարձակապես չեն համապատասխանել ա/դպրոցի պահանջներին և

նրանց կրթության կազմակերպումը ա/դպրոցում աննպատակահարմար և անարդյունավետ է եղել:

Մոդելային 18 ա/դպրոցների 10-րդ դասարանում սովորողների ուսման որակի միջին արժեքը տատանվել է 39–41%-ի սահմաններում, 11-րդ դասարանում՝ 40–43%-ի սահմաններում, 12-րդ դասարանում այն կազմել է մոտ 56%, իսկ դպրոցի ընդհանուր միջին արժեքը՝ մոտ 46%: Սա նշանակում է, որ հիմնական դպրոցի շրջանավարտների կեսից ավելիի ստացած գիտելիքները չեն բավարարում ա/դպրոցում <լավ> կամ <զերազանց> սովորելու համար: 12-րդ դասարանում սովորողների ուսման որակի մակարդակի կտրուկ բարձրացումը մինչև 56%-ի պայմանավորված է նույն հանգամանքներով, ինչ 12-րդ դասարանի սովորողների առաջադիմության բարձրացման դեպքում: Այսինքն, ա/դպրոցի ավարտական 12-րդ դասարանի սովորողների առաջադիմության / ուսման որակի մակարդակի նկատելի բարձրացումը պայմանավորված է հիմնականում սուբյեկտիվ գործոններով, քան թե դպրոցական կրթության շնորհիվ սովորողների գիտելիքների մակարդակի օբյեկտիվ բարձրացմամբ:

Ա/դպրոցների սովորողների ավելի քան կեսը (հաշված նաև հանրակրթական մեկ կամ մի քանի առարկաներից <5> և/կամ <6> միավոր գնահատականներ ունեցող սովորողներին) համարվում է պոտենցիալ այն զանգվածը, որն ի վիճակի է բարձր առաջադիմությամբ սովորել ա/դպրոցում, հաջողությամբ հանձնել դպրոցի ավարտական կամ միասնական քննությունները և հավակնել՝ շարունակելու կրթությունը բուհում կամ ՄՄՀ-ներում:

Հարցված ծնողների միայն 4.2%-ն է համարել, որ ա/դպրոցների սովորողների ստացած գնահատականները չեն համապատասխանում նրանց գիտելիքների մակարդակին:

Սովորողների դիրքորոշումը և կրկնուսույցների դերը նրանց բուհ ընդունվելու հարցում. Հարցված ծնողների 24.3%-ի կարծիքով, ա/դպրոցում ստացած գիտելիքները բավարար են սովորողի նախընտրած բուհն ընդունվելու համար, 14.3%-ի կարծիքով՝ «ավելի շուտ բավարար են», 31.8%-ի կարծիքով՝ «ավելի շուտ բավարար չեն», իսկ 29.6%-ի կարծիքով՝ «բոլորովին բավարար չեն»: Ինչպես երևում է, ծնողների մեծամասնությունը (61.4%-ը) հակված են այն կարծիքին, որ ա/դպրոցում սովորողների ստացած գիտելիքները բավարար չեն բուհ ընդունվելու համար: Դրանց մոտ 43.0%-ը չի հիմնավորել տրված բացասական կարծիքը, իսկ մնացած մոտ 57.0%-ն իր կարծիքը հիմնավորել է հետևյալ կերպ՝

- ա/դպրոցի մակարդակը ցածր է – 14.9%,
- առանց կրկնուսույցի հնարավոր չէ – 14.5%,

- ա/դպրոցում անցած նյութը չի համապատասխանում բուհի ընդունելության քննությունների պահանջներին, շտեմարաններով չեն պարապում – 12.6%,
- և այլն:

Մոդելային ա/դպրոցների բոլոր հարցված սովորողների 43.2%-ը պարապում է կրկնուսույցների մոտ (10-րդ դասարանցիներ՝ 18.2%, 11-րդ դասարանցիներ՝ 37.5%, 12-րդ դասարանցիներ՝ 60.3%): Եթե Երևան քաղաքում ա/դպրոցների սովորողների 56.2%-ն է պարապում կրկնուսույցների մոտ (10-րդ դասարանցիներ՝ 36.7%, 11-րդ դասարանցիներ՝ 45.5%, 12-րդ դասարանցիներ՝ 60.3%), ապա ՀՀ մարզերում՝ 38.3%-ը (10-րդ դասարանցիներ՝ 11.2%, 11-րդ դասարանցիներ՝ 34.7%, 12-րդ դասարանցիներ՝ 55.0%):

Մոդելային ա/դպրոցների բոլոր հարցված սովորողների 11.0%-ը պարապում է իրենց դասավանդող ուսուցիչների մոտ, 16.0%-ը՝ այլ դպրոցում դասավանդող ուսուցիչների մոտ, 7.2%-ը՝ բուհի դասախոսների մոտ, 4.8%-ը՝ բարեկամ կամ հարևան մասնագետի մոտ, 2.4%-ը՝ տվյալ ա/դպրոցի այն ուսուցիչների մոտ, որոնք տվյալ սովորողին չեն դասավանդում, 2.0%-ը՝ այլ անձի մոտ կամ հատուկ կազմակերպությունում, իսկ 56.8%-ը՝ չեն պարապում որևէ կրկնուսույցի մոտ:

Հանրակրթական յուրաքանչյուր առարկայի գծով կրկնուսույցին վճարվող միջին ամսական վճարի չափը տատանվում է 20,0 - 50,0 հազ. դրամի (50 - 125 ԱՄՆ դոլարի) սահմաններում՝ կախված կոնկրետ առարկայից և կրկնուսույցից:

Կրկնուսույցի մոտ պարապած ա/դպրոցների շրջանավարտների 97.3%-ն ընդունվել է բուհ, իսկ կրկնուսույցի մոտ չպարապած շրջանավարտներից բուհ են ընդունվել դրանց միայն 53.8%-ը:

Ա/դպրոցի կապի ապահովումը սովորողների ծնողների հետ. Մոդելային 18 ա/դպրոցների սովորողների միայն 50.5%-ն ունի օրագիր (10-րդ դասարանում՝ 55.5%, 11-րդ դասարանում՝ 51.6%, և 12-րդ դասարանում՝ 44.8%, աղջիկներ՝ 55.5%, տղաներ՝ 43%): Օրագրի առկայությունը սովորողների մոտ տարբեր է դպրոցից դպրոց և պայմանավորված է հիմնականում տվյալ դպրոցի հետևողականությամբ:

www.dasaran.am կայքի ծածկանունն ու ծածկագիր ունեն հարցված ծնողների միայն 79%-ը: Այս ցուցանիշն էապես տարբերվում է դպրոցից-դպրոց: Տարբեր ա/դպրոցներ նաև տարբեր չափով են օգտվում www.dasaran.am կայքից: Համացանցային կայքի օգտագործման հարցում սովորողների ծնողները ևս ակտիվ չեն, նրանք գերադասում են շփվել դպրոցի տնօրինության, սովորողի դասղեկի, ուսուցիչների հետ անմիջականորեն:

www.dasaran.am կայքը լրացուցիչ աշխատանք և դժվարություններ է ստեղծել ուսուցիչների համար: Ուսուցիչը նույն աշխատանքը պետք է կատարի մի քանի անգամ՝ սովորողների նույն գնահատականները անցկացնելով դասամատյանում, օրագրում և

համակարգչում: Մակայն, դպրոցը չի ապահովում անհրաժեշտ պայմաններ, որպեսզի յուրաքանչյուր ուսուցիչ կարողանա հանգիստ աշխատել համակարգչով:

Շենքային և գույքային պայմանները. Ա/դպրոցների շենքերի մեծ մասն ունի հիմնանորոգման կարիք, քանի որ դրանք կառուցվել են հիմնականում խորհրդային տարիներին, իսկ ՀՀ անկախության տարիներին դրանք կամ բոլորովին չեն ենթարկվել, կամ մասնակիորեն են ենթարկվել կապիտալ նորոգման: Մոդելային 18 ա/դպրոցներից շենքային պայմանները կարելի է լավ կամ բավարար համարել միայն 7 դպրոցներում: Մնացած 11 ա/դպրոցներում վատ վիճակում են հիմնականում սանհանգույցները, մարզադահլիճները, հանդիսությունների դահլիճները, պատուհանները, հատակները, դասասենյակների մի մասը և այլն:

7. Ըստ սովորողների թվի՝ ա/դպրոցի ֆինանսավորումը բացասաբար է անդրադառնում դպրոցում կրթության որակի վրա, քանի որ, հիմնական դպրոցներում բարձր առաջադիմություն ցուցաբերած սովորողների կողքին, ա/դպրոցներում հայտնվում են նաև մեծ թվով ցածր առաջադիմություն ցուցաբերած սովորողներ, և կոմպլեկտավորվում են բարձր խտության դասարաններ, որի պատճառով ուսուցիչը շատ ժամանակ է ծախսում դասարանում կարգապահության պահպանման վրա, նա չի կարողանում անհատական մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուր սովորողին:
8. Դպրոցների ֆինանսավորման գործող սկզբունքի մյուս կարևոր թերությունը կայանում է նրանում, որ ֆինանսավորման բանաձևում դպրոցի պահպանման նվազագույն ծախսերը բոլոր դպրոցների համար յուրաքանչյուր տարի միևնույն չափով են սահմանվում՝ հաշվի չառնելով դրանց զբաղեցրած տարածքի չափը: Շատ ա/դպրոցներում դեռևս գործում են հիմնական դպրոցի 5-9-րդ դասարաններ, որոնց 1 սովորողին ընկնող տարեկան գումարի նկատմամբ կիրառվող գործակիցն ավելի ցածր է, քան ա/դպրոցի սովորողի համար կիրառվող գործակիցը, ինչը լրացուցիչ ֆինանսական դժվարություններ է ստեղծում դպրոցի համար:
9. 1 սովորողին ընկնող՝ ա/դպրոցի ինչպես պետական պատվերից ստացվող եկամուտները, այնպես էլ ընդհանուր եկամուտները հիմնականում հակադարձ համեմատական են դպրոցի սովորողների թվին, այսինքն ինչքան փոքր (մեծ) է դպրոցի սովորողների թիվը, այնքան մեծ (փոքր) են 1 սովորողին ընկնող՝ դպրոցի ինչպես պետական պատվերից ստացվող եկամուտները, այնպես էլ ընդհանուր եկամուտները: 1 սովորողին ընկնող՝ ա/դպրոցի ինչպես պետական պատվերից եկամուտները, այնպես էլ ընդհանուր եկամուտներն ունեն տատանման բավականին մեծ միջակայքեր՝ համապատասխանաբար 144.3 – 288.1 հազ. դրամ և 146.8 – 295.1 հազ. դրամ, որը նշանակում է, որ գործող սկզբունքով ա/դպրոցների ֆինանսավորումն՝ ըստ 1 սովորողին ընկնող եկամուտների, իրականացվում է խիստ անհավասարաչափ և ոչ հասցեական:

10. 1 սովորողին ընկնող՝ դպրոցի ինչպես ընթացիկ ընդհանուր ծախսերն, այնպես էլ աշխատողների աշխատավարձի գծով ծախսերը հիմնականում հակադարձ համեմատական են դպրոցի սովորողների թվին, այսինքն ինչքան փոքր (մեծ) է դպրոցի սովորողների թիվը, այնքան մեծ (փոքր) են 1 սովորողին ընկնող՝ ինչպես ընթացիկ ընդհանուր ծախսերն, այնպես էլ աշխատողների աշխատավարձի գծով ծախսերը: 1 սովորողին ընկնող՝ դպրոցի ինչպես ընթացիկ ընդհանուր ծախսերն, այնպես էլ աշխատողների աշխատավարձի գծով ծախսերն ունեն տատանման բավականին մեծ միջակայքեր՝ համապատասխանաբար 146.6 – 295.1 հազ. դրամ և 129.4 – 260.7 հազ. դրամ, որը նշանակում է, որ ա/դպրոցների ֆինանսական գործունեությունն՝ ըստ 1 սովորողին ընկնող ծախսերի, իրականացվում է խիստ անհամաչափ և ոչ արդյունավետ:
11. Ի տարբերություն 1 սովորողին ընկնող՝ դպրոցի ընթացիկ ընդհանուր ծախսերի և աշխատողների աշխատավարձի գծով ծախսերի, 1 սովորողին ընկնող՝ դպրոցի պահպանման և այլ ծախսերն առանձնապես կապ չունեն դպրոցի սովորողների թվի հետ, տարբեր դպրոցներ այդ գծով տարբեր չափով ծախսեր են կատարում՝ կախված դպրոցի ոչ մանկավարժական աշխատողների թվից, դպրոցի տարածքի չափից, բնակավայրի բնակլիմայական պայմաններից, տվյալ տարում դպրոցի կարիքներից և նմանատիպ այլ գործոններից:

Հետազոտության հիմնական եզրակացությունները

1. Ա/դպրոցների կրթության համակարգի արդյունավետության գնահատման կարևոր նախապայմաններից է ա/դպրոցների մասշտաբով տվյալների, այդ թվում՝ ֆինանսական, բազայի ստեղծումը, իսկ դրա բարձրացման կարևոր հիմնախնդիրներից է ցուցանիշների արդյունավետ համակարգի ներդրումը, որը հնարավորություն կտա մշակել իրավիճակի վրա հիմնված քաղաքականություններ:
2. Ա/դպրոցի նպատակը՝ ապահովել որակյալ հոսքային կրթություն, և դրա ֆինանսավորման մեխանիզմն՝ ըստ սովորողների թվի, ուղղակիորեն հակասում կամ տրամագծորեն հակադրվում են իրար:
3. Հայաստանում ա/դպրոցները մեծամասամբ թերբեռնված են (նախագծային հզորության 1/3-ից մինչև 2/3 չափով) և այս փաստը հանրակրթության բնագավառի պատկան մարմինների համար լուրջ մտահոգության պատճառ պետք է հանդիսանա: Եվ ընդհանրապես, անհրաժեշտ է դպրոցների բավարար ծանրաբեռնվածությունը դնել դրանց գործունեության արդյունավետության բարձրացման, հանրակրթության համակարգի հետագա զարգացման քաղաքականությունների ու ռազմավարությունների մշակման և ընդունման հիմքում:

4. Ա/դպրոցներում ներկայումս գործող հոսքերը և ենթահոսքերը դեռևս չեն ապահովում բուհում, ՄՄՀ-ում և/կամ աշխատանքի շուկայում պահանջված մասնագիտությունների գոնե մոտավոր նպատակայնությունը և բազմազանությունը: Դա հատկապես վերաբերում է ռազմական, արվեստի, սպորտի բնագավառների, ինչպես նաև արհեստագործական տարբեր մասնագիտություններին:
5. Անհրաժեշտ է վերանայել ա/դպրոցի ուսումնական պլանը, առարկայական ծրագրերը և դասագրքերի բովանդակությունը: Ներկայումս գործող առարկայական ծրագրերի, դասագրքերի և բուհի ընդունելության քննությունների շտեմարանների միջև առկա են էական տարբերություններ ու անհամապատասխանություններ: Հատկապես դա վերաբերում է 12-րդ դասարանին, որի դերն ու բովանդակությունը հստակ չէ ո՛չ սովորողների, ո՛չ նրանց ծնողների և ո՛չ էլ նույնիսկ ուսուցիչների համար:
6. Ա/դպրոցների սովորողների և նրանց ծնողների կողմից բավականին բարձր են գնահատվել ա/դպրոցների մանկավարժների՝ ուսումնական առարկաների մասնագիտական իմացությունը, մանկավարժական հմտությունները և մարդկային որակները: Ա/դպրոցի լավագույն ուսուցիչները միևնույն ժամանակ հանդիսանում են իրենց համայնքում հայտնի լավագույն կրկնուսույցները:
7. Ա/դպրոց ընդունված՝ հիմնական դպրոցի շրջանավատների շուրջ 6.0%-ը վատ առաջադիմություն ցուցաբերած սովորողներ են և հիմնական դպրոցում ստացած նրանց գիտելիքները բոլորովին չեն համապատասխանում ա/դպրոցի պահանջներին: Իսկ 12-րդ դասարանում վատ սովորողների առաջադիմության մակարդակի թվաքանակը բարձրացումը հիմնականում պայմանավորված է նրանց <դպրոցը մի կերպ ավարտեցնելու> Հայաստանում որոշակիորեն ձևավորված ռիսկային <ավանդույթով>:
8. Հիմնական դպրոցի շրջանավարտների կեսից ավելիի ստացած գիտելիքները չեն բավարարում ա/դպրոցում <լավ> կամ <գերազանց> սովորելու համար: Իսկ 12-րդ դասարանի սովորողների ուսման որակի մակարդակի նկատելի բարձրացումը պայմանավորված է հիմնականում սուբյեկտիվ գործոններով, քան թե սովորողների գիտելիքների մակարդակի օբյեկտիվ բարձրացմամբ:
9. Ա/դպրոցների սովորողների ծնողների մոտ 2/3-ի կարծիքով, իրենց երեխաների ստացած գիտելիքները բավարար չեն բուհ ընդունվելու համար, այդ պատճառով ա/դպրոցի սովորողների համարյա կեսը պարապում է կրկնուսույցների մոտ: Կրկնուսույցի մոտ պարապած՝ ա/դպրոցների համարյա բոլոր շրջանավարտներն ընդունվում են բուհ, իսկ կրկնուսույցի մոտ չպարապած շրջանավարտների՝ միայն կեսը:
10. Ա/դպրոցները յուրաքանչյուր ուսումնական տարի բախվում են դպրոցում սովորողների թվի փոփոխման և ֆինանսավորման խնդիրներին: Վերջին տարիներին, մի կողմից,

նվազում է հիմնական դպրոցների սովորողների թիվը, իսկ մյուս կողմից, հիմնական դպրոցների ոչ բոլոր շրջանավարտներն են ցանկանում իրենց կրթությունը շարունակել ա/դպրոցում: Արդյունքում, տարեցտարի նվազում է ա/դպրոցների սովորողների թիվը և, հետևաբար, կրճատվում են նաև ա/դպրոցների ֆինանսավորման չափերը:

11. Ա/դպրոցների ֆինանսավորումն՝ ըստ 1 սովորողին ընկնող եկամուտների, իրականացվում է խիստ անհավասարաչափ և ոչ հասցեական, քանի որ 1 սովորողին ընկնող՝ տարբեր ա/դպրոցների պետական պատվերից եկամուտներն ունեն տատանման բավականին մեծ միջակայք՝ 144.3 – 288.1 հազ. դրամ:
12. Ա/դպրոցների ֆինանսական գործունեությունն՝ ըստ 1 սովորողին ընկնող ընթացիկ ծախսերի, իրականացվում է խիստ անհամաչափ և ոչ արդյունավետ, քանի որ տարբեր դպրոցների այդ ծախսերն ունեն տատանման բավականին մեծ միջակայք՝ 146.6–295.1 հազ. դրամ: ՀՀ պետական բյուջեից հատկացված ֆինանսական միջոցներն ա/դպրոցները հիմնականում ծախսում են աշխատողների աշխատավարձի գծով, և միջոցները չեն բավարարում՝ դպրոցի պահպանման և զարգացման գծով ծախսեր ու ծրագրեր իրականացնելու համար: Մասնավորապես, ա/դպրոցի պահպանման ծախսերի համար հատկացված միջոցների մի զգալի մասը ծախսվում է ոչ նպատակային, այլ ուղղությամբ՝ դպրոցի ոչ մանկավարժական աշխատողների աշխատավարձերը վճարելու համար:
13. Ա/դպրոցների կողմից կապիտալ ծախսերի կատարումը կրում է եզակի բնույթ, իսկ ՀՀ պետական բյուջեի, դոնոր կազմակերպությունների կողմից ա/դպրոցներում իրականացվող ներդրումային կամ դրամաշնորհային ծրագրերը չունեն նպատակային, համակարգված ու հաշվետվողական բնույթ, և ամենևին կանխատեսելի, հրապարակային ու թափանցիկ չեն դպրոցների համար:

Հետազոտության հիմնական առաջարկությունները

1. Ա/դպրոցներում ներկայումս գործող 5-9-րդ դասարանների սովորողներին տեղափոխել դրանց մոտակայքում գտնվող հիմնական դպրոցներ՝ ա/դպրոցներում իրականացնելով բացառապես պետական հանրակրթական ա/դպրոցի հիմնական ծրագրեր: Հաշվի առնելով ՀՀ ա/դպրոցների մեծամասնության զգալի թերբեռնվածությունը՝ մշակել, քննարկել և ընդունել ա/դպրոցների հետագա զարգացման նոր ռազմավարություն:
2. Հաշվի առնելով ՀՀ ա/դպրոցների շենքային և գույքային անհավասար պայմանները՝ ուսումնասիրել և գնահատել դրանց առկա կարիքները, համակարգել և միջոցներ ձեռնարկել՝ հնարավորինս սեղմ ժամկետներում գտնելու ֆինանսավորման տարբեր աղբյուրներ և ա/դպրոցներում իրականացնելու շենքերի ընթացիկ ու կապիտալ նորոգման և գույքի վերանորոգման ու թարմացման ծրագրեր:

3. Ուսումնասիրել ա/դպրոցներում դասավանդվող մասնագիտական առարկաների (կենսաբանության, քիմիայի, ֆիզիկայի, ինֆորմատիկայի և այլն) և լեզուների լաբորատորիաների ու դասասենյակների տեխնիկական կարիքները (սարքավորումներ, նյութեր և այլն) և միջոցներ ձեռնարկել դրանց վերազինման, նպատակային և լիարժեք գործարկման համար:
4. Առաջարկել ԿԳՆ-անը և ՀՀ ՖՆ-անը՝ մշակելու, ընդունելու և ներդնելու ա/դպրոցների ֆինանսավորման նոր մեթոդաբանություն, որտեղ հստակորեն կսահմանվեն ֆինանսավորման բանաձևը և դրանում ներառվող բոլոր ցուցանիշների ու գործակիցների հաշվարկման կարգերը: Առաջարկվում է ա/դպրոցի պետական ֆինանսավորման նոր մեթոդաբանության հիմքում դնել հետևյալ հիմնական սկզբունքները՝
 - ա/դպրոցի մեկ դասարանում սովորողների թիվը և դասարանները բաժանելու ու կիսվող դասաժամերի նախապայմանները սահմանել այնպես, որ դասարանները ձևավորելիս այն ուղղակի ազդեցություն չունենա դպրոցի ֆինանսավորման չափի և կրթության որակի վրա,
 - ա/դպրոցի ֆինանսավորման բանաձևը համադրելի դարձնել այնտեղ կատարվող փաստացի ծախսերի կառուցվածքի հետ՝ հատուկ ուշադրություն դարձնելով սովորողների թվի հետ կապ չունեցող ծախսերին՝ մասնավորապես, ա/դպրոցների պահպանման ծախսերը սահմանել ոչ թե հավասար չափով, այլ հիմնավորված որոշակի սանդղակով՝ կախված դրանց շենքերի ու հողամասերի տարածքների չափերից,
 - ա/դպրոցի ֆինանսավորման բանաձևում որպես անկախ փոփոխական օգտագործել ոչ միայն քանակական ցուցանիշը՝ սովորողների թիվը, այլև որակական ցուցանիշներ (օրինակ, նախորդ տարում սովորողների առաջադիմության / ուսման որակի աստիճանը և այլն):
5. Ա/դպրոցների հոսքային/ենթահոսքային դասարանների խտությունը սահմանել 12-16 սովորող՝ ներկայումս գործող 20-25-ի փոխարեն, վերանայելով և հաստատելով դրանց ձևավորման ընթացակարգերը, ուսումնական պլանները, ա/դպրոցների հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակները և այլ փաստաթղթերը: Ուսումնասիրել և գնահատել լրացուցիչ մասնագիտական առարկաների, ֆակուլտատիվ պարապմունքների, խմբակների կազմակերպման մասնագիտական և ֆինանսական հնարավորությունները:
6. Սահմանել ա/դպրոցի աշխատողների կողմից իրականացվող լրացուցիչ աշխատանքների վարձատրության կարգը (գրավոր աշխատանքների ստուգում, դասղեկություն, մեթոդ-միավորումներ և այլն):

7. Ա/դպրոցներում ամբողջովին ներդնել ծրագրային ֆինանսավորման մեխանիզմը՝ սահմանելով աշխատանքների կատարման գնահատման ոչ ֆինանսական ցուցանիշների համակարգը, որը հնարավորություն կտա արդյունավետ ձևով պլանավորել և իրականացնել ա/դպրոցների ծախսային քաղաքականությունը:
8. Աշխատանքների կատարման գնահատման ոչ ֆինանսական ցուցանիշների համակարգին զուգահեռ, մշակել և ներդնել ծրագրերի իրականացման մոնիթորինգի ու գնահատման համակարգ, որի շնորհիվ կհստակեցվեն նաև տվյալների հավաքագրման մեխանիզմները:
9. Ապահովել կարողությունների զարգացում թե ա/դպրոցներում և թե հանրակրթության բնագավառի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում, որը կնպաստի ինչպես ծրագրային բյուջետավարման գործընթացի, այնպես էլ ծրագրերի կառավարման արդյունավետության բարձրացմանը՝ ապահովելով կրթության ոլորտում ծախսային քաղաքականության արդյունավետ իրականացումը:
10. Ապահովել ա/դպրոցների հոսքերի և ենթահոսքերի նպատակայնությունը և բազմազանությունը՝ դրանք համապատասխանեցնելով բուհերում, ՄՄՀ-ներում և/կամ աշխատանքի շուկայում պահանջված մասնագիտությունների սպեկտրին:
11. Վերանայել ա/դպրոցի բոլոր առարկայական ծրագրերը և դասագրքերի բովանդակությունը՝ դրանք մոտեցնելով և համապատասխանեցնելով բուհերի և ՄՄՀ-ների ընդունելության քննությունների պահանջներին:
12. Բարելավել ա/դպրոցների ուսումնադաստիարակչական աշխատանքների որակը և արդյունավետությունը՝ ապահովելով մանկավարժների ամբողջական դրույթային ծանրաբեռնվածությունը, մասնագիտական պարբերական վերապատրաստումը, կրճատելով դասերից սովորողների անհարգելի բացակայությունների թիվը, կիրառելով ա/դպրոցի կարգուկանոնի պահպանության գործուն մեխանիզմներ:
13. Ակտիվացնել սովորողների ծնողների կապը ա/դպրոցի հետ՝ հետևողականորեն և լիարժեքորեն օգտագործելով բոլոր հնարավոր մեխանիզմներն ու միջոցները: Ա/դպրոցի կողմից www.dasaran.am կայքի սպասարկման գործառույթը դնել ա/դպրոցի համակարգչային կաբինետի աշխատակցի վրա՝ ուսուցիչների փոխարեն:
14. Առաջարկել ՀՀ ԿԳՆ-անը և բոլոր ա/դպրոցներին՝ ստեղծելու (եթե դեռ ստեղծված չեն) և աստիճանաբար զարգացնելու ա/դպրոցների պաշտոնական համացանցային կայքերը՝ ա/դպրոցների ուսումնադաստիարակչական և ֆինանսատնտեսական գործունեության թափանցիկության, հրապարակայնության, արդյունավետության և հաշվետվողականության մակարդակների բարձրացմանը նպաստելու նպատակով:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում կրթության բնագավառի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների՝ իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը²:

2006-2012թթ. ընթացքում Հայաստանում իրականացվեցին 12-ամյա հանրակրթական համակարգին անցման և եռամյա կրթակարգով առանձին գործող ա/դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագրերը: Այդ բարեփոխումների իրականացման արդյունքում, ՀՀ հանրակրթական միջնակարգ դպրոցների մի որոշակի մասը վերակազմակերպվեց ա/դպրոցների՝ ՀՀ մարզպետարանների կամ Երևանի քաղաքապետարանի ենթակայությունից անցնելով ՀՀ ԿԳՆ ենթակայությանը, համաձայն 2009թ. ընդունված <Հանրակրթության մասին> ՀՀ օրենքի:

Ներկայումս Հայաստանում գործում են հանրակրթական 109 ա/դպրոցներ (այդ թվում՝ 45-ը՝ Երևանում, 64-ը՝ ՀՀ մարզերում (այդ թվում՝ 57-ը՝ քաղաքային համայնքներում, 7-ը՝ գյուղական համայնքներում)), որոնցից 102-ն ունեն ՊՈԱԿ-ի կարգավիճակ և գործում են ՀՀ ԿԳՆ անմիջական ենթակայությամբ, իսկ մնացած 7-ը՝ վճարովի հիմունքներով գործող մասնավոր ա/դպրոցներ են: Ավագ դպրոցի կրթական ծրագիր են իրականացնում նաև վարժարանները, կրթահամալիրները, որոշ բուհերը և միջնակարգ դպրոցները, որոնք սույն հետազոտության առարկա չեն հանդիսանում³: Հայաստանի ա/դպրոցների համակարգում իրենց սովորողների թվերով, զբաղեցրած տարածքներով, ինչպես նաև կրթական որակական բնութագրիչներով ավելի շահեկան վիճակում են գտնվում Երևանի ա/դպրոցները՝ համեմատած մարզերում գտնվող ա/դպրոցների հետ:

Կրթության բնագավառի ներկա փուլի առավել ընդգծված հիմնախնդիրներից մեկն այն է, որ բարելավման կարիք ունեն կրթության ֆինանսավորման և հատկացված ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման մեխանիզմները⁴: Սույն զեկույցը <Համայնքների ֆինանսիստների միավորում> ՀԿ կողմից իրականացված <Ավագ դպրոցներում կրթության ֆինանսավորման և ֆինանսական արդյունավետության մոնիթորինգ> ծրագրի շրջանակներում կատարված հետազոտության արդյունքն է և վերաբերում է ՀՀ հանրակրթական ա/դպրոցների ֆինանսավորման և ֆինանսական գործունեության արդյունավետության հիմնախնդիրներին և դրանց լուծման ուղիներին:

² <Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիր> ՀՀ օրենք, հավելված, կետ 7

³ <http://www.edu.am/index.php?numbRefArticle=2&menu1=9&menu2=129&topMenu=-1&arch=0>

⁴ <Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիր> ՀՀ օրենք, հավելված, կետ 70, էջ 30

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Սույն հետազոտության նպատակներն են՝

- ուսումնասիրել և վերլուծել ՀՀ ա/դպրոցների ֆինանսավորման գործող համակարգի վիճակը, առավելությունները և թույլ կողմերը, վերհանել առկա հիմնախնդիրները, թերություններն ու բացթողումները, մշակել և ներկայացնել եզրակացություններ ու առաջարկություններ դրանց լուծման վերաբերյալ:
- ուսումնասիրել, վերլուծել և գնահատել պետական հանրակրթական ծրագրեր իրականացնող ա/դպրոցների ֆինանսական գործունեության արդյունավետությունը, բացահայտել և վերհանել այդ ուղղությամբ առկա հիմնախնդիրները, գործոնները և միտումները, մշակել և ներկայացնել եզրակացություններ ու առաջարկություններ դրանց լուծման ուղիների վերաբերյալ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դրված խնդիրների լուծման համար օգտագործվել է <ծախսեր-օգուտների վերլուծության> (cost-benefit analysis) մեթոդը: Ընտրված մեթոդաբանությամբ ներդրված ռեսուրսների և դպրոցի կողմից կատարված ծախսերի դիմաց առանձնացվել են դպրոցի շահառուների (սովորողների, ծնողների, հանրության) ստացած օգուտները և դպրոցի ֆինանսավորման ու գործունեության ֆինանսական արդյունավետության վրա ազդող գործոններն՝ ըստ որոշակի ուղղությունների: Տվյալների հուսալիության բարձրացման և հետազոտության արդյունավետության ապահովման նպատակով՝ համադրվել և փոխլրացվել է տարբեր աղբյուրներից ստացված տեղեկատվությունը:

Հետազոտության դրված նպատակներին հասնելու համար իրականացվել են մի շարք գործողություններ ու միջոցառումներ, որոնք ապահովել են հետազոտության արդյունավետ իրականացումը, դրանք են՝

1) ՀՀ ա/դպրոցներում կրթության ֆինանսավորման վիճակի ուսումնասիրում և վերլուծություն.

ՀՀ ա/դպրոցների համակարգի ընդհանուր նկարագրության, կառավարման և ֆինանսավորման մեխանիզմների ուսումնասիրման և վերլուծության հիման վրա վեր են հանվել համակարգի առավելությունները և թերությունները, ուժեղ և թույլ կողմերը, ձևակերպվել են համակարգում առկա հիմնական հիմնախնդիրները:

- 2) **Հանրակրթական ա/դպրոցների ուսումնասիրություն և մոդելային ա/դպրոցների ընտրություն, վերջիններիս վերաբերյալ վիճակագրական (ընդհանուր, կրթության որակի, ֆինանսական) տեղեկատվության հավաքագրում և ուսումնասիրում.**

Հանրակրթական մոդելային 18 ա/դպրոցներն ընտրվել են պատահականության սկզբունքով՝ ՀՀ Արագածոտնի, Արմավիրի, Արարատի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզերից, ինչպես նաև Երևան քաղաքից (դրանց ցանկն՝ ըստ մարզերի համայնքների և Երևան քաղաքի վարչական շրջանների, բերվում է ստորև): Մոդելային 18 ա/դպրոցների վերաբերյալ հավաքագրվել է ընդհանուր վիճակագրական տեղեկատվություն հենց այդ ա/դպրոցներից՝ մուտքային ցուցանիշների տեսքով (ըստ ստանդարտացված ձևի), ինչպես նաև ուսումնասիրվել է համացանցային առկա վիճակագրական որոշ տեղեկատվություն՝ համադրելու, փոխլրացնելու և հարստացնելու դպրոցներից ստացված տեղեկատվությունը:

- 3) **Հանրակրթական մոդելային ա/դպրոցների առկա վիճակի վերաբերյալ հարաբերական ցուցանիշների սահմանում և գնահատում.**

Մոդելային 18 ա/դպրոցների առկա վիճակը հետազոտելու համար սահմանվել և գնահատվել են որոշակի ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշներ (մուտքային, քանակական ու որակական արդյունքային և արդյունավետության):

- 4) **Հանրակրթական մոդելային ա/դպրոցներում քանակական և որակական սոցիոլոգիական հետազոտությունների անցկացման գործիքների մշակում, քննարկում և փորձարկում.**

Մշակվել են սոցիոլոգիական հետազոտություններ կատարելու 3 գործիքներ՝

- Հարցաթերթ՝ ա/դպրոցի սովորողի ծնողի հետ հարցազրույցի,
- Հարցաշար՝ ա/դպրոցի սովորողների ֆոկուս-խմբի հետ հարցազրույցի,
- Հարցաշար՝ ա/դպրոցի տնօրենի/փոխտնօրենի/ուսուցչի հետ փորձագիտական հարցազրույցի:

Սոցիոլոգիական հետազոտությունների գործիքները քննարկվել են <Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի> մասնագետների և փորձագետների հետ, դրանք բերվել են վերջնական տեսքի և փորձարկվել մոդելային ա/դպրոցներում:

- 5) **Հանրակրթական մոդելային ա/դպրոցներում սոցիոլոգիական հետազոտությունների դաշտային աշխատանքների իրականացում (հարցազրույցների վարում), տվյալների հավաքագրում և մշակում.**

Ծրագրում ձևավորված սոցիոլոգիական խմբերի կողմից իրականացվել են հարցազրույցներ մոդելային 18 ա/դպրոցների սովորողների 410 ծնողի, 207 սովորողներից ձևավորված 18 ֆոկուս-խմբի և 36 տնօրենի/փոխտնօրենի/ուսուցչի հետ, որոնց

սղագրությունները կազմել են հետագա վերլուծությունները կատարելու համար անհրաժեշտ տվյալների հենքային շտեմարանը:

- 6) **Հանրակրթական մոդելային 18 ա/դպրոցներում վարված հարցազրույցներից ստացված տվյալների ուսումնասիրում և վերլուծություն, սոցիոլոգիական քանակական և որակական արդյունքների ձևակերպում.**

Կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա ձևակերպվել են ա/դպրոցներում կրթական ծառայությունների մատուցման սոցիոլոգիական քանակական և որակական հիմնական արդյունքները (հիմնախնդիրներ, թերություններ, բացթողումներ, դրանց լուծման/վերացման ուղիներ, գործոններ, միտումներ և այլն):

- 7) **Հանրակրթական մոդելային ա/դպրոցների գործունեության հիմնախնդիրների և ֆինանսական արդյունավետության վրա ազդող գործոնների (ըստ որոշակի ուղղությունների) բացահայտում, դրանց ազդեցության չափի մոտավոր գնահատում, դպրոցի ծախսերի-օգուտների վերաբերյալ եզրակացությունների հանգում.**
- 8) **Հանրակրթական ա/դպրոցների ֆինանսական արդյունավետության բարելավման վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստում, քննարկում և ներկայացում.**

Իրականացված հետազոտությունների, վերլուծությունների և գնահատման արդյունքներով, մշակվել են հանրակրթական ա/դպրոցների ֆինանսական արդյունավետության բարելավման վերաբերյալ եզրակացություններ ու առաջարկություններ:

1. ՀՀ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ա/դպրոցներում կրթության ֆինանսավորման հարցը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, ոլորտը կարգավորող այլ օրենքներով և իրավական ակտերով:

1.1. ՀՀ ավագ դպրոցների համակարգի ընդհանուր նկարագրությունը

Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի, Հայաստանի Հանրապետությունում միջնակարգ ընդհանուր կրթությունը իրականացվում է եռաստիճան դպրոցում՝ հետևյալ հաջորդական աստիճաններով՝

- տարրական դպրոց,
- միջին դպրոց,
- ավագ դպրոց:

Միջնակարգ հանրակրթական դպրոցի առաջին երկու աստիճանները կազմում են հիմնական դպրոցը և ընդգրկում են 1-9-րդ դասարանները: Ավագ դպրոցը (միջնակարգ դպրոցի ավագ դասարանները, առանձին գործող ա/դպրոցը, համապատասխան կրթական ծրագիրը) հանդիսանում է միջնակարգ կրթության երրորդ աստիճանը և ընդգրկում է 10-12-րդ դասարանները:

Նոր կրթական համակարգի ներդրումը և անցումը հանրակրթության 12-ամյա ծրագրին սկսվել է 2006 թվականին: Դրան համապատասխան հաստատվել է հանրակրթության նոր չափորոշիչը, վերանայվել են առարկայական ծրագրերն ու դասագրքերը:

12-ամյա կրթական համակարգի առանցքային ուղղություններից մեկը եռամյա ա/դպրոցի կայացումն է՝ ներառյալ ա/դպրոցների կազմակերպական ձևերն ու սկզբունքները: Այդ նպատակով ՀՀ կառավարությունը 2008թ. մարտի 27-ի թիվ 12 արձանագրային որոշմամբ հաստատեց <Ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագիրը>⁵, որում տրված են Հայաստանի հանրակրթության համակարգի համառոտ նկարագրությունը, իրավիճակի վերլուծությունը և ա/դպրոցների հիմնախնդիրները, ա/դպրոցների համակարգի ներդրման անհրաժեշտությունը և նպատակները, ա/դպրոցի կրթական ծրագիրը, կրթական

⁵ <http://www.edu.am/index.php?id=1465&topMenu=-1&menu1=9&menu2=129&arch=0>

գործընթացի կազմակերպումը, ա/դպրոցի ֆինանսավորումը, ա/դպրոցի համակարգի ձևավորումը:

2009-2012 թվականների ա/դպրոցների առանձնացման ծրագրի շրջանակներում միջնակարգ դպրոցների որոշ մասը վերակազմավորվեց ա/դպրոցների և անցավ ՀՀ ԿԳՆ-ան ենթակայության⁶:

Ա/դպրոցների ինստիտուցիոնալ բարեփոխումները, ինքնուրույն գործող ա/դպրոցների համակարգի ձևավորումն ու դրանցում կրթության կազմակերպման հիմնական մոտեցումների ներդրումը ընթացքի մեջ են: Այդ բարեփոխումների հիմնական նպատակներն են՝

- ա) բարձրացնել կրթության որակը.
- բ) ստեղծել աշակերտների համար նախընտրելի հոսքային ուղղության, այդ թվում, նախնական մասնագիտական կրթության ընտրության հնարավորություն.
- գ) նպաստել հանրակրթության արդյունավետության բարձրացմանը:

Ա/դպրոցի առաքելությունն է ապահովել՝

- աշակերտների պատրաստվածությունը ինքնուրույն կյանք վարելու.
- իրենց հակումներին, ընդունակություններին, կարողություններին և նախասիրություններին համապատասխան նախնական, միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունը:

Ներկայումս Հայաստանում գործում են 109 ա/դպրոցներ, որոնցից 7-ը՝ ոչ պետական են (**աղյուսակ 1**): Ա/դպրոցների սովորողների ընդհանուր թիվը կազմում է 44016 մարդ կամ հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների 12.2%-ը: Երևանում են գտնվում ա/դպրոցների 41.3%-ը, որտեղ սովորում են ա/դպրոցների սովորողների 46.9%-ը:

Աղյուսակ 1. Ավագ դպրոցների և դրանցում սովորողների թիվը (2013-2014 ուս.տարի)⁷

Մարզեր և Երևան	Ավագ դպրոցների թիվը		Սովորողների թիվը	
	պետական	ոչ պետական	պետական	ոչ պետական
Երևան	39	6	20239	423
Արագածոտն	3		1093	
Արարատ	5		1658	
Արմավիր	6		2477	

⁶ ՀՀ կառավարության 2010թ. հունվարի 14-ի N 19-Ն «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունն ավագ դպրոցների լիազոր մարմին ճանաչելու և նրան լիազորություններ վերապահելու մասին» որոշմամբ ավագ դպրոցների լիազոր մարմին է ճանաչվել ՀՀ ԿԳՆ-ը:

⁷ <http://stat.amedu.am/?section=content&id=2&year=2013> <http://stat.amedu.am/?section=content&id=24&year=2013>

Գեղարքունիք	7		2675	
Լոռի	9		3294	
Կոտայք	10		4561	
Շիրակ	11		2957	
Սյունիք	5		2396	
Վայոց ձոր	3	1	894	17
Տավուշ	4		1332	
Ընդամենը	102	7	43576	440

1.2. ՀՀ ավագ դպրոցների կառավարումը

Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի, ա/դպրոցների հիմնադիրը ՀՀ կառավարությունն է, որը հիմնադրի՝ օրենքով սահմանված որոշ լիազորություններ փոխանցել է ՀՀ ԿԳՆ-անը:

ՀՀ ա/դպրոցների կառավարման լիազորությունները հիմնականում վերապահված են ՀՀ կառավարությանը և ՀՀ ԿԳՆ-անը: ՀՀ կառավարության իրավասությունների մեջ են մտնում՝ ա/դպրոցի, ինչպես նաև նրա մասնաճյուղի հիմնադրումը, վերակազմակերպումը և լուծարումը, ա/դպրոցի օրինակելի կանոնադրության և դրանում կատարվող փոփոխությունների հաստատումը, օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը: ՀՀ ԿԳՆ-ան իրավասություններն են՝ օրինակելի ուսումնական պլանների մշակումը և հաստատումը, առարկայական ծրագրերի, դասագրքերի և ուսումնական ձեռնարկների, դասամատյանների, գործածության երաշխավորված փաստաթղթերի ձևերի մշակման, փորձաքննության և հրատարակման ապահովումը, օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը:

Ա/դպրոցի կառավարման մարմիններն են նաև խորհուրդը և տնօրենը: Խորհուրդը ձևավորվում է ՀՀ ԿԳ-ան սահմանած կարգով⁸: Ա/դպրոցի խորհրդի լիազորություններն են՝ հիմնադրի սահմանած կարգով տնօրեն ընտրելը, հանրակրթական դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի կարգը հաստատելը, հոգաբարձուների խորհրդի կողմից ներկայացված նախահաշիվը, ինչպես նաև նպատակային ծրագրերը քննարկելը, գույքի օտարման և (կամ) ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների վերաբերյալ տնօրենի ներկայացրած առաջարկությունները լսելը և դրանց հավանություն տալը, և այլն:

⁸ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի «Հայաստանի Հանրապետության <Պետական ուսումնական հաստատություն> պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգը հաստատելու և ՀՀ ԿԳ նախարարի 2006թ. դեկտեմբերի 8-ի N 981-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 113-Ն հրամանն լրամշակված ՀՀ ԿԳ նախարարի 2010թ. հունիսի 15-ի N 579-Ն հրամանով

Ա/դպրոցի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որն ունի ուսումնական հաստատության ղեկավարման հավաստագիր, մրցութային կարգով ընտրվում է ա/դպրոցի խորհրդի կողմից և նշանակվում է (կնքելով համապատասխան աշխատանքային պայմանագիր) ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից: Նա պատասխանատու է հանրակրթության պետական կրթական և առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, սովորողների առողջության պահպանման, կադրերի ընտրության, ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջների պահպանման համար, ինչպես նաև օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորությունների ապահովման համար:

1.3. ՀՀ ավագ դպրոցների ֆինանսավորումը

ՀՀ հանրակրթական ա/դպրոցների ֆինանսական միջոցները գոյանում են ՀՀ պետական բյուջեից և օրենսդրությամբ չարգելված աղբյուրներից⁹: Ա/դպրոցների ֆինանսավորումը, ինչպես բոլոր հանրակրթական ուսումնական հաստատություններինը, հիմնականում կատարվում է ՀՀ պետական բյուջեից՝ հանրակրթության համար նախատեսված միջոցներից ըստ իրականացվող ծրագրերի: Այդ ֆինանսական միջոցները դպրոցների՝ այդ թվում նաև ա/դպրոցների, միջև բաշխվում են աշակերտների թվով ֆինանսավորման բանաձևի գործակիցների մասին ՀՀ ֆինանսների նախարարի ու ՀՀ կրթության և գիտության նախարարի համատեղ հրամանի հիման վրա: ՀՀ պետական բյուջեով ա/դպրոցների համար նախատեսված ֆինանսական միջոցները ՀՀ ՖՆ-ը փոխանցում է ՀՀ ԿԳՆ-անը, իսկ վերջինս էլ այն փոխանցում է ա/դպրոցներին:

Դպրոցների կառավարման ապակենտրոնացման և ինքնավարության աստիճանը, ինչպես նաև բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, միաժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կրթության համակարգի կառավարման ապակենտրոնացման պայմաններում հաստատությունների ֆինանսավորման մեխանիզմները դառնում են ղեկավարման և պետական կրթական քաղաքականության իրականացման կարևորագույն լծակներից մեկը՝ 1998-1999 թվականներին մշակվեց փորձնական ծրագիր, որի շրջանակներում բոլոր հանրակրթական դպրոցներում անցում կատարվեց աշակերտների թվով ֆինանսավորման սկզբունքին, համաձայն որի հաստատությանը հատկացվող բյուջետային միջոցները հաշվարկվում են հետևյալ բանաձևով՝

⁹ <Հանրակրթության մասին> ՀՀ օրենք, հոդված 35

$$Lq = U\text{թ} \times Uq + \text{Պ}q,$$

որտեղ՝

Lq-ն մեկ տարվա համար հաստատությանը հատկացվող ընդամենը գումարն է,

Uթ-ն հաստատության սովորողների թիվն է,

Uq-ն մեկ սովորողին ընկնող տարեկան գումարն է,

Պq-ն հաստատության պահպանման ծախսերի նվազագույն գումարն է:

Փորձնական ծրագրում **Uq** և **Պq** գործակիցները հաշվարկվում էին դպրոցների աշակերտների թվերի և նորմատիվային ծախսերի ռեգրեսիոն վերլուծության հիման վրա:

Աշակերտների թվով ֆինանսավորման եղանակը հետապնդում է հետևյալ նպատակները՝

- բարձրացնել բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետությունը և նպատակայնությունը,
- հիմքեր ստեղծել դպրոցի մակարդակում որոշումների ընդունման համար,
- ապահովել դպրոցների ինքնուրույնությունն իրենց եկամուտների և ծախսերի պլանավորման հարցում,
- խթանել մրցակցությունը դպրոցների միջև,
- տարբերակված մոտեցում ցուցաբերել դպրոցների նկատմամբ,
- ապահովել համայնքի և ծնողների կողմից միջոցների ծախսման վերահսկողությունը,
- ստեղծել նախապայմաններ՝ դպրոցների և դրանց գործունեության առավել ռացիոնալ կազմակերպման, միջոցների խնայողության և նպատակային վերաբաշխման համար:¹⁰

Հաշվի առնելով, որ կրթական ծառայությունների շահառուները ուղղակիորեն հանդիսանում են աշակերտները, ապա որպես մատուցվող ծառայությունների քանակական արդյունքի չափման միավոր հանդես է գալիս կրթվող աշակերտների թիվը, հետևաբար միավոր արդյունքի համար բյուջետային միջոցների ծախսման որոշակի մեծություն սահմանելը՝ այսինքն, դպրոցի ֆինանսավորման չափը որոշակի աստիճանով պայմանավորելը հաստատության գործունեության քանակական արդյունքի հետ, ֆինանսական արդյունավետության տեսանկյունից հիմնավոր է: Միաժամանակ անհրաժեշտ է, որ ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևը բովանդակային առումով բխի հանրակրթության նպատակներից և պետական քաղաքականության սկզբունքներից՝ պետական կարգավորման նպատակով սահմանվող նորմատիվների (սահմանափակումների) հիման վրա, այսինքն մատուցվող ծառայությունների ակնկալվող

¹⁰ ՀՀ կառավարության 1 հունիսի 1999 թվականի N 377 և 28 հոկտեմբերի 1998 թվականի N 661 որոշումներ:

որակական արդյունքից, հակառակ դեպքում այն կարող է հանգեցնել բյուջետային միջոցների ծախսման զգալի անարդյունավետության:

Հանրակրթական դպրոցների ֆինանսավորման բանաձևի **Սգ** և **Պգ** գործակիցների կոնկրետ մեծությունները յուրաքանչյուր տարի հաստատվում են ՀՀ ֆինանսների և ՀՀ կրթության և գիտության նախարարների համատեղ հրամանով, սակայն որևէ փաստաթղթով ներկայացված չէ դրանց հաշվարկման մեթոդաբանությունը: Դրանք սովորաբար հաշվարկվում են ՀՀ ՖՆ-ան կողմից՝ հիմք ընդունելով միջին հանրապետական ցուցանիշները և օրենսդրությամբ նախատեսված ծախսային նորմատիվները:

Ա/դպրոցների քաղաքականությունների և զարգացման ծրագրերի վերաբերյալ առաջարկությունները մշակվում են ՀՀ ԿԳՆ-ան և ՀՀ ՖՆ-ան կողմից (**աղյուսակ 2**):

Աղյուսակ 2. Ա/դպրոցների ֆինանսավորման բանաձևի Սգ և Պգ գործակիցների 2010-2014թթ. մեծությունները¹¹

Գործակցի անվանումը	2010	2011	2012	2013	2014
Ա/դպրոցի 1 սովորողին ընկնող տարեկան գումարը (Սգ), ՀՀ դրամ	105,775	105,775	106,290	111,235	121,097
Ա/դպրոցի պահպանման ծախսերի նվազագույն գումարը (Պգ), ՀՀ հազ. դրամ	15,860.0	16,708.0	16,708.0	16,876.0	տե՛ս ստորև

Մասնավորապես, 2013 թվականի համար մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը սահմանվել է 111.235 հազ. դրամ, իսկ դպրոցի պահպանման ծախսերի նվազագույն գումարը՝ 16876.0 հազ. դրամ¹²: Ընդ որում, հաշվարկը կատարելիս՝ հանրակրթական տարրական դպրոցի համար մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը բազմապատկվել է 0.7986 գործակցով, միջին դպրոցի համար՝ 1.1101 գործակցով, իսկ ա/դպրոցի համար՝ 1.15 գործակցով: Միաժամանակ, կիրառվում են լրացուցիչ գործակիցներ բարձրլեռնային, լեռնային բնակավայրերի և միևնույն բնակավայրում միակ, մինչև 400 աշակերտ ունեցող, ինչպես նաև ա/դպրոցների համար, մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը բազմապատկելով բարձրլեռնային բնակավայրերի դպրոցների համար՝ 1.21 գործակցով, լեռնային բնակավայրերի դպրոցների համար՝ 1.03 գործակցով, միևնույն բնակավայրում միակ, մինչև 400 աշակերտ ունեցող դպրոցների համար՝ 1.2 գործակցով, ա/դպրոցների համար՝ 1.11 գործակցով: Որպես դպրոցի սովորողների թիվ՝ Սթ, ընդունվում է աշակերտների միջին տարեկան թվաքանակը, որը ենթակա է ճշտման ուսումնական տարվա

¹¹ Աղյուսակում բերված գործակիցների 2010-2014թթ. մեծությունները հաստատվել են ՀՀ ֆինանսների և ՀՀ կրթության և գիտության նախարարների տվյալ տարվա Համատեղ հրամանով:

¹² ՀՀ ֆինանսների նախարարի 2012թ. դեկտեմբերի 7-ի թիվ 1077-Ն և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012թ. դեկտեմբերի 12-ի թիվ 1135-Ն <2013 թվականին ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի գործակիցների մասին> Համատեղ հրաման

սկզբին՝ սեպտեմբերի 1-ին, հաշվի առնելով դպրոցի դասարանների փաստացի կոմպլեկտավորումը:

Հանրակրթական դպրոցը կարող է մրցութային հիմունքներով ՀՀ պետական բյուջեից ստանալ նաև լրացուցիչ ֆինանսավորում օրենքով սահմանված նպատակներով, որի կարգը և սահմանում է ՀՀ կառավարությունը¹³:

Ներկայումս ա/դպրոցներում ընդհանուր ուսուցման պետական կարգավորումն իրականացվում է հետևյալ հիմնական օրենսդրական դրույթներով՝

1. հաստատության դասարանների միջին խտությունը ուսումնական պլանի ընդհանուր հանրակրթական և հոսքային ուսուցման առարկաների դասերին սահմանվում է 20-25 սովորող՝ ընդ որում, այդ թիվը չի կարող գերազանցել 30-ը¹⁴: Ֆինանսական միջոցների առկայության դեպքում դասարանի միջին խտությունը կարող է սահմանվել 12-15 սովորող,
2. 2014 թվականին մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը կազմում է 121097 դրամ, իսկ հաստատության պահպանման ծախսերի նվազագույն գումարը մինչև 100 աշակերտ ունեցող դպրոցների համար՝ 16876.0 հազար դրամ (ներառյալ ոչ ուսուցչական անձնակազմի աշխատավարձի տարեկան ֆոնդը), 101-ից մինչև 300 և 301 և ավելի աշակերտ ունեցող դպրոցների համար հաստատության պահպանման ծախսերի նվազագույն գումարը բաղկացած է երկու մասից՝ հաստատության պահպանման ծախսերից՝ 3239.1 հազ. դրամ, և, ելնելով աշակերտների թվաքանակից, ըստ դպրոցների հաշվարկված ոչ ուսուցչական անձնակազմի աշխատավարձի տարեկան ֆոնդից, ընդ որում մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը բազմապատկվում է 1.15432 գործակցով ավագ մակարդակի համար, իսկ ա/դպրոցների համար մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը բազմապատկվում է նաև 1.14 լրացուցիչ գործակցով¹⁵,
3. հաստիքների վերաբերյալ սահմանված է հանրակրթական ուսումնական հաստատություններում մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և դրանց նկարագրերը, վարչական աշխատողների պաշտոնները¹⁶,
4. յուրաքանչյուր ուսումնական տարվա համար հաստատված ուսումնական պլանները՝ շաբաթական 34 դասաժամ¹⁷,

¹³ <Հանրակրթության մասին> ՀՀ օրենք, հոդված 35, կետ 4

¹⁴ ՀՀ կրթության և գիտության նախարարի 1 հունիսի 2013 թվականի N 730-Ն հրաման:

¹⁵ ՀՀ ֆինանսների նախարարի ու ՀՀ կրթության և գիտության նախարարի 20 հունվարի 2014 թվականի համատեղ հրաման:

¹⁶ ՀՀ կառավարության 14 հոկտեմբերի 2010 թվականի N 1391-Ն և 31 հոկտեմբերի 2002 թվականի N 1729-Ն որոշումներ:

¹⁷ ՀՀ կրթության և գիտության նախարարի 1 հունիսի 2013 թվականի N 730-Ն հրաման:

5. պետական ուսումնական հաստատության ուսուցչի մեկ դրույքի լրիվ ուսումնական ծանրաբեռնվածությունը (դասավանդման ծավալը) սահմանվում է շաբաթական 22 դասաժամ,
6. ոչ ուսուցչական անձնակազմի հաստիքների նվազագույն թվաքանակը սահմանվում է ըստ աշակերտների թվաքանակի՝ մինչև 100 աշակերտ ունեցող դպրոցների համար՝ 9 հաստիք, 101-ից 300 աշակերտ ունեցող դպրոցների համար՝ 12, և 301 և ավելի աշակերտ ունեցող դպրոցների համար՝ 15.5¹⁸,
7. ոչ ուսուցչական անձնակազմի հաստիքների նվազագույն ցանկը¹⁹:

Սակայն, գործող օրենսդրությունն ամբողջությամբ չի կարգավորում հանրակրթության ոլորտը, իսկ դրանով սահմանված դրույքների մեծամասնությանը հնարավոր չէ տալ միանշանակ մեկնաբանություններ: Այսինքն՝ գոյություն չունեն նորմատիվ իրավական ակտեր, որոնցով կսահմանվեն հանրակրթական ուսումնական հաստատություններում, այդ թվում ա/դպրոցներում, ղեկավար, վարչատնտեսական, մանկավարժական, ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի պաշտոնների հաստիքային միավորների քանակը և վերջիններիս վարձատրության սկզբունքները, առկա աշակերտների թվի և դրանց փոփոխության դինամիկայի պայմաններում հաստատությունների այն քանակը, որոնցում օբյեկտիվորեն հնարավոր կլինի ապահովել դասարանների սահմանված խտությունը, հաստատության նախագծային հզորության հիման վրա դասարանների նվազագույն և առավելագույն քանակները, իսկ գոյություն ունեցող նորմերը հստակ չեն կարգավորում դասարաններ բացելու, վերջիններս ըստ խմբերի բաժանելու (կիսելու) պայմանները:

Հաշվի առնելով, որ վերը նկարագրված գործոններով է պայմանավորված դպրոցների կողմից իրականացվող ծախսերի մեծությունը, որոնք օրենսդրորեն լիարժեք չեն կարգավորվում, աշակերտների թվով ֆինանսավորման գործող բանաձևը ներդաշնակ չէ վերջիններիս հետ:

Դպրոցների ծախսերի կառուցվածքում առկա ծախսատեսակը, որն ինչ որ չափով պայմանավորված է հաստատությունում առկա աշակերտների թվով, ուսուցիչների աշխատավարձն է, քանի որ այն կախված է յուրաքանչյուր դասարանի համար հաստատված ուսումնական պլանով սահմանված շաբաթական դասաժամերի քանակից՝ այսինքն, դասարանների քանակից:

¹⁸ ՀՀ ֆինանսների նախարարի ու ՀՀ կրթության և գիտության նախարարի 20 հունվարի 2014 թվականի համատեղ հրաման:

¹⁹ ՀՀ կրթության և գիտության նախարարի 9 դեկտեմբերի 2013 թվականի N1366 – Ա/Ք հրաման:

Հանրակրթական դպրոցների ֆինանսավորման բանաձևը որոշակի փոփոխությունների ենթարկվեց 2014 թվականին՝ դպրոցները դասակարգվեցին ըստ «մինչև 100», «101-300», «301 և ավելի» աշակերտ ունեցող հանրակրթական դպրոցների և սահմանվեցին ոչ ուսուցչական՝ վարչական, ուսումնաօժանդակ աշխատակազմի տիպային հաստիքները և այդ հաստիքների նվազագույն քանակները (**աղյուսակ 3**): Միաժամանակ, ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի «**մեկ սովորողին ընկնող տարեկան գումար**» փոփոխական բաղադրիչի հաշվարկից հանվեց ոչ ուսուցչական անձնակազմի աշխատավարձի ֆոնդը, քանի որ դա ուղղակիորեն կապված չէ դպրոցում առկա աշակերտների թվի հետ: Նշված փոփոխությունով ակնկալվում էր նվազեցնել ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի առաձգականության աստիճանը, այսինքն՝ որոշակի չափով նվազեցնել դպրոցների ֆինանսավորման մեծության կախվածությունը դպրոցներում առկա աշակերտների թվից:

Աղյուսակ 3. 2014թ. դպրոցների դասակարգումն ըստ աշակերտների թվի և ոչ ուսուցչական աշխատակազմի նվազագույն հաստիքների թվաքանակը²⁰

Մինչև 100 աշակերտ ունեցող դպրոցներ	101-300 աշակերտ ունեցող դպրոցներ	301 և ավելի աշակերտ ունեցող դպրոցներ
Տնօրեն 1	Տնօրեն 1	Տնօրեն 1
	Տնօրենի տեղակալ 1	Տնօրենի տեղակալ 2
Պահակ/Դռնապան 4	Պահակ/ Դռնապան 4	Պահակ/ Դռնապան 4
Հավաքարար 2	Հավաքարար 2	Հավաքարար 3
Օպերատոր 0.5	Օպերատոր 0.5	Օպերատոր 1.5
Հաշվապահ 0.5	Հաշվապահ 1	Հաշվապահ 1
Գրադարանավար 0.5	Գրադարանավար 1	Գրադարանավար 1
Լաբորանտ 0.5	Լաբորանտ 1.5	Լաբորանտ 2
Ընդամենը՝ 9, որից 1-ը վարչական, 8-ը՝ ուսումնաօժանդակ	Ընդամենը՝ 12, որից 2-ը վարչական, 10-ը՝ ուսումնաօժանդակ	Ընդամենը՝ 15.5, որից 3-ը վարչական, 12.5-ը՝ ուսումնաօժանդակ

Սակայն, կատարված փոփոխությունների արդյունքում հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների 2014 թվականի ֆինանսավորման համար սահմանվեց բաղադրիչների չափաքանակների այնպիսի բանաձև, համաձայն որի «մեկ սովորողին ընկնող տարեկան գումար» փոփոխական բաղադրիչը և վերջինիս վրա կիրառվող գործակիցներն աճեցին, իսկ.

²⁰ ՀՀ ֆինանսների նախարարի ու ՀՀ կրթության և գիտության նախարարի 20 հունվարի 2014 թվականի համատեղ հրաման և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2013թ. դեկտեմբերի 9-ի N1366 – Ա/Ք հրաման:

ա. «հաստատության պահպանման ծախսերի նվազագույն գումար» հաստատուն բաղադրիչը՝ առանց այն էլ ֆինանսապես խոցելի՝ մինչև 300 աշակերտներ ունեցող դպրոցների համար, նվազեց կամ մնաց անփոփոխ,

բ. ֆինանսապես կայուն՝ 301 և ավելի աշակերտներ ունեցող դպրոցների համար «հաստատության պահպանման ծախսերի նվազագույն գումար» հաստատուն բաղադրիչը զգալիորեն աճեց:

Եվ այսպես, 2014 թվականին՝

- «մինչև 100» աշակերտ ունեցող հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների համար՝ այդ թվում ա/դպրոցների, հաստատության պահպանման ծախսերի նվազագույն գումարը կազմում է 16876.0 հազար դրամ (ներառյալ ոչ ուսուցչական անձնակազմի աշխատավարձի տարեկան ֆոնդը),
- «101-300» և «301 և ավելի» աշակերտ ունեցող հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների համար՝ այդ թվում ա/դպրոցների, հաստատության պահպանման ծախսերի նվազագույն գումարը բաղկացած է երկու մասից՝ 3239.1 հազար դրամից, և ըստ դպրոցների դասակարգման՝ ըստ դպրոցների հաշվարկված ոչ ուսուցչական անձնակազմի աշխատավարձի տարեկան ֆոնդից,
- ա/դպրոցներում մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը՝ 121097 դրամը, բազմապատկվում է 1.15432 գործակցով և 1.14 լրացուցիչ գործակցով²¹:

Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ համաձայն ՀՀ կառավարության 2014թ. հունվարի 16-ի N16-Ն որոշման, նախատեսվել է դրույթ, համաձայն որի ՀՀ յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի հաստատումից հետո մեկ ամսվա ընթացքում պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերում կարելի է կատարել վերաբաշխումներ, այսինքն հնարավորություն է տրվում «հարուստ դպրոցի» բանաձևով հաշվարկված ֆինանսավորման չափը նվազեցնել և նույն չափով ավելացնել «աղքատ դպրոցի» բանաձևով հաշվարկված ֆինանսավորման չափին: Սակայն, նշված դրույթը կիրառելի չէ հետևյալ պատճառներով.

- հակասում է ըստ աշակերտների թվի ֆինանսավորման տրամաբանությանը, այսինքն կարելի էր միանգամից բոլոր դպրոցներին ֆինանսավորել վերջիններիս ծախսերին համապատասխան՝ առանց հաշվի առնելու ըստ աշակերտների թվով ֆինանսավորման բանաձևը,
- հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված «միավորի արժեք» հասկացությանը²²,

²¹ ՀՀ ֆինանսների նախարարի ու ՀՀ կրթության և գիտության նախարարի 20 հունվարի 2014 թվականի N 35-Ն համատեղ հրաման

- ուսումնական հաստատությունների տարեկան ֆինանսավորման չափը հաստատվում է յուրաքանչյուր տարվա սեպտեմբերին՝ դասարանների փաստացի կոմպլեկտավորման արդյունքում դպրոցների աշակերտների թվի հիման վրա և վերջիններիս հիման վրա նաև սահմանվում են ուսումնական հաստատությունների ծախսերի ճշտված նախահաշիվները: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր տարվա հունվարին հնարավոր չէ հստակ կանխատեսումներ անել տարեվերջին դպրոցներում առաջացող դրամական ճեղքվածքների (դեֆիցիտի) և հավելուրդների չափերի վերաբերյալ:

Ա/դպրոցների կտրվածքով 2014թ. ֆինանսական միջոցների վերաբերյալ տվյալները դեռևս չեն հրապարակվել²³: Թերևս բացառություն է միայն ՀՀ ՖՆ-ան կայքում²⁴ տեղադրված ՀՀ ԿԳՆ ենթակայության տակ գտնվող ա/դպրոցների, վարժարանների, կրթահամալիրների, որոշ ԲՈՒՀ-երի ՊՈԱԿ-ների ֆինանսավորման մասին տեղեկատվությունը: Այն պարունակում է թվով 115 ուսումնական հաստատությունների 2014թ. պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների չափերը և տվյալ պահի դրությամբ ֆինանսավորված մասի մեծությունները: Այսպես, համաձայն կայքի տվյալների, այդ ուսումնական հաստատություններին 2014թ. նախատեսված է տրամադրել 6,965,413,800 դրամ, որը նշանակում է, որ մեկ ուսումնական հաստատությանը միջին հաշվով բաժին է ընկնում 60,568, 815 դրամ գումար:

Այսպիսով, Հանրապետության մասշտաբով տվյալների անհասանելիության պատճառով հնարավոր չէ վերլուծություններ կատարել ա/դպրոցների պետական ֆինանսավորման և այդ ֆինանսական միջոցների օգտագործման վերաբերյալ: Նման վերլուծություն կատարվել է սույն ծրագրի շրջանակներում մոդելային 18 ա/դպրոցների կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա (տե՛ս ստորև 3-րդ բաժինը և հավելված 1-ում բերված տեղեկատվությունը):

1.4. Կրթության համակարգի ֆինանսավորման ուժեղ և թույլ կողմերը

Կրթությունը ռազմավարական նշանակության ոլորտ է, որի զարգացման հիմնական նախապայմաններից մեկը ֆինանսավորման արդյունավետ համակարգի կիրառումն է:

Վերջին 15 տարիների ընթացքում հանրակրթության համակարգի ֆինանսավորման բարեփոխումներն իրենց դրական ազդեցությունն ունեցան համակարգի

²² Փաստացի հնարավորություն է առաջանում նույն ծավալի ու որակի կրթական ծառայություններ մատուցելու համար վճարել տարբեր արժեքներ:

²³ Ավագ դպրոցների 2014թ. ֆինանսական տվյալներ հնարավոր չեղավ վերցնել նաև ՀՀ ԿԳՆ-ից:

²⁴ <http://www.minfin.am/index.php?cat=71&lang=1>

արդյունավետության բարձրացման վրա, սակայն դեռևս առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք սահմանափակում են համակարգի առաջանցիկ զարգացումը:

Ըստ սովորողների թվի դպրոցների ֆինանսավորումը նպատակ էր հետապնդում բարձրացնել ծախսերի նպատակայնությունը՝ ապակենտրոնացնելով ծախսային ուղղությունների որոշումների կայացումը, խթանել դպրոցների ջանքերը՝ բարելավելու կրթության որակը և բարձրացնելու ուսուցման արդյունավետությունը: Այս մեխանիզմը կարող է արդյունավետ գործել այն դեպքերում, երբ կա շահառուների մեծ ծավալ, և դպրոցը պետք է ջանքեր գործադրի նրանց ներգրավելու ուղղությամբ: Վերջին տարիներին Հանրապետությունում տարեց-տարի նվազում է աշակերտների թիվը և դպրոցները՝ այդ թվում՝ նաև ա/դպրոցները, հնարավորություն չեն ունենում շահառուների մեծ թիվ ունենալ, որի արդյունքում սովորողների փոքրաթիվության հետևանքով հայտնվում են դժվարին իրավիճակում: Ինչպես ցույց է տալիս փորձը, պետական ֆինանսավորումը հիմնականում բավարարում է «պարտադիր ծախսերի» կատարմանը և քիչ տեղ է թողնում դպրոցների զարգացման համար միջոցներ հատկացնելու հնարավորություններին:

Դպրոցների ֆինանսավորման համակարգում առաջընթաց կարելի է համարել անցումը ծրագրային բյուջետավարման քաղաքականությանը: Այն նպաստում է ոչ միայն ծախսերի թափանցիկության բարձրացմանը, այլև ծախսերի նպատակայնության մեծացմանը: Դեռևս հանրակրթության ոլորտում ծրագրային ֆինանսավորման գաղափարախոսությունը, այն է՝ ոչ ֆինանսական ցուցանիշների սահմանում, ամբողջությամբ ներդրված չէ, ինչը հնարավորություն չի տալիս արդյունավետ ձևով պլանավորել դպրոցների ծախսային քաղաքականությունը: ՀՀ ԿԳՆ-ը, որպես ա/դպրոցների կառավարման լիազորված մարմին, ինչպես մնացած նախարարությունների դեպքում է, դեռևս լիարժեքորեն չեն տիրապետում ծրագրային բյուջետավարման, ոլորտի զարգացման ծրագրերի և դրանց գնահատման ցուցանիշների մշակման հմտություններին: Ոչ ֆինանսական ցուցանիշների բացակայությունը նաև թույլ չի տալիս իրականացնել ծրագրերի իրականացման արդյունավետ մոնիթորինգ: Միակ լծակը հանգում է սովորողների թվերի վերահսկմանը, սակայն, ինչպես ցույց է տալիս փորձը, տարբեր աղբյուրներում ներկայացված են տարբեր թվեր՝ ֆինանսավորման հիմքում և վիճակագրական հաշվետվություններում ներկայացվող տվյալների հաշվարկման մեթոդաբանությունները տարբեր են: Սովորողների հաշվառման վստահելի և արդյունավետ համակարգի բացակայությունը ծնում է նաև որոշակի կոռուպցիոն ռիսկեր: Այդ կապակցությամբ ՀՀ ԿԳՆ-ում ներկայումս մշակվում է սովորողների անհատականացված տվյալների շտեմարան, որը հնարավորություն կտա բացառել երեխայի միաժամանակյա հաշվառումը տարբեր դպրոցներում, ինչպես նաև կնպաստի կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերմանը:

Կրթության ոլորտի զարգացման կարևոր խոչընդոտներից է ֆինանսավորման փոքր ծավալը: Չնայած բացարձակ թվով այն տարեցտարի աճում է Հայաստանում, սակայն որպես ՀՆԱ-ի բաժնեմաս այն վերջին տարիներին նվազել է՝ հասնելով 2.5%-ի: Այս ցուցանիշը ցածր է ոչ միայն զարգացած երկրների ցուցանիշներից, այլև Հայաստանի հետ համադրելի շատ երկրների ցուցանիշներից: Այն վտանգում է ինչպես Հայաստանի՝ որպես կրթությունը կարևորող երկրի, իմիջը, այնպես էլ հնարավորություն չի տալիս լայնածավալ զարգացման ծրագրերի իրականացման համար:

2. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՄՈՂԵԼԱՅԻՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ, ԴՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ ԿԳՆ ենթակայությամբ գործող հանրակրթական 102 ա/դպրոցներից պատահականության սկզբունքով ընտրվել են մոդելային 18 ա/դպրոցներ, այդ թվում Երևան քաղաքից՝ 5, ՀՀ Արագածոտնի մարզից՝ 2, ՀՀ Արարատի մարզից՝ 2, ՀՀ Արմավիրի մարզից՝ 2, ՀՀ Գեղարքունիքի մարզից՝ 5, ՀՀ Կոտայքի մարզից՝ 2 (**աղյուսակ 4**):

Աղյուսակ 4. ՀՀ ԿԳՆ ենթակայությամբ գործող մոդելային ա/դպրոցների ցանկը՝ ըստ Երևանի վարչական շրջանների և մարզերի համայնքների

Հh	Երևան քաղաքը կամ ՀՀ մարզը	Վարչական շրջանը կամ համայնքը	Ա/դպրոցի անվանումը	Ա/դպրոցի հասցեն	Ա/դպրոցի հեռախոսի համարը
1	Երևան քաղաք	Աջափնյակ	Թիվ 195 ա/դ	Մազմանյան փող. 5ա	010 35 95 55
2		Արաբկիր	Թիվ 83 ա/դ	Օրբելու փող. 63	010 22 74 41
3		Կենտրոն	Թիվ 42 ա/դ	Մաշտոցի պող. 5/2	010 53 56 41
4		Մալաթիա-Սեբաստիա	Թիվ 190 ա/դ	ՀԱ Բ-2 թաղ.	010 722160
5		Շենգավիթ	Թիվ 65 ա/դ	Ֆրունզեի փող. 56	010 48 01 11 010 48 09 22
6	ՀՀ Արագածոտնի մարզ	ք. Աշտարակ	Թիվ 5 ա/դ	Տիգրան Մեծի փող. 99	0232 3 31 72
7		ք. Ապարան	Ա/դ	Գ. Նժդեհի փող.	0252 2 51 38
8	ՀՀ Արարատի մարզ	ք. Արտաշատ	Թիվ 4 ա/դ	Տերյան փող. 1	0235 2 07 39
9		ք. Վեդի	Թիվ 3 ա/դ	Կասյան փող. 64	0234 2 46 23
10	ՀՀ Արմավիրի մարզ	ք. Արմավիր	Թիվ 1 ա/դ	Հ. Ավետիսյան փող. 4	0237 2 06 27
11		ք. Վաղարշապատ	Թիվ 10 ա/դ	Զվարթնոց թաղ.	0231 7 20 22
12	ՀՀ Գեղարքունիքի մարզ	ք. Գավառ	Ա/դ	Թումանյան փող. 3	0264 2 29 06
13		ք. Մարտունի	Ա/դ	Նարեկացի 7	0262 4 23 84
14		ք. Սևան	Ա/դ	Աբովյան փող. 6	0261 2 35 54
15		գ. Վարդենիկ	Կրթահամալիր	Կենտրոն թաղ.	094 06 95 55
16		գ. Չորագյուղ	Ա/դ	Կենտրոն թաղ.	094 80 46 32
17	ՀՀ Կոտայքի մարզ	ք. Աբովյան	Թիվ 4 ա/դ	Ռոսիա փող. 26	0222 3 78 66
18		ք. Հրազդան	Թիվ 13 ա/դ	Կենտրոն թաղ.	0223 3 28 51

Ընտրված մոդելային 18 ա/դպրոցներից հավաքագրվել է վիճակագրական տեղեկատվություն այդ դպրոցների վերաբերյալ՝ բացարձակ ցուցանիշների տեսքով (**հավելված 1**): Այդ տեղեկատվությունը ներառում է հետևյալ ցուցանիշների խմբերը՝

- **Ընդհանուր ցուցանիշներ.** 2013թ. հունվարի, սեպտեմբերի և 2014թ. հունվարի դրությամբ, դպրոցի նախագծային հզորությունը, փաստացի սովորողների թիվը և դասարանների թիվը՝ ըստ 5-9, 10, 11, 12-րդ դասարանների, աշխատողների թիվը, այդ թվում՝ մանկավարժների թիվը և ոչ մանկավարժական աշխատողների թիվը:
- **Դասաժամաքանակային ցուցանիշներ.** Դպրոցում 2012-2013 ուսումնական տարվա II կիսամյակի և 2013-2014 ուսումնական տարվա I կիսամյակի ընթացքում դասավանդված դասաժամերի ընդհանուր թիվը և սովորողների բացակայած դասաժամերի ընդհանուր թիվը՝ ըստ 10, 11, 12-րդ դասարանների:
- **Առաջադիմության և ուսման որակի ցուցանիշներ.** Սովորողների առաջադիմությունը / ուսման որակը՝ ըստ դպրոցում առկա հոսքերի (ընդհանուր, հումանիտար, բնագիտական, այլ) 10, 11, 12-րդ դասարանների և դասավանդվող հիմնական առարկաների:
- **Ֆինանսական ցուցանիշներ.** Դպրոցի 2013-2014 ուսումնական տարվա I կիսամյակի (2013թ. սեպտեմբեր-դեկտեմբեր) և II կիսամյակի (2014թ. հունվար-օգոստոս) ընթացիկ (աշխատողների աշխատավարձի, դպրոցի պահպանման և այլ ծախսերի գծով) և կապիտալ ծախսերը: Բացի այդ, մոդելային 18 ա/դպրոցներից հավաքագրվել են նաև այդ դպրոցների 2013թ. եկամուտների և ծախսերի կատարման տարեկան հաշվետվությունների պատճենները²⁵:

Մոդելային 18 ա/դպրոցներից 15-ն, իրենց նախագծային հզորությամբ, համարվում են պայմանական <մեծ> դպրոցներ (նախատեսված սովորողների թիվը գերազանցում է 500-ը), միայն 3-ը՝ պայմանական <փոքր> դպրոցներ, այդ թվում՝ Վաղարշապատի թիվ 10 ա/դպրոցը (նախատեսված է 500 սովորողի համար), Մարտունու ա/դպրոցը (350 սովորող) և Ձորագյուղի ա/դպրոցը (360 սովորող): Սակայն, մոդելային ա/դպրոցները դիտարկելով <դպրոցում փաստացի սովորողների թիվը> ցուցանիշի տեսանկյունից, 18 ա/դպրոցներից միայն 8-ում է այդ ցուցանիշը գերազանցում 500 սովորողին, իսկ մնացած 10-ում այն փոքր է 500 սովորողից: Սա նշանակում է, որ մոդելային ա/դպրոցները հիմնականում նկատելի թերբեռնված են (նախագծային հզորության 1/3-ից մինչև 2/3 չափով) և այս փաստը հանրակրթության բնագավառի պատկան մարմինների համար լուրջ մտահոգության պատճառ պետք է հանդիսանա:

²⁵ Մոդելային 18 ա/դպրոցներն այդ տեղեկատվությունը ծրագրին ներկայացրել են ոչ միատեսակ ձևով՝ տարբեր փաստաթղթերի (եկամուտների և ծախսերի նախահաշվի, դպրոցի և ՀՀ ԿԳՆ միջև կնքված՝ կրթական ծառայությունների մատուցման պայմանագրի հավելվածներ 1-4-ով սահմանված հաշվետվությունների և այլնի) տեսքով:

3. Հանրակրթական մոդելային ավագ դպրոցների առկա վիճակի բնութագրումը, վերլուծությունը և գնահատումը

Կրթության համակարգի զարգացման կարևոր նախապայման է համակարգի արդյունավետության բարձրացումը²⁶: Կրթության համակարգի արդյունավետության բարձրացման կարևոր հիմնախնդիրներից և նախապայմաններից է ցուցանիշների արդյունավետ համակարգի ներդրումը, որը հնարավորություն կտա մշակել փաստերի վրա հիմնված քաղաքականություններ²⁷:

Այդ դիտանկյունից մոդելային 18 ա/դպրոցների փաստացի վիճակը բնութագրելու և վերլուծելու, ինչպես նաև դրանք իրար հետ համեմատելու և դրանց վարկանիշային դասակարգում կատարելու համար ավելի նպատակահարմար է դպրոցների վերաբերյալ տեղեկատվությունը՝ բացարձակ ցուցանիշների տեսքով, օգտագործել կրթության որակի և արդյունավետության (այդ թվում՝ ֆինանսական) որոշակի հարաբերական ցուցանիշների սահմանման, հաշվարկման և գնահատման համար: Այդ նպատակով, դիտարկվել, հաշվարկվել և գնահատվել են հետևյալ հարաբերական ցուցանիշները՝ դասակարգելով դրանք ըստ որոշակի խմբերի (հավելված 2)

3.1. Կրթության համակարգային ընդհանուր (ոչ ֆինանսական) ցուցանիշների սահմանումը և գնահատումը

Ցուցանիշ 1 (Ց1). Դպրոցի 1 դասարանի սովորողների միջին թիվը (դասարանների միջին խտությունը) (բանաձև՝ սովորողների թիվ / դասարանների թիվ), (աղյուսակ 5)

Աղյուսակ 5. Մոդելային 18 ա/դպրոցների վարկանիշային դասակարգումն 2014թ. հունվարի դրությամբ՝ ըստ 1 դասարանի սովորողների միջին թվի (դասարանների միջին խտության), նվազման կարգով

ՀՀ	Դպրոցի անվանումը	Ց1-ի արժեքը, 5-9 դաս.		Ց1-ի արժեքը, 10-12 դաս.		Ց1-ի արժեքը, ընդհ. դպրոցը	
		2013թ. հունվ.	2014թ. հունվ.	2013թ. հունվ.	2014թ. հունվ.	2013թ. հունվ.	2014թ. հունվ.
I.	Փաստացի բարձր խտության դասարաններով դպրոցներ			Ց1 > 25			
	-						

²⁶ <Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիր> ՀՀ օրենք, հավելված, կետ 51, էջ 21

²⁷ <Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիր> ՀՀ օրենք, հավելված, կետ 54, էջ 23

II.	ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ միջին խտության դասարաններով դպրոցներ			20 <= 31 <= 25			
1.	Արարատի մարզի Արտաշատի թիվ 4 ա/դ	24.7	23.0	21.9	22.6	23.0	22.7
2.	Արմավիրի մարզի Վաղարշապատի թ. 10 ա/դ	-	-	20.0	22.5	20.0	22.5
3.	Երևանի Շենգավիթ վ/շ թիվ 65 ա/դ	25.0	26.3	20.5	22.0	21.3	22.7
4.	Երևանի Մալաթիա-Սեբաստիա վ/շ թիվ 190 ա/դ	29.3	28.9	24.3	21.8	26.5	24.3
5.	Երևանի Աջափնյակ վ/շ թիվ 195 ա/դ	24.1	25.6	21.2	21.8	21.8	22.4
6.	Արագածոտնի մարզի Աշտարակի թիվ 5 ա/դ	24.8	24.0	24.4	21.5	24.5	22.2
7.	Գեղարքունիքի մարզի Սևանի ա/դ	22.5	22.1	21.3	21.5	21.8	21.7
8.	Գեղարքունիքի մարզի Վարդենիկի ա/դ	19.3	18.7	22.8	21.4	21.3	20.2
9.	Երևանի Արաբկիր վ/շ թիվ 83 ա/դ	22.0	-	22.3	20.7	22.3	20.7
10.	Արմավիրի մարզի Արմավիրի թիվ 1 ա/դ	-	-	23.6	20.6	23.6	20.6
11.	Կոտայքի մարզի Աբովյանի թիվ 4 ա/դ	23.2	22.2	21.5	20.3	22.1	21.0
12.	Գեղարքունիքի մարզի Գավառի ա/դ	22.0	21.0	20.2	20.3	20.6	20.4
III.	Փաստացի ցածր խտության դասարաններով դպրոցներ			31 < 20			
13.	Երևանի Կենտրոն վ/շ թիվ 42 ա/դ	24.3	24.7	19.7	19.8	20.5	20.5
14.	Կոտայքի մարզի Հրազդանի թիվ 13 ա/դ	25.4	24.1	19.9	19.0	22.0	20.7
15.	Գեղարքունիքի մարզի Ձորագյուղի ա/դ	-	-	18.9	18.8	18.9	18.8
16.	Արագածոտնի մարզի Ապարանի ա/դ	18.5	16.3	21.4	18.6	20.3	18.0
17.	Արարատի մարզի Վեդու թիվ 3 ա/դ	17.7	14.5	17.9	18.5	17.9	18.1
18.	Գեղարքունիքի մարզի Մարտունու ա/դ	26.9	26.0	18.5	18.4	21.3	20.9

Փաստացի, մոդելային 18 ա/դպրոցներից ոչ մեկի 10-12-րդ դասարանների միջին խտությունը բարձր չէ ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմից՝ 25 սովորողից: Սակայն, այդ դպրոցներից 6-ի 10-12-րդ դասարանների միջին խտությունը, 2014թ. հունվարի դրությամբ, փոքր է 20 սովորողից, որն էլ նշանակում է, որ այդպիսի դասարանների բացման ֆինանսավորումը պետք է կատարվի դպրոցի լրացուցիչ ֆինանսական միջոցների հաշվին՝ դպրոցի խորհրդի որոշմամբ: Պետք է նաև նկատել, որ այդպիսի դպրոցներ կան ինչպես ՀՀ տարբեր մարզերում, այնպես էլ Երևան քաղաքում, մասնավորապես՝ Կենտրոն վարչական շրջանում:

Համեմատելով մոդելային 18 ա/դպրոցների 10-12-րդ դասարանների միջին խտության ցուցանիշի արժեքները 2013թ. հունվարի և 2014թ. հունվարի դրությամբ, տեսնում ենք, որ այդ դպրոցներից 8-ում դրանք մեկ տարվա ընթացքում աճել են, իսկ 10-ում՝ նվազել, որը պայմանավորված է նրանով, թե դպրոցների սովորողների թիվը մեկ տարվա ընթացքում աճել է, թե նվազել (տե՛ս հավելված 1):

Ցուցանիշ 2 (Ց2). Դպրոցի 1 դասարանին ընկնող մանկավարժների միջին թիվը (բանաձև՝ մանկավարժների թիվ / դասարանների թիվ), (աղյուսակ 6)

Ցուցանիշ 3 (Յ3). Դպրոցի 1 դասարանին ընկնող ոչ մանկավարժական աշխատողների միջին թիվը (բանաձև՝ ոչ մանկավարժական աշխատողների թիվ / դասարանների թիվ), (աղյուսակ 7)

Աղյուսակ 6. Մոդելային 18 ա/դպրոցների վարկանիշային դասակարգումը 2014թ. հունվարի դրությամբ՝ ըստ 1 դասարանին ընկնող մանկավարժների միջին թվի, աճման կարգով

ՀՀ	Դպրոցի անվանումը	Ց2-ի արժեքը		Ց3-ի արժեքը	
		2013թ. հունվ.	2014թ. հունվ.	2013թ. հունվ.	2014թ. հունվ.
I.	Փաստացի մանկավարժներով ցածր ծանրաբեռնվածության դպրոցներ	Ց2 < 2.0			
1.	Երևանի Շենգավիթ վ/2 թիվ 65 ա/դ	1.6	1.8	0.7	0.7
2.	Երևանի Աջափնյակ վ/2 թիվ 195 ա/դ	1.8	1.8	0.6	0.5
3.	Երևանի Արաբկիր վ/2 թիվ 83 ա/դ	1.8	1.8	0.5	0.8
4.	Գեղարքունիքի մարզի Մարտունու ա/դ	1.8	1.8	1.0	1.0
5.	Կոտայքի մարզի Հրազդանի թիվ 13 ա/դ	1.8	1.8	1.2	1.3
6.	Երևանի Մալաթիա-Սեբաստիա վ/2 թիվ 190 ա/դ	1.8	1.9	0.5	0.5
7.	Արարատի մարզի Արտաշատի թիվ 4 ա/դ	1.9	1.9	0.7	0.7
8.	Երևանի Կենտրոն վ/2 թիվ 42 ա/դ	2.0	1.9	0.7	1.1
II.	Փաստացի մանկավարժներով միջին ծանրաբեռնվածության դպրոցներ	2.0 <= Ց2 <= 2.5			
9.	Գեղարքունիքի մարզի Վարդենիկի ա/դ	2.0	2.0	1.1	1.2
10.	Արարատի մարզի Վեդու թիվ 3 ա/դ	1.8	2.1	1.3	1.4
11.	Կոտայքի մարզի Աբովյանի թիվ 4 ա/դ	2.0	2.1	0.8	1.0
12.	Արագածոտնի մարզի Աշտարակի թիվ 5 ա/դ	2.2	2.4	0.5	0.5
13.	Արագածոտնի մարզի Ապարանի ա/դ	2.2	2.4	0.8	0.9
14.	Գեղարքունիքի մարզի Գավառի ա/դ	2.1	2.5	0.9	1.1
III.	Փաստացի մանկավարժներով բարձր ծանրաբեռնվածության դպրոցներ	Ց2 > 2.5			
15.	Գեղարքունիքի մարզի Չորագյուղի ա/դ	2.8	2.7	1.2	1.3
16.	Գեղարքունիքի մարզի Սևանի ա/դ	2.5	2.9	0.7	0.9
17.	Արմավիրի մարզի Արմավիրի թիվ 1 ա/դ	3.0	3.2	0.9	0.8
18.	Արմավիրի մարզի Վաղարշապատի թիվ 10 ա/դ	2.7	3.4	1.4	1.8

Մոդելային 18 ա/դպրոցներն՝ ըստ 1 դասարանին ընկնող մանկավարժների միջին թվի ցուցանիշի, դասակարգվել են հետևյալ խմբերի՝

- 1) փաստացի մանկավարժներով ցածր ծանրաբեռնվածության դպրոցներ (1 դասարանին ընկնող մանկավարժների միջին թիվը փոքր է 2-ից)՝ 8 ա/դպրոցներ,
- 2) փաստացի մանկավարժներով միջին ծանրաբեռնվածության դպրոցներ (1 դասարանին ընկնող մանկավարժների միջին թիվը մեծ է կամ հավասար 2-ից և փոքր է կամ հավասար 2.5-ից)՝ 6 ա/դպրոցներ,

- 3) փաստացի մանկավարժներով բարձր ծանրաբեռնվածության դպրոցներ (1 դասարանին ընկնող մանկավարժների միջին թիվը մեծ է 2.5-ից)՝ 4 ա/դպրոցներ:

Այս ցուցանիշով ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ Երևանի մոդելային բոլոր 5 ա/դպրոցներն էլ համարվում են փաստացի աշխատող մանկավարժներով ցածր ծանրաբեռնվածության դպրոցներ, իսկ մարզերի մոդելային 13 ա/դպրոցներից միայն 3-ն են համարվում այդպիսին, մնացած 10-ը համարվում են փաստացի աշխատող մանկավարժներով միջին կամ բարձր ծանրաբեռնվածության դպրոցներ: Այս ցուցանիշի արժեքը հատկապես բարձր է Արմավիրի, Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերի համապատասխանաբար թվով 2, 3 և 2 ա/դպրոցներում (տե՛ս աղյուսակ 6):

Աղյուսակ 7. Մոդելային 18 ա/դպրոցների վարկանիշային դասակարգումը 2014թ. հունվարի դրությամբ՝ ըստ 1 դասարանին ընկնող ոչ մանկավարժական աշխատողների միջին թվի, աճման կարգով

ՀՀ	Դպրոցի անվանումը	82-ի արժեքը		83-ի արժեքը	
		2013թ. հունվ.	2014թ. հունվ.	2013թ. հունվ.	2014թ. հունվ.
I.	Փաստացի ոչ մանկավարժական աշխատողներով ցածր ծանրաբեռնվածության դպրոցներ			83 < 0.5	
	-				
II.	Փաստացի ոչ մանկավարժական աշխատողներով միջին ծանրաբեռնվածության դպրոցներ			0.5 <= 83 <= 1.0	
1.	Երևանի Մալաթիա-Սեբաստիա վ/2 թիվ 190 ա/դ	1.8	1.9	0.5	0.5
2.	Երևանի Աջափնյակ վ/2 թիվ 195 ա/դ	1.8	1.8	0.6	0.5
3.	Արագածոտնի մարզի Աշտարակի թիվ 5 ա/դ	2.2	2.4	0.5	0.5
4.	Երևանի Շենգավիթ վ/2 թիվ 65 ա/դ	1.6	1.8	0.7	0.7
5.	Արարատի մարզի Արտաշատի թիվ 4 ա/դ	1.9	1.9	0.7	0.7
6.	Երևանի Արաբկիր վ/2 թիվ 83 ա/դ	1.8	1.8	0.5	0.8
7.	Արմավիրի մարզի Արմավիրի թիվ 1 ա/դ	3.0	3.2	0.9	0.8
8.	Արագածոտնի մարզի Ապարանի ա/դ	2.2	2.4	0.8	0.9
9.	Գեղարքունիքի մարզի Սևանի ա/դ	2.5	2.9	0.7	0.9
10.	Գեղարքունիքի մարզի Մարտունու ա/դ	1.8	1.8	1.0	1.0
11.	Կոտայքի մարզի Աբովյանի թիվ 4 ա/դ	2.0	2.1	0.8	1.0
III.	Փաստացի ոչ մանկավարժական աշխատողներով բարձր ծանրաբեռնվածության դպրոցներ			83 > 1.0	
12.	Երևանի Կենտրոն վ/2 թիվ 42 ա/դ	2.0	1.9	0.7	1.1
13.	Գեղարքունիքի մարզի Գավառի ա/դ	2.1	2.5	0.9	1.1
14.	Գեղարքունիքի մարզի Վարդենիկի ա/դ	2.0	2.0	1.1	1.2
15.	Կոտայքի մարզի Հրազդանի թիվ 13 ա/դ	1.8	1.8	1.2	1.3
16.	Գեղարքունիքի մարզի Ձորագյուղի ա/դ	2.8	2.7	1.2	1.3
17.	Արարատի մարզի Վեդու թիվ 3 ա/դ	1.8	2.1	1.3	1.4
18.	Արմավիրի մարզի Վաղարշապատի թիվ 10 ա/դ	2.7	3.4	1.4	1.8

Մոդելային 18 ա/դպրոցներն՝ ըստ 1 դասարանին ընկնող ոչ մանկավարժական աշխատողների միջին թվի ցուցանիշի, դասակարգվել են հետևյալ խմբերի՝

- 1) փաստացի ոչ մանկավարժական աշխատողներով ցածր ծանրաբեռնվածության դպրոցներ (1 դասարանին ընկնող ոչ մանկավարժների միջին թիվը փոքր է 0.5-ից)՝ այդպիսի մոդելային ա/դպրոցներ չկան,
- 2) փաստացի ոչ մանկավարժական աշխատողներով միջին ծանրաբեռնվածության դպրոցներ (1 դասարանին ընկնող ոչ մանկավարժների միջին թիվը մեծ է կամ հավասար 0.5-ից և փոքր է կամ հավասար 1.0-ից)՝ 11 ա/դպրոցներ,
- 3) փաստացի ոչ մանկավարժական աշխատողներով բարձր ծանրաբեռնվածության դպրոցներ (1 դասարանին ընկնող ոչ մանկավարժների միջին թիվը մեծ է 1.0-ից)՝ 7 ա/դպրոցներ:

Այս ցուցանիշով ուշագրավ է այն իրողությունը, որ մոդելային 18 ա/դպրոցներից ոչ մեկը չի համարվում ոչ մանկավարժական աշխատողներով ցածր ծանրաբեռնվածության դպրոց, դրանք բոլորն էլ ոչ մանկավարժական աշխատողներով միջին կամ բարձր ծանրաբեռնվածության դպրոցներ են: Ընդ որում, այդ ցուցանիշով բարձր ծանրաբեռնվածության 7 դպրոցներից 3-ը Գեղարքունիքի մարզից են, 1-ը՝ Արմավիրի մարզից, 1-ը՝ Արարատի մարզից, 1-ը՝ Կոտայքի մարզից և 1-ը՝ Երևանի Կենտրոն վարչական շրջանից (տե՛ս աղյուսակ 7):

Ցուցանիշ 4 (34). Դպրոցի 1 մանկավարժին ընկնող սովորողների միջին թիվը (բանաձև՝ սովորողների թիվ / մանկավարժների թիվ), (աղյուսակ 8)

Ցուցանիշ 5 (35). Դպրոցի 1 ոչ մանկավարժական աշխատողին ընկնող սովորողների միջին թիվը (բանաձև՝ սովորողների թիվ / ոչ մանկավարժական աշխատողների թիվ), (աղյուսակ 9)

Աղյուսակ 8. Մոդելային 18 ա/դպրոցների վարկանիշային դասակարգումը 2014թ. հունվարի դրությամբ՝ ըստ 1 մանկավարժին ընկնող սովորողների միջին թվի, նվազման կարգով

ՀՀ	Դպրոցի անվանումը	34-ի արժեքը		35-ի արժեքը	
		2013թ. հունվ.	2014թ. հունվ.	2013թ. հունվ.	2014թ. հունվ.
I.	Փաստացի սովորողներով բարձր ծանրաբեռնվածությամբ մանկավարժներով դպրոցներ	34 > 14.5			
	-				
II.	Փաստացի սովորողներով միջին ծանրաբեռնվածությամբ մանկավարժներով դպրոցներ	10 <= 34 <= 14.5			
1.	Երևանի Մալաթիա-Սեբաստիա վ/շ թիվ 190 ա/դ	14.5	12.9	51.6	45.0
2.	Երևանի Շենգավիթ վ/շ թիվ 65 ա/դ	13.4	12.3	29.4	31.6
3.	Արարատի մարզի Արտաշատի թիվ 4 ա/դ	12.0	11.9	35.2	34.8

4.	Երևանի Արաբկիր վ/շ թիվ 83 ա/դ	12.6	11.8	30.0	27.3
5.	Գեղարքունիքի մարզի Մարտունու ա/դ	11.9	11.7	42.6	41.8
6.	Կոտայքի մարզի Հրազդանի թիվ 13 ա/դ	12.4	11.4	18.8	16.1
7.	Երևանի Կենտրոն վ/շ թիվ 42 ա/դ	10.5	10.8	27.8	18.6
8.	Երևանի Աջափնյակ վ/շ թիվ 195 ա/դ	9.6	10.5	28.7	36.8
9.	Գեղարքունիքի մարզի Վարդենիկի ա/դ	10.9	10.1	19.4	17.5
III.	Փաստացի սովորողներով ցածր ծանրաբեռնվածությամբ մանկավարժներով դպրոցներ	84 < 10			
10.	Կոտայքի մարզի Աբովյանի թիվ 4 ա/դ	11.1	9.9	28.2	22.0
11.	Արագածոտնի մարզի Աշտարակի թիվ 5 ա/դ	11.2	9.2	52.3	42.9
12.	Արարատի մարզի Վեդու թիվ 3 ա/դ	9.7	8.5	14.2	12.8
13.	Գեղարքունիքի մարզի Գավառի ա/դ	10.0	8.2	21.9	17.9
14.	Արագածոտնի մարզի Ապարանի ա/դ	9.3	7.5	25.0	20.8
15.	Գեղարքունիքի մարզի Սևանի ա/դ	8.7	7.4	30.3	25.3
16.	Գեղարքունիքի մարզի Չորագյուղի ա/դ	6.8	7.1	16.4	15.1
17.	Արմավիրի մարզի Վաղարշապատի թիվ 10 ա/դ	7.5	6.6	14.1	12.5
18.	Արմավիրի մարզի Արմավիրի թիվ 1 ա/դ	7.9	6.5	26.5	27.0

Մոդելային 18 ա/դպրոցներն՝ ըստ 1 մանկավարժին ընկնող սովորողների միջին թվի, դասակարգվել են հետևյալ խմբերի՝

- 1) փաստացի սովորողներով բարձր ծանրաբեռնվածությամբ մանկավարժներով դպրոցներ (1 մանկավարժին ընկնող սովորողների միջին թիվը մեծ է 14.5 սովորողից²⁸)՝ այդպիսի մոդելային ա/դպրոցներ չկան,
- 2) փաստացի սովորողներով միջին ծանրաբեռնվածությամբ մանկավարժներով դպրոցներ (1 մանկավարժին ընկնող սովորողների միջին թիվը մեծ է կամ հավասար 10 սովորողից և փոքր է կամ հավասար 14.5 սովորողից)՝ 9 ա/դպրոցներ,
- 3) փաստացի սովորողներով ցածր ծանրաբեռնվածությամբ մանկավարժներով դպրոցներ (1 մանկավարժին ընկնող սովորողների միջին թիվը փոքր է 10 սովորողից)՝ 9 ա/դպրոցներ:

Այս ցուցանիշով ուշագրավ հանգամանք է հանդիսանում այն, որ Երևանի մոդելային բոլոր 5 ա/դպրոցներն էլ համարվում են սովորողներով միջին ծանրաբեռնվածությամբ մանկավարժներով դպրոցներ, իսկ ՀՀ մարզերի մոդելային 13 ա/դպրոցներից միայն 4-ն են

²⁸ Համաձայն <Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիր> ՀՀ օրենքի հավելվածի 51-րդ կետի (էջ 22)՝ <Ոլորտի բարեփոխումների շնորհիվ հանրակրթական դպրոցներում «աշակերտ/ուսուցչական դրույք» և «աշակերտ/ոչ ուսուցչական դրույք» հարաբերակցությունների մակարդակը 2008-2009 թվականներին հասցվել է համապատասխանաբար 14.5-ի և 24.1-ի՝ 2007 թվականի 14.0 և 23.2-ի դիմաց: «Աշակերտ/ուսուցչական դրույք» ցուցանիշը հիմնականում պայմանավորված է դասարանի միջին խտությամբ, քանի որ ուսուցչի ծանրաբեռնվածությունը և դասաժամերի քանակը կայուն ցուցանիշներ են:»:

համարվում այդպիսին, մնացած 9-ը սովորողներով ցածր ծանրաբեռնվածությամբ մանկավարժներով ա/դպրոցներ են (տե՛ս աղյուսակ 8):

Աղյուսակ 9. Մոդելային 18 ա/դպրոցների վարկանիշային դասակարգումը 2014թ. հունվարի դրությամբ՝ ըստ 1 ոչ մանկավարժական աշխատողին ընկնող սովորողների միջին թվի, նվազման կարգով

ՀՀ	Դպրոցի անվանումը	84-ի արժեքը		85-ի արժեքը	
		2013թ. հունվ.	2014թ. հունվ.	2013թ. հունվ.	2014թ. հունվ.
I.	Փաստացի սովորողներով բարձր ծանրաբեռնվածությամբ ոչ մանկավարժական աշխատողներով դպրոցներ			85 > 35	
1.	Երևանի Մալաթիա-Սեբաստիա վ/2 թիվ 190 ա/դ	14.5	12.9	51.6	45.0
2.	Արագածոտնի մարզի Աշտարակի թիվ 5 ա/դ	11.2	9.2	52.3	42.9
3.	Գեղարքունիքի մարզի Մարտունու ա/դ	11.9	11.7	42.6	41.8
4.	Երևանի Աջափնյակ վ/2 թիվ 195 ա/դ	9.6	10.5	28.7	36.8
II.	Փաստացի սովորողներով միջին ծանրաբեռնվածությամբ ոչ մանկավարժական աշխատողներով դպրոցներ			25 <= 85 <= 35	
5.	Արարատի մարզի Արտաշատի թիվ 4 ա/դ	12.0	11.9	35.2	34.8
6.	Երևանի Շենգավիթ վ/2 թիվ 65 ա/դ	13.4	12.3	29.4	31.6
7.	Երևանի Արաբկիր վ/2 թիվ 83 ա/դ	12.6	11.8	30.0	27.3
8.	Արմավիրի մարզի Արմավիրի թիվ 1 ա/դ	7.9	6.5	26.5	27.0
9.	Գեղարքունիքի մարզի Սևանի ա/դ	8.7	7.4	30.3	25.3
III.	Փաստացի սովորողներով ցածր ծանրաբեռնվածությամբ ոչ մանկավարժական աշխատողներով դպրոցներ			85 < 25	
10.	Կոտայքի մարզի Աբովյանի թիվ 4 ա/դ	11.1	9.9	28.2	22.0
11.	Արագածոտնի մարզի Ապարանի ա/դ	9.3	7.5	25.0	20.8
12.	Երևանի Կենտրոն վ/2 թիվ 42 ա/դ	10.5	10.8	27.8	18.6
13.	Գեղարքունիքի մարզի Գավառի ա/դ	10.0	8.2	21.9	17.9
14.	Գեղարքունիքի մարզի Վարդենիկի ա/դ	10.9	10.1	19.4	17.5
15.	Կոտայքի մարզի Հրազդանի թիվ 13 ա/դ	12.4	11.4	18.8	16.1
16.	Գեղարքունիքի մարզի Չորագյուղի ա/դ	6.8	7.1	16.4	15.1
17.	Արարատի մարզի Վեդու թիվ 3 ա/դ	9.7	8.5	14.2	12.8
18.	Արմավիրի մարզի Վաղարշապատի թիվ 10 ա/դ	7.5	6.6	14.1	12.5

Մոդելային 18 ա/դպրոցներն՝ ըստ 1 ոչ մանկավարժական աշխատողին ընկնող սովորողների միջին թվի, դասակարգվել են հետևյալ խմբերի (աղյուսակ 9)՝

- 1) փաստացի սովորողներով բարձր ծանրաբեռնվածությամբ ոչ մանկավարժական աշխատողներով դպրոցներ (1 ոչ մանկավարժական աշխատողին ընկնող սովորողների միջին թիվը մեծ է 35 սովորողից)՝ 4 ա/դպրոցներ,
- 2) փաստացի սովորողներով միջին ծանրաբեռնվածությամբ ոչ մանկավարժական աշխատողներով դպրոցներ (1 ոչ մանկավարժական աշխատողին ընկնող

սովորողների միջին թիվը մեծ է կամ հավասար 25 սովորողից և փոքր է կամ հավասար 35 սովորողից)՝ 5 ա/դպրոցներ,

- 3) փաստացի սովորողներով ցածր ծանրաբեռնվածությամբ ոչ մանկավարժական աշխատողներով դպրոցներ (1 ոչ մանկավարժական աշխատողին ընկնող սովորողների միջին թիվը փոքր է 25 սովորողից)՝ 9 ա/դպրոցներ:

Այս ցուցանիշով մոդելային 18 ա/դպրոցները միմյանցից խստորեն տարբերվում են՝ ցուցանիշի արժեքը տատանվում է 1 ոչ մանկավարժական աշխատողին ընկնող սովորողների բավականին լայն միջակայքում՝ 12.5 – 45 սովորող: Ընդ որում, այդ ցուցանիշով Երևանի մոդելային ա/դպրոցներն առանձնապես չեն տարբերվում ՀՀ մարզերի մոդելային ա/դպրոցներից (տե՛ս աղյուսակ 9):

3.2. Կրթության որակի (ոչ ֆինանսական) ցուցանիշների սահմանումը և գնահատումը

Համաձայն հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2013-2014 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանների²⁹, առանձին գործող ա/դպրոցի ուսումնական պլանները սահմանում են հոսքային ուսուցման ծրագրեր իրականացնող ա/դպրոցում միջնակարգ կրթության բովանդակային կառուցվածքը՝ ըստ տարբերակված հոսքերի, հանրակրթական ուսումնական առարկաներին հատկացվող շաբաթական ժամաքանակները՝ ըստ բաղադրիչների և սովորողների շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն չափը՝ ըստ դասարանների: Պետական բաղադրիչը ներկայացվում է հոսքային (արհեստագործական հոսքում՝ մասնագիտական) և ընդհանուր հանրակրթական բաղադրիչների տեսքով:

Ա/դպրոցում երաշխավորվում են հոսքերի հետևյալ խմբերը՝

- 1) հիմնական - հումանիտար, բնագիտական, արհեստագործական,
- 2) լրացուցիչ - արվեստի, մարզական, ռազմական,
- 3) ընդհանուր:

Ուսումնական պարապմունքները ա/դպրոցում սկսվում են 2013թ. սեպտեմբերի 1-ին, ավարտվում են 2014թ. մայիսի 23-ին՝ ապահովելով ոչ պակաս, քան 34 ուսումնական շաբաթ: Ուսումնական տարվա ընթացքում ա/դպրոցի 10-12-րդ դասարանների սովորողներին տրվում են արձակուրդներ՝ աշնանային՝ 2013թ. հոկտեմբերի 21-ից 27-ը (1 շաբաթ), ձմեռային՝

²⁹ Օրինակելի ուսումնական պլանները հաստատվել են ՀՀ ԿԳՆ 2013թ. հունիսի 1-ի հ. 730-Ն հրամանով, հավելված 1, բաժին 4. <Առանձին գործող ավագ դպրոցի 2013-2014 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլաններ>:

2013թ. դեկտեմբերի 29-ից 2014թ. հունվարի 12-ը (2 շաբաթ), գարնանային՝ 2014թ. մարտի 17-ից 23-ը (1 շաբաթ), ընդամենը՝ 4 շաբաթ: Ա/դպրոցում ուսումնական տարին բաժանվում է երկու կիսամյակների՝ առաջին և երկրորդ: Ա/դպրոցի 10-12-րդ դասարաններում մեկ դասարանի շաբաթական ուսումնական պարտադիր բեռնվածությունը բոլոր հոսքերում սահմանվում է 34 դասաժամ: Մեկ դասաժամի տևողությունը 45 րոպե է:

Հոսքային (խորացված) ուսուցման ուսումնական պլանները (տե՛ս ՀՀ ԿԳՆ վերոնշյալ հրամանի հավելված 1.1-ի աղյուսակ 1-9) կազմված են ընդհանուր հանրակրթական, հոսքային և դպրոցական բաղադրիչներից, որոնք բոլորն էլ պետական ա/դպրոցներում ֆինանսավորվում են ՀՀ պետական բյուջեից: Հոսքային ուսուցմամբ դասարաններում դպրոցական բաղադրիչի տնօրինման, ինչպես նաև օտար լեզուների ընտրության և դասավանդման կարգերը սահմանվում են ա/դպրոցի օրինակելի ուսումնական պլաններով:

Ցուցանիշ 6 (Ց6). Դպրոցի 10-12-րդ դասարանների սովորողների հաճախելիության միջին մակարդակը (բանաձև՝ 100% - (բոլոր սովորողների 1 կիսամյակում բացակայած դասաժամերի ընդհանուր թիվ / 1 սովորողին 1 կիսամյակում դասավանդված դասաժամերի ընդհանուր թիվ x սովորողների թիվ) x 100%), **(աղյուսակ 10)**

Աղյուսակ 10. Մոդելային 18 ա/դպրոցների 10-12-րդ դասարանների սովորողների հաճախելիության միջին մակարդակները՝ 2012-13 ուս. տարվա II կիսամյակի և 2013-14 ուս. տարվա I կիսամյակի արդյունքներով, %

ՀՀ	Դպրոցի անվանումը	Ց6-ի արժեքը, 10 դասարան		Ց6-ի արժեքը, 11 դասարան		Ց6-ի արժեքը, 12 դասարան	
		2012-13 II կիս.	2013-14 I կիս.	2012-13 II կիս.	2013-14 I կիս.	2012-13 II կիս.	2013-14 I կիս.
1.	Երևանի Աջափնյակ վ/2 թիվ 195 ա/դ	97.7	97.8	97.4	97.4	97.5	97.3
2.	Երևանի Արաբկիր վ/2 թիվ 83 ա/դ	94.6	96.0	94.2	94.6	97.5	95.7
3.	Երևանի Կենտրոն վ/2 թիվ 42 ա/դ	96.9	96.2	92.7	94.0	94.0	91.7
4.	Երևանի Մալաթիա-Սեբաստիա վ/2 թիվ 190 ա/դ	95.7	96.8	94.9	95.4	97.9	94.9
5.	Երևանի Շենգավիթ վ/2 թիվ 65 ա/դ	94.7	95.0	94.9	93.8	96.4	90.7
6.	Արագածոտնի մարզի Աշտարակի թիվ 5 ա/դ*)						
7.	Արագածոտնի մարզի Ապարանի ա/դ	97.2	96.5	95.7	96.1	97.3	94.2
8.	Արարատի մարզի Արտաշատի թիվ 4 ա/դ	93.8	97.9	92.4	96.4	90.9	96.3
9.	Արարատի մարզի Վեդու թիվ 3 ա/դ*)						
10.	Գեղարքունիքի մարզի Գավառի ա/դ*)						
11.	Գեղարքունիքի մարզի Սևանի ա/դ	97.2	97.0	94.6	94.0	96.6	95.6
12.	Գեղարքունիքի մարզի Մարտունու ա/դ*)						
13.	Գեղարքունիքի մարզի Վարդենիկի ա/դ*)						
14.	Գեղարքունիքի մարզի Ձորագյուղի ա/դ	98.2	99.2	98.5	98.4	98.2	98.2
15.	Արմավիրի մարզի Արմավիրի թիվ 1 ա/դ	96.2	97.8	94.4	97.0	97.6	96.7
16.	Արմավիրի մարզի Վաղարշապատի թիվ 10 ա/դ	98.4	98.5	96.0	98.0	98.6	96.3

17.	Կոտայքի մարզի Աբովյանի թիվ 4 ա/դ	92.1	96.2	88.6	94.5	90.4	94.6
18.	Կոտայքի մարզի Հրազդանի թիվ 13 ա/դ	95.1	97.2	94.4	94.5	97.5	94.6
	Մոդելային 18 ա/դպրոցների 36-ի արժեքների միջինը՝ ըստ 10-12-րդ դասարանների և կիսամյակների	96.0	97.1	94.5	95.7	96.2	95.1

*) Նշված ա/դպրոցի դասաժամաքանակային և սովորողների բացակայությունների վերաբերյալ տեղեկատվությունը չի տրամադրվել տվյալ ա/դպրոցի կողմից:

Մոդելային ա/դպրոցների համար ցուցանիշ 6-ի արժեքների միջինի գնահատումը ցույց է տալիս, որ սովորողների հաճախելիության միջին մակարդակը համեմատաբար բարձր է 10-րդ դասարանում³⁰ (2012-13 ուսումնական տարվա II կիսամյակում՝ 96% և 2013-14 ուսումնական տարվա I կիսամյակում՝ 97.1%), իսկ 11-րդ (համապատասխանաբար 94.5% և 95.7%) և 12-րդ դասարաններում (համապատասխանաբար 96.2% և 95.1%) այն նկատելիորեն նվազում է: Սա նշանակում է, որ ա/դպրոցի սովորողների հետաքրքրությունն ուսման նկատմամբ տարեցտարի աստիճանաբար նվազում է և նրանց բացակայությունները դասերից աստիճանաբար ավելի հաճախակի բնույթ են կրում: Օգտագործելով աղյուսակ 10-ում բերված ցուցանիշ 6-ի կիսամյակային գնահատականները, դժվար չէ հաշվարկել, որ մոդելային ա/դպրոցների 10-12-րդ դասարանների սովորողներին դասավանդվող ընդհանուր ժամաքանակի մեջ նրանց դասերից բացակայությունների միջինը կազմում է 4.2%:

Պետք է նաև նշել, որ ա/դպրոցների սովորողների հաճախելիության մակարդակով Երևանի և ՀՀ մարզերի ա/դպրոցներն առանձնապես իրարից չեն տարբերվում՝ և՛ մայրաքաղաքում, և՛ մարզերում կան սովորողների ինչպես բարձր, այնպես էլ ցածր հաճախելիությամբ ա/դպրոցներ (տե՛ս աղյուսակ 10, հավելված 2):

Ցուցանիշ 7 (Ց7). Դպրոցի (10/11/12-րդ դասարանի) սովորողների առաջադիմության մակարդակը (բանաձև՝ $(1 \text{ կիսամյակում ուսումնական բոլոր առարկաներից 4-10 միավոր գնահատված՝ դպրոցի (10/11/12-րդ դասարանի) սովորողների ընդհանուր թիվ} / \text{դպրոցի (10/11/12-րդ դասարանի) բոլոր սովորողների ընդհանուր թիվ}) \times 100\%$), **(աղյուսակ 11)**

Ա/դպրոցում գործում է սովորողների գիտելիքների գնահատման 10 միավորային համակարգ³¹: Ընթացիկ գնահատման ժամանակ կարող են կիրառվել նաև գնահատման այլ համակարգեր, որոնք բերվում են 10 միավորային գրանցման: Պետական ավարտական քննությունների ժամանակ կիրառվող գնահատման համակարգերը բերվում են 10 կամ 20 միավորային գրանցման: Սովորողների ընթացիկ գնահատականների հիման վրա ձևավորվում են կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատականների միջոցով՝ տարեկան գնահատականները:

³⁰ Փաստորեն, որքան բարձր է ա/դպրոցի ցուցանիշ 6-ի արժեքը, այնքան բարձր է այդ ա/դպրոցի սովորողների հաճախելիության մակարդակը:

³¹ ՀՀ ԿԳՆ 2013թ. հունիսի 1-ի հ. 730-Ն հրաման, հավելված 1, բաժին 4, կետեր 37, 39

Մոդելային 18 ա/դպրոցների սովորողների 2012-13 ուսումնական տարվա II կիսամյակային և 2013-14 ուսումնական տարվա I կիսամյակային առաջադիմության և ուսման որակի ցուցանիշներն՝ ըստ 10-12-րդ դասարանների, տարբերակված հոսքերի (ընդհանուր հանրակրթական, հումանիտար, բնագիտական) և հանրակրթական ուսումնական հիմնական առարկաների, բերված են հավելված 1-ի 3-րդ բաժնում:

Աղյուսակ 11. Մոդելային 18 ա/դպրոցների (10/11/12-րդ դասարանի) սովորողների առաջադիմության մակարդակները՝ 2012-13 ուս. տարվա II կիսամյակի և 2013-14 ուս. տարվա I կիսամյակի արդյունքներով, %

ՀՀ	Դպրոցի անվանումը	Ց7 արժեքը, 10 դաս.		Ց7 արժեքը, 11 դաս.		Ց7 արժեքը, 12 դաս.		Ց7 արժեքը, ա/դպրոց	
		2012-13 II կիս.	2013-14 I կիս.	2012-13 II կիս.	2012-13 II կիս.	2013-14 I կիս.	2013-14 I կիս.	2013-14 I կիս.	2013-14 I կիս.
1.	Երևանի Աջափնյակ վ/2 թիվ 195 ա/դ	99	99	99	99	100	100	99	99
2.	Երևանի Արաբկիր վ/2 թիվ 83 ա/դ	67	73	92	81	100	99	86	84
3.	Երևանի Կենտրոն վ/2 թիվ 42 ա/դ	100	100	100	100	100	100	100	100
4.	Երևանի Մալաթիա-Սեբաստիա վ/2 թիվ 190 ա/դ	97	99	94	93	99	100	97	97
5.	Երևանի Շենգավիթ վ/2 թիվ 65 ա/դ	82	69	90	75	100	100	91	81
6.	Արագածոտնի մարզի Աշտարակի թիվ 5 ա/դ	100	89	100	100	100	100	100	96
7.	Արագածոտնի մարզի Ապարանի ա/դ	82	92	97	100	100	100	97	92
8.	Արարատի մարզի Արտաշատի թիվ 4 ա/դ	100	99	100	99	100	99	100	99
9.	Արարատի մարզի Վեդու թիվ 3 ա/դ	100	100	100	100	100	100	100	100
10.	Գեղարքունիքի մարզի Գավառի ա/դ	100	98	100	96	100	100	100	98
11.	Գեղարքունիքի մարզի Սևանի ա/դ	100	100	100	100	100	100	100	100
12.	Գեղարքունիքի մարզի Մարտունու ա/դ	99	100	99	100	100	100	99	100
13.	Գեղարքունիքի մարզի Վարդենիկի ա/դ	86	89	97	90	97	94	93	91
14.	Գեղարքունիքի մարզի Չորագյուղի ա/դ	95	87	100	90	100	100	98	92
15.	Արմավիրի մարզի Արմավիրի թիվ 1 ա/դ	97	99	90	80	99	98	95	92
16.	Արմավիրի մարզի Վաղարշապատի թիվ 10 ա/դ	99	98	99	96	100	100	99	98
17.	Կոտայքի մարզի Աբովյանի թիվ 4 ա/դ	100	100	100	100	100	100	100	100
18.	Կոտայքի մարզի Հրազդանի թիվ 13 ա/դ	98	98	96	99	100	99	98	99
	Մոդելային 18 ա/դպրոցների 37-ի արժեքների միջինը՝ ըստ 10-12-րդ դասարանների, դպրոցի և կիսամյակների	94.5	93.8	97.4	94.3	99.7	99.4	97.3	95.4

Աղյուսակ 11-ում հաշվարկված 37-ի արժեքներից երևում է, որ մոդելային ա/դպրոցների սովորողների միջին առաջադիմությունը ցածր է հատկապես 10-րդ դասարանում (2012-13 ուստարվա II կիսամյակում՝ 94.5%, 2013-14 ուստարվա I կիսամյակում՝ 93.8%), որն արդյունք է այն իրողության, որ ա/դպրոց ընդունված՝ հիմնական դպրոցի շրջանավատների շուրջ 6%-ը վատ առաջադիմություն ցուցաբերած սովորողներ են եղել և հիմնական դպրոցում ստացած նրանց գիտելիքները չեն համապատասխանել

ա/դպրոցում ներկայացված պահանջներին: Նրանք մի կերպ փոխադրվել են 11-րդ դասարան (կիսամյակային առաջադիմության մակարդակը՝ համապատասխանաբար 97.4% և 94.3%), որտեղ I կիսամյակում թվում է, թե նրանցից մի մասի առաջադիմության մակարդակը բարձրացել է, սակայն II կիսամյակում այն նորից նվազել է՝ հասնելով նորից 10-րդ դասարանի մակարդակին: Իսկ 12-րդ դասարանում այդպիսի սովորողների առաջադիմության մակարդակի խաբուսիկ բարձրացումը (99%) պետք է պայմանավորել երեք հանգամանքներով՝ առաջին, ա/դպրոցի մանկավարժական աշխատակազմի լավ աշխատանքով, և/կամ երկրորդ, 12-րդ դասարանում կրկնուսույցների մոտ պարապելու արդյունքում սովորողների գիտելիքների աճով, և/կամ, երրորդ, ավելի հավանական տարբերակը, ա/դպրոցի վատ սովորողներին <դպրոցը մի կերպ ավարտեցնելու> Հայաստանում ձևավորված ռիսկային <ավանդույթով>:

Ամեն դեպքում, մոդելային 18 ա/դպրոցների սովորողների առաջադիմության միջին մակարդակը 3 տարիներից յուրաքանչյուր տարվա ավարտին կազմել է 95.4%, որը նշանակում է, որ ա/դպրոցների սովորողների շուրջ 4.6%-ի գիտելիքները բացարձակապես չեն համապատասխանել ա/դպրոցի պահանջներին և նրանց կրթության կազմակերպումը ա/դպրոցում աննպատակահարմար և անարդյունավետ է եղել:

Ցուցանիշ 8 (ՅԸ). Դպրոցի (10/11/12-րդ դասարանի) սովորողների ուսման որակի մակարդակը (բանաձև՝ (1 կիսամյակում ուսումնական բոլոր առարկաներից 7-10 միավոր գնահատված՝ դպրոցի (10/11/12-րդ դասարանի) սովորողների ընդհանուր թիվ / դպրոցի (10/11/12-րդ դասարանի) բոլոր սովորողների ընդհանուր թիվ) x 100%), **(աղյուսակ 12)**

Աղյուսակ 12. Մոդելային 18 ա/դպրոցների (10/11/12-րդ դասարանի) սովորողների ուսման որակի մակարդակները՝ 2012-13 ուս. տարվա II կիսամյակի և 2013-14 ուս. տարվա I կիսամյակի արդյունքներով, %

ՀՀ	Դպրոցի անվանումը	ՅՑարժեքը, 10 դաս.		ՅՑարժեքը, 11 դաս.		ՅՑ արժեքը, 12 դաս.		ՅՑ արժեքը, ա/դպրոց	
		2012-13 II կիս.	2013-14 I կիս.	2012-13 II կիս.	2012-13 II կիս.	2013-14 I կիս.	2013-14 I կիս.	2013-14 I կիս.	2013-14 I կիս.
1.	Երևանի Աջափնյակ վ/2 թիվ 195 ա/դ	56	54	74	59	77	82	69	65
2.	Երևանի Արաբկիր վ/2 թիվ 83 ա/դ	15	20	23	22	60	43	33	28
3.	Երևանի Կենտրոն վ/2 թիվ 42 ա/դ	-	58	-	58	-	82	-	66
4.	Երևանի Մալաթիա-Սեբաստիա վ/2 թիվ 190 ա/դ	23	19	34	28	43	42	33	30
5.	Երևանի Շենգավիթ վ/2 թիվ 65 ա/դ	41	25	48	37	59	54	49	39
6.	Արագածոտնի մարզի Աշտարակի թիվ 5 ա/դ*)								
7.	Արագածոտնի մարզի Ապարանի ա/դ	32	34	25	23	32	38	27	29
8.	Արարատի մարզի Արտաշատի թիվ 4 ա/դ*)								
9.	Արարատի մարզի Վեդու թիվ 3 ա/դ	70	70	70	70	70	70	70	70

10.	Գեղարքունիքի մարզի Գավառի ա/դ	22	36	25	26	48	37	32	33
11.	Գեղարքունիքի մարզի Սևանի ա/դ	57	64	63	71	78	87	66	74
12.	Գեղարքունիքի մարզի Մարտունու ա/դ*)								
13.	Գեղարքունիքի մարզի Վարդենիկի ա/դ	9	6	22	5	33	34	21	15
14.	Գեղարքունիքի մարզի Չորագյուղի ա/դ	40	43	40	27	57	36	46	35
15.	Արմավիրի մարզի Արմավիրի թիվ 1 ա/դ	31	30	29	30	43	52	34	37
16.	Արմավիրի մարզի Վաղարշապատի թիվ 10 ա/դ	40	45	45	38	52	50	46	44
17.	Կոտայքի մարզի Արվյանի թիվ 4 ա/դ	65	60	60	50	70	65	65	58
18.	Կոտայքի մարզի Հրազդանի թիվ 13 ա/դ	44	51	42	56	62	72	49	60
	Մոդելային 18 ա/դարոցների 38-ի արժեքների միջինը՝ ըստ 10-12-րդ դասարանների, դպրոցի և կիսամյակների	38.9	41.0	42.9	40.0	56.0	56.3	45.7	45.5

*) Նշված ա/դարոցի սովորողների ուսման որակի վերաբերյալ տեղեկատվությունը չի տրամադրվել տվյալ ա/դարոցի կողմից:

Աղյուսակ 12-ում հաշվարկված 38-ի արժեքներից երևում է, որ մոդելային ա/դարոցների 10-րդ և 11-րդ դասարաններում սովորողների միջին ուսման որակի արժեքը տատանվել է 39 – 43 %-ի սահմաններում, 12-րդ դասարանում այն կազմել է շուրջ 56%, իսկ ա/դարոցի միջին արժեքը՝ մոտ 46%: Սրա բացատրությունը կայանում է նրանում, որ հիմնական դպրոցի շրջանավարտների մոտ 60%-ի ստացած գիտելիքները չեն բավարարում ա/դարոցում <լավ> կամ <գերազանց> սովորելու համար: 12-րդ դասարանում 38-ի արժեքի կտրուկ բարձրացումը մինչև 56%-ի բացատրվում է նույն պատճառներով, ինչ 12-րդ դասարանի սովորողների առաջադիմության բարձրացման դեպքում (տե՛ս նախորդ ցուցանիշի գնահատման մեկնաբանությունը): Այսինքն, ա/դարոցի ավարտական 12-րդ դասարանի սովորողների առաջադիմության / ուսման որակի մակարդակի նկատելի բարձրացումը պայմանավորված է հիմնականում սուբյեկտիվ գործոններով, քան թե օբյեկտիվորեն դպրոցական կրթության շնորհիվ սովորողների գիտելիքների ավելացմամբ:

Մոդելային ա/դարոցների 10-12-րդ դասարանների սովորողների ուսման որակի արժեքների միջինը կազմել է մոտ 46%, որը նշանակում է, որ ա/դարոցների սովորողների ավելի քան կեսը (հաշված նաև հանրակրթական մի քանի առարկաներից <5> և/կամ <6> միավոր գնահատականներ ունեցող սովորողներին) համարվում է պոտենցիալ այն զանգվածը, որն ի վիճակի է հաջողությամբ հանձնել ա/դարոցի ավարտական կամ միասնական քննությունները և հավակնել՝ շարունակելու իրենց կրթությունը բուհում կամ ՄՄՀ-ում:

Ա/դարոցի սովորողների առաջադիմության և ուսման որակի մակարդակների գնահատումը կարելի է կատարել նաև ըստ ա/դարոցի հանրակրթական տարբերակված հոսքերի (հանրակրթական ընդհանուր, հումանիտար, բնագիտական, արհեստագործական և այլն), ինչպես նաև ըստ ա/դարոցում դասավանդվող հանրակրթական ուսումնական

հիմնական առարկաների: Մոդելային 18 ա/դպրոցներից հավաքագրված և հավելված 1-ում գետեղված տեղեկատվությունն ընձեռում է այդ հնարավորությունը և, անհրաժեշտության դեպքում, կարելի է կատարել ա/դպրոցի սովորողների առաջադիմության և ուսման որակի վերաբերյալ ավելի խորացված հետազոտություններ և վերլուծություններ:

3.3. Կրթության ֆինանսավորման և ֆինանսական արդյունավետության (ֆինանսական) ցուցանիշների սահմանումը և գնահատումը

Հավելված 1-ի 4-րդ բաժնում բերված է մոդելային 18 ա/դպրոցների 2013թ. տարեկան եկամուտների և ծախսերի հաստատված (կամ ճշտված) և փաստացի կատարողական, ինչպես նաև 2013-14 ուսումնական տարվա I և II կիսամյակային ծախսերի հաստատված կամ փաստացի կատարողական բացարձակ ցուցանիշները՝ ըստ բյուջետային դասակարգման առանձին հիմնական հոդվածների: Օգտագործելով այս տվյալները՝ ստորև սահմանվել և գնահատվել են դպրոցների ֆինանսավորման (եկամտային) և ֆինանսական արդյունավետության (ծախսային) հետևյալ համեմատական ցուցանիշները:

Ցուցանիշ 9. Դպրոցի 1 սովորողին ընկնող՝ ընդհանուր եկամուտները (բանաձև՝ դպրոցի փաստացի (ճշտված) ընդհանուր եկամուտներ / դպրոցի սովորողների թիվ), (աղյուսակ 13)

Ցուցանիշ 10. Դպրոցի 1 սովորողին ընկնող՝ պետական պատվերից եկամուտները (բանաձև՝ դպրոցի փաստացի (ճշտված) պետական պատվերից եկամուտներ / դպրոցի սովորողների թիվ), (աղյուսակ 13)

Աղյուսակ 13. Մոդելային 18 ա/դպրոցների վարկանիշային դասակարգումն՝ ըստ դրանց 1 սովորողին ընկնող՝ 2013թ. ընդհանուր եկամուտների, հազ. դրամ, աճման կարգով

ՀՀ	Դպրոցի անվանումը	Դպրոցի սովոր. թիվը, 2013թ. հունվ. դր.	89-ի արժեքը, հազ. դրամ	810-ի արժեքը, հազ. դրամ
1.	Երևանի Մալաթիա-Սեբաստիա վ/2 թիվ 190 ա/դ	1032	146.8	144.3
2.	Արագածոտնի մարզի Աշտարակի թիվ 5 ա/դ	784	155.9	148.9
3.	Արարատի մարզի Արտաշատի թիվ 4 ա/դ	528	165.5	163.7
4.	Կոտայքի մարզի Աբովյանի թիվ 4 ա/դ	620	170.4	156.7
5.	Կոտայքի մարզի Հրազդանի թիվ 13 ա/դ	507	170.5	164.8
6.	Երևանի Աջափնյակ վ/2 թիվ 195 ա/դ	742	172.9	158.9
7.	Երևանի Շենգավիթ վ/2 թիվ 65 ա/դ	617	175.1	170.9
8.	Երևանի Կենտրոն վ/2 թիվ 42 ա/դ	472	176.9	166.5
9.	Արարատի մարզի Վեդու թիվ 3 ա/դ	340	188.4	183.8

10.	Երևանի Արաբկիր վ/շ թիվ 83 ա/դ	691	189.9	160.9
11.	Գեղարքունիքի մարզի Մարտունու ա/դ	511	192.9	185.9
12.	Գեղարքունիքի մարզի Վարդենիկի ա/դ	447	196.6	192.5
13.	Գեղարքունիքի մարզի Սևանի ա/դ	546	197.2	184.4
14.	Արմավիրի մարզի Արմավիրի թիվ 1 ա/դ	424	199.7	174.1
15.	Գեղարքունիքի մարզի Գավառի ա/դ	350	214.3	206.2
16.	Արագածոտնի մարզի Ապարանի ա/դ	325	220.3	207.3
17.	Գեղարքունիքի մարզի Չորագյուղի ա/դ	246	247.7	235.5
18.	Արմավիրի մարզի Վաղարշապատի թիվ 10 ա/դ	240	295.1	288.1
	Մոդելային 18 ա/դպրոցների 89-ի և 810-ի միջին արժեքները	523.5	193.1	183.0

Ինչպես երևում է ցուցանիշ 9-ի և ցուցանիշ 10-ի արժեքներից, դրանց մեծությունները հիմնականում հակադարձ համեմատական են դպրոցի սովորողների թվին, այսինքն ինչքան փոքր (մեծ) է դպրոցի սովորողների թիվը, այնքան մեծ (փոքր) են 1 սովորողին ընկնող դպրոցի ինչպես ընդհանուր եկամուտներն, այնպես էլ պետական պատվերից ստացվող եկամուտները:

Մոդելային 18 ա/դպրոցների ֆինանսավորման (եկամտային) ցուցանիշների միջին արժեքներն են (համաձայն աղյուսակ 13-ի վերջին տողում հաշվարկված ցուցանիշների)՝

- դպրոցների սովորողների միջին թիվը կազմել է 523.5 աշակերտ,
- 1 սովորողին ընկնող դպրոցների ընդհանուր միջին եկամուտները կազմել են 193.1 հազ. դրամ,
- 1 սովորողին ընկնող դպրոցների պետական պատվերից միջին եկամուտները կազմել են 183.0 հազ. դրամ (1 սովորողին ընկնող դպրոցների ընդհանուր միջին եկամուտների 94.8%-ը),
- 1 սովորողին ընկնող դպրոցների այլ միջին եկամուտները կազմել են 10.1 հազ. դրամ (1 սովորողին ընկնող դպրոցների ընդհանուր միջին եկամուտների 5.2%-ը):

Մոդելային 18 ա/դպրոցների եկամուտների վերաբերյալ հավաքագրված տեղեկատվության օգտագործմամբ, կարելի է սահմանել և գնահատել այդ դպրոցների եկամտային արդյունավետության այլ ցուցանիշներ ևս՝ կախված կատարվող հետազոտության նպատակներից և խնդիրներից: Մույն հետազոտությունում մենք սահմանափակվել ենք միայն մոդելային 18 ա/դպրոցների եկամտային արդյունավետության վերոնշյալ 2 ցուցանիշների սահմանմամբ ու գնահատմամբ, ինչպես նաև դրանց վարկանիշային դասակարգմամբ:

Մոդելային 18 ա/դպրոցների ֆինանսական վիճակը ծախսային արդյունավետության առումով վերլուծելու և գնահատելու, ինչպես նաև դրանք իրար հետ համեմատելու և

վարկանիշային դասակարգում կատարելու համար դիտարկվել, հաշվարկվել և գնահատվել են հետևյալ ծախսային հարաբերական ցուցանիշները՝

Ցուցանիշ 11. Դպրոցի 1 սովորողին ընկնող՝ 2013թ. ընթացիկ ընդհանուր ծախսերը (բանաձև՝ դպրոցի փաստացի (ճշտված) ընթացիկ ընդհանուր ծախսեր / դպրոցի սովորողների թիվ), (աղյուսակ 14)

Ցուցանիշ 12. Դպրոցի 1 սովորողին ընկնող՝ 2013թ. դպրոցի աշխատողների աշխատավարձի գծով ծախսերը (բանաձև՝ դպրոցի փաստացի (ճշտված) աշխատավարձի գծով ծախսեր / դպրոցի սովորողների թիվ), (աղյուսակ 14)

Ցուցանիշ 13. Դպրոցի 1 սովորողին ընկնող՝ 2013թ. դպրոցի պահպանման և այլ ծախսերը (բանաձև՝ դպրոցի փաստացի (ճշտված) պահպանման և այլ ծախսեր / դպրոցի սովորողների թիվ), (աղյուսակ 14)

Աղյուսակ 14. Մոդելային 18 ա/դպրոցների վարկանիշային դասակարգումն՝ ըստ դրանց 1 սովորողին ընկնող 2013թ. ընթացիկ ընդհանուր ծախսերի, հազ. դրամ, աճման կարգով

ՀՀ	Դպրոցի անվանումը	Դպրոցի սովոր. թիվը, 2013թ. հունվ. դր.	Ց11-ի արժեքը, հազ. դրամ	Ց12-ի արժեքը, հազ. դրամ	Դպրոցի 2013թ. պահպ. և այլ ծախսերը	Ց13-ի արժեքը, հազ. դրամ
1.	Երևանի Մալաթիա-Մեքաստիա վ/շ թիվ 190 ա/դ	1032	146.6	129.4	17774.5	17.2
2.	Արագածոտնի մարզի Աշտարակի թիվ 5 ա/դ	784	152.3	143.5	6857.9	8.8
3.	Երևանի Աջափնյակ վ/շ թիվ 195 ա/դ	742	161.1	146.3	10992.7	14.8
4.	Կոտայքի մարզի Արովյանի թիվ 4 ա/դ	620	163.7	148.9	9132.7	14.7
5.	Արարատի մարզի Արտաշատի թիվ 4 ա/դ	528	165.5	156.5	4761.3	9.0
6.	Կոտայքի մարզի Հրազդանի թիվ 13 ա/դ	507	170.5	152.2	9277.8	18.3
7.	Գեղարքունիքի մարզի Մարտունու ա/դ	511	173.0	153.6	9890.9	19.4
8.	Երևանի Շենգավիթ վ/շ թիվ 65 ա/դ	617	174.4	157.5	10441.6	16.9
9.	Երևանի Կենտրոն վ/շ թիվ 42 ա/դ	472	176.9	156.5	9631.3	20.4
10.	Արմավիրի մարզի Արմավիրի թիվ 1 ա/դ	424	182.1	169.2	5487.7	12.9
11.	Արարատի մարզի Վեդու թիվ 3 ա/դ	340	188.3	173.8	4943.4	14.5
12.	Երևանի Արարկիր վ/շ թիվ 83 ա/դ	691	188.6	146.9	28823.4	41.7
13.	Գեղարքունիքի մարզի Վարդենիկի ա/դ	447	190.0	179.1	4891.1	10.9
14.	Գեղարքունիքի մարզի Սևանի ա/դ	546	197.2	182.2	8175.9	15.0
15.	Արագածոտնի մարզի Ապարանի ա/դ	325	205.7	192.3	4355.0	13.4
16.	Գեղարքունիքի մարզի Գավառի ա/դ	350	209.3	196.0	4648.4	13.3
17.	Գեղարքունիքի մարզի Չորագյուղի ա/դ	246	237.1	219.7	4271.0	17.4
18.	Արմավիրի մարզի Վաղարշապատի թիվ 10 ա/դ	240	295.1	260.7	8260.6	34.4
	Մոդելային 18 ա/դպրոցների Ց11-ի, Ց12-ի և Ց13-ի միջին արժեքները	523.5	187.6	170.2	9034.3	17.4

Ինչպես երևում է ցուցանիշ 11-ի և ցուցանիշ 12-ի արժեքներից, դրանց մեծությունները հիմնականում հակադարձ համեմատական են դպրոցի սովորողների թվին, այսինքն ինչքան

փոքր (մեծ) է դպրոցի սովորողների թիվը, այնքան մեծ (փոքր) են 1 սովորողին ընկնող՝ դպրոցի ինչպես ընթացիկ ընդհանուր ծախսերն, այնպես էլ աշխատողների աշխատավարձի գծով ծախսերը:

Ի տարբերություն ցուցանիշ 11-ի և ցուցանիշ 12-ի, ցուցանիշ 13-ի դեպքում վերոնշյալ օրինաչափությունը չի նկատվում, այդ ցուցանիշը ոչ ուղիղ և ոչ էլ հակադարձ համեմատական կապ չունի դպրոցի սովորողների թվի հետ, տարբեր դպրոցներ տարբեր չափով ծախսեր են կատարում դպրոցի պահպանման և այլ աշխատանքների գծով՝ կախված դպրոցի ոչ մանկավարժական աշխատողների թվից, դպրոցի տարածքի չափից, բնակավայրի բնակլիմայական պայմաններից, տվյալ տարում դպրոցում կատարվելիք աշխատանքների անհրաժեշտությունից և նմանատիպ այլ գործոններից: Սակայն, պետք է նաև նշել, որ մոդելային 18 ա/դպրոցների ճնշող մեծամասնության (բացառությամբ Երևանի Արաբկիր վ/շ թիվ 83 և Մալաթիա-Սեբաստիա վ/շ թիվ 190 դպրոցների) տարեկան պահպանման և այլ ծախսերը նկատելիորեն քիչ են կատարվել, քան այդ նպատակով նրանք ֆինանսավորվել են ՀՀ պետական բյուջեից (նվազագույնը 16876.0 հազ. դրամ): Դա նշանակում է, որ դպրոցի պահպանման ծախսերի համար հատկացված միջոցների մի զգալի մասը ծախսվել է ոչ մանկավարժական աշխատողների աշխատավարձերի գծով (տե՛ս աղյուսակ 14-ի նախավերջին սյունակում բերված ծախսային գումարների մեծությունները):

Մոդելային 18 ա/դպրոցների ծախսերի արդյունավետության ցուցանիշների միջին արժեքներն են (համաձայն աղյուսակ 14-ի վերջին տողում հաշվարկված ցուցանիշների)՝

- 1 սովորողին ընկնող՝ դպրոցների ընթացիկ ընդհանուր միջին ծախսերը կազմել են 187.6 հազ. դրամ,
- 1 սովորողին ընկնող՝ դպրոցների աշխատողների աշխատավարձի գծով միջին ծախսերը կազմել են 170.2 հազ. դրամ (1 սովորողին ընկնող՝ դպրոցների ընթացիկ ընդհանուր միջին ծախսերի 90.7%-ը),
- 1 սովորողին ընկնող՝ դպրոցների պահպանման և այլ միջին ծախսերը կազմել են 17.4 հազ. դրամ (1 սովորողին ընկնող՝ դպրոցների ընթացիկ ընդհանուր միջին ծախսերի 9.3%-ը),
- դպրոցների 2013թ. տարեկան պահպանման և այլ միջին ծախսերը կազմել են 9034.3 հազ. դրամ:

2013թ. ընթացքում մոդելային 18 ավագ դպրոցներից 17-ն ընդհանրապես չեն կատարել կապիտալ ծախսեր, միայն Երևանի Մալաթիա-Սեբաստիա վ/շ թիվ 190 ա/դպրոցն է կատարել կապիտալ ծախսեր՝ 7880.0 հազ. դրամի չափով, որոնց մասնաբաժինն ընդհանուր ծախսերում կազմել է 4.95%: Սա նշանակում է, որ Հայաստանում կգտնվեն միայն եզակի թվով ա/դպրոցներ, որոնք ի վիճակի են տարիների ընթացքում առաջացած շահույթներից

կուտակել որոշակի ֆինանսական միջոցներ և կատարել կապիտալ ծախսեր՝ դպրոցի հիմնական միջոցների ձեռքբերման և/կամ շենքերի հիմնանորոգման գծով:

Մոդելային 18 ա/դպրոցների ծախսերի վերաբերյալ հավաքագրված տեղեկատվության (հավելված 1) օգտագործմամբ և կատարված վերլուծության հիման վրա կարելի է սահմանել և գնահատել նաև այդ դպրոցների ծախսային արդյունավետության այլ ցուցանիշներ՝ կախված կատարվող հետազոտության նպատակներից և խնդիրներից: Մույն հետազոտությունում մենք սահմանափակվել ենք միայն մոդելային 18 ա/դպրոցների ծախսային արդյունավետության վերոնշյալ 3 ցուցանիշների սահմանմամբ ու գնահատմամբ, ինչպես նաև դրանց վարկանիշային դասակարգմամբ:

Այսպիսով, ընտրված մոդելային 18 ա/դպրոցներից հավաքագրված վիճակագրական տեղեկատվության **(հավելված 1)** օգտագործմամբ, սույն բաժնում կատարված հետազոտության շրջանակներում, սահմանվել և գնահատվել են կրթության համակարգային 5, կրթության որակի 3 և ֆինանսական 5 հիմնական հարաբերական ցուցանիշներ՝ ըստ մոդելային ա/դպրոցների, որոնց հիման վրա կատարված վերլուծության հիմնական արդյունքներն են՝

- Մոդելային 18 ա/դպրոցներից ոչ մեկի 10-12-րդ դասարանների միջին խտությունը բարձր չէ ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմից՝ 25 սովորողից, սակայն այդ դպրոցներից 6-ի 10-12-րդ դասարանների միջին խտությունը, 2014թ. հունվարի դրությամբ, փոքր է 20 սովորողից: Ընդ որում, այդպիսի դպրոցներ կան ինչպես ՀՀ մարզերում, այնպես էլ Երևան քաղաքում:
- Երևանի մոդելային բոլոր 5 ա/դպրոցներն էլ համարվում են փաստացի աշխատող մանկավարժներով ցածր ծանրաբեռվածություն ունեցող դպրոցներ, իսկ մարզերի մոդելային 13 ա/դպրոցներից միայն 3-ն են համարվում այդպիսիք, մնացած 10-ը համարվում են փաստացի աշխատող մանկավարժներով միջին կամ բարձր ծանրաբեռնվածություն ունեցող դպրոցներ (հատկապես՝ Արմավիրի, Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերում):
- Մոդելային 18 ա/դպրոցներից ոչ մեկը չի հանդիսանում ոչ մանկավարժական աշխատողներով ցածր ծանրաբեռնվածություն ունեցող դպրոց, դրանք բոլորն էլ ոչ մանկավարժական աշխատողներով միջին կամ բարձր ծանրաբեռնվածություն ունեցող դպրոցներ են: Ընդ որում, ոչ մանկավարժական աշխատողներով բարձր ծանրաբեռնվածություն ունեցող 7 դպրոցներից 3-ը Գեղարքունիքի մարզից են և 1-ական՝ Արմավիրի, Արարատի, Կոտայքի մարզերից և Երևան քաղաքից:

- Մոդելային 18 ա/դպրոցներից ոչ մեկը չի հանդիսանում փաստացի սովորողներով բարձր ծանրաբեռնվածությամբ մանկավարժներով դպրոցներ (1 մանկավարժին ընկնող սովորողների միջին թիվը մեծ է 14.5 սովորողից): Երևանի մոդելային բոլոր 5 ա/դպրոցներն էլ համարվում են սովորողներով միջին ծանրաբեռնվածությամբ մանավարժներով դպրոցներ, իսկ ՀՀ մարզերի մոդելային 13 ա/դպրոցներից միայն 4-ն են հանդիսանում այդպիսիք, մնացած 9-ը սովորողներով ցածր ծանրաբեռնվածությամբ մանկավարժներով ա/դպրոցներ են (1 մանկավարժին ընկնող սովորողների միջին թիվը փոքր է 10 սովորողից):
- Մոդելային 18 ա/դպրոցներն՝ ըստ 1 ոչ մանկավարժական աշխատողին ընկնող սովորողների միջին թվի, միմյանցից խստորեն տարբերվում են՝ ցուցանիշի արժեքը տատանվում է բավականին լայն միջակայքում՝ 12.5 – 45 սովորող: Ընդ որում, այդ ցուցանիշի և՛ ցածր, և՛ բարձր արժեքներով ա/դպրոցներ կան ինչպես ՀՀ մարզերում, այնպես էլ Երևան քաղաքում:
- Մոդելային ա/դպրոցների սովորողների հաճախելիության միջին մակարդակը համեմատաբար բարձր է 10-րդ դասարանում (96-97%), իսկ 11-րդ (94.5-95.5%) և 12-րդ դասարաններում (95-96%) այն նկատելիորեն նվազում է: Մոդելային ա/դպրոցների 10-12-րդ դասարանների սովորողներին դասավանդվող ընդհանուր ժամաքանակի մեջ նրանց դասերից բացակայությունների միջինը կազմում է 4.2%: Սովորողների հաճախելիության մակարդակով Երևանի և ՀՀ մարզերի մոդելային ա/դպրոցներն իրարից առանձնապես չեն տարբերվում:
- Մոդելային ա/դպրոցների սովորողների առաջադիմությունը ցածր է հատկապես 10-րդ դասարանում (94.0-94.5%), 11-րդ դասարանում այն որոշ չափով բարձրացել է (94.5-97.5%), իսկ 12-րդ դասարանում այն էականորեն բարձրացել է (99-100%): Մոդելային 18 ա/դպրոցների սովորողների առաջադիմության միջին մակարդակը կազմել է 95.4%, հետևաբար ա/դպրոցների սովորողների շուրջ 4.6%-ի գիտելիքները բացարձակապես չեն համապատասխանել ա/դպրոցի պահանջներին և նրանց կրթության կազմակերպումը ա/դպրոցում աննպատակահարմար և անարդյունավետ է եղել:
- Մոդելային ա/դպրոցների 10-11-րդ դասարաններում սովորողների ուսման որակի արժեքը տատանվել է 39 – 43%-ի սահմաններում, իսկ 12-րդ դասարանում այն կազմել է շուրջ 56%, իսկ ա/դպրոցի միջին արժեքը՝ մոտ 46%: Հետևաբար, հիմնական դպրոցների շրջանավարտների մոտ 60%-ի ստացած գիտելիքները չեն բավարարում ա/դպրոցում <լավ> կամ <զերազանց> սովորելու համար, և ա/դպրոցների սովորողների առնվազն 50%-ն ի վիճակի է հաջողությամբ հանձնել ա/դպրոցի ավարտական կամ միասնական քննությունները և շարունակել իրենց կրթությունը բուհում կամ ՄՄՀ-ում:

- Ա/դպրոցի ավարտական 12-րդ դասարանի սովորողների առաջադիմության և ուսման որակի զգալի բարձր մակարդակները պայմանավորված են հիմնականում սուբյեկտիվ գործոններով, քան թե օբյեկտիվորեն դպրոցական կրթության շնորհիվ սովորողների ստացած գիտելիքներով:
- Ըստ սովորողների թվի՝ ա/դպրոցի ֆինանսավորումը բացասաբար է անդրադառնում դպրոցում կրթության որակի վրա, քանի որ, հիմնական դպրոցներում բարձր առաջադիմություն ցուցաբերած սովորողների կողքին, ա/դպրոցներում հայտնվում են նաև մեծ թվով ցածր առաջադիմություն ցուցաբերած սովորողներ, և կոմպլեկտավորվում են բարձր խտության դասարաններ, որի պատճառով ուսուցիչը չի կարողանում անհատական մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուր սովորողին:
- Մոդելային 18 ա/դպրոցներից 15-ում դեռևս գործում են հիմնական դպրոցի 5-9-րդ դասարաններ, որոնց 1 սովորողին ընկնող տարեկան գումարի նկատմամբ կիրառվող գործակիցն ավելի ցածր է, քան ա/դպրոցի 10-12-րդ դասարանների սովորողների համար կիրառվող գործակիցը, ինչը լրացուցիչ ֆինանսական դժվարություններ է ստեղծում ա/դպրոցի համար:
- 1 սովորողին ընկնող՝ ա/դպրոցի ինչպես պետական պատվերից ստացվող եկամուտները, այնպես էլ ընդհանուր եկամուտները հիմնականում հակադարձ համեմատական են դպրոցի սովորողների թվին, այսինքն ինչքան փոքր (մեծ) է դպրոցի սովորողների թիվը, այնքան մեծ (փոքր) են 1 սովորողին ընկնող՝ դպրոցի ինչպես պետական պատվերից ստացվող եկամուտները, այնպես էլ ընդհանուր եկամուտները: 1 սովորողին ընկնող՝ ա/դպրոցի ինչպես պետական պատվերից եկամուտները, այնպես էլ ընդհանուր եկամուտներն ունեն տատանման բավականին մեծ միջակայքեր՝ համապատասխանաբար 144.3 – 288.1 հազ. դրամ և 146.8 – 295.1 հազ. դրամ, որը նշանակում է, որ գործող սկզբունքով ա/դպրոցների ֆինանսավորումն՝ ըստ 1 սովորողին ընկնող եկամուտների, իրականացվում է խիստ անհավասարաչափ և ոչ հասցեական:
- 1 սովորողին ընկնող՝ ա/դպրոցի ինչպես ընթացիկ ընդհանուր ծախսերն, այնպես էլ աշխատողների աշխատավարձի գծով ծախսերը հիմնականում հակադարձ համեմատական են դպրոցի սովորողների թվին, այսինքն ինչքան փոքր (մեծ) է դպրոցի սովորողների թիվը, այնքան մեծ (փոքր) են 1 սովորողին ընկնող՝ ինչպես ընթացիկ ընդհանուր ծախսերն, այնպես էլ աշխատողների աշխատավարձի գծով ծախսերը: 1 սովորողին ընկնող՝ ա/դպրոցի ինչպես ընթացիկ ընդհանուր ծախսերն, այնպես էլ աշխատողների աշխատավարձի գծով ծախսերն ունեն տատանման բավականին մեծ միջակայքեր՝ համապատասխանաբար 146.6 – 295.1 հազ. դրամ և 129.4 – 260.7 հազ. դրամ, որը նշանակում է, որ ա/դպրոցների ֆինանսական գործունեությունն՝ ըստ 1 սովորողին ընկնող ծախսերի, իրականացվում է խիստ անհամաչափ և ոչ արդյունավետ:

- Ի տարբերություն 1 սովորողին ընկնող՝ ա/դպրոցի ընթացիկ ընդհանուր ծախսերի և աշխատողների աշխատավարձի գծով ծախսերի, 1 սովորողին ընկնող՝ ա/դպրոցի պահպանման և այլ ծախսերն առանձնապես կապ չունեն դպրոցի սովորողների թվի հետ, տարբեր ա/դպրոցներ այդ գծով տարբեր չափով ծախսեր են կատարում՝ կախված դպրոցի ոչ մանկավարժական աշխատողների թվից, դպրոցի տարածքի չափից, բնակավայրի բնակլիմայական պայմաններից, տվյալ տարում դպրոցի կարիքներից և նմանատիպ այլ գործոններից:
- 2013թ. ընթացքում մոդելային 18 ա/դպրոցներից 17-ն ընդհանրապես չեն կատարել կապիտալ ծախսեր, միայն Երևանի թիվ 190 ա/դպրոցն է կատարել կապիտալ ծախսեր, որոնց մասնաբաժինը դպրոցի ընդհանուր ծախսերում կազմել է 4.95%: Սա նշանակում է, որ միայն եզակի ա/դպրոցներ են ի վիճակի տարիների ընթացքում առաջացած շահույթներից կուտակել որոշակի ֆինանսական միջոցներ՝ դպրոցի հիմնական միջոցների ձեռքբերման և/կամ շենքերի հիմնանորոգման համար:

4. Հանրակրթական մոդելային ավագ դպրոցների գործունեության հիմնախնդիրների և ֆինանսական արդյունավետության վրա ազդող գործոնների բացահայտումը, դրանց ազդեցության չափի վերլուծությունը և գնահատումը

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ ա/դպրոցներում դեռևս չի ներդրվել և կիրառություն չի գտել <Հանրակրթության մասին> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով սահմանված՝ ուսումնական հաստատության գործունեության գնահատման (ներքին և արտաքին) համակարգը, կարելի է ենթադրել, որ ա/դպրոցներում դեռևս բարձր մակարդակի վրա չեն գտնվում դրանց ֆինանսատնտեսական գործունեության արդյունավետությունը և հաշվետվողականությունը: Թեև այդ բացը մասնակիորեն ծածկվում է ՀՀ ԿԳՆ ներքին առդիտի բաժնի կողմից իրականացվող աշխատանքների միջոցով, սակայն, ամենայն հավանականությամբ, դա բավարար համարել չի կարելի՝ դպրոցների ֆինանսատնտեսական գործունեության բազմակողմանի գնահատման և ֆինանսական արդյունավետության մակարդակի անշեղ բարձրացման համար:

Այդ պատճառով, հանրակրթական մոդելային 18 ա/դպրոցների գործունեության ֆինանսական արդյունավետությունը վերլուծելու և գնահատելու նպատակով, այդ դպրոցներից հավաքագրված վիճակագրական տեղեկատվության հիման վրա դրանց առկա վիճակը բնութագրելուն, վերլուծելուն և գնահատելուն զուգահեռ, այդ ա/դպրոցներում իրականացվել են նաև սոցիոլոգիական խորացված հետազոտություններ: Ծրագրում ձևավորված սոցիոլոգիական խմբերի կողմից իրականացվել են հարցազրույցներ մոդելային 18 ա/դպրոցների աշակերտների 410 ծնողների, 207 աշակերտներից ձևավորված 18 ֆոկուս-խմբերի և 36 տնօրենների/փոխտնօրենների/ուսուցիչների (փորձագետների) հետ, որոնց սղագրությունները կազմել են հետագա վերլուծությունները կատարելու համար անհրաժեշտ տվյալների հենքային շտեմարանը: Կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա՝ ձևակերպվել են ա/դպրոցներում կրթական ծառայությունների մատուցման քանակական և որակական հիմնական արդյունքները (հիմնախնդիրներ, թերություններ, բացթողումներ, դրանց լուծման/վերացման ուղիներ, գործոններ, միտումներ և այլն), որոնք ամբողջությամբ բերված են **հավելված 3-ում**:

Օգտագործելով և համադրելով նախորդ բաժնում իրականացված և սոցիոլոգիական հետազոտություններից ստացված հիմնական արդյունքները՝ ստորև դիտարկվում, վերլուծվում և գնահատվում են ա/դպրոցների գործունեության հիմնական հիմնախնդիրները, ֆինանսական արդյունավետության վրա ազդող գործոնները և միտումները, որոնց բացահայտումը և ազդեցության չափը հնարավորություն կտա անելու

որոշակի եզրակացություններ այդ դպրոցների կողմից կատարված ծախսերի, մատուցված ծառայությունների և դրանցից օգտվող շահառուների ստացած օգուտների համապատասխանության աստիճանի վերաբերյալ:

4.1. Կրթության համակարգային ընդհանուր հիմնախնդիրները և գործոնները

Ա/դպրոցների ձևավորման գործընթացը. Կատարված սոցիոլոգիական հետազոտությամբ պարզվեց, որ, Հայաստանում 2009-2012թթ. ընթացքում իրականացված հանրակրթական բարեփոխումների շրջանակում, միջնակարգ դպրոցների ցանկից ա/դպրոցների ընտրությունը կատարվել է հանրակրթության պաշտոնական լիազոր մարմնի՝ ՀՀ ԿԳՆ կողմից՝ առանց այդ միջնակարգ դպրոցների կառավարման մարմինների (խորհրդի, տնօրենի) հետ հարցի համակողմանի քննարկման: Փորձագիտական հարցումների համաձայն, կիրառվել են ա/դպրոցների ընտրության հետևյալ իրարամերժ մոտեցումները՝

- դպրոցում առկա են եղել ա/դպրոցի կայացման համար համեմատաբար բարենպաստ պայմաններ (հարուստ նյութատեխնիկական բազա, որակյալ ուսուցչական անձնակազմ, հոսքային հանրակրթության որոշակի փորձ, համայնքում ձեռք բերված՝ դպրոցի որոշակի հեղինակություն և այլն),
- քաղաքային փոքր և գյուղական համայնքներում հաշվի են առնվել դպրոցի աշխարհագրական դիրքը և չափը (նախագծային հզորությունը կամ փաստացի սովորողների թիվը): Ընդ որում, ավելի կենտրոնական դիրք ունեցող և/կամ պայմանականորեն <մեծ> (500-ից ավելի սովորողներ ունեցող) միջնակարգ դպրոցները վերակազմակերպվել են առավելապես հիմնական դպրոցների, հետո նոր վերջին միջնակարգ դպրոցը՝ ա/դպրոցի,
- քաղաքային միջին և մեծ համայնքներում, հատկապես Երևանում, ա/դպրոց են դարձել այն միջնակարգ դպրոցները, որոնք մինչ այդ ունեցել են սովորողների թվի խնդիր՝ չդիմանալով հարևան դպրոցների մրցակցությանը տարբեր պատճառներով (շենքային և գույքային պայմաններ, կրթության որակ և այլն):

Մոդելային 18 ա/դպրոցներից 15-ում, բացի 10-12-րդ դասարաններից, ներկայումս դեռևս գործում են նաև 5-9-րդ դասարաններ: Բացառություն են կազմում միայն Արմավիրի թիվ 1, Վաղարշապատի թիվ 10 և Գեղարքունիքի մարզի Ձորագյուղի ա/դպրոցները, որոնք վերակազմավորվելիս միջնակարգ դպրոցի 5-9-րդ դասարանների բոլոր սովորողներին միանգամից տեղափոխել են համայնքում ձևավորված հիմնական դպրոցներ:

Ա/դպրոցների կրթական հոսքերը և ենթահոսքերը. Որպես հանրակրթության վերջին և «նախամասնագիտական կրթության» կազմակերպման հիմնական օղակի, ա/դպրոցի ստեղծման նպատակն է կրթության որակի և արդյունավետության բարձրացումը և արդիականացումը: Դրված նպատակին հասնելու հիմնական մեխանիզմը ա/դպրոցի սովորողների կրթության կազմակերպումն է հոսքային/ենթահոսքային դասարաններում: ՀՀ ա/դպրոցներում կրթական հոսքերը ձևավորվել են հիմնականում բուհերի մասնագիտությունների ընդունելության քննությունների հանձման ենթակա առարկաների խմբավորման հիման վրա: Իսկ ա/դպրոցների կրթական ենթահոսքերը հիմնականում համապատասխանում են պահանջարկ ունեցող բուհական ֆակուլտետներին և մասնագիտություններին:

Ա/դպրոցներում ներկայումս տարածված են հիմնականում կրթական 2 հոսքեր՝ հումանիտար և բնագիտական (բնագիտամաթեմատիկական): Արհեստագործական հոսք գործում է միայն բացառիկ ա/դպրոցներում: Այսպես, հետազոտության մեջ ընդգրկված մոդելային 18 ա/դպրոցներից արհեստագործական հոսք գործում է միայն Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ա/դպրոցում: Բնագիտական հոսքը հիմնականում բաժանվում է 3 ենթահոսքերի՝ ֆիզիկամաթեմատիկական, տնտեսագիտական և կենսաքիմիական: Հումանիտար հոսքը հիմնականում բաժանվում է 3 ենթահոսքերի՝ պատմական, իրավագիտական և լեզվաբանական: Հարկ է նաև նշել, որ տարբեր ա/դպրոցներում ենթահոսքերը տարբեր անվանումներ ունեն, որոշ ա/դպրոցներում էլ կան համակցված անվանումներ՝ օրինակ, պատմաիրավագիտական, լեզվահումանիտար, հասարակագիտական, բնագիտամաթեմատիկական և այլն:

Մոդելային 18 ա/դպրոցներից 9-ում գործում է նաև կրթական ընդհանուր հոսքը, որտեղ հիմնականում սովորում են հիմնական դպրոցի այն շրջանավարտները, ովքեր՝

- դեռևս չեն կողմնորոշվել ապագա մասնագիտության ընտրության հարցում,
- տվյալ ա/դպրոցում չեն գտնում իրենց ապագա մասնագիտությանը և նախասիրություններին համապատասխանող հոսք/ենթահոսք (օրինակ, ռազմական, արվեստի, սպորտի և այլ ուղղություններով),
- ցանկություն չունեն շարունակել իրենց կրթությունը բուհում (ցածր առաջադիմություն ունենալու, դպրոցում արհեստագործական հոսքի բացակայության և այլ պատճառներով):

«Մենք երկու տարի է կենսաբանություն չենք անցնում: Ավագ դպրոցը այնքանով է լավ, որ դու կարող ես դառնալ լավ մասնագետ, բայց դու կյանքի մասին պատկերացում չես ունենա: Եթե քո երեխան հիմնական դպրոցում անցնի այս առարկաները, որ դու չես անցել, ուրեմն դու նրան օգնել չես կարող» (Արմավիրի թիվ 1 ա/դպրոցի աշակերտ):

«Բայց առաջ ավելի լավ էր, որ ես հավասար բոլոր առարկաները սովորում էի: Մեր բոլորի մեջ մտել է այն հասկացությունը, որ մեզ մենակ պետք են մեր առարկաները» (Արմավիրի թիվ 1 ա/դպրոցի աշակերտուհի):

Ա/դպրոցների սովորողները գրեթե հավասարաչափ են բաշխված հումանիտար և բնագիտական հոսքերի միջև, ընդ որում՝ աղջիկների մեծ մասը (58.8%) սովորում են հումանիտար հոսքի դասարաններում, իսկ տղաների մեծ մասը (59.1%)՝ բնագիտական (տե՛ս հավելված 3, աղյուսակ 2): Սոցիոլոգիական հետազոտությանը մասնակցած ծնողների 86.2%-ը գտնում է, որ ա/դպրոցի դասարանի հոսքային ուղղվածությունը հիմնականում համապատասխանում է իրենց երեխաների մասնագիտական հետաքրքրություններին ու նախասիրություններին, իսկ նրանց 10.7%-ը՝ ոչ: Հատկապես վերջին խմբի ծնողների կողմից բերված տարաբնույթ պատճառները և փաստարկները թույլ են տալիս եզրակացնել, որ ա/դպրոցներում ներկայումս գործող հոսքերը/ենթահոսքերը դեռևս չեն ապահովում բուհում, ՄՄՀ-ում և/կամ աշխատանքի շուկայում պահանջված մասնագիտությունների գոնե մոտավոր բազմազանությունը: Խոսքը հատկապես վերաբերում է ռազմական, արվեստի, սպորտի բնագավառների, ինչպես նաև արհեստագործական տարբեր մասնագիտությունների հետ իրենց ապագան կապելու ցանկություն ունեցող սովորողներին:

Ա/դպրոցներում առկա են որոշակի հիմնախնդիրներ՝ կապված հոսքային դասարանների ձևավորման, հոսքային դասարաններում ուսումնական պլանով նախատեսված հոսքային և ոչ հոսքային առարկաների ժամաքանակների, դրանց գծով փոխադրական և ավարտական քննությունների նպատակահարմարության, լրացուցիչ մասնագիտական առարկաների դասավանդման, ֆակուլտատիվ պարապմունքների, խմբակների կազմակերպման մասնագիտական և ֆինանսական հնարավորությունների հետ:

Հիմնական դպրոցների շրջանավարտների կողմից ա/դպրոցի ընտրության չափանիշները. Սոցիոլոգիական հետազոտության արդյունքների համաձայն, հիմնական դպրոցի շրջանավարտներն իրենց կրթությունը հիմնականում շարունակում են ա/դպրոցում: Ա/դպրոցի 10-րդ դասարանում ակնկալվող սովորողների թիվը հատկապես կանխատեսելի է քաղաքային փոքր և գյուղական համայնքներում, որտեղ ա/դպրոցը միակն է: Հիմնական դպրոցների շրջանավարտների կողմից կոնկրետ ա/դպրոցի ընտրությունը հիմնականում պայմանավորված է եղել հետևյալ չափանիշներով՝

- դա համայնքի միակ ա/դպրոցն է (37.9%),
- դա սովորողի տանը ամենամոտ ա/դպրոցն է (26.3%),
- դա ապահովում է որակյալ կրթություն (23.9%),
- դրա հոսքային ուղղվածությունը համապատասխանում է սովորողի նախասիրություններին / ապագա մասնագիտությանը (6.4%),

- դա նախկինում եղել է սովորողի հիմնական դպրոցը (2.9%),
- հիմնական դպրոցի ամբողջ դասարանով տեղափոխվել են այս ա/դպրոց (1.3%),
- հիմնական դպրոցն է ուղղորդել այս ա/դպրոց (1.1%) և այլն:

«Ծնողների հետ ենք խորհրդակցել ու ուսուցիչների խորհրդով ընդունվել ենք այս «դժոխք» (Աբովյանի թիվ 4 ա/դպրոցի աշակերտ):

Սովորողների ա/դպրոց ընդունելության, հոսքային դասարանների կոմպլեկտավորման և դպրոցից հեռացման ընթացակարգերը. Ա/դպրոցներ սովորողների ընդունելությունը կատարվում է բացառապես նրանց ծնողների դիմումների հիման վրա: Բոլոր նրանք, ովքեր ցանկանում են շարունակել կրթությունն ա/դպրոցում, կարող են դիմել և ընդունվել: Որոշ ա/դպրոցներում (օրինակ, Երևան քաղաքի, Արարատի և Արմավիրի մարզերի), ա/դպրոցի հիմնադրման առաջին տարիներին, կազմակերպվել են սովորողների ընդունելության քննություններ, հարցազրույցներ կամ նախնական թեստավորում, սակայն՝ ստանալով մեծիմասամբ անբավարար արդյունքներ, միևնույնն է, բոլորին ընդունել են ա/դպրոց: Այդ պատճառով ներկայումս նման պրակտիկա այլևս չի կիրառվում:

Ա/դպրոցի հոսքային դասարանների կոմպլեկտավորումը նույնպես կատարվում է՝ հիմնականում հիմք ընդունելով նորից ծնողների դիմումները: Որոշ դեպքերում հաշվի են առնվում նաև սովորողի փաստացի գիտելիքները, կարողությունները, ակադեմիական հնարավորությունները՝ առաջնորդվելով հիմնական դպրոցի ավարտական վկայականների գնահատականներով:

Ա/դպրոց սովորողի ընդունելության կարգի վերաբերյալ տնօրենների և մանկավարժների կարծիքները խստորեն տարբերվում են: Մանկավարժների ճնշող մեծամասնությունն այն կարծիքին է, որ ցանկալի է մշակել և ներդնել ա/դպրոց ընդունվելու ընթացակարգ՝ ստուգելով երեխաների գիտելիքները հարցազրույցի կամ թեստավորման միջոցով: Դրա շնորհիվ ա/դպրոց կընդունվեն միայն այն սովորողները, որոնք ունեն որոշակի կրթական մակարդակ, գիտելիքներ և ունակություններ: Եթե սահմանվի սովորողի գիտելիքների որոշակի շեմ, ապա ա/դպրոց կընդունվեն միայն նախամասնագիտական կրթություն ստանալու ձգտում ունեցող սովորողները, ինչը կբարձրացնի ա/դպրոցի կրթության որակը և արդյունավետությունը: Նման գտման արդյունքում զգալիորեն կկրճատվի ա/դպրոցների աշակերտների թիվը, սակայն ա/դպրոցները կծառայեն իրենց բուն նպատակին:

Մյուս կողմից, հանրակրթական դպրոցները ֆինանսավորվում են ըստ սովորողների թվի, և վերոնշյալ մոտեցումը էապես կկրճատի դպրոցի եկամուտները, հետևաբար նաև՝ դպրոցի ծախսային հնարավորությունները: Ստացվում է այնպես, որ ա/դպրոցի նպատակը՝

ապահովել որակյալ հոսքային կրթություն, և դրա ֆինանսավորման մեխանիզմն՝ ըստ սովորողների թվի, իրար ուղղակիորեն հակասում են կամ հակադրվում:

Ա/դպրոցների տնօրենների մեծամասնության կարծիքով, ա/դպրոց ընդունելության որևէ ընթացակարգի կարիքը չկա, որպեսզի ա/դպրոց կարողանան ընդունվել բոլոր ցանկացողները, ինչը կնպաստի հանրակրթության ոլորտի սոցիալական սկզբունքների իրագործմանը՝ հավասարության, արդարության և ներառականության ապահովմանը:

Կարևոր խնդիր է համարվում նաև ա/դպրոցի հոսքային դասարաններում տղաների և աղջիկների համամասնության ապահովումը: Սովորաբար, դպրոցը փորձում է պահպանել տղաների ու աղջիկների հարաբերակցությունը դասարանում, սակայն դա միշտ չէ, որ հաջողվում է՝ դարձյալ այն պատճառով, որ, կրթական հոսքերը կոմպլեկտավորելիս, ա/դպրոցը հիմք է ընդունում սովորողների ծնողների դիմումները:

«Օրինակ, իմ դասարանը չի համապատասխանում իմ նախասիրություններին: Ես մաթեմատիկայի հետ սեր չունեմ: Իմ ուղղությունը արվեստն է, բայց դե ատեստատի համար պետք է ավարտեն» (Աշտարակի թիվ 5 ա/դպրոցի աշակերտ):

«Ես կենսաքիմիա հոսքն էի ընտրել, բայց չբացվեց այս դպրոցում, ինձ ավտոմատ կերպով ուղարկեցին տնտեսագիտական հոսք, իսկ ես ուզում եմ բժիշկ դառնալ» (Երևանի Կենտրոն վ/շ-ի Շնչենկոյի անվան թիվ 42 ա/դպրոցի աշակերտուհի):

Սոցիոլոգիական հետազոտության ընթացքում նաև պարզվեց, որ մոդելային 18 ա/դպրոցներից և ոչ մեկում չի առաջացել սովորողի հեռացման հարց: Նման հարց կարող է առաջանալ միայն սովորողի ակնհայտ ցածր առաջադիմության կամ նրա կողմից լուրջ օրինախախտում կատարելու դեպքերում: Սովորողի կարգազանց վարքի դեպքում, մանկավարժական խորհրդի որոշմամբ, դպրոցը կարող է նրա ծնողի առջև հարց բարձրացնել՝ նրան այլ դպրոց տեղափոխելու մասին:

Միևնույն ժամանակ, ա/դպրոցների որոշ մանկավարժների կարծիքով, անհրաժեշտ է ունենալ որևէ մեխանիզմ չսովորող և դասապրոցեսը խանգարող աշակերտների հեռացման համար: Որոշ մանկավարժներ էլ ա/դպրոցից սովորողի հեռացման համար հիմք են համարում նաև ուսուցչի հանդեպ նրա անհարգալից վերաբերմունքը, որպեսզի նման արարքի անպատժելիության նախադեպը չդառնա դրա կրկնվելու առիթ:

Ա/դպրոցների շենքային և գույքային պայմանները. Գնահատելով մոդելային 18 ա/դպրոցների շենքային ներկայիս պայմանները՝ սոցիոլոգիական հետազոտության արդյունքները վկայում են, որ դրանց շենքերի մեծ մասն ունի հիմնանորոգման կարիք, քանի որ դրանք կառուցվել են հիմնականում խորհրդային տարիներին (բացառությամբ, Թերևս, միայն Արագածոտնի մարզի Ապարանի ա/դպրոցի), իսկ ՀՀ անկախության տարիներին դրանք կամ բոլորովին չեն ենթարկվել, կամ մասնակիորեն են ենթարկվել կապիտալ

նորոգման: Այսպես, մոդելային 18 ա/դպրոցներից շենքային պայմանները կարելի է լավ կամ բավարար համարել միայն 7 դպրոցներում (Երևանի Աջափնյակ վ/շ թիվ 195, Արմավիրի թիվ 1, Հրազդանի թիվ 13, Գավառի, Ապարանի, Ձորագյուղի, Վարդենիկի): Մոդելային մնացած 11 ա/դպրոցներում վատ վիճակում են հիմնականում սանհանգույցները, մարզադահլիճները, հանդիսությունների դահլիճները, պատուհանները, հատակները, դասասենյակների մի մասը և այլն: Կապիտալ նորոգման նպատակով ՀՀ պետական բյուջեից ա/դպրոցներին գումարների հատկացումը հազվադեպ բնույթ է կրում, դրանք չեն բավարարում խնդրին ամբողջական լուծում տալուն: Օրինակ, 2013թ. ընթացքում ՀՀ պետական բյուջեից մոդելային 18 ա/դպրոցներից միայն Երևանի Մալաթիա-Սեբաստիա վ/շ թիվ 190 ա/դպրոցին է հատկացվել գումար շենքի կապիտալ նորոգման համար՝ 7880.0 հազ. դրամի չափով, որը կազմել է այդ դպրոցի ընդհանուր ծախսերի ընդամենը 4.95%-ը (տե՛ս հավելված 1): Դպրոցական շենքերի հիմնանորոգման հարցով դպրոցների տնօրենները դիմում են ոչ միայն ՀՀ ԿԳՆ, այլև ՀՀ-ում գործող տարբեր դոնոր կազմակերպություններին, որոնց հետ դպրոցների համագործակցությունը ևս եզակի բնույթ է կրում:

Ա/դպրոցների գույքային խնդիրները ևս բազմաթիվ են ու բազմազան: Շատ ա/դպրոցներում գույքը հին է, կա դպրոցական սեղանների, աթոռների, նստարանների, գրատախտակների և այլ գույքի վերանորոգման, ինչպես նաև նոր գույքի ձեռքբերման կարիք:

Հետաքրքիր է նաև արձանագրել, որ ա/դպրոցներում համակարգչային սարքավորումներով հագեցվածության խնդիրը կարծես թե աստիճանաբար լուծվում է: Օրինակ, Գեղարքունիքի մարզի Ձորագյուղի ա/դպրոցում գործում են 2 համակարգչային սրահներ, որոնցից մեկում տեղադրված են 20 շարժական համակարգիչներ և էլեկտրոնային գրատախտակ, մյուսում՝ 12 ստացիոնար համակարգիչներ: Որոշ դպրոցներում կան նույնիսկ մի քանի էլեկտրոնային գրատախտակներ (օրինակ, Երևանի Մալաթիա-Սեբաստիա վ/շ թիվ 190 ա/դպրոցի 2 էլեկտրոնային գրատախտակները նախատեսված են 560 սովորողի համար):

Ա/դպրոցներում լիարժեք չեն գործում կենսաբանության, քիմիայի և ֆիզիկայի առարկայական լաբորատորիաները: Որոշ դպրոցներում անգամ հատկացված չեն համապատասխան սենյակներ, որտեղ կարելի է տեղավորել այդ առարկաների մասնագիտական սարքավորումները և նյութերը: Որոշ դպրոցներում էլ, հակառակը, կան լաբորատորիաների համար հատկացված սենյակներ, սակայն չկան մասնագիտական սարքավորումներ և նյութեր:

Մոդելային որոշ ա/դպրոցներում չկա բուֆետ, սովորողները ստիպված են լինում սնվել դպրոցի տարածքից դուրս (օրինակ, Ապարանի, Մարտունու ա/դպրոցներում), որը պարունակում է որոշակի ռիսկայնություն՝ կապված նրանց անվտանգության հետ:

Մինևույն ժամանակ, մոդելային բոլոր ա/դպրոցների հանրակրթական մասնագետները համակարծիք են, որ շենքային և գույքային պայմաններն ա/դպրոցի

հեղինակության համար կարևոր նշանակություն ունեն, քանի որ դրանք սովորողների մոտ ստեղծում են առաջին տպավորությունը դպրոցի նկատմամբ, ըստ այդմ էլ ձևավորվում է նրանց ընդհանրական վերաբերմունքը ինչպես տվյալ ա/դպրոցի, այնպես էլ ընդհանրապես ՀՀ-ում հանրակրթության հանդեպ: Երբ սովորողները մտնում են աղքատիկ շենքային և գույքային պայմաններ ունեցող դպրոց, նրանք միանգամից հիասթափվում են, իրենց զգում հուսախաբված, թերահավատությամբ կամ վատատեսությամբ (պեսիմիզմով) լցվում այդ դպրոցում իրենց ստանալիք կրթության, երբեմն նաև՝ իրենց ապագայի նկատմամբ:

«Հանդիսությունների դահլիճ էլ ունենք, բայց առաջին դասարանից այստեղ եմ սովորում ու դեռ չեմ տեսել, հեռա ավարտում եմ» (Աբովյանի թիվ 4 ա/դպրոցի աշակերտ):

«Գոնե մի երեք հատ պատճենող սարք թող տան ուսուցիչներին: Օրինակ ես ինձ շատ վատ եմ զգում, որ թեստերն ուսուցիչներն են պատճենում, բերում: Որոշ ուսուցիչներ դնում են այնտեղ, ասում են գնացեք վճարեք, վերցրեք, գրեք, որոշ ուսուցիչներ էլ ամոթից չեն ասում, իրանք են մուծում» (Աբովյանի թիվ 1 ա/դպրոցի աշակերտուհի):

4.2. Կրթության որակի հիմնախնդիրները և գործոնները

Դիտարկենք ա/դպրոցում կրթության որակի առանձին բաղադրիչների վերաբերյալ սոցիոլոգիական հետազոտությունից ստացված հիմնական արդյունքները՝ փորձելով վեր հանել և վերլուծել այն հիմնախնդիրները և գործոնները, որոնք անմիջական (ուղղակի կամ անուղղակի) առնչություն ունեն դպրոցի ֆինանսավորման և ֆինանսական գործունեության արդյունավետության հետ:

Ա/դպրոցի ուսումնական պլանները, առարկայական ծրագրերը և դասագրքերը. Ա/դպրոցի ուսումնական պլանի, առարկայական ծրագրերի և դասագրքերի վերանայման անհրաժեշտության մասին խոսել են համարյա բոլոր հարցված մանկավարժները և սովորողները: Այս հարցում առանցքային հիմնախնդիրն այն է, որ գործող առարկայական ծրագրերի և բուհի ընդունելության քննությունների շտեմարանների միջև առկա են էական տարբերություններ ու անհամապատասխանություններ: Բոլոր մասնագետները և սովորողները միակարծիք են, որ հնարավոր չէ դպրոցական գործող առարկայական ծրագրերով և դասագրքերով լիարժեք պատրաստվել բուհական ընդունելության քննություններին: Մասնավորապես, մանկավարժների կարծիքով, հանրակրթական դպրոցում 12-ամյա կրթության կազմակերպումը հետապնդում էր երկու կարևոր նպատակներ՝ առարկայական ծրագրերի բեռնաթափում և սովորողների

ծանրաբեռնվածության թեթևացում: Դրանց հասնելու համար նախկին 10-11-րդ դասարանների առարկայական ծրագրերի նյութը պետք է բաշխվեր երեք տարվա վրա: Այնինչ տեղի ունեցավ հակառակը: Օրինակ, 12-րդ դասարանի առարկայական ծրագրերում կան կարևոր շատ թեմաներ, սակայն անիմաստ է մեկ կիսամյակ շարունակ ուսումնական պլանով նախատեսված դասաժամաքանակն ամբողջությամբ տրամադրել այդ թեմաների ուսումնասիրությանը, քանի որ բուհերի ընդունելության քննությունների շտեմարաններն ավելի շատ նյութ են պարունակում 5-11-րդ դասարանների առարկայական ծրագրերից, քան 12-րդ դասարանի առարկայական ծրագրերից: Հետագոտության ընթացքում տեղեկատվական բոլոր աղբյուրներից և մեթոդներով ստացված տեղեկատվության վերլուծությունը վկայում է այն մասին, որ 12-րդ դասարանում ա/դպրոցի դերը հստակ չէ ոչ սովորողների, ոչ նրանց ծնողների և ոչ էլ ուսուցիչների համար: 12-րդ դասարանի սովորողները դպրոցում մեծամասամբ փորձում են կատարել հիմնականում կրկնուսույցների հանձնարարությունները, իսկ ուսուցիչները դա նրանց կամ թույլատրում են, կամ չեն թույլատրում:

Ա/դպրոցում առկա են նաև առարկայական ծրագրերում տարբեր բարդության թեմաների համար տրամադրվող ժամաքանակների անհամաչափության խնդիրներ: Կան պարզ թեմաներ, որ կարելի է 1-2 դասաժամում անցնել, բայց ուսումնական պլանով 10-12 ժամ է տրված, և ընդհակառակը՝ կան բարդ թեմաներ, որոնք սովորողները դժվարությամբ են յուրացնում, դրանց հատկացվել է 1-2 դասաժամ: Ա/դպրոցների պրակտիկ փորձը ևս ցույց է տալիս, որ հստակ համապատասխանություն չկա առարկայական ծրագրերի թեմատիկ ծավալների, ժամաքանակների և ավարտական քննությունների հարցաշարերի միջև:

Ա/դպրոցի մանկավարժները հիմնականում դժգոհ են իրենց առարկաների դասագրքերի որակից: Հիմնական դժգոհությունը վերաբերում է նրան, որ դասագրքերում քիչ են քրեստոմատիկ նյութերը, վարժությունները, դրանք պարունակում են առավելապես տեսական նյութեր, իսկ գործնական նյութերը բավարար չեն, որպեսզի դյուրինացնեն տեսական նյութերի ընկալումը: Մա որոշակիորեն սահմանափակում է սովորողի կողմից առարկայական նյութն ինքնուրույն յուրացնելու հնարավորությունները: Հարցված մանկավարժների կարծիքով, եթե սովորողը դպրոցից հանկարծ բացակայի 10-15 օր (ասենք, հիվանդության կամ հարգելի այլ պատճառներով) և փորձի ինքնուրույն յուրացնել բաց թողնված նյութը, նա դա չի կարողանա անել օբյեկտիվորեն, քանի որ դասագրքերը չեն ապահովում այդ հնարավորությունը: Ա/դպրոցի հոսքային դասարաններում դասագրքային ոչ բավարար նյութը մանկավարժները հաճախ փորձում են լրացնել դասախոսություններով, գործնական պարապմունքներով՝ օգտագործելով այլ հեղինակների գրքեր, լրացուցիչ նյութեր, սակայն դա չունի համակարգված բնույթ և դրված չէ ինստիտուցիոնալ հիմքերի վրա:

Սոցիոլոգիական հետազոտության ժամանակ որոշակի քննադատություն է հնչել առանձնապես հայոց լեզու, հայ գրականություն, ֆիզիկա, քիմիա առարկաների դասագրքերի բովանդակության վերաբերյալ: Մանկավարժները ցանկություն են հայտնել, որպեսզի այդ առարկաների դասագրքերը վերանայվեն և լրամշակվեն, ինչպես նաև դասագրքեր մշակողները համագործակցեն և դրանց բովանդակությունը քննարկեն ա/դպրոցների մանկավարժների, այլ շահագրգիռ կողմերի հետ:

Սողեւային որոշ ա/դպրոցներում 12-րդ դասարանի ուսուցիչները հաճախ գերադասում են դասագրքերի փոխարեն օգտագործել բուհերի ընդունելության քննությունների հանձնման համար նախատեսված շտեմարանները: Իսկ 12-րդ դասարանի սովորողները ցանկություն են հայտնել, որպեսզի 2-րդ կիսամյակում նրանց դպրոցները տրամադրեն շտեմարաններ՝ դասագրքերի տրամադրման ընդհանուր հիմունքներով:

Դասագրքերին զուգահեռ, անհրաժեշտություն է զգացվում վերանայել նաև սովորողների ընթացիկ գնահատման, գործնական առաջադրանքների, թեմատիկ գրավոր ստուգողական աշխատանքների, կիսամյակային թեստերի տեսքերի բովանդակությունները:

Ա/դպրոցում դասագրքերը տրամադրվում են սովորողներին վարձակալությամբ: Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար դպրոցը որոշակի զեղչեր է կատարում: Սոցիոլոգիական հարցման արդյունքներով, ա/դպրոցի 1 սովորողի ծնողների տարեկան ընդհանուր ծախսերը միջին հաշվով կազմում են մոտ 55.0 հազ. դրամ³²:

Ավագ դպրոցներում դասագրքերի քանակը հաճախ չի բավարարում բոլոր սովորողներին, նրանց մի մասը ստիպված է փնտրել դրանք և գնել շուկայական գներով: Երբեմն դպրոցներում առաջանում է անհամաչափություն միևնույն առարկայի տարբեր հոսքերի դասագրքերի միջև՝ օրինակ, հումանիտար հոսքի սովորողներին տրամադրվում են բնագիտական հոսքի դասագրքեր կամ հակառակը: Ըստ հոսքերի տարբեր դասագրքերի օգտագործումը խառնաշփոթ է ստեղծում նաև տարեկան ավարտական քննությունների ժամանակ՝ օրինակ, բնագիտական հոսքի աշակերտն ամբողջ տարվա ընթացքում սովորում է հումանիտար հոսքի դասագրքով, իսկ ավարտական քննության հանձնման համար, բնականաբար, նա պետք է պատրաստվի բնագիտական հոսքի դասագրքով:

«Դասագրքերը քիչ են, համարյա չունենք, այսինքն մենք ենք առնում, չեն տալիս, օրինակ, ես հումանիտար հոսքից եմ հայոց լեզվի, գրականության ու անգլերենի գրքեր չկան» (Արուսյանի թիվ 4 ա/դպրոցի աշակերտուհի):

³² 1 սովորողի ծնողների տարեկան 55.0 հազ. դրամ ընդհանուր ծախսերը ներառում են՝ դասագրքերի վարձակալություն՝ 8.0 հազ. դրամ, դասագրքերի գնում և/կամ պատճենահանում՝ 7.6 հազ. դրամ, գրենական պիտույքներ՝ 16.6 հազ. դրամ, դպրոցական և արտադպրոցական միջոցառումներ՝ 12.4 հազ. դրամ, դպրոցական ֆոնդի գումար՝ 2.0 հազ. դրամ, դասարանի մաքրում՝ 2.7 հազ. դրամ, նվերներ ուսուցիչներին՝ 4.0 հազ. դրամ, այլ ծախսեր՝ 1.7 հազ. դրամ:

«Ես դժգոհ եմ, հումանիտար հոսքում հայոց լեզուն խորացված ենք անցնում, ու դասարանում 5-6 հոգի գիրք ունեն, իսկ մնացածը կամ պետք է գնեն, կամ էլ ամբողջ տարին պետք է պատճենահանեն» (Արտաշատի թիվ 4 ա/դպրոցի աշակերտուհի):

«Ես հումանիտար հոսքից եմ, բայց հայոց լեզվի դասագրքերի կեսը մեր դասարանում հումանիտար հոսքի է, կեսը՝ բնագիտական: Բոլորին չի հասել: Մյուսները բնագիտականով են սովորում, դասարանում հումանիտարով քննարկում ենք» (Մարտունու ա/դպրոցի աշակերտուհի):

Ա/դպրոցի ապահովվածությունը մասնագիտական կադրերով. Ա/դպրոցներում ներկայումս հիմնականում աշխատում են նույն մանկավարժական կադրերը, որոնք աշխատում էին մինչև միջնակարգ դպրոցի վերակազմավորումը ա/դպրոցի: Ա/դպրոցների մանկավարժները պարբերաբար (հիմնականում 4-5 տարին մեկ անգամ) վերապատրաստվում են, նրանց մի մասը արժանանում է տարակարգերի: Մակայն, մոդելային որոշ ա/դպրոցներում (օրինակ, Արմավիրի թիվ 1, Ձորագյուղի), վերջին տարիներին սովորողների թվի տարեցտարի կրճատման, որոշ առարկաների ծրագրից դուրս գալու և այլ պատճառներով, կրճատվել են նաև մանկավարժների, ոչ մանկավարժական աշխատողների հաստիքները, դրույքները, դասաժամաքանակային ծանրաբեռնվածությունը:

Սովորողների ծնողները բավականին բարձր են գնահատել ա/դպրոցների մանկավարժների ուսումնական առարկաների իմացությունը, մանկավարժական հմտությունները և մարդկային որակները (տե՛ս հավելված 3, աղյուսակ 7): Ա/դպրոցների սովորողները նույնպես բարձր են գնահատել իրենց ուսուցիչների մասնագիտական աշխատանքը և մարդկային որակները՝ հիմնականում վկայակոչելով այն հանգամանքը, որ իրենց դպրոցի լավագույն ուսուցիչները միաժամանակ հանդիսանում են իրենց համայնքում հայտնի լավագույն կրկնուսույցները:

Մոդելային ա/դպրոցներում վարած փորձագիտական հարցազրույցների ընթացքում հաճախ հնչել է այն միտքը, որ երիտասարդ մանկավարժների ներգրավումն ա/դպրոց շատ ռիսկային է, քանի որ վերջիններս այնպիսի նվիրումով ու պատասխանատվությամբ չեն աշխատում դպրոցում, ինչպես փորձառու ուսուցիչները: Որոշ մոդելային ա/դպրոցներ էլ ունեն դասադրոցետում բուհերի դասախոսների ներգրավման փորձ, որը, սակայն, այնքան էլ դրական արդյունքներ չի տվել, քանի որ դպրոցի սովորողի հետ ավելի արդյունավետ է աշխատում ուսուցիչը, քան դասախոսը:

Սովորողների հաճախելիությունը և կարգապահությունը ա/դպրոցում. Համաձայն մոդելային 18 ա/դպրոցների սովորողների հաճախելիության մակարդակի գնահատման արդյունքների (տե՛ս աղյուսակ 9), սովորողների հաճախելիության միջին մակարդակը

համեմատաբար բարձր է 10-րդ դասարանում (2012-13 ուսումնական տարվա II կիսամյակում՝ 96% և 2013-14 ուսումնական տարվա I կիսամյակում՝ 97.1%), իսկ 11-րդ (համապատասխանաբար 94.5% և 95.7%) և 12-րդ դասարաններում (համապատասխանաբար 96.2% և 95.1%) այն նկատելիորեն նվազել է: Սա նշանակում է, որ ա/դպրոցի սովորողների բացակայությունները դասերից տարեցտարի ավելի հաճախակի բնույթ են կրում: Մոդելային ա/դպրոցների 10-12-րդ դասարանների սովորողների բացակայությունների միջինը մեկ կիսամյակում դասավանդվող ընդհանուր ժամաքանակի մեջ կազմում է 4.2%:

Սոցիոլոգիական հետազոտության ընթացքում հարցված ծնողների պատասխանները ևս վկայում են այն մասին, որ ա/դպրոցների սովորողների բացակայությունների քանակը աճում է դասարանից դասարան (տե՛ս հավելված 3, աղյուսակ 13, գծապատկեր 4): Նույնն են վկայում նաև վերջին մեկ ամսում (ընդհանուր դասաժամերի միջին քանակը՝ մոտ 150) սովորողների բացակայությունների վերաբերյալ խաչվող հարցի պատասխանները: Վերջին մեկ ամսվա ընթացքում 10-րդ դասարանցիները միջինում բացակայել են 1.3 օր, 11-րդ դասարանցիները՝ 1.8 օր, իսկ 12-րդ դասարանցիները՝ 2.7 օր, միջինը՝ մոտ 1.9 օր կամ 12 դասաժամ, որը կազմում է մեկ ամսում ընդհանուր դասաժամերի քանակի 8%-ը (տե՛ս հավելված 3, գծապատկեր 5): Հարկ է նաև նշել այն փաստը, որ տղաներն ավելի հաճախ են բացակայում դասերից, քան աղջիկները (տե՛ս հավելված 3, աղյուսակ 14):

Համաձայն սոցիոլոգիական հետազոտության արդյունքների, սովորողների բացակայությունները դպրոցից հիմնականում պայմանավորված են նրանց ժամանակավոր հիվանդությամբ (10-րդ դասարանում՝ 87.2%, 11-րդ դասարանում՝ 76.4%, 12-րդ դասարանում՝ 70.2%, միջինը՝ 74.1%): Կան սովորողների դասերից բացակայությունների նաև այլ հարգելի պատճառներ (միջինը՝ 3.6%): Սակայն, մինևույն ժամանակ, նկատվել է դասարանից դասարան սովորողների դասերից բացակայությունների թվի աճ՝ պայմանավորված կրկնուսույցի մոտ նրանց պարապմունքներով: Այսպես, եթե կրկնուսույցի մոտ պարապելու պատճառով 10-րդ դասարանում բացակայել են սովորողների 3.5%-ը, 11-րդ դասարանում՝ 6.6%-ը, ապա 12-րդ դասարանում՝ արդեն 16.7%-ը (տե՛ս հավելված 3, աղյուսակ 15):

«Դասացուցակով ինֆորմատիկան 5-6-րդ ժամն է, եթե ուզում ես բուհ ընդունվել, պետք է գնաս տուն, պարապմունքներդ անես, դրա համար էլ չենք նստում ինֆորմատիկայի դասին» (Արմավիրի թիվ 1 ա/դպրոցի աշակերտ):

«Ուսուցիչների մեջ խղճի զգացում կա, ամեն օր յոթերորդ ժամ չենք կարող մնալ: Ամեն օր իմ պարապմունքները ժամը երեքին է սկսվում, իսկ դպրոցի դասերն ավարտվում են երեքից հինգ պակաս, ո՞նց հասցնեմ գնամ տուն, մի տաս րոպե հանգստանամ, հաց ուտեմ, ջուր խմեմ, չգիտեմ ոնց անեմ» (Արմավիրի թիվ 1 ա/դպրոցի աշակերտ):

«Առաջին երեք ժամը հոսքային առարկաներն են, հետո մյուսների համար մնանք ի՞նչ անենք: Պետք է գնանք, որ պարապենք» (Արմավիրի թիվ 1 ա/դպրոցի աշակերտուհի):

Մոդելային ա/դպրոցների սովորողները հիմնականում բացակայել են և՛ հոսքային, և՛ ոչ հոսքային առարկաների դասերից (միջինը՝ 65.5%): Միննույն ժամանակ, ոչ հոսքային առարկաների դասերից բացակայելու միտումը նույնպես աճել է դասարանից դասարան: Այսպես, եթե 10-րդ դասարանցիների ընդամենը 3.6%-ն է բացակայել ոչ հոսքային առարկաների դասերից, ապա 11-12-րդ դասարաններում՝ համապատասխանաբար՝ 7.4%-ը և 6.0%-ը, իսկ ա/դպրոցն արդեն ավարտած սովորողների՝ 21.6%-ը (տե՛ս հավելված 3, աղյուսակ 16):

Սոցիոլոգիական հետազոտության ընթացքում ֆոկուս խմբերի մասնակից սովորողներն ահազանգեցին նաև ռիսկային մի իրավիճակի մասին, երբ ա/դպրոցի որոշ սովորողներ ֆիկտիվ հաշվառվում են որևէ գյուղի միջնակարգ դպրոցում, բայց հիմնականում չեն հաճախում այնտեղի դասերին, որպեսզի կարողանան իրենց ժամանակն ամբողջությամբ ծախսել քաղաքում (հիմնականում՝ Երևանում) կրկնուսույցի մոտ պարապմունքներին հաճախելու և վերջինիս հանձնարարությունները կատարելու վրա: Այդպիսի վարքագիծը նման սովորողներին ամեննին չի խանգարում՝ տարեվերջում գյուղի միջնակարգ դպրոցից ստանալու ավարտական վկայական (ատեստատ), քանի որ նրանց ծնողները <ձեռք են բերել դպրոցի համաձայնությունը>:

Արդարացիորեն նաև պետք է նշել, որ, սովորողների բացակայությունները դասերից կանխարգելելու համար, ա/դպրոցների տնօրինություններն ու դասղեկները բավականին ակտիվորեն աշխատում են սովորողների ծնողների հետ՝ պահանջելով գրավոր բացատրագրեր սովորողների ուշացման կամ բացակայության պատճառի մասին: Երբեմն ծնողներն այդ մասին տեղեկացնում են սովորողի դասղեկին բանավոր ձևով՝ օրինակ, հեռախոսազանգով:

Ա/դպրոցում կարևոր խնդիր է կարգուկանոնի պահպանումը: Սոցիոլոգիական հետազոտության արդյունքներով, ա/դպրոցների սովորողների հարցված ծնողները դպրոցում կարգուկանոնի (դիսցիպլինայի) պահպանությունը գնահատել են՝ շատ լավ՝ 20.2%, լավ՝ 33.7%, նորմալ/բավարար՝ 36.8%, վատ՝ 5.9% և շատ վատ՝ 2.2% (տե՛ս հավելված 3, աղյուսակ 12):

Երևան քաղաքի որոշ ա/դպրոցներում մշակվել, ընդունվել և կիրառության մեջ են դրվել դպրոցի կանոնակարգերը, որոնց հետ դպրոցների տնօրինությունները ծանոթացնում են նոր ընդունվող սովորողներին: Որոշ ա/դպրոցներում էլ կարգապահական կանոններն ամրագրվում են նաև դպրոցի և սովորողի միջև կնքվող պայմանագրում: Դպրոցի

կարգապահական կանոնների խախտման դեպքում կարող է դրվել դպրոցից սովորողի հեռացման հարցը:

Որոշ ա/դպրոցներում աշխատում են սոցիալական մանկավարժներ, որոնք մշտական հսկողության տակ են պահում դպրոցի հատուկ կարիքներ ունեցող սովորողներին: Մոդելային ա/դպրոցներում հարցված տնօրենների, ուսուցիչների և աշակերտների կարծիքով, ա/դպրոցում խիստ կարիք է զգացվում նաև հոգեբան-մասնագետի, ով կարող է մեծ դերակատարություն ունենալ ինչպես սովորողների միջև, այնպես էլ վերջիններիս և նրանց ծնողների, ուսուցիչների միջև հոգեբանական տարբեր խնդիրները հաղթահարելու, նրանց փոխհարաբերությունները կարգավորելու գործում:

Որոշ ա/դպրոցներում, «Ոստիկանական տեսուչ» ծրագրի շրջանակներում, աշխատում են ոստիկաններ, որոնք մեծապես նպաստում են դպրոցում կարգուկանոնի ապահովմանը, ինչպես նաև սովորողներին ավելորդ խնդիրներից զերծ պահմանը: Ոստիկանները կազմակերպում են օգտակար զրույցներ սովորողների հետ, հսկում են նրանց վարքը դպրոցում, պահպանում են դպրոցի կարգուկանոնը, վերահսկում են, որպեսզի դասի ժամին միջանցքներում սովորողներ չլինեն, նրանք չփախչեն դասերից և այլն: Իսկ այն ա/դպրոցներում, որտեղ նմանատիպ ծրագրեր չեն իրականացվում, տարածաշրջանային ոստիկանության աշխատակիցները պարբերաբար այցելում են այդ դպրոցներ (օրինակ, Ձորագյուղի, Մարտունու, Վեդու ա/դպրոցներում): Դպրոցի վերջին զանգի նախօրեին ոստիկանության աշխատակիցները հատուկ հանդիպումներ են կազմակերպում 12-րդ դասարանցիների և նրանց ծնողների հետ, որպեսզի կանխարգելեն տարբեր անցանկալի իրավիճակներն այդ առիթով կազմակերպվող միջոցառումների ժամանակ:

Ա/դպրոցում կարգուկանոնի պահպանման ևս մեկ ազդեցիկ միջոց կարող է հանդիսանալ դպրոցի տարբեր տեղերում տեսախցիկների տեղադրումը (օրինակ՝ այդպիսի դրական փորձ կա Երևան քաղաքի Աջափնյակ վ/շ թիվ 195 ավագ դպրոցում): Սակայն, սա թանկարժեք միջոց է և ոչ բոլոր ա/դպրոցներն են ի վիճակի այն ձեռնարկել:

Ա/դպրոցում կարևոր հիմնախնդիր է նաև սովորողների ծխելու հարցը, քանի որ երեխաների հենց այս տարիքն է ռիսկային՝ պայմանավորված, մասնավորապես, տղաների ծխել սկսելու հանգամանքով:

Սովորողների առաջադիմությունը և ուսման որակը ա/դպրոցում. Սոցիոլոգիական հետազոտության արդյունքներով, ա/դպրոցում սովորողների առաջադիմությունը՝ համեմատած հիմնական դպրոցի հետ, նկատելի չափով ընկնում է (տե՛ս հավելված 3, աղյուսակ 10, գծապատկեր 2): Այդ անկումը պայմանավորված է մի քանի գործոններով: Նախ, սովորողների գիտելիքների գնահատման չափանիշներն ա/դպրոցում օբյեկտիվորեն ավելի խիստ են, քան հիմնական դպրոցում: Երկրորդ, ա/դպրոցի ուսուցիչները սուբյեկտիվորեն խիստ են գտնվում հատկապես 10-րդ դասարանների սովորողների

գիտելիքները գնահատելիս՝ դժգոհելով հիմնական դպրոցներում կրթության որակից և նպատակ հետապնդելով ցույց տալու (ինչ-որ տեղ նաև՝ ապացուցելու) հիմնական դպրոցներում սովորողների ստացած գիտելիքների ոչ այնքան բարձր մակարդակը: Երրորդ, ավագ տարիքում բացասաբար է փոխվում սովորողների վերաբերմունքն իրենց ստացած գնահատականների նկատմամբ՝ ցուցաբերելով որոշակի անտարբերություն: Չորրորդ, երբ հիմնական դպրոցի շրջանավարտները գալիս են ա/դպրոցի 10-րդ դասարան, մինչ նրանք ընտելանում են նոր միջավայրին, հասկանում են նոր ուսուցիչների՝ իրենց համար անսովոր պահանջները, առաջին կիսամյակում, որպես կանոն, նրանց առաջադիմությունը ցածր է լինում: Հետո սովորողները կարծես աստիճանաբար բացվում են (մանավանդ հոսքային առարկաների մասով)՝ 10-րդ դասարանի 2-րդ կիսամյակում և 11-12-րդ դասարաններում ցուցաբերելով համեմատաբար ավելի բարձր առաջադիմություն: Դրա հետ մեկտեղ, ոչ հոսքային առարկաների գծով սովորողների առաջադիմությունն, ընդհակառակը, աստիճանաբար իջնում է: Սովորողների հավաստմամբ, նրանք ժամանակի ընթացքում մոռանում են ոչ հոսքային առարկաների գծով իրենց սովորած ուսումնական նյութը, քանի որ նրանք տանը հիմնականում չեն պարապում այդ առարկաները:

Վերջին հարցի նկատմամբ տարբեր ա/դպրոցներում և տարբեր մանկավարժների մոտ նկատվել են երկակի մոտեցումներ: Մի կողմից, հոսքային դասարաններում շեշտը դրվում է հոսքային առարկաների վրա, որոնց գծով սովորողների առաջադիմությունն աստիճանաբար աճում է, իսկ ոչ հոսքային առարկաները և սովորողների, և ուսուցիչների կողմից առանձնապես չեն կարևորվում: Ոչ հոսքային առարկաների ուսուցիչները՝ հաճախ ընդառաջելով սովորողներին, նրանց արհեստականորեն բարձր գնահատականներ են նշանակում: Իսկ մյուս կողմից, որոշ ա/դպրոցներում, հոսքային առարկաների գծով սովորողների առաջադիմության աճի հետ մեկտեղ, ոչ հոսքային առարկաներից սովորողները հաճախ զգալիորեն ցածր են գնահատվում, որը բացասաբար է անդրադառնում նրանց ընդհանուր առաջադիմության վրա:

Մոդելային ա/դպրոցների սովորողների հարցված ծնողների պատասխանների արդյունքներով, ա/դպրոցի սովորողներն օրական դասապատրաստմանը միջինը տրամադրում են 2 ժամ 30 րոպե: Սակայն, հարկ է նշել, որ հարցման ընթացքում ծնողները չեն կարողացել տարբերակել դպրոցի ուսուցիչների և կրկնուսույցների կողմից տրված հանձնարարությունների վրա սովորողների կողմից ծախսվող ժամաքանակները, այնպես որ նշված միջին ժամաքանակը պետք է վերագրել և՛ դպրոցի ուսուցիչների, և՛ կրկնուսույցների կողմից տրված հանձնարարությունների կատարմանը:

Սովորողների առաջադիմության և ուսման որակի ապահովման համար կարևոր գործոններից մեկն էլ նրանց մոտ ուսումնական անհրաժեշտ պարագաների առկայությունն է դասապրոցեսի ժամանակ: Հարցման արդյունքների համաձայն, ա/դպրոցների սովորողների

միայն 78.8%-ն է միշտ դպրոց տանում պայուսակ, դասագրքեր և տետրեր: Այստեղ ակնհայտ է 10-ից 12-րդ դասարան սովորողների վարքի փոփոխության միտումը. եթե 10-րդ դասարանցիների 85.5% են դպրոց գնում անհրաժեշտ ուսումնական պարագաներով, ապա 12-րդ դասարանում՝ միայն 72.4%-ը (տե՛ս հավելված 3, աղյուսակ 8): Ընդ որում, 12-րդ դասարանցիները դպրոց են բերում ոչ թե դպրոցական դասագրքերը, այլ առավելապես բուհի ընդունելության քննությունների շտեմարանները, քանի որ 1-ին կիսամյակում ուսումնական պլանով նախատեսված նյութն արդեն ավարտվում է, իսկ 2-րդ կիսամյակի ուսումնական պլանով նախատեսված է 5-12-րդ դասարաններում անցած նյութի կրկնություններ: Ավելին, 12-րդ դասարանցիները դպրոցում կատարում են ոչ թե դպրոցի ուսուցիչների, այլ առավելապես բուհի ընդունելության քննությունների հանձնման համար իրենց հետ մասնավոր հիմունքներով պարապող կրկնուսույցների կողմից տրված հանձնարարությունները:

«Պայուսակ չենք բերում, շատ-շատ մի տետր ունենք, դա ենք բերում» (Երևանի թիվ 65 ա/դպրոցի աշակերտ):

«Եթե դասատուն ընդամենը պետք է միջանցքում տեսնի, բարևի ու անցնի, էլ չմտնի դասարան, գիրքը բերում ենք՝ ի՞նչ անենք» (Աբովյանի թիվ 4 ա/դպրոցի աշակերտ):

«Դասատուները մտնում են դասարան, տեսնում են, որ բոլորս շտեմարաններով նստած պարապում ենք, մենք խնդրում ենք, որ դաս չանենք, պարապմունքի տեղի հանձնարարությունները հասցնենք, թույլ են տալիս» (Աբովյանի թիվ 4 ա/դպրոցի աշակերտուհի):

Մոդելային 18 ա/դպրոցների (10-12-րդ դասարանների) սովորողների առաջադիմության մակարդակների գնահատման արդյունքներով (2012-13 ուսումնական տարվա II կիսամյակի և 2013-14 ուսումնական տարվա I կիսամյակի կտրվածքով), ա/դպրոցների սովորողների միջին առաջադիմությունը ցածր է հատկապես 10-րդ դասարանում (2012-13 ուստարվա II կիսամյակում՝ 94.5%, 2013-14 ուստարվա I կիսամյակում՝ 93.8%), որը նշանակում է, որ ա/դպրոց ընդունված՝ հիմնական դպրոցի շրջանավատների շուրջ 6%-ը վատ առաջադիմություն ցուցաբերած սովորողներ են եղել և հիմնական դպրոցում ստացած նրանց գիտելիքները բոլորովին չեն համապատասխանել ա/դպրոցում ներկայացված պահանջներին ու չափանիշներին: Նրանք՝ անցնելով վերաքննությունների փուլով, մի կերպ փոխադրվել են 11-րդ դասարան, որտեղ I կիսամյակում թվում է, թե նրանցից մի մասի առաջադիմության մակարդակը բարձրացել է (97.4%), սակայն II կիսամյակում այն նորից նվազել է՝ հասնելով նորից 10-րդ դասարանի

մակարդակին (94.3%): Իսկ 12-րդ դասարանում վատ սովորողների առաջադիմության մակարդակի թվացյալ (նաև՝ խաբուսիկ) բարձրացումը (99%) պետք է պայմանավորել երեք հանգամանքներով՝ առաջին, ա/դպրոցի մանկավարժական աշխատակազմի լավ աշխատանքով, և/կամ երկրորդ, 12-րդ դասարանում կրկնուսույցների մոտ պարապելու արդյունքում սովորողների գիտելիքների աճով, և/կամ, երրորդ, ավելի հավանական տարբերակը, ա/դպրոցի վատ սովորողներին <դպրոցը մի կերպ ավարտեցնելու> Հայաստանում որոշակիորեն ձևավորված ռիսկային <ավանդույթով>:

Ամեն դեպքում, մոդելային 18 ա/դպրոցների սովորողների առաջադիմության մակարդակը 3 տարիներից յուրաքանչյուր տարվա ավարտին միջինը կազմել է 95.4%, որը նշանակում է, որ ա/դպրոցների սովորողների շուրջ 4.6%-ի գիտելիքները բացարձակապես չեն համապատասխանել ա/դպրոցի պահանջներին և նրանց կրթության կազմակերպումը ա/դպրոցում աննպատակահարմար և անարդյունավետ է եղել:

Մոդելային 18 ա/դպրոցների (10-12-րդ դասարանների) սովորողների ուսման որակի մակարդակների գնահատման արդյունքներով (2012-13 ուսումնական տարվա II կիսամյակի և 2013-14 ուսումնական տարվա I կիսամյակի կտրվածքով), ա/դպրոցների 10-րդ դասարանում սովորողների ուսման որակի միջին արժեքը տատանվել է 39–41%-ի սահմաններում, 11-րդ դասարանում՝ 40–43%-ի սահմաններում, 12-րդ դասարանում այն կազմել է մոտ 56%, իսկ դպրոցի ընդհանուր միջին արժեքը՝ մոտ 46%: Սա նշանակում է, որ հիմնական դպրոցի շրջանավարտների կեսից ավելիի ստացած գիտելիքները չեն բավարարում ա/դպրոցում <լավ> կամ <գերազանց> սովորելու համար: 12-րդ դասարանում սովորողների ուսման որակի մակարդակի կտրուկ բարձրացումը մինչև 56%-ի պայմանավորված է նույն հանգամանքներով, ինչ 12-րդ դասարանի սովորողների առաջադիմության բարձրացման դեպքում (տե՛ս վերևում կատարված մեկնաբանությունը): Այսինքն, ա/դպրոցի ավարտական 12-րդ դասարանի սովորողների առաջադիմության / ուսման որակի մակարդակի նկատելի բարձրացումը պայմանավորված է հիմնականում սուբյեկտիվ գործոններով, քան թե սովորողների գիտելիքների մակարդակի օբյեկտիվ բարձրացմամբ:

Ա/դպրոցների սովորողների ավելի քան կեսը (հաշված նաև հանրակրթական մեկ կամ մի քանի առարկաներից <5> և/կամ <6> միավոր գնահատականներ ունեցող սովորողներին) համարվում է պոտենցիալ այն զանգվածը, որն ի վիճակի է բարձր ուսման որակով սովորել ա/դպրոցում, հաջողությամբ հանձնել դպրոցի ավարտական կամ միասնական քննությունները և հավակնել՝ շարունակելու կրթությունը բուհում կամ ՄՄՀ-ներում:

Սակայն, սոցիոլոգիական հետազոտության արդյունքներով, մոդելային 18 ա/դպրոցների սովորողների հարցված 410 ծնողներն ա/դպրոցներում կրթության ընդհանուր

որակը գնահատել են բավականին բարձր. գերազանց՝ 17.1%, լավ՝ 37.8%, բավարար՝ 38.8%, վատ՝ 4.1%, շատ վատ՝ 1%: Փաստորեն, ծնողների 55%-ն ա/դպրոցում կրթության որակը գնահատել է գերազանց կամ լավ, 39%-ը՝ բավարար, և միայն 5%-ը՝ վատ կամ շատ վատ:

Հարցված ծնողների ճնշող մեծամասնությունը (95.8%) համարում է, որ իրենց երեխաներն արդար են գնահատվում ա/դպրոցում, 3.2%-ը համարում է, որ իրենց երեխաների գնահատականներն ուսուցիչները ցածրացնում են, իսկ 1.0%-ը՝ ընդհակառակը, բարձրացնում են: Փաստորեն, ծնողների միայն 4.2%-ն է համարել, որ ա/դպրոցների սովորողների ստացած գնահատականները չեն համապատասխանում նրանց գիտելիքների մակարդակին:

Դրա հետ մեկտեղ, ա/դպրոցների սովորողների հետ ֆոկուս խմբերի ժամանակ հնչել են նաև կարծիքներ, որ սովորողների գիտելիքների գնահատման՝ ուսուցիչների մոտեցումները և տրամաբանությունը տարբերվում են դպրոցից դպրոց: Օրինակ, որոշ ա/դպրոցներում ուսուցիչները խուսափում են անբավարար գնահատականներ (1-3 միավոր) նշանակելուց, իսկ «10» գնահատական նշանակում են բացառիկ դեպքերում, ինչը սովորողների արդարացի վրդովմունքի առաջացման պատճառ է հանդիսանում: Որոշ ա/դպրոցներում էլ սովորողներն երբեմն գնահատվում են ոչ թե իրենց ունեցած գիտելիքների համար, այլ դպրոցում ցուցաբերած վարքի համար, հատկապես ոչ հոսքային առարկաների գծով:

Ա/դպրոցի սովորողների դիրքորոշումը և կրկնուսույցների դերը նրանց բուհ ընդունվելու հարցում. Սոցիոլոգիական հետազոտության արդյունքներով, ա/դպրոցի սովորողների մոտ 90.5%-ը պլանավորում է շարունակել կրթությունը բուհում (դրանց 96.2%-ը) կամ ՄՄՀ-ում (դրանց 3.8%-ը): Հարցված ծնողների կողմից նշվել է սովորողների նախընտրած բուհերի և մասնագիտությունների շատ ընդարձակ ցանկ (տե՛ս հավելված 3-ի հավելվածը): Առավել հաճախ նշվել են տնտեսագետի, լեզվաբան-բանասերի, բժշկի, ծրագրավորողի և իրավաբանի մասնագիտությունները:

Չնայած հարցված ծնողների կողմից ա/դպրոցում կրթության ընդհանուր որակի բավականին բարձր գնահատմանը, նրանց 24.3%-ի կարծիքով, ա/դպրոցում ստացած գիտելիքները բավարար են սովորողի նախընտրած բուհն ընդունվելու համար, 14.3%-ի կարծիքով՝ «ավելի շուտ բավարար են», 31.8%-ի կարծիքով՝ «ավելի շուտ բավարար չեն», իսկ 29.6%-ի կարծիքով՝ «բոլորովին բավարար չեն»: Ինչպես երևում է, ծնողների մեծամասնությունը (61.4%-ը) հակված են այն կարծիքին, որ ա/դպրոցում սովորողների ստացած գիտելիքները բավարար չեն բուհ ընդունվելու համար (տե՛ս հավելված 3, գծապատկեր 6): Դրանց մոտ 43.0%-ը չի հիմնավորել տրված բացասական կարծիքը, իսկ մնացած մոտ 57.0%-ն իր կարծիքը հիմնավորել է հետևյալ կերպ՝

- ա/դպրոցի մակարդակը ցածր է – 14.9%³³,
- առանց կրկնուսույցի հնարավոր չէ – 14.5%,
- ա/դպրոցում անցած նյութը չի համապատասխանում բուհի ընդունելության քննությունների պահանջներին, շտեմարաններով չեն պարապում – 12.6%,
- իրեն անհրաժեշտ առարկան երեխան դպրոցում չի անցնում (օրինակ՝ քիմիա) – 3.5%,
- դասարանում սովորողները շատ են, չսովորողները խանգարում են սովորողներին – 2.7%,
- ուսուցիչների մակարդակը ցածր է – 2.7%,
- դասաժամերի քանակը բավարար չէ նյութը լիարժեք մատուցելու համար – 2.6%,
- ա/դպրոցում կրթությունը նորմալ հիմք չունի, հիմնական դպրոցի մակարդակը ցածր է – 1.8%,
- ա/դպրոցի ուսուցիչները նորմալ չեն պարապում – 1.8%:

Սոցիոլոգիական հետազոտության արդյունքների համաձայն, մոդելային ա/դպրոցների բոլոր հարցված սովորողների 43.2%-ը պարապում է կրկնուսույցների մոտ: Տրամաբանական է, որ կրկնուսույցների մոտ պարապողների թիվն աճում է 10-րդից մինչև 12-րդ դասարան. 10-րդ դասարանցիներ՝ 18.2%, 11-րդ դասարանցիներ՝ 37.5%, 12-րդ դասարանցիներ՝ 60.3%, և 2013թ. շրջանավարտներ՝ 69.6% (տե՛ս հավելված 3, աղյուսակ 17): Այս հարցում որոշակի տարբերություն է նկատվել Երևան քաղաքի և ՀՀ մարզերի ա/դպրոցների միջև: Եթե Երևան քաղաքում ա/դպրոցների սովորողների 56.2%-ն է պարապում կրկնուսույցների մոտ, ապա ՀՀ մարզերում՝ 38.3%-ը (տե՛ս հավելված 3, աղյուսակ 18):

Ա/դպրոցների սովորողների 21%-ը վճարովի հիմունքներով պարապում են անգլերեն լեզու առարկան, 20.7%-ը՝ հայոց լեզու և գրականություն, 16.1%-ը՝ մաթեմատիկա, 6.6%-ը՝ պատմություն, 5.1%-ը՝ կենսաբանություն, 4.1%-ը՝ քիմիա, 3.9%-ը՝ ֆիզիկա, 2.2%-ը՝ ռուսաց լեզու, 2.4%-ը՝ այլ օտար լեզուներ, 1.2%-ը՝ աշխարհագրություն և այլն (տե՛ս հավելված 3, աղյուսակ 19): Յուրաքանչյուր առարկայի գծով կրկնուսույցին վճարվող միջին ամսական վճարի չափը տատանվում է 20,0-50,0 հազ. դրամի (50-125 ԱՄՆ դոլարի) սահմաններում՝ կախված առարկայից և կրկնուսույցից:

Ա/դպրոցների սովորողների 18.2%-ն անվճար հիմունքներով պարապում է քիմիա առարկան, 15.7%-ը՝ հայոց լեզու և գրականություն, 15.1%-ը՝ մաթեմատիկա, 14.9%-ն՝ անգլերեն լեզու, 7.1%-ը՝ ֆիզիկա, և այլն:

³³ Այս գնահատականն ակնհայտ հակասության մեջ է գտնվում ա/դպրոցում կրթության ընդհանուր որակին հարցված նույն ծնողների մոտ 5%-ի կողմից տրված վատ կամ շատ վատ գնահատականի հետ:

Ա/դպրոցների սովորողների 11.0%-ը պարապում է իրենց դասավանդող ուսուցիչների մոտ, 16.0%-ը՝ այլ դպրոցում դասավանդող ուսուցիչների մոտ, 7.2%-ը՝ բուհի դասախոսների մոտ, 4.8%-ը՝ բարեկամ կամ հարևան մասնագետի մոտ, 2.4%-ը՝ տվյալ ա/դպրոցի այն ուսուցիչների մոտ, որոնք տվյալ սովորողին չեն դասավանդում, 2.0%-ը՝ այլ անձի մոտ կամ հատուկ կազմակերպությունում, իսկ 56.8%-ը՝ չեն պարապում որևէ կրկնուսույցի մոտ (տե՛ս հավելված 3, աղյուսակ 20):

Ա/դպրոցների սովորողների և մանկավարժների կարծիքով, կրկնուսույցների մոտ սովորողների պարապելու հիմնական պատճառներն են՝

- դպրոցական առարկայական ծրագրերի և բուհի ընդունելության քննությունների պահանջների անհամապատասխանությունը,
- ա/դպրոցի դասարանների բարձր խտությունը (հնարավոր չէ 45 բուհական դասաժամի ընթացքում 20-25 սովորողներին բավարար ժամանակ տրամադրել),
- ա/դպրոցում չմոտիվացված սովորողների առկայությունը, որոնք խանգարում են մոտիվացված սովորողներին, արդյունավետ դասապրոցեսի կազմակերպմանը:

Հարցվածների կարծիքով, ա/դպրոցում ստացած գիտելիքներով հնարավոր է բավարար գնահատականներ ստանալ բուհի ընդունելության քննություններից, սակայն բարձր գնահատականներ ստանալը և անվճար բուհ ընդունվելը գրեթե անհնարին է: Օրինակ, հայոց լեզվի և գրականության ավարտական քննությունը բոլոր հարցվածների կողմից բնորոշվել է որպես շատ դժվար, որը հնարավոր չէ լավ հանձնել առանց կրկնուսույցի մոտ պարապելու: Այնինչ, այս առարկան անցնում են հանրակրթության ողջ ժամանակահատվածում՝ 12 տարվա ընթացքում: Դրա հետ մեկտեղ, կան նաև առարկաներ, որոնք ա/դպրոցում չեն անցնում, և սովորողները դժվարանում են հանձնել բուհի ընդունելության քննություններն այդ առարկաների գծով (օրինակ, անգլերեն բանավոր, գծագրություն, նկարչություն, երգ-երաժշտություն, պար և այլն):

Հարցված փորձագետների կարծիքով, ավելի ռացիոնալ է ա/դպրոցի 12-րդ դասարանն ամբողջությամբ տրամադրել 5-11-րդ դասարանների ուսումնական նյութերի կրկնությանը: 12-րդ դասարանի ուսուցիչը պարզապես չի կարող ապահովել առարկայական ծրագրի պատշաճ իրականացումը՝ միաժամանակ ստանձնելով կրկնուսույցի դեր: Այսպիսի իրավիճակն ավելի շուտ ձեռնտու է կրկնուսույցներին, որոնց մի մասը նույն դպրոցի մանկավարժներն են:

Հարցված տնօրենների/մանկավարժների դիտարկումների համաձայն, վերջին չորս տարիների ընթացքում նկատվել է կրկնուսույցների մոտ պարապող սովորողների թվի

աստիճանական նվազման միտում: Մինևույն ժամանակ, հարցված փորձագետների հավաստմամբ, վերջին տարիներին բուհ ընդունվելը համեմատաբար ավելի հեշտացել է:

Սոցիոլոգիական հետազոտության արդյունքներով, կրկնուսույցի մոտ պարապաձ ա/դպրոցների շրջանավարտների 97.3%-ն ընդունվել է բուհ, իսկ կրկնուսույցի մոտ չպարապաձ շրջանավարտներից բուհ են ընդունվել դրանց միայն 53.8%-ը (տե'ս հավելված 3, աղյուսակ 21):

Ավելի կոնկրետ, մոդելային 18 ա/դպրոցների 2013թ. շրջանավարտների 86.0%-ն ընդունվել է բուհ, որոնցից 95.3%-ն՝ իրենց ընտրած մասնագիտությամբ, 4.7%-ն՝ անվճար հիմունքներով, 95.3%-ը՝ վճարովի հիմունքներով: Այդ շրջանավարտների ծնողների միայն 10.0%-ի կարծիքով է, որ ա/դպրոցում ստացած գիտելիքները բավարար են եղել սովորողի նախընտրած բուհն ընդունվելու համար, 18.0%-ի կարծիքով՝ «ավելի շուտ բավարար էին», 50.0%-ի կարծիքով՝ «ավելի շուտ բավարար չէին», 16.0%-ի կարծիքով՝ «բոլորովին բավարար չէին», իսկ 6.0%-ը դժվարացել է պատասխանել հարցին (տե'ս հավելված 3, աղյուսակ 22):

Ա/դպրոցի կապի ապահովումը սովորողների ծնողների հետ. Սովորողի օրագիրը հանդիսանում է դասացուցակի և ուսուցիչների կողմից տրված տնային հանձնարարությունների նշման պարտադիր և հարմարավետ գործիք, ինչպես նաև դպրոցի (ուսուցիչների, դասղեկի) և ծնողի միջև սովորողի կրթության վերաբերյալ հաղորդակցման կարևոր միջոց: Սոցիոլոգիական հետազոտության արդյունքներով, ա/դպրոցների սովորողների միայն 50.5%-ն ունի օրագիր: Օրագիր ունեցող սովորողների թիվը նվազում է դասարանից դասարան. 10-րդ դասարանում՝ 55.5%, 11-րդ դասարանում՝ 51.6%, և 12-րդ դասարանում՝ 44.8% (տե'ս հավելված 3, աղյուսակ 23): Ա/դպրոցում սովորող աղջիկների 55.5%-ն ունի օրագիր, իսկ տղաների՝ 43%-ը: Օրագրի առկայությունը սովորողների մոտ տարբեր է դպրոցից դպրոց և պայմանավորված է հիմնականում տվյալ դպրոցի հետևողականությամբ: Օրագիր ունեցող սովորողների թիվը հատկապես բարձր է Գավառի, Երևանի թիվ 195 և Սևանի ա/դպրոցներում, և ծայրահեղ ցածր՝ Ապարանի, Երևանի թիվ 190³⁴ և Աբովյանի թիվ 4 ա/դպրոցներում (տե'ս հավելված 3, աղյուսակներ 23-24):

«Ոչ, չենք հասկանում ինչի համար ենք գնահատվում, արդեն օրագիր չկա, բան չկա, որ ընթացքին հետևես, հասկանաս ինչ է կատարվում, ինչի համար են քեզ գնահատում: Գիտելիքի համար պիտի գնահատեն, բայց հիմնականում վարքի համար են գնահատում: Եթե ասեն այս սխալի դեպքում, այսքան է իջնում, մենք կհասկանանք» (Երևանի թիվ 65 ա/դպրոցի աշակերտ):

³⁴ Երևանի թիվ 190 ա/դպրոցում, օրագրի փոխարեն, կիրառության մեջ են դրվել ստուգման գրքույկներ, որտեղ գրանցվում են ըստ առարկաների ստուգողական գրավոր աշխատանքների արդյունքները, կիսամյակային և տարեկան գնահատականները, ինչպես նաև փոխադրական քննությունների գնահատականները:

Չնայած համացանցային www.dasaran.am կայքը որոշ չափով իմաստագրկել է օրագրի կարևորությունը, քանի որ այնտեղ ուսուցիչների կողմից լրացվում են սովորողի գնահատականներն ըստ առարկաների, և այնտեղից ծնողները կարող են տեղեկանալ իրենց երեխայի առաջադիմության / ուսման որակի վերաբերյալ, այն չի կարող լիովին փոխարինել օրագրին: Օրագրին ուսումնական անհրաժեշտ միջոց է՝ սովորողի կողմից ֆիքսելու դասացուցակը, տնային հանձնարարությունները, համակարգելու դասապատրաստումը, պլանավորելու իր ժամանակը և անելիքները: Համացանցային www.dasaran.am կայքը պարզապես պետք է դիտարկել որպես դպրոցի, ծնողի և սովորողի միջև կապի ապահովման ևս մեկ այլընտրանքային ժամանակակից և հարմարավետ եղանակի:

Սոցիոլոգիական հետազոտության արդյունքներով, www.dasaran.am կայքի ծածկանունն ու ծածկագիրն ունեն հարցված ծնողների միայն 79%-ը: Այս ցուցանիշը ևս էապես տարբերվում է դպրոցից-դպրոց. Սևանի, Գավառի, Ապարանի և Վաղարշապատի թիվ 10 ա/դպրոցների սովորողների ծնողների 100%-ն ունի կայքի ծածկանունն ու ծածկագիր, իսկ Վեդու թիվ 3, Արտաշատի թիվ 4, Երևանի թթ. 65 և 42 ա/դպրոցներում՝ միայն 50-56%-ը: Տարբեր ա/դպրոցներ նաև տարբեր չափով են օգտվում www.dasaran.am կայքից: Կայքի ծածկանունն ու ծածկագիրն ունեցող ծնողները նշել են, որ սովորողների գնահատականները 100%-ով տեղադրվում են կայքում Գավառի, Սևանի, Ապարանի, Վաղարշապատի թիվ 10, Հրազդանի թիվ 13, Արմավիրի թիվ 1 ա/դպրոցներում: Մոդելային մնացած ա/դպրոցներում այդ ցուցանիշը շատ ավելի ցածր է (տե՛ս հավելված 3, աղյուսակ 25):

Սակայն, սովորողների ծնողների հարցման արդյունքների համաձայն, ա/դպրոցում սովորողի առաջադիմության / ուսման որակի մասին ծնողները հիմնականում տեղեկանում են (տե՛ս հավելված 3, աղյուսակ 26)՝

- սովորողի դաստեկից, ուսուցիչներից և ծնողական ժողովներից՝ 43.5%,
- հենց սովորողից՝ 25.0%,
- համացանցային www.dasaran.am կայքից՝ 16.2%,
- սովորողի օրագրից՝ 11%,
- կիսամյակային գնահատականներից՝ 4.3%:

Փորձագիտական հարցման տվյալների համաձայն, www.dasaran.am կայքը լրացուցիչ աշխատանք և դժվարություններ է ստեղծել ուսուցիչների համար: Ուսուցիչը նույն աշխատանքը պետք է կատարի մի քանի անգամ՝ սովորողների նույն գնահատականները անցկացնելով դասամատյանում, օրագրում և համակարգչում: Սակայն, դպրոցը չի ապահովում անհրաժեշտ պայմաններ, որպեսզի յուրաքանչյուր ուսուցիչ կարողանա հանգիստ աշխատել համակարգչով: Սրան հարկ է նաև հավելել, որ հատկապես ավագ սերնդի ուսուցիչները դժվարանում են հմուտ աշխատել համակարգչով, իսկ երիտասարդ

ուսուցիչներն այդ աշխատանքը հաճախ կատարում են տանը՝ իրենց անձնական համակարգիչների և/կամ բջջային հեռախոսների օգնությամբ: Ուսուցիչներից շատերն այն կարծիքին են, որ դպրոցում անհրաժեշտ է նախատեսել համացանցային www.dasaran.am կայքի համակարգող-մասնագետ, որպեսզի ուսուցիչը չանի այդ ածանցյալ լրացուցիչ աշխատանքը:

Մյուս կողմից, ա/դպրոցների տնօրենների գնահատմամբ, համացանցային կայքի օգտագործման հարցում սովորողների ծնողները ևս ակտիվ չեն: Ծնողները գերադասում են շփվել դպրոցի տնօրինության, սովորողի դասղեկի, ուսուցիչների հետ անմիջականորեն (հեռախոսով, դպրոց այցելությամբ, ծնողական ժողովներին մասնակցելով), քանի որ այդպես կարող են ավելի շատ տեղեկություններ ստանալ սովորողի առաջադիմության և վարքի վերաբերյալ: Դպրոցներում ավանդաբար բարձր հիմքերի վրա են դրված ծնողական կիսամյակային ժողովների, ամենամյա բաց դռների, բազմաբնույթ այլ միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը, որոնց ծնողների մեծ մասը հաճույքով մասնակցում է և տեղեկանում իրենց երեխաների դպրոցական խնդիրների ու առաջադիմության մասին:

4.3. Կրթության ֆինանսավորման և ֆինանսական արդյունավետության հիմնախնդիրները և գործոնները

Սոցիոլոգիական հետազոտության ընթացքում մոդելային ա/դպրոցների հարցված տնօրենները բացասաբար են արտահայտվել ա/դպրոցների՝ ըստ սովորողների թվի ֆինանսավորման գործող սկզբունքի վերաբերյալ: Նրանց կարծիքով, ներկայումս դպրոցների մանկավարժների և ոչ մանկավարժական աշխատողների և՛ աշխատավարձի չափը, և՛ զբաղվածությունն ընդհանրապես ուղղակիորեն կախված են դպրոցի սովորողների թվից:

Ըստ սովորողների թվի՝ դպրոցի ֆինանսավորման սկզբունքը ձևավորել է այսպես կոչված «աշակերտաորսի» միտում, այսինքն՝ դպրոց դիմող բոլոր աշակերտներին՝ անկախ նրանց կրթության մակարդակից, գիտելիքներից և կրթությունը շարունակելու դիրքորոշումից, դպրոցը շահագրգռված է ընդունել՝ հնարավորինս բարձր պետական ֆինանսավորում ստանալու նպատակով:

Ըստ սովորողների թվի՝ ա/դպրոցի ֆինանսավորումը բացասաբար է անդրադառնում դպրոցում կրթության որակի վրա, քանի որ, հիմնական դպրոցներում բարձր առաջադիմություն ցուցաբերած սովորողների կողքին, ա/դպրոցներում հայտնվում են նաև մեծ թվով ցածր առաջադիմություն ցուցաբերած սովորողներ, կոմպլեկտավորվում են բարձր խտության դասարաններ, որի պատճառով ուսուցիչը շատ ժամանակ է ծախսում

դասարանում կարգապահության պահպանման վրա, նա չի կարողանում անհատական մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուր սովորողին: Մանկավարժների կարծիքով, ա/դպրոցում օպտիմալ կլինեն 12-16 սովորողներով ձևավորված դասարանները: Իսկ ա/դպրոցների տնօրենների կարծիքով, դպրոցների ֆինանսավորումը գերադասելի կլինի, եթե այն հիմնվի ոչ թե սովորողների, այլ ձևավորված դասարանների թվի վրա:

Մոդելային 18 ա/դպրոցներում անցկացված փորձագիտական հարցազրույցների մասնակիցների մեկնաբանությամբ, հանրակրթության ոլորտում գործող օրենսդրությունն ամբողջությամբ չի կարգավորում դպրոցների ֆինանսավորման բոլոր հարցերը, իսկ սովորողների թվով ֆինանսավորման գործող բանաձևը լիարժեք համահունչ չէ դպրոցների իրական վիճակին: Հատկապես դա վերաբերում է սովորողներով թերբեռնված դպրոցների դասարանների խտությանը և կիսմանն առնչվող՝ օրենսդրությամբ սահմանված նորմերի ապահովմանը, որոնք ոչ միշտ է հնարավոր լինում պաշտպանել և հաճախ հանգեցնում են դպրոցների զգալի ֆինանսական անբավարարության և անարդյունավետության: Ըստ դասարանների դպրոցի ֆինանսավորման դեպքում թերբեռնված դպրոցները գոնե կկարողանան հոգալ իրենց նվազագույն ծախսերը՝ հակառակ գործող օրենսդրությամբ դպրոցների ֆինանսավորման սկզբունքի, որն իրեն չի արդարացնում հատկապես քիչ թվով սովորողներ ունեցող դպրոցների պարագայում: Ավելին, այս դեպքում դպրոցների ներկայացուցիչներն առաջարկում են նվազեցնել նաև դասարանների խտության գործող սահմանափակումները (նորմատիվները)՝ ա/դպրոցի համար գործող 20-25 սովորողի փոխարեն սահմանելով 12-16 սովորող:

Դպրոցների ֆինանսավորման գործող սկզբունքի մյուս կարևոր թերությունը կայանում է նրանում, որ ֆինանսավորման բանաձևում դպրոցի պահպանության նվազագույն ծախսերը բոլոր դպրոցների համար յուրաքանչյուր տարի միևնույն չափով են սահմանվում՝ հաշվի չառնելով դրանց զբաղեցրած տարածքի չափը: Ըստ դպրոցների ներկայացուցիչների, անհրաժեշտ է դպրոցներին ցուցաբերել տարբերակված մոտեցում և դրանց պահպանության համար հատկացվող գումարները սահմանել որոշակի սանդղակով՝ կախված դպրոցների շենք-շինությունների, զբաղեցրած հողամասի տարածքների չափերից:

Հարկ է նաև նշել, որ շատ ա/դպրոցներում դեռևս գործում են հիմնական դպրոցի դասարաններ, որոնց 1 սովորողին ընկնող տարեկան գումարի նկատմամբ կիրառվող գործակիցն ավելի ցածր է, քան ա/դպրոցի սովորողի համար կիրառվող գործակիցը, ինչը լրացուցիչ ֆինանսական դժվարություններ է ստեղծում դպրոցի համար:

Ա/դպրոցները յուրաքանչյուր տարի բախվում են դպրոցում սովորողների թվի փոփոխման և ֆինանսավորման խնդիրներին: Վերջին տարիներին, յուրաքանչյուր նոր ուսումնական տարում, մի կողմից, նվազում են հիմնական դպրոցների սովորողների թիվը,

իսկ մյուս կողմից, հիմնական դպրոցների ոչ բոլոր շրջանավարտներն են ցանկանում իրենց կրթությունը շարունակում ա/դպրոցներում: Արդյունքում, տարեցտարի նվազում է ա/դպրոցների սովորողների թիվը և, հետևաբար, համապատասխան չափով կրճատվում են նաև ա/դպրոցների ֆինանսավորման չափերը, որի պատճառով դպրոցում առաջանում են որոշակի ֆինանսական խնդիրներ, որոնք էլ հանգեցնում են աշխատանքային որոշակի լարվածության դպրոցի աշխատակազմի շրջանում: Օրինակ, Արտաշատի թիվ 4 ա/դպրոցում, որտեղ կան ռուսերեն թեքումով ինչպես ավագ, այնպես էլ հիմնական դասարաններ, առկա է ֆինանսավորման շարունակական խնդիր, որն անդրադառնում է նաև դասապրոցեսի կազմակերպման և կրթության որակի վրա: Այսպես, այդ դպրոցի ռուսերեն թեքումով 2-րդ և 3-րդ դասարաններում սովորում են ընդամենը 2-3-ական աշակերտ, որի պատճառով նրանց կոմպլեկտավորում են մեկ դասարանում: Նմանապես, 4-րդ դասարանը միացնում են 5-րդի հետ, 7-րդը՝ 8-րդի հետ և այլն:

Համաձայն դպրոցների պետական ֆինանսավորման գործող բանաձևի, դպրոցի տարեկան ֆինանսավորման չափը ուղիղ համեմատականորեն կախված է դպրոցում սովորողների բացարձակ թվից: Մյուս կողմից, համաձայն մոդելային 18 ա/դպրոցների եկամտային հարաբերական ցուցանիշների գնահատման արդյունքների (տե՛ս աղյուսակ 12), 1 սովորողին ընկնող՝ դպրոցի ինչպես պետական պատվերից ստացվող եկամուտները, այնպես էլ ընդհանուր եկամուտները հիմնականում հակադարձ համեմատական են դպրոցի սովորողների թվին, այսինքն ինչքան փոքր (մեծ) է դպրոցի սովորողների թիվը, այնքան մեծ (փոքր) են 1 սովորողին ընկնող՝ դպրոցի ինչպես պետական պատվերից ստացվող եկամուտները, այնպես էլ ընդհանուր եկամուտները: Մոդելային 18 ա/դպրոցների համար սահմանված և գնահատված՝ 1 սովորողին ընկնող՝ դպրոցի ինչպես պետական պատվերից եկամուտները, այնպես էլ ընդհանուր եկամուտներն ունեն տատանման բավականին մեծ միջակայքեր՝ համապատասխանաբար 144.3 – 288.1 հազ. դրամ և 146.8 – 295.1 հազ. դրամ, որը նշանակում է, որ դպրոցների ֆինանսավորումն՝ ըստ 1 սովորողին ընկնող եկամուտների, իրականացվում է խիստ անհավասարաչափ և ոչ հասցեական:

Համաձայն մոդելային 18 ա/դպրոցների համար գնահատված եկամտային ցուցանիշների միջին արժեքների, 1 սովորողին ընկնող՝ դպրոցների ընդհանուր միջին եկամուտները կազմել են 193.1 հազ. դրամ, այդ թվում՝ 1 սովորողին ընկնող՝ դպրոցների պետական պատվերից միջին եկամուտները՝ 183.0 հազ. դրամ (1 սովորողին ընկնող՝ դպրոցների ընդհանուր միջին եկամուտների 94.8%-ը), և 1 սովորողին ընկնող՝ դպրոցների այլ միջին եկամուտները կազմել են 10.1 հազ. դրամ (1 սովորողին ընկնող՝ դպրոցների ընդհանուր միջին եկամուտների 5.2%-ը):

Սակայն, դպրոցի սովորողների ընդհանուր թիվը միակ գործոնը չէ, որ ազդում է դպրոցի տարեկան ֆինանսավորման (եկամուտների) չափի վրա: Վերջինիս մեծությունը կախված է նաև հետևյալ գործոններից՝

- տվյալ դպրոցի սովորողների ընդհանուր թվի կառուցվածքից՝ ըստ միջին և ավագ դպրոցների սովորողների թվերի բաշխման, որոնց համար, համաձայն վերոնշյալ Համատեղ հրամանի, 1 սովորողին ընկնող տարեկան գումարի նկատմամբ կիրառվում են տարբեր գործակիցներ,
- դպրոցի գտնվելու բնակավայրի (համայնքի) բարձրադիտությունից (լեռնային, բարձրլեռնային), ինչպես նաև դպրոցի սովորողների թվի համեմատությունից 400-ի հետ (եթե դա տվյալ բնակավայրում միակ դպրոցն է), որոնցից կախված էլ, համաձայն նույն հրամանի, 1 սովորողին ընկնող տարեկան գումարի նկատմամբ կիրառվում են տարբեր լրացուցիչ գործակիցներ,
- ա/դպրոցի ֆինանսավորման դեպքում 1 սովորողին ընկնող տարեկան գումարի նկատմամբ կիրառվում է լրացուցիչ գործակից,
- դպրոցի ընդհանուր եկամուտները ձևավորվում են ոչ միայն պետական պատվերից, այլև եկամտային այլ աղբյուրներից՝ ներառական կրթության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորումից, պետական դրամաշնորհներից, նվիրաբերություններից, դպրոցի դրամական միջոցների տարեսկզբյան մնացորդից, այլ մուտքերից (տե՛ս հավելված 1):

Այսպես, Գեղարքունիքի մարզի մոդելային բոլոր 5, Արագածոտնի մարզի Ապարանի, Կոտայքի մարզի Հրազդանի թիվ 13 ա/դպրոցների պետական ֆինանսավորման չափը հաշվարկելիս, դրանք օգտվում են իրենց համայնքների բարձրադիտության համար 1 սովորողին ընկնող տարեկան գումարի նկատմամբ լրացուցիչ գործակից կիրառումից:

Նմանապես, Գավառի, Վեդու թիվ 3, Ապարանի, Ձորագյուղի և Վաղարշապատի թիվ 10 ա/դպրոցների սովորողների թիվը չի գերազանցում 400-ը, հետևաբար, այդ դպրոցների պետական ֆինանսավորման չափը հաշվարկելիս, նորից 1 սովորողին ընկնող տարեկան գումարի նկատմամբ կիրառվում է լրացուցիչ գործակից (եթե, իհարկե, դրանք նշված բնակավայրերում միակ դպրոցներն են), որի շնորհիվ այդ դպրոցների պետական պատվերից եկամուտները համապատասխան չափով աճում են:

Մոդելային 18 ա/դպրոցներից միայն 2-ն են (Երևանի Արաբկիր վ/շ թիվ 83 և Շենգավիթ վ/շ թիվ 65), որ իրականացնում են ներառական հանրակրթական ծրագրեր, որի համար նրանք պետական պատվերից ստանում են համապատասխան եկամուտներ՝ հանրակրթության օրենսդրությամբ սահմանված կարգով, և որի պատճառով նկատելիորեն բարձրանում են այդ դպրոցների 1 սովորողին ընկնող՝ պետական պատվերից եկամուտները, հետևաբար նաև՝ այդ դպրոցների 1 սովորողին ընկնող՝ ընդհանուր եկամուտները:

Համաձայն մոդելային 18 ա/դպրոցների ծախսային հարաբերական ցուցանիշների գնահատման արդյունքների (տե՛ս աղյուսակ 13), 1 սովորողին ընկնող՝ դպրոցի ինչպես ընթացիկ ընդհանուր ծախսերն, այնպես էլ աշխատողների աշխատավարձի գծով ծախսերը հիմնականում հակադարձ համեմատական են դպրոցի սովորողների թվին, այսինքն ինչքան փոքր (մեծ) է դպրոցի սովորողների թիվը, այնքան մեծ (փոքր) են 1 սովորողին ընկնող՝ ինչպես ընթացիկ ընդհանուր ծախսերն, այնպես էլ աշխատողների աշխատավարձի գծով ծախսերը: Մոդելային 18 ա/դպրոցների համար սահմանված և գնահատված՝ 1 սովորողին ընկնող՝ դպրոցի ինչպես ընթացիկ ընդհանուր ծախսերն, այնպես էլ աշխատողների աշխատավարձի գծով ծախսերն ունեն տատանման բավականին մեծ միջակայքեր՝ համապատասխանաբար 146.6 – 295.1 հազ. դրամ և 129.4 – 260.7 հազ. դրամ, որը նշանակում է, որ դպրոցների ֆինանսական գործունեությունն՝ ըստ 1 սովորողին ընկնող՝ դպրոցի ինչպես ընթացիկ ընդհանուր ծախսերի, այնպես էլ աշխատողների աշխատավարձի գծով ծախսերի, իրականացվում են խիստ անհամաչափ և ոչ արդյունավետ:

Ի տարբերություն 1 սովորողին ընկնող՝ դպրոցի ընթացիկ ընդհանուր ծախսերի և աշխատողների աշխատավարձի գծով ծախսերի, 1 սովորողին ընկնող՝ դպրոցի պահպանման և այլ ծախսերի ցուցանիշն առանձնապես կապ չունի դպրոցի սովորողների թվի հետ, տարբեր դպրոցներ այդ գծով տարբեր չափով ծախսեր են կատարել՝ կախված դպրոցի ոչ մանկավարժական աշխատողների թվից, դպրոցի տարածքի չափից, բնակավայրի բնակլիմայական պայմաններից, տվյալ տարում դպրոցի կարիքներից և նմանատիպ այլ գործոններից: Մոդելային 18 ա/դպրոցների ճնշող մեծամասնությունը (բացառությամբ Երևանի Արաբկիր վ/շ թիվ 83 և Մալաթիա-Սեբաստիա վ/շ թիվ 190 դպրոցների) տարեկան պահպանման և այլ ծախսերի գծով զգալիորեն քիչ են կատարել (տատանման միջակայքը՝ 4761.3 – 28823.4 հազ. դրամ), քան այդ նպատակով նրանք ֆինանսավորվել են ՀՀ պետական բյուջեից (նվազագույնը 16876.0 հազ. դրամ): Համապատասխանաբար, մոդելային 18 ա/դպրոցների համար սահմանված և գնահատված հարաբերական ցուցանիշը ևս՝ 1 սովորողին ընկնող՝ դպրոցի պահպանման և այլ ծախսերը, ևս ունի տատանման բավականին մեծ միջակայք՝ 8.8 – 41.7 հազ. դրամ: Այս գծով դպրոցների ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական ցուցանիշների խիստ տատանումները նշանակում են, որ դպրոցի պահպանման և այլ ծախսերի համար հատկացված միջոցների մի զգալի մասը ծախսվել է ոչ նպատակային ու անարդյունավետ, փաստորեն այլ ուղղությամբ՝ դպրոցի ոչ մանկավարժական աշխատողների աշխատավարձերի գծով:

Համաձայն մոդելային 18 ա/դպրոցների համար գնահատված ծախսային ցուցանիշների միջին արժեքների, 1 սովորողին ընկնող՝ դպրոցների ընթացիկ ընդհանուր միջին ծախսերը կազմել են 187.6 հազ. դրամ, այդ թվում՝ 1 սովորողին ընկնող՝ դպրոցների աշխատողների աշխատավարձի գծով միջին ծախսերը՝ 170.2 հազ. դրամ (1 սովորողին

ընկնող՝ դպրոցների ընթացիկ ընդհանուր միջին ծախսերի 90.7%-ը), և 1 սովորողին ընկնող՝ դպրոցների պահպանման և այլ միջին ծախսերը կազմել են 17.4 հազ. դրամ (1 սովորողին ընկնող՝ դպրոցների ընթացիկ ընդհանուր միջին ծախսերի 9.3%-ը): Մոդելային 18 ա/դպրոցների 2013թ. տարեկան պահպանման և այլ միջին ծախսերը կազմել են 9034.3 հազ. դրամ, որը մոտ կրկնակի քիչ է ՀՀ պետական բյուջեից այդ նպատակով հատկացվող նվազագույն գումարից՝ 16876.0 հազ. դրամ:

Մյուս կողմից, ա/դպրոցի կողմից կատարվող ընթացիկ ընդհանուր ծախսերի չափի վրա, բացի դպրոցի սովորողների թվից, որոշակի ազդեցություն ունեն նաև այլ գործոններ, ինչպիսիք են՝ դպրոցի տարեկան ընդհանուր եկամուտների չափը (պայմանավորված դպրոցի պետական ֆինանսավորման առանձնահատկություններով՝ բնակավայրի բարձրադիրությունը, սովորողների թվի համեմատությունը 400-ի հետ, ա/դպրոց լինելու հանգամանքը և այլն), դպրոցում ներառական կրթության առկայությունը, հանրակրթական լրացուցիչ ծառայությունների մատուցումը, արտաբյուջետային միջոցների առկայությունը, դպրոցի տարեսկզբի մնացորդի առկայությունը և այլն: Այսպես, աղյուսակ 13-ում կատարված ա/դպրոցների վարկանիշային դասակարգումից երևում է, որ աղյուսակի երկրորդ կեսի տեղերը հիմնականում զբաղեցրել են այն դպրոցները, որոնք կամ ունեն 400-ից պակաս սովորողներ ու հանդիսանում են միակ դպրոցը տվյալ բնակավայրում, և/կամ գտնվում են բարձրադիր բնակավայրերում, կամ իրականացնում են ներառական կրթական ծրագրեր, կամ ունեցել են եկամուտներ արտաբյուջետային աղբյուրներից՝ օրինակ, նվիրաբերության տեսքով (վերջին երկուսի մասով, մասնավորապես, Երևանի Արաբկիր վ/շ թիվ 83 ա/դպրոցը):

Հայաստանում ա/դպրոցների կողմից կապիտալ ծախսերի կատարումը կրում է հազվադեպ բնույթ: Այդ դպրոցների շենքերի հիմնանորոգման, բարձրարժեք գույքի ձեռքբերման և այլ կապիտալ ծրագրերն իրականացվում են ՀՀ պետական բյուջեի, ինչպես նաև տեղական և միջազգային դոնոր կազմակերպությունների դրամաշնորհային ծրագրերի հաշվին:

Եզրակացություններ

Ավագ դպրոցներում կրթության ֆինանսավորման վերաբերյալ եզրակացություններ

Հանրակրթական դպրոցների՝ այդ թվում ա/դպրոցների, ֆինանսավորման հիմնական ելակետային ցուցանիշը սովորողների թիվն է, սակայն ֆինանսավորման հիմքում դրվող թվերը սովորաբար տարբերվում են վիճակագրական ծառայության կողմից հրապարակվող թվերից: Միաժամանակ, ա/դպրոցների ֆինանսական ցուցանիշները դեռևս չեն հրապարակվում, ինչը հնարավորություն չի տալիս վերլուծել և գնահատել ա/դպրոցների համակարգի ֆինանսական վիճակը և դրանցից յուրաքանչյուրի ֆինանսական գործունեությունը: Նպատակահարմար է, որ ձևավորվի ա/դպրոցների համակարգի առանձին տվյալների բազա, որտեղ կարևոր տեղ կունենան նաև ֆինանսական տվյալները:

Միաժամանակ, վիճակագրական տվյալները հիմնականում հրապարակվում են ըստ ուսումնական հաստատությունների տեսակների, մինչդեռ ֆինանսավորման ցուցանիշները՝ ըստ կրթական ծրագրերի աստիճանների: Սա նույնպես հանգեցնում է տվյալների անհամադրելիության:

Տվյալների բացակայությունը հնարավորություն չի տալիս գնահատելու Հայաստանի կրթական համակարգի արդյունավետության այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են «աշակերտ / ուսուցչական դրույք» և «աշակերտ / ոչ ուսուցչական դրույք» հարաբերակցությունների մակարդակը և դրանք համադրել այլ երկրների համապատասխան ցուցանիշներին: Այդ ցուցանիշները հաշվարկվում են լրիվ միջնակարգ դպրոցի կտրվածքով, որոնք լիարժեք չեն արտացոլում իրական պատկերը, քանի որ և՛ դասարանի նորմատիվ խտությունը, և՛ ուսումնական պլանով սահմանված պարտադիր ժամաքանակները հանրակրթության տարբեր աստիճաններում տարբեր են: Հաշվի առնելով, որ միջազգային հրապարակումներում այս ցուցանիշները սովորաբար ներկայացվում են առանձնացված՝ ըստ կրթական ծրագրերի, Հայաստանում նույնպես դրանք տարանջատելու անհրաժեշտություն կա:

Կրթության ոլորտի ծախսային ծրագրերն իրականացվում են առանձին դասակարգված ծրագրերի միջոցով, որոնք արտացոլված են պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերում և պետական բյուջեում:

Այսպիսով, ա/դպրոցների կրթության համակարգի արդյունավետության գնահատման կարևոր նախապայմաններից է ա/դպրոցների մասշտաբով տվյալների, այդ թվում՝ ֆինանսական, բազայի ստեղծումը, իսկ դրա բարձրացման կարևոր հիմնախնդիրներից է ցուցանիշների արդյունավետ համակարգի ներդրումը, որը հնարավորություն կտա մշակել իրավիճակի վրա հիմնված քաղաքականություններ:

Ավագ դպրոցների ֆինանսական արդյունավետության վերաբերյալ եզրակացություններ

1. Հայաստանում 2009-2012թթ. ընթացքում իրականացված հանրակրթական բարեփոխումների շրջանակում, միջնակարգ դպրոցների ցանկից ա/դպրոցների ընտրության և ձևավորման որոշումը կայացվել է հանրակրթության պաշտոնական լիազոր մարմնի՝ ՀՀ ԿԳՆ կողմից՝ առանց այդ միջնակարգ դպրոցների կառավարման մարմինների (խորհրդի, տնօրենի) հետ հարցի համակողմանի քննարկման: Փորձագիտական հարցումների համաձայն, տարբեր համայնքներում կիրառվել են ա/դպրոցների ընտրության և ձևավորման իրարամերժ մոտեցումներ՝ առանց որոշակի չափանիշների սահմանման և օգտագործման:
2. Պատահականության սկզբունքով ընտրված՝ մոդելային 18 ա/դպրոցները բոլորն էլ ունեն ՊՈԱԿ-ի իրավակազմակերպական ձև և իրականացնում են պետական հանրակրթական ա/դպրոցի հիմնական ծրագրեր: Այդ դպրոցներից 15-ում (բացառությամբ Արմավիրի թիվ 1, Վաղարշապատի թիվ 10 և Գեղարքունիքի մարզի Ձորագյուղի ա/դպրոցների), բացի 10-12-րդ դասարաններից, ներկայումս դեռևս գործում են նաև 5-9-րդ դասարաններ և իրականացվում են նաև պետական հանրակրթական հիմնական դպրոցի ընդհանուր ծրագրեր:
3. Մոդելային 18 ա/դպրոցներից շենքային պայմանները կարելի է լավ կամ բավարար համարել միայն 7 դպրոցներում (Երևանի Աջափնյակ վ/շ թիվ 195, Արմավիրի թիվ 1, Հրազդանի թիվ 13, Գավառի, Ապարանի, Ձորագյուղի, Վարդենիկի): Մնացած մոդելային 11 ա/դպրոցներում վատ վիճակում են հիմնականում մարզադահլիճները, հանդիսությունների դահլիճները, սանհանգույցները, պատուհանները, հատակները, դասասենյակների մի մասը և այլն: Ա/դպրոցների շենքերի հիմնանորոգման նպատակով ՀՀ պետական բյուջեից և/կամ դոնոր կազմակերպությունների կողմից գումարների հատկացումը կրում է հազվադեպ, ոչ համակարգված, ոչ թափանցիկ և ոչ հաշվետվողական բնույթ, դրանք չեն բավարարում խնդրին ամբողջական լուծում տալուն: Շատ ա/դպրոցների գույքը հին է, կա ինչպես դպրոցական գույքի վերանորոգման, այնպես էլ նոր գույքի ձեռքբերման կարիք: Ա/դպրոցներում լիարժեք չեն գործում կենսաբանության, քիմիայի և ֆիզիկայի առարկայական լաբորատորիաները՝ համապատասխան սենյակների, մասնագիտական սարքավորումների և նյութերի բացակայության կամ այլ պատճառներով:
4. Ա/դպրոցների տնօրինությունները և մանկավարժական անձնակազմերը սկզբունքորեն տարբեր են ընկալում ա/դպրոցի նպատակն ու առաքելությունը: Հարցվածների մի մասը (առավելապես՝ մանկավարժները) ա/դպրոցի նպատակ է համարում կրթության բարձր որակի ապահովումը և բուհ ընդունվելու համար սովորողների նախապատրաստումը: Ըստ այդմ՝ ա/դպրոցում պետք է սովորեն միայն այն երեխաները, որոնք հիմնական

դպրոցում ունեցել են բարձր առաջադիմություն: Նրանց կարծիքով, ցանկալի է մշակել և ներդնել ա/դպրոց ընդունվելու ընթացակարգ՝ ստուգելով երեխաների գիտելիքները հարցազրույցի կամ թեսթավորման միջոցով: Այս մոտեցումը ենթադրում է նաև ա/դպրոցից ցածր առաջադիմություն և/կամ վատ վարք ունեցող սովորողների հեռացման մեխանիզմի առկայություն, որը ներկայումս բացակայում է: Հարցվածների մյուս մասի (առավելապես՝ տնօրենների) կարծիքով, ա/դպրոցում պետք է սովորեն բոլոր ցանկացող երեխաները՝ ելնելով սոցիալական հավասարության, արդարության և ներառականության սկզբունքներից: Ներկայումս հիմնական դպրոցների շրջանավարտներն իրենց կրթությունը հիմնականում շարունակում են ա/դպրոցներում: 10-րդ դասարանում ակնկալվող սովորողների թիվը հատկապես կանխատեսելի է քաղաքային փոքր և գյուղական համայնքներում, որտեղ ա/դպրոցը միակն է: Իրականում, ա/դպրոցի նպատակը՝ ապահովել որակյալ հոսքային կրթություն, և դրա ֆինանսավորման մեխանիզմն՝ ըստ սովորողների թվի, ուղղակիորեն հակասում կամ տրամազծորեն հակադրվում են իրար:

5. Մոդելային 18 ա/դպրոցներից 15-ն, իրենց նախագծային հզորությամբ, համարվում են պայմանական <մեծ> դպրոցներ (նախատեսված սովորողների թիվը գերազանցում է 500-ը), միայն 3-ը՝ պայմանական <փոքր> դպրոցներ: Սակայն, մոդելային 18 ա/դպրոցներից միայն 8-ում է փաստացի սովորողների թիվը գերազանցում 500-ին, իսկ մնացած 10-ում այն փոքր է 500-ից: Սա նշանակում է, որ մոդելային ա/դպրոցները հիմնականում թերբեռնված են (նախագծային հզորության 1/3-ից մինչև 2/3 չափով) և այս փաստը հանրակրթության բնագավառի պատկան մարմինների համար լուրջ մտահոգության պատճառ պետք է հանդիսանա: Եվ ընդհանրապես, անհրաժեշտ է դպրոցների բավարար ծանրաբեռնվածությունը դնել դրանց գործունեության արդյունավետության բարձրացման, հանրակրթության համակարգի հետագա զարգացման քաղաքականությունների ու ռազմավարությունների մշակման և ընդունման հիմքում:
6. Ա/դպրոցներում ներկայումս տարածված են հիմնականում կրթական 2 հոսքեր՝ բնագիտական և հումանիտար: Արհեստագործական հոսք գործում է միայն բացառիկ ա/դպրոցներում (մասնավորապես, մոդելային 18 ա/դպրոցներից միայն Մարտունի համայնքի ա/դպրոցում): Բնագիտական հոսքը հիմնականում բաժանվում է 3 ենթահոսքերի՝ ֆիզիկամաթեմատիկական, տնտեսագիտական և կենսաքիմիական: Հումանիտար հոսքը հիմնականում բաժանվում է 3 ենթահոսքերի՝ պատմական, իրավագիտական և լեզվաբանական: Մոդելային 18 ա/դպրոցներից 9-ում գործում է նաև կրթական ընդհանուր հոսքը, որտեղ հիմնականում սովորում են այն աշակերտները, ովքեր դեռևս չեն կողմնորոշվել ապագա մասնագիտության ընտրության հարցում:

Ա/դպրոցներում ներկայումս գործող հոսքերը և ենթահոսքերը դեռևս չեն ապահովում բուհում, ՄՄՀ-ում և/կամ աշխատանքի շուկայում պահանջված մասնագիտությունների գոնե մոտավոր նպատակայնությունը և բազմազանությունը: Դա հատկապես վերաբերում է ռազմական, արվեստի, սպորտի բնագավառների, ինչպես նաև արհեստագործական տարբեր մասնագիտություններին: Ա/դպրոցներում ներկայումս առկա են որոշակի հիմնախնդիրներ՝ կապված հոսքային դասարանների ձևավորման և կիսման, ուսումնական պլանով նախատեսված հոսքային և ոչ հոսքային առարկաների ժամաքանակների, դրանց գծով փոխադրական և ավարտական քննությունների նպատակահարմարության, լրացուցիչ մասնագիտական առարկաների, ֆակուլտատիվ պարապմունքների, խմբակների կազմակերպման և դասավանդման ժամաքանակային, մասնագիտական և ֆինանսական հնարավորությունների հետ:

7. Մոդելային 18 ա/դպրոցներից ոչ մեկի 10-12-րդ դասարանների միջին խտությունը բարձր չէ ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմի վերին սահմանից՝ 25 սովորողից: Մակայն, այդ դպրոցներից 6-ի (ընդհանուրի 1/3-ը) 10-12-րդ դասարանների միջին խտությունը, 2014թ. հունվարի դրությամբ, փոքր է սահմանված նորմի ներքին սահմանից՝ 20 սովորողից, որն էլ նշանակում է, որ այդպիսի դասարանների բացման ֆինանսավորումը պետք է կատարվի դպրոցի լրացուցիչ ֆինանսավորման միջոցների հաշվին՝ դպրոցի խորհրդի որոշմամբ: Ընդ որում, այդպիսի դպրոցներ կան ինչպես ՀՀ բոլոր մարզերում, այնպես էլ Երևան քաղաքում:
8. Ըստ 1 դասարանին ընկնող մանկավարժների միջին թվի ցուցանիշի, Երևանի մոդելային բոլոր 5 ա/դպրոցներն էլ համարվում են փաստացի աշխատող մանկավարժներով ցածր ծանրաբեռնվածության դպրոցներ, իսկ մարզերի մոդելային 13 ա/դպրոցներից միայն 3-ն են համարվում այդպիսիք, մնացած 10-ը համարվում են փաստացի աշխատող մանկավարժներով միջին կամ բարձր ծանրաբեռնվածության դպրոցներ: Այս ցուցանիշի արժեքը հատկապես բարձր է Արմավիրի, Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերում:
9. Ըստ 1 դասարանին ընկնող ոչ մանկավարժական աշխատողների միջին թվի ցուցանիշի, մոդելային 18 ա/դպրոցներից ոչ մեկը չի համարվում ոչ մանկավարժական աշխատողներով ցածր ծանրաբեռնվածության դպրոց, դրանք բոլորն էլ ոչ մանկավարժական աշխատողներով միջին կամ բարձր ծանրաբեռնվածության դպրոցներ են (համապատասխանաբար 11 և 7): Ընդ որում, այդ ցուցանիշով բարձր ծանրաբեռնվածության 7 դպրոցներից 6-ը ՀՀ մարզերից են և միայն 1-ը՝ Երևանից:
10. Ըստ 1 մանկավարժին ընկնող սովորողների միջին թվի ցուցանիշի, մոդելային 18 ա/դպրոցներից ոչ մեկը չի համարվում փաստացի սովորողներով բարձր ծանրաբեռնվածություն ունեցող մանկավարժներով դպրոցներ (1 մանկավարժին ընկնող սովորողների միջին թիվը մեծ է 14.5 սովորողից): Երևանի մոդելային բոլոր 5

ա/դպրոցներն էլ համարվում են սովորողներով միջին ծանրաբեռնվածություն ունեցող մանկավարժներով դպրոցներ (1 մանկավարժին ընկնող սովորողների միջին թիվը մեծ է կամ հավասար 10 սովորողից և փոքր է կամ հավասար 14.5 սովորողից), իսկ ՀՀ մարզերի մոդելային 13 ա/դպրոցներից միայն 4-ն են համարվում այդպիսիք, մնացած 9-ը սովորողներով ցածր ծանրաբեռնվածություն ունեցող մանկավարժներով դպրոցներ են (1 մանկավարժին ընկնող սովորողների միջին թիվը փոքր է 10 սովորողից):

11. Ըստ 1 ոչ մանկավարժական աշխատողին ընկնող սովորողների միջին թվի ցուցանիշի, մոդելային 18 ա/դպրոցները միմյանցից խստորեն տարբերվում են՝ ցուցանիշի արժեքը տատանվում է բավականին լայն միջակայքում՝ 12.5 – 45 սովորող: Ընդ որում, այդ ցուցանիշով Երևանի մոդելային ավագ դպրոցներն առանձնապես չեն տարբերվում ՀՀ մարզերի մոդելային ա/դպրոցներից:
12. Մոդելային 18 ա/դպրոցների սովորողների հարցված 410 ծնողներն ա/դպրոցներում կրթության ընդհանուր որակը գնահատել են բավականին բարձր. գերազանց՝ 17.1%, լավ՝ 37.8%, բավարար՝ 38.8%, վատ՝ 4.1%, շատ վատ՝ 1%: Փաստորեն, ծնողների 55%-ն ա/դպրոցում կրթության որակը գնահատել է գերազանց կամ լավ, 39%-ը՝ բավարար, և միայն 5%-ը՝ վատ կամ շատ վատ:
13. Հարցված մանկավարժների և սովորողների կարծիքով, անհրաժեշտ է վերանայել ա/դպրոցի ուսումնական պլանը, առարկայական ծրագրերը և դասագրքերի բովանդակությունը: Նրանք միակարծիք են, որ հնարավոր չէ դպրոցական գործող առարկայական ծրագրերով և դասագրքերով լիարժեքորեն պատրաստվել բուհական ընդունելության քննություններին: Ներկայումս գործող առարկայական ծրագրերի, դասագրքերի և բուհի ընդունելության քննությունների շտեմարանների միջև առկա են էական տարբերություններ ու անհամապատասխանություններ: Հատկապես դա վերաբերում է 12-րդ դասարանին, որի դերն ու բովանդակությունը հստակ չէ ոչ սովորողների, ոչ նրանց ծնողների և ոչ էլ նույնիսկ ուսուցիչների համար:
14. Համաձայն ծնողների հարցումների արդյունքների, ա/դպրոցի 1 սովորողի ծնողների տարեկան ընդհանուր ծախսերը միջին հաշվով կազմում են մոտ 55000 դրամ, այդ թվում դասագրքերի վարձակալություն՝ 8000 դրամ, այլ դասագրքերի գնում և/կամ պատճենահանում՝ 7600 դրամ, գրենական պիտույքներ՝ 16600 դրամ, դպրոցական և արտադպրոցական միջոցառումներ՝ 12400 դրամ, դպրոցական ֆոնդի գումար՝ 2000 դրամ, դասարանի մաքրում՝ 2700 դրամ, նվերներ ուսուցիչներին՝ 4000 դրամ, այլ ծախսեր՝ 1700 դրամ:
15. Ա/դպրոցներում ներկայումս հիմնականում աշխատում են նույն մանկավարժական կադրերը, որոնք աշխատում էին միջնակարգ դպրոցներում՝ մինչ դրանց վերակազմավորումը ա/դպրոցների: Ա/դպրոցների մանկավարժները պարբերաբար

վերապատրաստվում են, նրանց մի մասը արժանանում է տարակարգերի: Մակայն, մոդելային որոշ ա/դպրոցներում, վերջին տարիներին սովորողների թվի տարեցտարի նվազման, որոշ առարկաների ծրագրից դուրս գալու և այլ պատճառներով, կրճատվել են մանկավարժների (ինչպես նաև ոչ մանկավարժական աշխատողների) հաստիքները, դրույքները, դասաժամաքանակային ծանրաբեռնվածությունը:

16. Ա/դպրոցների սովորողները և նրանց ծնողները բավականին բարձր են գնահատել ա/դպրոցների մանկավարժների՝ ուսումնական առարկաների մասնագիտական իմացությունը, մանկավարժական հմտությունները և մարդկային որակները՝ վկայակոչելով, որ իրենց դպրոցի լավագույն ուսուցիչները միննույն ժամանակ հանդիսանում են իրենց համայնքում հայտնի լավագույն կրկնուսույցները:
17. Մոդելային 18 ա/դպրոցների սովորողների հաճախելիության միջին մակարդակը համեմատաբար բարձր է 10-րդ դասարանում (ըստ կիսամյակների՝ 96% և 97.1%), իսկ 11-րդ (94.5% և 95.7%) և 12-րդ դասարաններում (96.2% և 95.1%) այն նկատելիորեն նվազում է: Սա նշանակում է, որ ա/դպրոցի սովորողների բացակայությունները դասերից տարեցտարի ավելի հաճախակի բնույթ են կրում: Մոդելային ա/դպրոցների 10-12-րդ դասարանների սովորողների բացակայությունների միջինը մեկ կիսամյակում դասավանդվող ընդհանուր ժամաքանակի մեջ կազմել է մոտ 4.2%: Սոցիոլոգիական հետազոտության արդյունքներով, ա/դպրոցների սովորողների բացակայությունների մասնաբաժինն ընդհանուր դասաժամերի քանակի մեջ ավելի բարձր է՝ 8.0%: Ընդ որում, տղաներն ավելի հաճախ են բացակայում դասերից, քան աղջիկները:
18. Սովորողների բացակայություններն ա/դպրոցից հիմնականում պայմանավորված են՝ նրանց ժամանակավոր հիվանդությամբ (միջինը՝ 74.1%), այլ հարգելի պատճառներով (միջինը՝ 3.6%), անհարգելի պատճառներով (այդ թվում՝ կրկնուսույցի մոտ նրանց պարապմունքներով (միջինը՝ 8.9%), այլ անհարգելի պատճառներով (միջինը՝ 13.4%)): Մոդելային ա/դպրոցների սովորողները հիմնականում բացակայել են և՛ հոսքային, և՛ ոչ հոսքային առարկաների դասերից (միջինը՝ 65.5%): Միննույն ժամանակ, ոչ հոսքային առարկաների դասերից բացակայելու միտումը աճել է 10-րդ դասարանից 11-12-րդ դասարան (համապատասխանաբար՝ 3.6%, 7.4% և 6.0%), իսկ ա/դպրոցն արդեն ավարտած սովորողների դեպքում այն շատ ավելի բարձր է՝ 21.6%:
19. Ա/դպրոցների սովորողների հարցված ծնողները դպրոցում կարգուկանոնի պահպանությունը գնահատել են՝ շատ լավ՝ 20.2%, լավ՝ 33.7%, նորմալ/բավարար՝ 36.8%, վատ՝ 5.9% և շատ վատ՝ 2.2%: Դպրոցի կարգուկանոնը պահպանելու համար կիրառվում են տարբեր մեխանիզմներ՝ դպրոցի կանոնակարգի ընդունում և կիրառում, դպրոցի և սովորողի միջև կնքվող պայմանագիր, սոցիալական մանկավարժների աշխատանք, «Ոստիկանական տեսուչ» ծրագրում ներգրավվում, ծխելու դեմ պայքար, դպրոցի

տարբեր տեղերում տեսախցիկների տեղադրում և այլն: Ա/դպրոցում խիստ կարիք է զգացվում նաև հոգեբան-մասնագետի, ով կարող է մեծ դերակատարություն ունենալ ինչպես սովորողների միջանձնային փոխհարաբերությունները կարգավորելու, այնպես էլ սովորողների, նրանց ծնողների և ուսուցիչների միջև հոգեբանական տարբեր խնդիրները հաղթահարելու գործում:

20. Մոդելային 18 ա/դպրոցների սովորողների միջին առաջադիմությունը ցածր է հատկապես 10-րդ դասարանում (ըստ կիսամյակների՝ 94.5% և 93.8%), որը նշանակում է, որ ա/դպրոց ընդունված՝ հիմնական դպրոցի շրջանավատների շուրջ 6.0%-ը վատ առաջադիմություն ցուցաբերած սովորողներ են եղել և հիմնական դպրոցում ստացած նրանց գիտելիքները բոլորովին չեն համապատասխանել ա/դպրոցում ներկայացված պահանջներին: 11-րդ դասարանի I կիսամյակում սովորողների առաջադիմության մակարդակը բարձրացել է (97.4%), սակայն II կիսամյակում այն նորից նվազել է՝ հասնելով նորից 10-րդ դասարանի մակարդակին (94.3%): Իսկ 12-րդ դասարանում սովորողների առաջադիմության մակարդակի բարձրացումը (99.0%) պայմանավորված է երեք հանգամանքներով՝ առաջին, ա/դպրոցի մանկավարժական աշխատակազմի լավ աշխատանքով, և/կամ երկրորդ, 12-րդ դասարանում կրկնուսույցների մոտ պարապելու արդյունքում սովորողների գիտելիքների աճով, և/կամ, երրորդ, ավելի հավանական տարբերակը, ա/դպրոցի վատ սովորողներին <դպրոցը մի կերպ ավարտեցնելու> Հայաստանում որոշակիորեն ձևավորված ռիսկային <ավանդույթով>: Մոդելային 18 ա/դպրոցների սովորողների առաջադիմության միջին մակարդակը կազմել է 95.4%, որը նշանակում է, որ ա/դպրոցների սովորողների շուրջ 4.6%-ի գիտելիքները բացարձակապես չեն համապատասխանել ա/դպրոցի պահանջներին և նրանց կրթության կազմակերպումը ա/դպրոցում աննպատակահարմար և անարդյունավետ է եղել:
21. Մոդելային 18 ա/դպրոցների 10-րդ դասարանում սովորողների ուսման որակի միջին արժեքը տատանվել է 39–41%-ի, 11-րդ դասարանում՝ 40–43%-ի սահմաններում, 12-րդ դասարանում այն կազմել է մոտ 56%, իսկ դպրոցի ընդհանուր միջին արժեքը՝ մոտ 46.0%: Սա նշանակում է, որ հիմնական դպրոցի շրջանավարտների կեսից ավելիի ստացած գիտելիքները չեն բավարարում ա/դպրոցում <լավ> կամ <զերազանց> սովորելու համար: Իսկ 12-րդ դասարանում սովորողների ուսման որակի մակարդակի կտրուկ բարձրացումը մինչև 56%-ի պայմանավորված է նույն հանգամանքներով, ինչ նրանց առաջադիմության մակարդակի բարձրացման դեպքում: Այսպիսով, ա/դպրոցի ավարտական 12-րդ դասարանի սովորողների առաջադիմության / ուսման որակի մակարդակի նկատելի բարձրացումը պայմանավորված է հիմնականում սուբյեկտիվ գործոններով, քան թե նրանց գիտելիքների մակարդակի օբյեկտիվ բարձրացմամբ:

22. Ա/դպրոցների սովորողների ավելի քան կեսը (հաշված նաև ուսումնական մեկ կամ մի քանի առարկաներից «5» և/կամ «6» միավոր գնահատականներ ունեցող սովորողներին) համարվում է պոտենցիալ այն զանգվածը, որն ի վիճակի է բարձր ուսման որակով սովորել ա/դպրոցում, հաջողությամբ հանձնել դպրոցի ավարտական կամ միասնական քննությունները և հավակնել շարունակելու կրթությունը բուհերում կամ ՄՄՀ-ներում:
6.	Դպրոցի սովորողների հաճախելիության միջին մակարդակը (100% - (բոլոր սովորողների 1 կիսամյակում բացակայած դասաժամերի ընդհանուր թիվ / 1 սովորողին 1 կիսամյակում դասավանդված դասաժամերի ընդհանուր թիվ x	տ/բ*)	96.1 / 95.5	տ/բ*)	տ/բ*)	98.3 / 98.6	96.1 / 97.1	97.7 / 97.6	90.4 / 95.1	95.7 / 95.4

	սովորողների թիվ) x 100%) (2012-13 II կիսամյակ / 2013-14 I կիսամյակ), %									
	- 10-րդ դասարան		97.2 / 97.0			98.2 / 99.2	96.2 / 97.8	98.4 / 98.5	92.1 / 96.2	95.1 / 97.2
	- 11-րդ դասարան		94.6 / 94.0			98.5 / 98.4	94.4 / 97.0	96.0 / 98.0	88.6 / 94.5	94.4 / 94.5
	- 12-րդ դասարան		96.6 / 95.6			98.2 / 98.2	97.6 / 96.7	98.6 / 96.3	90.4 / 94.6	97.5 / 94.6
7.	Դպրոցի սովորողների առաջադիմության մակարդակը (բանաձև՝ (1 կիսամյակում ուսումնական բոլոր առարկաներից 4-10 միավոր գնահատված՝ դպրոցի սովորողների ընդհանուր թիվ / դպրոցի բոլոր սովորողների ընդհանուր թիվ) x 100%) (2012-13 II կիսամյակ / 2013-14 I կիսամյակ), %	100 / 98	100 / 100	99 / 100	93 / 91	98 / 92	95 / 92	99 / 98	100 / 100	98 / 99
	- 10-րդ դասարան	100 / 98	100 / 100	99 / 100	86 / 89	95 / 87	97 / 99	99 / 98	100 / 100	98 / 98
	- 11-րդ դասարան	100 / 96	100 / 100	99 / 100	97 / 90	100 / 90	90 / 80	99 / 96	100 / 100	96 / 99
	- 12-րդ դասարան	100 / 100	100 / 100	100 / 100	97 / 94	100 / 100	99 / 98	100 / 100	100 / 100	100 / 99
8.	Դպրոցի սովորողների ուսման որակի մակարդակը (բանաձև՝ (1 կիսամյակում ուսումնական բոլոր առարկաներից 7-10 միավոր գնահատված՝ դպրոցի սովորողների ընդհանուր թիվ / դպրոցի բոլոր սովորողների ընդհանուր թիվ) x 100%) (2012-13 II կիսամյակ / 2013-14 I կիսամյակ), %	32 / 33	66 / 74	տ/բ*)	21 / 15	46 / 35	34 / 37	46 / 44	65 / 58	49 / 60
	- 10-րդ դասարան	22 / 36	57 / 64		9 / 6	40 / 43	31 / 30	40 / 45	65 / 60	44 / 51
	- 11-րդ դասարան	25 / 26	63 / 71		22 / 5	40 / 27	29 / 30	45 / 38	60 / 50	42 / 56
	- 12-րդ դասարան	48 / 37	78 / 87		33 / 34	57 / 36	43 / 52	52 / 50	70 / 65	62 / 72
9.	Դպրոցի 1 սովորողին ընկնող 2013թ. ընդհանուր եկամուտները (բանաձև՝ դպրոցի փաստացի (ճշտված) ընդհանուր եկամուտներ / դպրոցի սովորողների թիվ)	214.3	197.2	192.9	196.6	247.7	199.7	295.1	170.4	170.5
10.	Դպրոցի 1 սովորողին ընկնող 2013թ. պետական պատվերից եկամուտները (բանաձև՝ դպրոցի փաստացի (ճշտված) պետական պատվերից եկամուտներ / դպրոցի սովորողների թիվ)	206.2	184.4	185.9	192.5	235.5	174.1	288.1	156.7	164.8
11.	Դպրոցի 1 սովորողին ընկնող՝ 2013թ. ընթացիկ	209.3	197.2	173.0	190.0	237.1	182.1	295.1	163.7	170.5

	ընդհանուր ծախսերը (բանաձև՝ դպրոցի փաստացի (ճշտված) ընթացիկ ընդհանուր ծախսեր / դպրոցի սովորողների թիվ)									
12.	Դպրոցի 1 սովորողին ընկնող՝ 2013թ. դպրոցի աշխատողների աշխատավարձի գծով ծախսերը (բանաձև՝ դպրոցի փաստացի (ճշտված) աշխատավարձի գծով ծախսեր / դպրոցի սովորողների թիվ)	196.0	182.2	153.6	179.1	219.7	169.2	260.7	148.9	152.2
13.	Դպրոցի 1 սովորողին ընկնող՝ 2013թ. դպրոցի պահպանման և այլ ծախսերը (բանաձև՝ դպրոցի փաստացի (ճշտված) պահպանման և այլ ծախսեր / դպրոցի սովորողների թիվ)	13.3	15.0	19.4	10.9	17.4	12.9	34.4	14.7	18.3

*) տ/բ – տվյալները չեն տրամադրվել տվյալ ա/դպրոցի կողմից

**ՀՀ ավագ դպրոցներում կրթության ֆինանսավորման և ֆինանսական արդյունավետության մոնիթորինգ.
Սոցիոլոգիական հետազոտության քանակական և որակական արդյունքները**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության նպատակը և խնդիրները
Տեղեկատվության հավաքման մեթոդները և ընտրանքը

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ավագ դպրոցների վերակազմավորման գործընթացը
Ավագ դպրոցների հոսքերը և ենթահոսքերը
Աշակերտների կողմից ավագ դպրոցի ընտրության չափանիշները
Ավագ դպրոց ընդունելության ընթացակարգը և հոսքային դասարանների կոմպլեկտավորումը
Ավագ դպրոցից աշակերտների հեռացման հարցը
Ավագ դպրոցներում կրթության որակը
Ավագ դպրոցի աշակերտների առաջադիմությունը
Ավագ դպրոցների շենքային և գույքային պայմանները
Ավագ դպրոցների ապահովվածությունը դասագրքերով
Ավագ դպրոցի առարկայական ծրագրերը
Կարգապահության պահպանումը ավագ դպրոցում
Ավագ դպրոցի աշակերտների բուհ ընդունվելու դիրքորոշումը և կրկնուսույցի մոտ պարապմունքները
Ավագ դպրոցի մասնագիտական կադրերը
Ծնողների հետ կապի պահպանումը ավագ դպրոցում
Ավագ դպրոցի ֆինանսավորումն ըստ աշակերտների թվի

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ. Ավագ դպրոցի համակարգի կայացման հիմնախնդիրը ՀՀ-ում

Հավելված. Ի՞նչ մասնագիտությամբ է/ր պլանավորո՞ւմ Ձեր երեխան շարունակել կրթությունը ավագ դպրոցն ավարտելուց հետո

ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության նպատակը և խնդիրները

ՀՀ ավագ դպրոցներում կրթության ֆինանսավորման և ֆինանսական արդյունավետության մոնիթորինգի նպատակով «Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպությունը «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» աջակցությամբ իրականացրել է սոցիոլոգիական հետազոտություն: Հետազոտության նպատակն է գնահատել ավագ դպրոցում կրթության ֆինանսավորման արդյունավետությունը և վերջինիս ազդեցությունը կրթության որակի վրա: Սոցիոլոգիական հետազոտությունը հնարավորություն տվեց պարզել՝

- Ավագ դպրոցների ձևավորման ընթացքում դպրոցների ընտրության սկզբունքները,
- Աշակերտների կողմից ավագ դպրոցի ընտրության չափանիշները,
- Ավագ դպրոցների երեխաների ընդունելության ընթացակարգը,
- Ավագ դպրոցներից երեխաների հեռացման պատճառներն ու ընթացակարգը,
- Ավագ դպրոցներում հոսքային և ենթահոսքային կրթության կազմակերպման առանձնահատկությունները, առավելություններն ու դժվարությունները,
- Միջնակարգ դպրոցից ավագ դպրոցի փոխակերպման գործընթացի հիմնախնդիրները և դժվարությունները,
- Ավագ դպրոցների մանկավարժական և ոչ մանկավարժական անձնակազմի կրճատման, համալրման և վերապատրաստման խնդիրները,
- Առարկայական ծրագրերի հետ կապված խնդիրները,
- Ավագ դպրոցում կարգապահության ապահովման մեխանիզմները,
- Ավագ դպրոցների նյութատեխնիկական ապահովվածությունը, շենքային և գույքային պայմանները,
- Ավագ դպրոց - ծնող համագործակցության եղանակները և հնարավորությունները,
- Ավագ դպրոցների աշակերտների առաջադիմությունը,
- Ավագ դպրոցում աշակերտներին բուհ ընդունվելու համար անհրաժեշտ գիտելիքներով ապահովելու հնարավորությունները,
- Կրկնուսույցների հետ պարապելու հաճախականությունը և պատճառները,
- Ավագ դպրոցների ֆինանսավորման առանձնահատկությունները և ֆինանսական արդյունավետությունը,
- Աշակերտների և ծնողների բավարարվածությունը ավագ դպրոցի ծառայություններով, մասնավորապես՝ կրթության որակով:

Տեղեկատվության հավաքման մեթոդները և ընտրանքը

Սոցիոլոգիական հետազոտության ընթացքում ուսումնասիրվել է ինչպես ավագ դպրոցների տնօրենների և ուսուցիչների, այնպես էլ աշակերտների և նրանց ծնողների կարծիքը, ինչը հնարավորություն տվեց ստանալ ավագ դպրոցների գործունեության

վերաբերյալ բազմակողմանի տեղեկություններ, նկարագրել առկա իրավիճակը տարբեր շահագրգիռ կողմերի տեսանկյունից, դուրս բերել պատճառահետևանքային կապեր և մշակել կառուցողական առաջարկություններ:

Հետազոտության ընթացքում համադրվել են տեղեկատվության ստացման քանակյան և որակական մեթոդները: Այդ թվում.

- **Փորձագիտական հարցազրույցներ** ավագ դպրոցների տնօրենների և ուսուցիչների հետ,
- **Ֆոկուս-խմբեր** ավագ դպրոցների աշակերտների հետ,
- **Հարցաթերթիկային հարցազրույցներ** ավագ դպրոցների աշակերտների ծնողների հետ:

Հետազոտության ներկայացուցչականությունն ապահովելու նպատակով ընտրվել են հանրապետությունում գործող 18 ավագ դպրոցներ: Այդ թվում՝ Երևան քաղաքի 5 ավագ դպրոցներ, Գեղարքունիքի մարզի 5 ավագ դպրոցներ, Կոտայքի մարզի 2 ավագ դպրոցներ, Արագածոտնի մարզի 2 ավագ դպրոցներ, Արարատի մարզի 2 ավագ դպրոցներ և Արմավիրի մարզի 2 ավագ դպրոցներ (Տե՛ս **Աղյուսակ 1**):

Աղյուսակ 1. Հետազոտության ընտրանքում ընդգրկված ավագ դպրոցների ցանկը և հարցված ծնողների թիվը

#	Ավագ դպրոցը	Մարզը/ Երևան քաղաքի վարչական շրջանը	Հարցված ծնողների	
			թիվը	%
1	ք. Երևանի թիվ 65	Շենգավիթ	17	4.1
2	ք. Երևանի թիվ 42	Կենտրոն	25	6.1
3	ք. Երևանի թիվ 83	Արաբկիր	19	4.6
4	ք. Երևանի թիվ 190	Մալաթիա-Սեբաստիա	26	6.3
5	ք. Երևանի թիվ 195	Աջափնյակ	25	6.1
6	գ. Չորագյուղի ա/դ	Գեղարքունիք	24	5.9
7	գ. Վարդենիկի կրթահամալիր	Գեղարքունիք	24	5.9
8	ք. Գավառի ա/դ	Գեղարքունիք	22	5.4
9	ք. Սևանի ա/դ	Գեղարքունիք	27	6.6
10	ք. Մարտունու ա/դ	Գեղարքունիք	25	6.1
11	ք. Հրազդանի թիվ 13 ա/դ	Կոտայք	19	4.6
12	ք. Աբովյանի թիվ 4 ա/դ	Կոտայք	19	4.6
13	ք. Աշտարակի թիվ 5 ա/դ	Արագածոտն	21	5.1
14	ք. Ապարանի ա/դ	Արագածոտն	26	6.3
15	ք. Վեդիի թիվ 3 ա/դ	Արարատ	24	5.9
16	ք. Արտաշատի թիվ 4 ա/դ	Արարատ	25	6.1
17	ք. Արմավիրի թիվ 1 ա/դ	Արմավիր	23	5.6
18	ք. Վաղարշապատի թիվ 10 ա/դ	Արմավիր	19	4.6
	Ընդամենը		410	100.0

Նշված 18 դպրոցներում իրականացվել են 2-ական փորձագիտական հարցազրույցներ. մեկը՝ դպրոցի տնօրենի կամ փոխտնօրենի հետ, մեկը՝ տվյալ դպրոցում 10 և ավելի տարիների աշխատանքային փորձ ունեցող ուսուցչի հետ: Ընտրվել են տարբեր առարկաներ դասավանդող ուսուցիչներ (հայոց լեզու, անգլերեն լեզու, մաթեմատիկա, ֆիզիկա,

կենսաբանություն, քիմիա, ինֆորմատիկա, ռազմագիտություն, ֆիզկուլտուրա): **Ընդհանուր առմամբ իրականացվել է 36 փորձագիտական հարցազրույց:**

Յուրաքանչյուր դպրոցում իրականացվել է ֆոկուս-խումբ աշակերտների հետ: Յուրաքանչյուր խմբում ընդգրկվել են 10, 11 և 12-րդ դասարանների 10-12 աշակերտներ տարբեր հոսքային դասարաններից, ինչպես տղաներ, այնպես էլ աղջիկներ: **Ընդհանուր առմամբ իրականացվել է 18 ֆոկուս-խումբ՝ 207** աշակերտների մասնակցությամբ:

Ծնողների հետ հարցաթերթիկային հարցազրույցների համար ընտրված դպրոցներից յուրաքանչյուրում իրականացվել է համաչափ պատահական ընտրանք: Դպրոցական մատյաններից դուրս են գրվել յուրաքանչյուր 5-րդ երեխայի հասցեն և հեռախոսահամարը: Ավագ դպրոցների գործունեության 4 տարիների փորձի դինամիկան դիտարկելու համար ընտրանքում ընգրկվել են նաև ավագ դպրոցների 2013 թվականի շրջանավարտների ծնողներ: Արդյունքում հարցվել են 56 (13.7%) շրջանավարտների ծնողներ, 110 (26.8%) 10-րդ, 128 (31.2%) 11-րդ և 116 (28.3%) 12-րդ դասարանցիների ծնողներ: Ընտրանքում ընդգրկված երեխաներից 165 (40.2%) տղաներ են, 245 (59.8%)՝ աղջիկներ: 76.1% դեպքերում հարցվածը աշակերտի մայրն էր, 10.5%՝ հայրը, 6.1%՝ տատիկը, 5.1%՝ ավագ քույրը կամ եղբայրը, 2.2%՝ ընտանիքի այլ չափահաս անդամներ՝ պապիկ, մորաքույր, հորաքույր, հորեղբոր կին: Հարցվածների 37.8% ունեն բարձրագույն կրթություն, 24.6%՝ միջին մասնագիտական, 37.6%՝ միջնակարգ: Հարցվածների 60.2% չեն աշխատում: **Ընդամենը հարցվել են 410 ծնող:**

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ավագ դպրոցների վերակազմավորման գործընթացը

ՀՀ Կառավարության 2009 թ. հունիսի 11-ի 664-Ն որոշումով հաստատվեց ավագ և հիմնական դպրոցների ցանկը և Հանրապետության 38 դպրոցները վերակազմավորվեցին ավագ դպրոցների:

Ընտրված բոլոր 18 դպրոցները դադարեցրել են առաջին դասարանցիների ընդունելությունը, սակայն որոշ դպրոցներում դեռևս գործում են 5-9 դասարաններ: Բացառություն են կազմում Ձորագյուղի և Արմավիրի ավագ դպրոցները, որոնք ավագ դառնալուն պես՝ բոլոր ցածր դասարանցիներին տեղափոխեցին համայնքի մյուս՝ հիմնական դարձած, դպրոցներ:

Դպրոցների ընտրության չափանիշների և հիմնավորումների վերաբերյալ՝ թե որ դպրոցն է դարձել ավագ, իսկ որը՝ հիմնական, փորձագետները դժվարացան կարծիք հայտնել՝ հղվելով պատկան մարմինների որոշմանը: Դպրոցների ընտրության հարցը չի քննարկվել դպրոցների տնօրենների և անձնակազմի հետ: Կատարված հետազոտությունը թույլ է տալիս առանձնացնել դպրոցների ընտրության հետևյալ մոտեցումները՝

- Ավագ դպրոց են դարձել այն դպրոցները, որտեղ առկա էին ավագ դպրոցի կայացման համար բարենպաստ պայմաններ: Այդ թվում՝ համեմատաբար հարուստ նյութատեխնիկական բազա, ուսուցչական կազմ, համայնքում ձեռք բերված հեղինակություն, հոսքային կրթության փորձ (Օրինակ՝ Երևան քաղաքի # 83 և # 190 դպրոցները, Հրազդանի, Արմավիրի, Վաղարշապատի, Գավառի և Վարդենիկի ավագ դպրոցները):
- Փոքր քաղաքային և գյուղական համայնքներում ավագ դպրոցի ընտրության գործում կարևոր գործոն է հանդիսացել դպրոցի դիրքը և չափը: Ավելի մեծ և հարմարավետ դիրք ունեցող դպրոցները դարձել են հիմնական: Մի կողմից՝ հիմնական դպրոցի աշակերտների թիվն է ավելի մեծ, մյուս կողմից՝ որպեսզի ավելի փոքր տարիքի երեխաները չունենան հիմնական դպրոցի հասանելիության հետ կապված խնդիրներ: Օրինակ՝ Արտաշատ և Վեդի քաղաքների ավագ դպրոցները բնակելի շենքերից հեռու են գտնվում, մեկուսացած են: Իսկ Մարտունիի, Ձորագյուղի ավագ դպրոցները համեմատաբար փոքր են:
- Ավագ են դարձել այն դպրոցները, որոնք մինչ այդ ունեցել են աշակերտաքանակի խնդիր, չեն ունեցել բավարար թվով աշակերտներ՝ չդիմանալով հարևան դպրոցների մրցակցությանը տարբեր պատճառներով (շենքային պայմաններ, ուսուցչական կազմ և այլն): Այս գործոնը հաճախ կարևոր դեր է խաղացել հատկապես Երևան քաղաքում (Օրինակ՝ # 42 և # 65 դպրոցները):

Ավագ դպրոցների հոսքերը և ենթահոսքերը

Ավագ դպրոցի ստեղծման նպատակն է կրթության որակի և արդյունավետության բարձրացումը և արդիականացումը: Ավագ դպրոցը հանդիսանում է «նախամասնագիտական» կրթություն ապահովող հիմնական օղակ, որի գործունեությունից մեծապես կախված է սովորողների մասնագիտական ճիշտ կողմնորոշումը և հետագա ուսումնառության հաջողությունը: Ավագ դպրոցը հանրակրթության վերջին օղակն է և պետք է պատրաստի սովորողներին ինքնուրույն կյանքի ու աշխատանքի շուկա մտնելուն³⁶: Նշված նպատակներին հասնելու հիմնական մեխանիզմը հոսքային/ենթահոսքային դասարաններում ավագ դպրոցների աշակերտների կրթության կազմակերպումն է: Հոսքերը ձևավորվել են բուհերի ընդունելության քննությունների համար անհրաժեշտ առարկաների խմբավորման հիման վրա: Ենթահոսքերը հիմնականում համապատասխանում են պահանջարկ ունեցող բուհական ֆակուլտետներին:

Ավագ դպրոցներում գործում է 2 հիմնական հոսք՝ հումանիտար և բնագիտական: Արհեստագործական հոսք գործում է շատ քիչ դպրոցներում. հետազոտության մեջ ընդգրկված 18 դպրոցներից արհեստագործական հոսք կա միայն 1-ում՝ Մարտունի քաղաքի ավագ դպրոցում: Բնագիտական հոսքը բաժանվում է 3 ենթահոսքերի՝ ֆիզիկամաթեմատիկական, տնտեսագիտական և կենսաքիմիա: Հումանիտար հոսքը բաժանվում է 3 հիմնական ենթահոսքերի՝ պատմական, իրավագիտական և լեզվաբանական: Հարկ է նշել, որ տարբեր դպրոցներում ենթահոսքերը տարբեր կերպ են անվանվում, որոշ դպրոցներում կան համակցված անվանումներ՝ օրինակ պատմաիրավագիտական, լեզվահումանիտար, հասարակագիտական կամ բնագիտամաթեմատիկական:

Որոշ դպրոցներում գործում է նաև ընդհանուր հոսք, որտեղ սովորում են այն երեխաները, որոնք դեռևս չեն կողմնորոշվել ապագա մասնագիտության ընտրության հարցում, նրանք, ով չեն շարունակի կրթությունը բուհում, ցածր առաջադիմություն ունեցող աշակերտները և նրանք, ում ապագա մասնագիտության և նախասիրություններին համապատասխանող հոսք/ենթահոսք չկա: Օրինակ՝ ռազմական, արվեստի և սպորտի ուղղությամբ կրթությունը շարունակել պլանավորող երեխաների համար առաջարկվող հոսքերը բավարար չեն, շատ մարզերում չկան նաև այդ ուղղությամբ կրթական ծրագրեր առաջարկող միջին մասնագիտական կրթական հաստատություններ:


Որոշ դպրոցներ նախնական շրջանում ունեցել են ընդհանուր հոսք, այնուհետև եկել են այն եզրահանգման, որ այն հակասում է ավագ դպրոցի հայեցակարգին. *«էլ ինչ ավագ դպրոց, որ պետք է ընդհանուր հոսք ունենա»*:

Ծնողների հետ կատարված հարցումների համաձայն՝ երեխաների 95.6% սովորում են հոսքային դասարաններում, իսկ 4.4%՝ ոչ հոսքային (կամ ընդհանուր հոսքում): Հարկ է նշել,

³⁶ Ռազմավարական ծրագիր ավագ դպրոցների համակարգի ստեղծման, հավելված 1 ՀՀ կառավարության 2008 թ. որոշման (<http://edu.am/index.php?id=1465&topMenu=-1&menu1=9&menu2=129&arch=0>)

որ տարեցտարի նկատվում է հոսքային դասարաններում սովորող երեխաների թվի աճ (Տե'ս Գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Հոսքային է/էր արդյոք դասարանը.



Աշակերտները գրեթե հավասարաչափ բաշխված են հումանիտար և բնագիտական հոսքերի միջև՝ հումանիտար հոսքի որոշակի առավելությամբ: Ընդ որում՝ աղջիկների մեծ մասը (58.8%) սովորում են հումանիտար հոսքի դասարաններում, իսկ տղաների մեծ մասը (59.1%)՝ բնագիտական (Տե'ս Աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Եթե այո, ապա ո՞ր հոսքն է/էր.

Հոսքը	Տղա	Աղջիկ	Ընդամենը
Հումանիտար	35.7%	58.8%	49.7%
Բնագիտական	59.1%	34.5%	44.1%
Արհեստագործական	0.6%	0.4%	0.5%
Ընդհանուր	3.9%	4.4%	4.4%
Դժվարանում եմ պատասխանել	0.6%	1.7%	1.3%
Ընդամենը	100.0%	100.0%	100.0%

Հարկ է նշել, որ ծնողներից շատերը (30.9%) դժվարացան պատասխանել, թե որ ենթահոսքում է սովորում նրանց երեխան (Տե'ս Աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Իսկ ո՞ր ենթահոսքն է/ր.

Հոսքը	%
Տնտեսագիտական	17.3
Լեզվաբանական	14.1
Ֆիզիկամաթեմատիկական	10.5
Կենսաքիմիա	6.4
Պատմահումանիտար	5.4
Բնագիտամաթեմատիկական	3.8
Պատմաիրավագիտական	3.6
Պատմական	2.8

Իրավագիտական	2.8
Հասարակագիտական	2.0
Ռուսական	0.5
Դժվարանում եմ պատասխանել	30.9
Ընդամենը	100.0

Հարցվածների 86.2% նշեցին, որ դասարանի հոսքային ուղղվածությունը համապատասխանում է երեխայի մասնագիտական հետաքրքրություններին, 10.7% նշեցին, որ չի համապատասխանում, իսկ 3.1% դժվարացան պատասխանել: Այն հարցվողները, որոնք նշել են, որ դասարանի հոսքային ուղղվածությունը չի համապատասխանում երեխայի մասնագիտական հետաքրքրություններին, բերեցին այդ դասարանում երեխայի սովորելու հետևյալ պատճառները՝

- Այլընտրանք չկար,
- Երեխան շարունակելու է կրթությունը սպորտի, արվեստի, պարի, երաժշտության գծով,
- Երեխան հիմնական դպրոցի ընկերների հետ նույն հոսքն է ընտրել,
- Դեռ չէր կողմնորոշվել երեխան, տարբերություն չկար, թե որ հոսք կգնա ատեստատ ստանալու համար,
- Ուղղորդել են:

Ծնողների կողմից բերված պատճառները թույլ են տալիս եզրակացնել, որ ենթահոսքերը չեն ծածկում պահանջված մասնագիտությունների բազմազանությունը: Խոսքը հատկապես սպորտի և արվեստի բնագավառների հետ իրենց մասնագիտական ապագան կապելու ցանկություն ունեցող երեխաների մասին է: Կան նաև դեպքեր, երբ դպրոցում երեխայի նախասիրություններին համապատասխանող հոսքը չի բացվել ցանկացողների ոչ բավարար քանակի պատճառով:

«Օրինակ, իմ դասարանը չի համատատասխանում իմ նախասիրություններին: Ես մաթեմատիկայի հետ սեր չունեմ: Իմ ուղղությունը արվեստն է, բայց դե ատեստատի համար պետք է ավարտեմ» (Աշտարակի ավագ դպրոցի աշակերտ):

«Ես կենսաքիմիա հոսքն էի ընտրել, բայց չբացվեց այս դպրոցում, ինձ ավտոմատ կերպով ուղարկեցին տնտեսագիտական հոսք, իսկ ես ուզում եմ բժիշկ դառնալ» (Շնչենկոյի անվան 42 ավագ դպրոցի աշակերտուհի):

«Ես դիմել էի բնագիտական հոսք, բայց դիմող աշակերտները քիչ էին, և բնագիտական հոսք չբացվեց: Հիմա նստած եմ հումանիտար հոսքում ու սովորում եմ իրենց առարկաները» (Գավառի ավագ դպրոցի աշակերտուհի):

Եղել են նաև դեպքեր, երբ երեխաների սպասելիքները հոսքային դասարաններում չեն արդարացվել: Օրինակ. *«Ավագ դպրոցում պետք է մի հատ էլ օտար լեզու անցնեինք, որը որ չկա, օրինակ ֆրանսերեն» (Երևանի # 65 ավագ դպրոցի աշակերտուհի):*

Ենթահոսքերում խորացված, մեծ ժամաքանակով դասավանդվում են հոսքային առարկաները, որոնցից հետագայում երեխաները հանձնելու են ընդունելության քննություններ: Դրան զուգահեռ երեխաները պետք է սովորեն նաև ուսումնական պլանով

նախատեսված մնացած առարկաները, ինչը ստեղծում է լրացուցիչ ծանրաբեռնվածություն: Մանկավարժների գնահատմամբ՝ շատ երեխաներ չեն հասցնում:

Հետաքրքիր է, որ երեխաների կարծիքներն այս հարցի շուրջ կիսվեցին: Երեխաների մի մասը դժգոհ են, որ ոչ հոսքային առարկաներ լուրջ չեն անցնում, ինչը անհրաժեշտ է ընդհանուր զարգացվածության համար: Մյուսներն, ընդհակառակը, դժգոհ են, որ ստիպված են ժամանակ ծախսել նաև ոչ հոսքային առարկաների վրա՝ ցանկանալով փոխարինել դրանք հոսքայինների և ժամանակն ավելի արդյունավետ օգտագործել առաջիկա ընդունելության քննություններին պատրաստվելու համար:

«Ինձ դուր չի գալիս այս ավագ դպրոցի համակարգը, քանի որ մենք հիմա ստիպված մեր մասնագիտական առարկաներն ավելի խորությամբ ենք սովորում, բայց լավ կլիներ, որ մնացած առարկաներն էլ այդ նույն խորությամբ սովորեինք» (Հրազդանի ավագ դպրոցի աշակերտուհի):

«Մենք արդեն երկու տարի է ֆիզիկա չենք անցնում» (Արմավիրի ավագ դպրոցի աշակերտուհի):

«Մենք երկու տարի է կենսաբանություն չենք անցնում: Ավագ դպրոցը այնքանով է լավ, որ դու կարող ես դառնալ լավ մասնագետ, բայց դու կյանքի մասին պատկերացում չես ունենա: Եթե քո երեխան հիմնական դպրոցում անցնի այս առարկաները, որ դու չես անցել, ուրեմն դու նրան օգնել չես կարող» (Արմավիրի ավագ դպրոցի աշակերտ):

«Բայց առաջ ավելի լավ էր, որ ես հավասար բոլոր առարկաները սովորում էի: Մեր բոլորի մեջ մտել է այն հասկացությունը, որ մեզ մենակ պետք են մեր առարկաները» (Արմավիրի ավագ դպրոցի աշակերտուհի):

«Լավ կլինի, որ ավագ դպրոցում խորացված առարկաների ժամերը ավելի շատ լինեն, անգամ այն դասաժամերի փոխարեն, որ մենք անցնում ենք ոչ մեր մասնագիտականով: Օրինակ, ես հումանիտար հոսքից եմ ու անցնում եմ ֆիզիկա, քիմիա, բայց դրա փոխարեն կարող ենք պատմություն անցնել, հայերեն կամ անգլերեն» (Աշտարակի ավագ դպրոցի աշակերտուհի):

Նշված հակադիր կարծիքները ելնում են ավագ դպրոցի գաղափարի տարբեր ընկալումներից և երեխաների կողմից ակնկալվող տարբեր կրթական արդյունքների նախապատվություններից:

Հոսքային և ոչ հոսքային առարկաների ժամաքանակների տարբերության հետ կապված ևս մեկ խնդիր է առաջանում: Այն վերաբերում է 12-րդ դասարանի ավարտական քննություններին երեխաների պատրաստվածությանը: Բանն այն է, որ ավագ դպրոցում 10-րդ և 11-րդ դասարանների վերջում աշակերտները հանձնում են փոխադրական քննություններ միայն հոսքային առարկաներից, իսկ 12-րդ դասարանի վերջում հանձնում են ավարտական քննություններ ինչպես հոսքային, այնպես էլ ոչ հոսքային առարկաներից, իսկ երեխաները ոչ հոսքային առարկաները խորությամբ չեն անցնում: Այստեղ լուրջ հակասություն է առաջանում:

Չնայած առանձնացված ենթահոսքերին՝ ուսումնասիրված ավագ դպրոցներում չկան լրացուցիչ պրոֆիլավորող առարկաներ: Բացի պետական ծրագրով նախատեսված առարկաներից, այլ առարկաներ չեն դասավանդվում: Դպրոցի տնօրենների կարծիքով, լրացուցիչ առարկաներ ավելացնելու անհրաժեշտություն չի զգացվում, չկա նաև հնարավորություն՝ ժամանակային և ֆինանսական: Մի կողմից, ծրագրով նախատեսված առարկաների ժամաքանակին զուգահեռ դժվար է լրացուցիչ դասաժամեր ավելացնել, մյուս կողմից՝ լրացուցիչ առարկաներ, ֆակուլտատիվներ, խմբակներ կազմակերպելու համար ավագ դպրոցը չունի բավարար ֆինանսավորում:

Ուսումնասիրված դպրոցներից միայն Երևանի # 83 դպրոցում տնտեսագիտական հոսքում անցնում են «տնտեսագիտություն» առարկա, երեխաներին տրամադրվում են տնտեսագիտության դասագրքեր, ուսուցչուհին հատուկ վերապատրաստումներ է անցել:

Ավագ դպրոցում չեն դասավանդվում այնպիսի առարկաներ, ինչպիսիք են գեղագիտությունը, երաժշտությունը և այլն: Այնինչ նման կարիք զգացվում է, նախ, դեռահասների ընդհանուր զարգացման համար, և, բացի այդ, կան երեխաներ, որոնք պատրաստվում են կրթությունը շարունակել արվեստի ուղղությամբ:

Հոսքային կրթությունը պարունակում է նաև այլ ռիսկեր: Օրինակ, Ձորագյուղի ավագ դպրոցում գնալով ավելանում է հումանիտար հոսք գնացող աշակերտների թիվը. 1-ին տարին գործում էին 2 հումանիտար և 2 բնագիտական հոսքեր, իսկ հիմա՝ 3-ը՝ հումանիտար, 1-ը՝ բնագիտամաթեմատիկական: Այդ խնդիրը, հարցված փորձագետների կարծիքով, առաջանում և լուծվում է հիմնական դպրոցի մակարդակում: Եթե հիմնական դպրոցում մաթեմատիկական լավ է դասավանդվում, ապա ավագ դպրոցում շատ են բնագիտական հոսքի դասարանները, եթե լավ են դասավանդվում լեզուները հիմնական դպրոցում՝ ավագ դպրոցում ավելանում են հումանիտար հոսքի աշակերտները: *«Փաստորեն, մենք կախվածություն ունենք հիմնական դպրոցից, թե նրանք ինչ են տալիս, ինչ արդյունք է լինում, ինչ մասնագետներ են այնտեղ դասավանդում, ինչպես են նրանք նախապատրաստում աշակերտներին ավագ դպրոցին: Ու պարզվում է, որ մենք բնագիտականի հիմքը չունենք: Օրինակ այս տարի ես ունեմ կենսաբանական հոսք՝ 10-րդ դասարան, որտեղ 12 աշակերտ եկել են հիմնականից, իսկ մաթեմատիկական հոսք չունեմ: Դե պարզվում է, որ կենսաբանության դրվածքը կամ լեզու գրականության դրվածքը ավելի լավ է, քան մաթեմատիկայինը» (Ձորագյուղի ավագ դպրոցի տնօրեն):* Մի կողմից ստացվում է, որ ավագ դպրոցը կախվածության մեջ է հիմնական դպրոցից, մյուս կողմից ավագ դպրոցը պետք է բավարար ճկունություն ունենա յուրաքանչյուր տարի հարմարվելու աշակերտների պահանջին՝ համապատասխան ենթահոսքերում դասապրոցներ կազմակերպելու և անհրաժեշտ մասնագիտական կադրեր ապահովելու համար:

Հոսքային կրթության հետ կապված՝ երեխաներին անհանգստացնում է նաև այն հանգամանքը, որ նրանց կենսափորձը դեռևս բավարար չէ, որպեսզի նրանք կողմնորոշվեն ենթահոսքի և ապագա մասնագիտության ճիշտ ընտրության հարցում 9-րդ դասարանն ավարտելուն պես: Եվ կարող են ճակատագրական սխալ գործել՝ ընտրելով սխալ ուղղություն, որը հետագայում դժվար կլինի շտկել:

Աշակերտների կողմից ավագ դպրոցի ընտրության չափանիշները

Հետազոտության արդյունքների համաձայն, հիմնական դպրոցի աշակերտները՝ աննշան բացառությամբ, շարունակում են կրթությունը ավագ դպրոցում: Իրավիճակը և ակնկալվող աշակերտների թիվը 10-րդ դասարանում հատկապես կանխատեսելի է փոքր քաղաքային և գյուղական համայնքներում, որտեղ ավագ դպրոցը մեկն է: *«Չեն գալիս այն 2-3 աշակերտները, ովքեր ընտանիքով տեղափոխվում են երկրից, իսկ այն աշակերտները, որոնք մնում են դպրոցում սովորելու, գալիս են ավագ դպրոց» (Ձորագյուղի ավագ դպրոցի տնօրեն):*

Ավագ դպրոցում սովորելու որոշումը հիմնականում ընդունվում է՝ ելնելով երեխայի ցանկությունից (45.8%) կամ դա ծնողների որոշումն է (32.9%): 12.8% դեպքերում երեխան սովորում է ավագ դպրոցում, քանի որ կրթությունը շարունակելու այլընտրանք չկար (Տե՛ս Աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Ինչպե՞ս էք կայացրել ավագ դպրոց երեխային ուղարկելու որոշումը.

Պատասխան	%
Դա երեխայի ցանկությունն էր	45.8
Դա ծնող/ներ/ի որոշումն էր	32.9
Կրթությունը շարունակելու այլընտրանք չկար	12.8
Հիմնական դպրոցն է ուղղորդել	6.8
Մնացել է իր դպրոցում	0.7
Համայնքի ամենալավ դպրոցն է	0.3
Ամբողջ դասարանով են տեղափոխվել, ընկերներն այդ դպրոցում են	0.3
Ստիպված են ուղարկել	0.1
Ֆինանսի առումով	0.1
Ընդամենը	100.0

Իսկ արդեն կոնկրետ ավագ դպրոցի ընտրությունը հիմնականում պայմանավորված է նրանով, որ դա համայնքի միակ ավագ դպրոցն է (37.9%)՝ դարձյալ այլընտրանքի բացակայություն: 26.3% ընտրությունը պայմանավորված է դպրոցի մոտ գտնվելու փաստով, 23.9% ընտրությունը պայմանավորված է նրանով, որ տվյալ ավագ դպրոցն ապահովում է որակյալ կրթություն: Եվ հարցվածների միայն 6.4% նշեցին, որ ընտրությունը պայմանավորված է նրանով, որ դպրոցի ուղղվածությունը համապատասխանում է երեխայի նախասիրություններին/ ապագա մասնագիտությանը: Որոշակի դեր են խաղացել նաև հետևյալ գործոնները՝ ավագ է դարձել այն դպրոցը, որտեղ երեխան սովորել է մինչև 9-րդ դասարանը, ամբողջ դասարանն է տեղափոխվել այս դպրոց, երեխայի ընկերներն են այս դպրոցում սովորում, դպրոցում բարձր է կարգապահությունը, հիմնական դպրոցն է ուղղորդել:

Աղյուսակ 5. Ինչպե՞ս էք ընտրել ավագ դպրոցը:

Պատասխան	%
Մա համայնքի միակ ավագ դպրոցն է	37.9
Մա ամենամոտ ավագ դպրոցն է	26.3
Այս դպրոցը ապահովում է որակյալ կրթություն	23.9
Այս դպրոցի ուղղվածությունը համապատասխանում է երեխայի	6.4

նախասիրություններին/ ապագա մասնագիտությանը	
Իր հիմնական դպրոցն է, 1-9 դաս. այդ դպրոցում է սովորել	2.9
Ամբողջ դասարանով են որոշել տեղափոխվել, ընկերներն այս դասարանում են	1.3
Կարգապահությունը, խստությունը	0.4
Հիմնական դպրոցն է ուղղորդել	1.1
Ընդամենը	100.0

«Դիմեցի այստեղ, որովհետև ավագ դպրոցը պատրաստում է բուհ ընդունվելուն» (Ապարանի ավագ դպրոցի աշակերտուհի):

«Չորրորդ դպրոցում խստությունը շատ չի, այնտեղ են գնում, որ դասերի չնստեն: Իսկ ուլքեր նպատակ ունեն կրթությունը լուրջ շարունակելու, ամեն օր գնում են Երևան, գալիս են: Օրինակ, ես մարդիկ գիտեմ, որ ծնողները նախընտրեցին գումար ծախսեն, բայց իրենց երեխաները գնան Երևանում կրթություն ստանան, չնայած մեր դպրոցի մասնագետները չեն զիջում ոչ մի բանով» (Արմավիրի ավագ դպրոցի աշակերտուհի):

«Բուհ ընդունվելու համար պետք է ավագ դպրոցի աստեսատ ունենանք, դրա համար էլ եկել ենք ավագ դպրոց» (Երևանի # 42 ավագ դպրոցի աշակերտ):

«Որոշումը կայացվեց, երբ պարզ դարձավ, որ կան հիմնական և ավագ դպրոցներ, և որպես այդպիսին, կամա թե ակամա, միակ տարբերակն ինձ համար մնում էր ավագ դպրոցը» (Գավառի ավագ դպրոցի աշակերտուհի):

«Ընտրություն չկար ու քանի որ հենց առաջին դասարանից այստեղ եմ սովորել, մնացի այս դպրոցում, Գավառում ուրիշ ավագ դպրոց չկա (Գավառի ավագ դպրոցի աշակերտուհի):

«Որ չգայինք, ինչ պիտի անեինք, ուրիշ տարբերակ չունեինք, հո քոլեջ չէինք գնալու, դրա համար էլ մնացել է այս տարբերակը» (Աբովյանի ավագ դպրոցի աշակերտ):

«Ծնողների հետ ենք խորհրդակցել ու ուսուցիչների խորհրդով ընդունվել ենք այս «դժոխք» (Աբովյանի ավագ դպրոցի աշակերտ):

Աշակերտների հետ ֆոկուս խմբերի ընթացքում հնչեցին նույն հիմնավորումները, որոշ աշակերտներ նշեցին նաև, որ դպրոցն ընտրել են, քանի որ տվյալ ավագ դպրոցում դասավանդում է իրենց հետաքրքրող առարկաների լավագույն մասնագետները, որոնք միևնույն ժամանակ կրկնուսույց են:

«Ես Բոյուսով պիտի ընդունվեմ, ու Վեդիի ամենալավ անգլերենի մասնագետն այս դպրոցում է դասավանդում, հենց իր համար էլ եկել եմ այս դպրոց» (Վեդիի ավագ դպրոցի աշակերտուհի):

«Որովհետև կրթության մակարդակով այս դպրոցն ավելի բարձր է, քան չորրորդը: Մարզում կա 11 տարակարգ ունեցող ուսուցիչ, և 10-ը մեր դպրոցում են աշխատում» (Արմավիրի ավագ դպրոցի աշակերտուհի):

Ինչ վերաբերում է ավագ դպրոցում կրթությունը քոլեջի կրթության համեմատ գերադասելու հարցին, ապա աշակերտները հնչեցրեցին հետևյալ հիմնավորումները՝

- ավագ դպրոցներն, ի տարբերություն քոլեջների, անվճար են,

- որոշ քոլեջներում ուսուցումն 4-ամյա է՝ մեկ տարի ավել, քան ավագ դպրոցում,
- ավագ դպրոցում կրթության մակարդակն ավելի բարձր է, քան քոլեջում,
- քոլեջում ուսուցանումը որոշակի ուղղությամբ սահմանափակում է հետագայում այլ ուղղվածության մասնագիտության և բուհի ընտրության հնարավորությունները,
- և ամենակարևոր խնդիրն այն է, որ պարզ չէ քոլեջների դիպլոմի կարգավիճակը՝ երեխաները մտավախություն ունեն, որ բուհերը կարող է չընդունեն քոլեջների դիպլոմները, պահանջեն ավագ դպրոցի ատեստատ:

«Որովհետև և ավագ դպրոցում, և քոլեջում նույնն բանն ենք սովորում, ուղղակի տարբերությունն այն է, որ քոլեջում այդ ամենը վճարովի է» (Երևանի # 65 ավագ դպրոցի աշակերտուհի):

«Քոլեջում մեկ տարի ավել պիտի սովորեի ու իրականում մեծ տարբերություն չկա: Նաև կարող է քոլեջի տված դիպլոմը ոչ բոլոր համալսարաններում անցնի, ու կարող է վաղը մյուս օրը մեր ԿԳ նախարարի խելքին փչի, որ քոլեջ ավարտածները չեն կարող համալսարան ընդունվել» (Երևանի # 65 ավագ դպրոցի աշակերտուհի):

«Ավագ դպրոց, որովհետև ուսումնարան կամ քոլեջ բառերն արդեն ինձ համար տհաճ են, իսկ ավագ դպրոց բառն իր մեջ արդեն ավագ է պարունակում, որը նշանակում է ինչ-որ չափով մեծ, սենց գոնե մեզ ավելի մեծ ենք զգում» (Երևանի # 65 ավագ դպրոցի աշակերտուհի):

«Եթե կոնկրետ քոլեջում ես սովորում, որն ունի իր ուղղվածությունը, միայն կարող ես իր համալսարանը ընդունվել, այլևս իրավունք չունես այլ համալսարան դիմելու» (Երևանի # 42 ավագ դպրոցի աշակերտ):

Ինչ վերաբերում է ավագ դպրոցի հեռավորությանը աշակերտի տնից, ապա, աննշան բացառություններով, ավագ դպրոցների աշակերտները բնակվում են ավագ դպրոցի հարևանությամբ: 77.6% դեպքերում դպրոցը մոտ է գտնվում՝ 5-20 րոպե ոտքի ճանապարհ: 12.2% դեպքերում դպրոցը հեռու է, և երեխան օգտվում է տրանսպորտից: 7.3% դեպքերում դպրոցը հեռու է, բայց տրանսպորտի բացակայության պատճառով երեխան ոտքով է գնում դպրոց: 2.9% դեպքերում դպրոցը հեռու է, և երեխային ծնողներն են տանում-բերում դպրոց:

Օրինակ՝ Վեդի և Աշտարակ քաղաքներում քաղաքապետարանը ավագ դպրոցի աշակերտներին ավտոբուս է տրամադրել՝ դպրոցի հասանելիությունն ապահովելու նպատակով:

Ավագ դպրոց ընդունելության ընթացակարգը և հոսքային դասարանների կոմպլեկտավորումը

Ավագ դպրոցներ աշակերտների ընդունելությունը կատարվում է բացառապես ծնողների դիմումների հիման վրա: Բոլոր նրանք, ովքեր ցանկանում են շարունակել կրթությունը, կարող են դիմել և ընդունվել: Իսկ հոսքի ընտրության պարագայում դպրոցի

ադմինիստրացիան փորձում է հաշվի առնել երեխաների փաստացի գիտելիքները՝ առաջնորդվելով հիմնական դպրոցի վկայականներով: Որոշ դպրոցներում նախորդ տարիներին կազմակերպում էին ընդունելության քննություններ, հարցազրույց կամ նախնական թեստավորում, սակայն՝ ստանալով անբավարար արդյունքներ, միևնույնն է, բոլոր երեխաներին ընդունում էին: Այժմ նման պրակտիկա այլևս չի կիրառվում:

Հոսքային դասարանների կոմպլեկտավորումը նույնպես կատարվում է՝ հիմք ընդունելով ծնողների դիմումները: Որոշ դեպքերում հաշվի են առնում երեխայի կարողությունները, ակադեմիական հնարավորությունները. եթե երեխայի առաջադիմությունը տվյալ դասարանի հոսքային առարկաներից շատ ցածր է, ապա մանկավարժները ծնողին խորհուրդ են տալիս, փորձում են ճիշտ կողմնորոշել. *«Որովհետև այդ երեխայի համար դպրոցական տարիները տառապանք կլինեն»*: Բայց եթե ծնողը չի ընդունում խորհուրդը, ապա դպրոցն առաջնորդվում է ծնողի և երեխայի ընտրությամբ՝ ընդունում է ծնողի որոշումը: Այն դեպքերում, երբ այս կամ այն հոսքերի դիմորդները շատ են, դպրոցը ևս մեկ հոսքային դասարան է բացում: *«Օրինակ, մենք հիմա ունենք 3 տնտեսագիտական 10-րդ դասարան» (Երևանի թիվ 190 դպրոցի տնօրեն)*: Նման մոտեցումը ևս խնդիրներ է ստեղծում, յուրաքանչյուր տարի կարող է աշակերտների և ծնողների ցանկությունը փոփոխվել՝ մի տարի ավելի շատ տնտեսագիտական ենթահոսքի դիմորդներ լինեն, իսկ մյուս տարի՝ իրավագիտական:

Հարցված ծնողների 85.1% նշեցին, որ երեխան ավագ դպրոց ընդունվելու համար քննություններ չի հանձնել: Իսկ մնացած 14.9% նշեցին, որ հանձնել է. այս պատասխանը հիմնականում հնչել է Երևան քաղաքում, Արարատի և Արմավիրի մարզերում:

Հետաքրքիր են փորձագիտական հարցազրույցների արդյունքները: Հարցված տնօրենները և մանկավարժները բնեռային տարբեր կարծիքներ հայտնեցին ընդունելության քննությունների անհրաժեշտության վերաբերյալ: Մեծամասնությունն այն կարծիքին է, որ ցանկալի է մշակել ավագ դպրոց ընդունվելու ընթացակարգ՝ հարցազրույցի կամ թեստավորման միջոցով ստուգել երեխաների գիտելիքները, որը հնարավորություն կտար ավագ դպրոց ընդունել միայն այն երեխաներին, որոնք ունեն որոշակի կրթական մակարդակ, գիտելիքներ և ունակություններ: Մանկավարժների կարծիքով, անհրաժեշտ է շեմ որոշել ավագ դպրոց ընդունելության համար, այլապես ավագ դպրոցը չի կարող ապահովել բուհ ընդունվելու համար անհրաժեշտ կրթության բարձր մակարդակ, քանի որ դպրոցում հայտնվում են նաև սովորելու ձգտում չունեցող երեխաներ: *«Ով ուզի, ինչ առաջադիմություն ու վարք ունենա, կարող է մտնել ավագ դպրոց: Մեկը մյուսին խանգարում է: Նույն վիճակն է, ինչպես միջնակարգի ժամանակ»*: Եթե սահմանվի համապատասխան շեմ, ապա, հարցված փորձագետների կարծիքով, ավագ դպրոցում կսովորեին կրթություն ստանալու ձգտում ունեցող երեխաները, ինչը կբարձրացնի կրթության որակը և ավագ դպրոցի արդյունավետությունը՝ ավագ դպրոցները կձառայեն իրենց բուն նպատակին՝ ապահովելով բուհ ընդունելության համար անհրաժեշտ շեմի հաղթահարում: Մակայն, գործող կարգը թույլ չի տալիս նման համակարգ գործառնել, քանի որ դա կնշանակի թերահավատություն հիմնական դպրոցների և նրանց կողմից տրվող կրթության վկայականի

նկատմամբ: Մյուս կողմից, նման գտման արդյունքում զգալիորեն կկրճատվի ավագ դպրոցների աշակերտների թիվը, իսկ դպրոցները ֆինանսավորվում են ըստ աշակերտների թվի, և նման մոտեցումը էապես կկրճատեր դպրոցների բյուջեն և, հետևաբար, դպրոցի հնարավորությունները: Ստացվում է, որ ավագ դպրոցների նպատակը՝ ապահովել որակյալ հոսքային կրթություն բուհ ընդունվելու համար, և գործառնման մեխանիզմները՝ ըստ աշակերտների թվի ֆինանսավորումը, իրար հակասում են:

Հարցված փորձագետների մյուս մասն այն կարծիքին է, որ ավագ դպրոց ընդունելության որևէ ընթացակարգ պետք չէ, որպեսզի ավագ դպրոցում կարողանան սովորել բոլոր ցանկացողները, ինչը կհամապատասխանի կրթության ոլորտի սոցիալական սկզբունքների իրագործմանը՝ հավասարության, արդարության և ներառականության:

Ավագ դպրոցի մեկ դասարանի խտությունը, համաձայն ՀՀ օրենսդրության, կազմում է 20-25 աշակերտ: Հազվադեպ լինում են նաև մեծ դասարաններ՝ 30 աշակերտ: *«Օրինակ ունենք տնտեսագիտական դասարան, աշակերտները 30 են: Բոլորով նստում են ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկաներին, բացի խորացված ուսուցման առարկաներից՝ հայոց լեզու, գրականություն, օտար լեզու և մաթեմատիկայի ժամերին դասարանը կիսվում է: Ուսուցիչը 15 աշակերտի հետ է աշխատում, օրը 3 ժամ մաթեմատիկա է պարապում» (Երևանի # 190 դպրոցի մանկավարժ):* Սակայն դասարանները կիսելու հնարավորություն կա ոչ բոլոր դպրոցներում, մասնավորապես, դասասենյակների ոչ բավարար քանակի պատճառով: Իսկ հարցված մանկավարժների կարծիքով, 20-30 հոգանոց դասարանները ավագ դպրոցում բացասաբար են ազդում կրթության որակի վրա. *«30 հոգուն 40 թոպենների ընթացքում լուրջ գիտելիք հաղորդել չի հաջողվում»:* Հատկապես այն դեպքում, երբ դասարաններում ընդգրկված են նաև սովորելու ցանկություն չունեցող երեխաներ:

«Մեր դասարանում 30 երեխա կա, միայն անզլերենն է կիսվում, այն էլ միանում է մյուս հոսքի անզլերենին, քանի որ գերմաներեն անցնողներ էլ կան» (Մարտունու ավագ դպրոցի աշակերտուհի):

Հոսքից հոսք տեղափոխվելու համար նույնպես անհրաժեշտ է ծնողի դիմումը: Հոսքի/ենթահոսքի ընտրության գործում որոշիչ դեր ունի 10-րդ դասարանը. եթե առաջին կամ երկրորդ կիսամյակում երեխայի առաջադիմությունը լավ է, ապա նա կարող է շարունակել սովորել տվյալ հոսքում/ենթահոսքում: 10-րդ դասարանի վերջում երեխաները փոխադրական քննություններ են հանձնում, որոնք պետք է ծառայեն երեխայի մասնագիտական կողմնորոշման համար. ըստ փոխադրական քննությունների արդյունքների, երեխաները կամ պետք է մնան տվյալ հոսքում, կամ տեղափախվում են այլ՝ երեխայի ունակություններին ավելի համապատասխան հոսք:

Երևանի որոշ դպրոցներում նախորդ տարիներին դասարանները կոմպլեկտավորելիս, որոշում կայացրեցին բաշխել աշակերտներին ըստ առաջադիմության: Բայց այդ պարագայում, տնօրենի կարծիքով, տուժում էին և ցածր առաջադիմություն ունեցող աշակերտները, և բարձր: Ուսուցիչները դժգոհ էին՝ մի դասարանում հրաշալի երեխաներ էին, իսկ մյուսում՝ ոչ: Այլևս նման պրակտիկա չեն կիրառում, երեխաներին բաշխում են պատահականության սկզբունքով՝ պահպանելով աղջիկների և տղաների

համամասնությունը. *«Ավելի լավ է ամեն դասարանում լինի 1-2, թեկուզ 5 թույլ աշակերտ, որ ձգտում ձևավորվի երեխաների մոտ» (Արտաշատի ավագ դպրոցի տնօրեն):*

Կարևոր խնդիր է նաև տղաների և աղջիկների համամասնությունը հոսքային դասարաններում: Մովորաբար դպրոցը փորձում է պահպանել տղաների ու աղջիկների հարաբերակցությունը, սակայն դա միշտ չի հաջողվում՝ դարձյալ այն պատճառով, որ հոսքերը կոմպլեկտավորելիս՝ ավագ դպրոցները հիմք են ընդունում ծնողի դիմումը: Հումանիտար հոսքի լեզվաբանական ենթահոսք տղաները գրեթե չեն գնում: Լինում է, որ լեզվաբանական հոսքում տղա ընդհանրապես չի լինում կամ մեկ-երկու տղա է լինում, և հակառակը՝ ֆիզմաթ հոսքում հիմնականում տղաներ են, աղջիկներն են քիչ: Մի կողմից, դպրոցը չի կարող մերժել դիմումը՝ ելնելով երեխայի սեռից, իսկ մյուս կողմից, դպրոցը լինելով սոցիալականացման կարևոր գործակալ, չի կարող ապահովել ադեկվատ գենդերային սոցիալականացում դեռահաս տարիքի երեխաներին:

Ավագ դպրոցից աշակերտների հեռացման հարցը

Հետազոտության ընտրանքում ընդգրկված 18 դպրոցներից և ոչ մեկում չի առաջացել աշակերտի հեռացման հարց: Նման հարց կարող է առաջանալ միայն աշակերտի կողմից լուրջ օրինախախտում կատարելու դեպքում: Կարգազանց վարքի դեպքում մանկավարժական խորհրդի որոշումով դպրոցը կարող է ծնողի առջև հարց բարձրացնել երեխային այլ դպրոց տեղափոխելու մասին: Դպրոցներ այցելությունների ժամանակ պարզվեց, որ Վարդենիկի ավագ դպրոցի աշակերտները կատարել են նման արարք՝ ծեծի են ենթարկել ուսուցչին, սակայն, ընդհուպ մինչև դատարանի որոշումը, չեն հեռացվել դպրոցից: Երբեմն լինում է, որ առաջադիմության կամ վարքի առումով ծնողին հրավիրում են դպրոց և զգուշացնում՝ եթե նրանք գիտակցում են, ապա երեխային տանում են դպրոցից:

Միևնույն ժամանակ, որոշ մանկավարժներ ցանկություն հայտնեցին որևէ մեխանիզմ ունենալ չսովորող և դասապրոցեսը խանգարող երեխաների հեռացման համար. *«Այ մի հնար լինել, որ այդ չսովորողներն ընդհանրապես չգային դպրոց, ավելի ճիշտ կլիներ, որովհետև նրանք մյուսներին են խանգարում: Մեզ պետք են սովորող և սովորելու ցանկություն ունեցող, ձգտող, կարողություն ունեցող երեխաներ: Ավագ դպրոցը մանկապարտեզ չէ»:* Որոշ փորձագետներ հեռացման համար հիմք համարեցին նաև ուսուցչի հանդեպ անհարգալի վերաբերմունքը, որպեսզի անպատժելիության նախադեպը չդառնա կրկնվելու առիթ:

Հնչեց նաև հակառակ կարծիքը՝ չի կարելի երեխային դպրոցից հեռացնել. բոլորը՝ սկսած դպրոցի տնօրենից մինչև տեխնիկական աշխատողը պետք է կարողանան երեխայի հետ լեզու գտնել, որ չհասնի հարցը հեռացմանը:

Ավագ դպրոցներում կրթության որակը

Ավագ դպրոցների կրթության որակը հարցված ծնողները գնահատեցին բավական բարձր՝ 17.1% գնահատել են գերազանց, 37.8%՝ լավ, 38.8%՝ բավարար, 4.1%՝ վատ, 1%՝ շատ վատ (Տե'ս Աղյուսակ 6): Տվյալ կարգային սանդղակի մեդիանան է հանդիսանում «լավ» պատասխանի տարբերակը:

Աղյուսակ 6. *Ինչպե՞ս կգնահատեիք ավագ դպրոցի կրթության որակը.*

Պատասխան	%
Շատ լավ	17.1
Լավ	37.8
Նորմալ/ Բավարար	38.8
Վատ	4.1
Շատ վատ	1.0
Դժվարանում եմ պատասխանել	1.2
Ընդամենը	100.0

Բավական բարձր են հարցված ծնողները գնահատել նաև ավագ դպրոցների մանկավարժների առարկաների իմացությունը, մանկավարժական հմտությունները և մարդկային որակները (Տե'ս Աղյուսակ 7):

Աղյուսակ 7. *Ընդհանուր առմամբ ինչպե՞ս կգնահատեիք ավագ դպրոցի ուսուցիչներին.*

Պատասխան	Շատ լավ	Լավ	Նորմալ/ Բավարար	Վատ	Շատ վատ	Դժվարանում եմ պատասխանել	Ընդամենը
Առարկայի/ների իմացությունը	30.2%	39.3%	25.6%	0.7%	0.2%	3.9%	100%
Մանկավարժական հմտությունները	29.0%	38.8%	27.8%	1.5%	0.0%	2.9%	100%
Մարդկային որակները	34.4%	39.5%	21.5%	0.7%	0.5%	3.4%	100%

Ավագ դպրոցների աշակերտների հետ ֆոկուս խմբերի ժամանակ աշակերտները նույնպես բարձր գնահատեցին ուսուցիչների աշխատանքը՝ հիմնականում վկայակոչելով այն փաստը, որ դպրոցի տվյալ ուսուցիչները հանդիսանում են համայնքում հայտնի լավագույն կրկնուսույցները. *«Պատմության ու անգլերենի ուսուցիչներ ունենք, հայոց լեզվի, մաթեմատիկայի ուսուցիչներն այնքան լավն են, որ էլ չասած: Նրանց մոտ են գնում պարապելու բուհ ընդունվելու համար, լավագույն մասնագետները հավաքված են այս դպրոցում» (Վեդիի ավագ դպրոցի աշակերտուհի):*

«Այդտեղ այն ուսուցիչներն են աշխատում, որոնց համար արժեք գալ ավագ դպրոց»: (Արտաշատի ավագ դպրոցի աշակերտուհի)

Իսկ բացասական գնահատականները հարցված ծնողները բացատրել են հետևյալ կերպ՝

- ուսուցիչները լավ չեն մատուցում նյութը,
- ուսուցիչները չեն կարող դասարանը կառավարել,

- հոգեբանական հմտություններ չունեն ուսուցիչները,
- ուսուցիչները կողմանապահ են, ծանոթների երեխաներին բարձր են գնահատում, տարբերություն են դնում,
- հարաբերությունները լավը չեն, ուսուցիչները լավ չեն վերաբերվում երեխաներին:

Բնագիտական հոսքի աշակերտները դժգոհ են լաբորատոր պայմանների բացակայությունից. *«Օրինակ՝ ես սովորում եմ բնագիտական ենթահոսքում և շատ կուզեի, որ ունենայինք կենսաբանության, քիմիայի լաբորատորիաներ, որ կարողանայինք փորձեր անել: Բա մեր աչքով չտեսնենք, թե ինչ ենք սովորում: Լաբորատորիաները ուղղակի սենյակներ են, նյութեր չկան» (Աբովյանի, Արտաշատի, Չորագյուղի, Երևանի # 65 դպրոցների աշակերտներ):*

Կրթության որակի ապահովման կարևոր բաղադրիչ է նաև ուսումնական անհրաժեշտ պարագաների առկայությունը: Հարցման արդյունքների համաձայն ավագ դպրոցների աշակերտների միայն 78.8% է միշտ դպրոց տանում պայուսակ, դասագրքեր և տետրեր: Այստեղ ակնհայտ է 10-ից 12-րդ դասարան աշակերտների վարքի փոփոխության միտումը. եթե 10-րդ դասարանցիների 85.5% են դպրոց գնում պայուսակով, դասագրքերով և տետրերով, ապա 12-րդ դասարանում այդ տոկոսը կրճատվում է՝ դառնալով 72.4% (Տե՛ս Աղյուսակ 8): 12-րդ դասարանցիներն արդեն դպրոց են բերում ոչ թե դասագրքեր, այլ շտեմարաններ, քանի որ առաջին կիսամյակում դասագրքի նյութն արդեն ավարտում են: 12-րդ դասարանցիները դպրոցում կատարում են հիմնականում կրկնուսույցների հանձնարարությունները:

Աղյուսակ 8. *Երեխան տանո՞ւմ է/ր արդյոք դպրոց պայուսակ/դասագրքեր/տետրեր:*

Պատասխան	Ավարտել է	10-րդ դասարանցիներ	11-րդ դասարանցիներ	12-րդ դասարանցիներ	Ընդամենը
Այո, միշտ	80.4%	85.5%	78.1%	72.4%	78.8%
Հիմնականում տանում է/ր	7.1%	8.2%	14.1%	17.2%	12.4%
Հիմնականում չի/չէր տանում	5.4%	3.6%	5.5%	3.4%	4.4%
Տանում էր միայն մեկ տետր բոլոր առարկաների համար	5.4%	2.7%	0.8%	6.0%	3.4%
Ընդհանրապես չի/չէր տանում	1.8%	0.0%	1.6%	0.9%	1.0%
Ընդամենը	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%

Այս հարցում էական գենդերային տարբերություն է նկատվում. տղաները դպրոց տանում են պայուսակ, դասագրքեր և տետրեր շատ ավելի հազվադեպ, քան աղջիկները: Համապատասխանաբար 60% և 91.4% (Տե՛ս Աղյուսակ 9):

Աղյուսակ 9. Երեխան տանո՞ւմ է/ը արդյոք դպրոց պայուսակ/դասագրքեր/տետրեր.

Պատասխան	Տղա	Աղջիկ	Ընդամենը
Այո, միշտ	60.0%	91.4%	78.8%
Հիմնականում տանում է/ը	19.4%	7.8%	12.4%
Հիմնականում չի/չէր տանում	9.7%	0.8%	4.4%
Տանում էր միայն մեկ տետր բոլոր առարկաների համար	8.5%	0.0%	3.4%
Ընդհանրապես չի/չէր տանում	2.4%	0.0%	1.0%
Ընդամենը	100.0%	100.0%	100.0%

«Երբեմն կարող է կիսենք դասագրքերը, ու երկու սեղանին մի գիրք լինի, բայց անպայման բերում ենք» (Գավառի ավագ դպրոցի աշակերտուհի):

«Արդեն պայուսակ չենք բերում, արդեն 12-րդ դասարան ենք» (Երևանի # 42 ավագ դպրոցի աշակերտ):

«Պայուսակ չենք բերում, շատ-շատ մի տետր ունենք դա ենք բերում» (Երևանի # 65 ավագ դպրոցի աշակերտ):

«Բերում ենք պայուսակ, տետրեր, բայց գրքերից նրանք ենք բերում, որոնք թեթև են, բարակ են» (Երևանի # 65 ավագ դպրոցի աշակերտուհի):

«Եթե դասատուն ընդամենը պետք է միջանցքում տեսնի, բարևի ու անցնի, էլ չմտնի դասարան, գիրքը բերում ենք՝ ի՞նչ անենք» (Աբովյանի ավագ դպրոցի աշակերտ):

«Դասատուները մտնում են դասարան, տեսնում են, որ բոլորս շտեմարաններով նստած պարապում ենք, մենք խնդրում ենք, որ դաս չանենք, պարապմունքի տեղի հանձնարարությունները հասցնենք, թույլ են տալիս» (Աբովյանի ավագ դպրոցի աշակերտուհի):

«Մենք տոպրակով ենք գալիս, մի երկու բան բերում ենք, բայց հիմնականում պարապմունքիս շտեմարաններն են մեջը» (Արտաշատի ավագ դպրոցի աշակերտ):


Ավագ դպրոցի աշակերտների առաջադիմությունը

Հետաքրքիր է նաև երեխաների առաջադիմության փոփոխության դինամիկան: Համեմատած հիմնական դպրոցի հետ՝ ավագ դպրոցում առաջադիմությունը որոշ չափով ընկնում է (Տե՛ս Աղյուսակ 10 և Գծապատկեր 2):

Աղյուսակ 10. Ինչպիսի՞ առաջադիմություն ունի/եր Ձեր երեխան ավագ դպրոցում և ինչպիսի՞ն էր նրա առաջադիմությունը մինչ այդ հիմնական դպրոցում.

Պատասխան	Հիմնական դպրոցում	Ավագ դպրոցում
Գերազանց	30.0%	21.7%
Լավ	56.8%	56.1%
Բավարար	13.2%	22.2%
Ընդամենը	100.0%	100.0%

Գծապատկեր 2. Ինչպիսի՞ առաջադիմություն ունի/եր Ձեր երեխան ավագ դպրոցում և ինչպիսի՞ն էր նրա առաջադիմությունը մինչ այդ հիմնական դպրոցում:



Ավագ դպրոցում առաջադիմության անկումը պայմանավորված է մի քանի գործոններով: Նախ՝ գնահատման չափանիշները ավագ դպրոցում ավելի խիստ են, քան հիմնական դպրոցում: Փոխվում է նաև երեխաների վերաբերմունքը գնահատականների նկատմամբ: Բացի այդ, երբ երեխաները գալիս են 10-րդ դասարան, մինչև ընտելանում են, հասկանում են ուսուցչի պահանջները, առաջին կիսամյակում, որպես կանոն, առաջադիմությունը ցածր է լինում: Հետո աստիճանաբար երեխաները բացվում են, մանավանդ հոսքային առարկաների մասով, մի քիչ ավելի բարձր առաջադիմություն են ցուցաբերում: Իսկ ոչ հոսքային առարկաներից առաջադիմությունն իջնում է: Աշակերտները նույնպես նշեցին, որ մոռանում են ոչ հոսքային առարկաների նյութը, քանի որ չեն պարապում:

Այստեղ նույնպես երկակի մոտեցում է գործում, որը տարբեր է տարբեր դպրոցներում և տարբեր մանկավարժների մոտ: Մի կողմից հոսքային դասարաններում շեշտը դրվում է հոսքային առարկաների վրա, և երեխաների առաջադիմությունը այս առարկաներից աճում է, իսկ ոչ հոսքային առարկաները և աշակերտները, և ուսուցիչները չեն կարևորում ու երեխաներին ընդառաջելով՝ միջին կամ բարձր գնահատականներ են նշանակում: Իսկ մյուս կողմից, նույն հոսքային առարկաներից առաջադիմության աճի հետ մեկ տեղ, ոչ հոսքային առարկաներից աշակերտները շատ ցածր են գնահատվում:

Հետազոտության ընթացքում նկատվեց հետևյալ միտումը. ավագ դպրոցների տնօրեններն ու մանկավարժները դժգոհում են հիմնական դպրոցների կրթության որակից. *«Երբ երեխաները գալիս են ավագ դպրոց, ստուգում ենք նրանց գիտելիքների մակարդակը, տալիս ենք 9-րդ դասարանի միջին մակարդակի աշխատանք: Իհարկե, շատ տխուր է վիճակը, գաղտնիք չէ, որ որոշ հիմնական դպրոցներում, եթե երեխան գնում-գալիս է դպրոց, ասում են «այբեա» ու գնահատում, իսկ որ բերանը բացում է՝ ասում են կարելի է ավելի բարձր դնել՝ մի բան ասեց»:* (Երևան քաղաքի # 83 դպրոցի տնօրեն)

Հարցված ծնողների 95.8% համարում են, որ նրանց երեխան արդար է գնահատվում ավագ դպրոցում, 3.2% համարում են, որ երեխայի գնահատականները ցածրացնում են, իսկ 1.0%՝ որ բարձրացնում են: Այն ծնողները, որոնք նշեցին, որ երեխայի գնահատականները չեն համապատասխանում գիտելիքներին, հետևյալ կերպ բացատրեցին իրենց պատասխանները.

- Ուսուցիչները կողմնապահություն են անում, «ծանոթներին» են բարձր գնահատականներ նշանակում,
- Ուսուցչական կազմի խորամանկություն. ցածր են գնահատում, որ երեխան նրանց մոտ պարապի,
- Բարձր գնահատելու համար պահանջում են կաշառք,
- Երեխային ցածր են գնահատում, քանի որ նա ուղղում է դասատուի սխալները,
- Հումանիտար հոսքի աշակերտներին բնագիտական առարկաներից ցածր են գնահատում,
- Նոր ուսուցիչները չեն ճանաչում երեխայի իրական հնարավորությունները:

Ինչպես երևում է՝ ծնողները հիմնականում կոռուպցիոն ռիսկերի առկայության մտավախություններ ունեն: Սակայն, անարդար գնահատվելու ավագ դպրոցին հատուկ գործոններ էլ նշվեցին. այն, որ ուսուցիչները դեռևս չեն ճանաչում երեխայի իրական կարողությունները և այն, որ հոսքային դասարաններում ոչ հոսքային առարկաներից երեխաները ցածր են գնահատվում:

Հետազոտության ընթացքում նկատվեց ևս մեկ միտում. կրկնուսույցների մոտ պարապմունքներով պայմանավորված՝ երեխաներն ավելի քիչ ժամանակ են տրամադրում դպրոցական հանձնարարությունների պատրաստմանը, և առաջադիմությունն իջնում է:

Իսկ այն ծնողները, որոնք համարեցին, որ նրանց երեխաների գնահատականները բարձրացնում են, բացատրեցին, որ մանկավարժները համակրում են երեխային, փորձում են ոգևորել:

Սակայն, աշակերտների հետ ֆոկուս խմբերի ժամանակ պարզ դարձավ, որ գնահատման տրամաբանությունը տարբերվում է դպրոցից դպրոց: Որոշ դպրոցներում ուսուցիչները խուսափում են անբավարար գնահատականներ նշանակելուց: Իսկ «10» գնահատականը երբևէ չի նշանակվում, թեև գնահատման համակարգը 10-բալային է, ինչը երեխաների մոտ վրդովմունք է առաջացնում և կարող է լուրջ հոգեբանական բարդությունների զարգացման հիմք դառնալ:

«Նույնիսկ տնային աշխատանքը չգրելու համար երբեք չեն գնահատում, աշակերտը երբեք 2 չի ստանում» (Հրազդանի ավագ դպրոցի աշակերտուհի):


«Ոչ, չենք հասկանում, թե ինչի համար ենք գնահատվում, արդեն օրագիր չկա, բան չկա, որ ընթացքին հետևես, հասկանաս ինչ է կատարվում, ինչի համար են քեզ գնահատում: Գիտելիքի համար պիտի գնահատեն, բայց հիմնականում վարքի համար են գնահատում: Եթե ասեն այս սխալի դեպքում, այսքան է իջնում, մենք կհասկանանք» (Երևանի # 65 ավագ դպրոցի աշակերտ):

«Դե 10-րդ դասարանում արդեն այդքան էլ կարևոր չի գնահատականը, առաջ ավելի լուրջ էինք մոտենում այդ ամենին, բայց հիմա ինչ ուզում են, թող դնեն» (Աբովյանի ավագ դպրոցի աշակերտ):

«Այստեղ մեզ գնահատում են մեր գիտելիքների դիմաց, բայց ինչքան էլ լավ սովորես 10 ոչ մեկիս չեն դնում, օրինակ էս վերջերս գրավոր գրեցինք ու 0,5 միավոր հանել էին, ասեցի ո՞ւր է իմ միավորը, ի՞նչը ճիշտ չեմ գրել, փնտրեց-փնտրեց չգտավ, ասեց՝ դե ոնց 10-ը դնեի, չի լինի ախր» (Արտաշատի ավագ դպրոցի աշակերտուհի):

Ինչ վերաբերում է դասապատրաստումներին, ապա ծնողների 2.4% նշեցին, որ երեխան ընդհանրապես չի պարապում: Միջինում ավագ դպրոցի աշակերտները օրական դասապատրաստմանը տրամադրում են 150 րոպե՝ 2 ժամ 30 րոպե: Ընդ որում, 10-րդ դասարանցիները միջինում դասապատրաստմանը տրամադրում են 2 ժամ 11 րոպե, 11-րդ դասարանցիները՝ 2 ժամ 20 րոպե, իսկ 12-րդ դասարանցիները՝ 2 ժամ 41 րոպե (Տե՛ս **Գծապատկեր 3**): Ավագ դպրոցի աշակերտների 26.7% դասապատրաստման վրա ծախսում են 10 րոպեից – 1 ժամ, 29.7%՝ 1-ից 2 ժամ, 20%՝ 2-3 ժամ, 10.5%՝ 3-4 ժամ, 7.7%՝ 4-5 ժամ և 5.4%՝ 5 ժամից ավելի: Հարկ է նշել սակայն, որ ծնողները չեն կարողացել տարբերակել դպրոցական և կրկնուսույցի հանձնարարությունների վրա երեխաների կողմից ծախսվող ժամանակը, և նշված ժամաքանակները վերաբերում են ինչպես դպրոցական հանձնարարությունների կատարմանը, այնպես էլ մասնավոր պարապմունքների, որոնք ավելի շատ ժամանակ են պահանջում:

Գծապատկեր 3. *Օրական որքա՞ն ժամանակ է/ր երեխան տրամադրում դասապատրաստմանը.*



Ավագ դպրոցների շենքային և գույքային պայմանները

Գնահատելով դպրոցի շենքային և գույքային պայմանները՝ ծնողները հիմնականում ընտրել են «բավարար» պատասխանի տարբերակը, համապատասխանաբար՝ 42.0% և 42.2% (Տե՛ս Աղյուսակ 11.):

Աղյուսակ 11. Ինչպե՞ս կգնահատեիք ավագ դպրոցի.

Պատասխան	Շատ լավ	Լավ	Նորմալ/ Բավարար	Վատ	Շատ վատ	Դժվարանում եմ պատասխանել	Ընդամենը
Շենքային պայմանները	14.1%	17.6%	42.0%	13.9%	9.8%	2.7%	100%
Գույքային պայմանները	9.3%	23.9%	42.2%	15.9%	5.4%	3.4%	100%

Քանի որ ուսումնասիրված ավագ դպրոցներից բոլորը, բացի Ապարանի ավագ դպրոցից³⁷, կառուցվել են դեռևս խորհրդային ժամանակ, շատերը հիմնանորոգման կարիք ունեն: Հիմնականում վատ վիճակում են սան. հանգույցները, մարզադահլիճները, պատուհանները, մանրահատակը և այլն: Որոշ դպրոցներում պայմաններն անհավասար են. դասարանների մի մասը վերանորոգված է, մյուսը՝ ոչ: Որոշ դպրոցներում սպորտդահլիճի վիճակն այնքան վատ է, որ երեխաները կամ չեն պարապում ֆիզկուլտուրա, կամ չեն փոխում հագուստը, և աշակերտական հագուստով են մարզանք անում, քանի որ չկան հանդերձարաններ կամ դրանք չունեն դռներ:

Պետական բյուջեից դպրոցներին հատկացվող գումարները բավարար չեն այդ աշխատանքները կատարելու համար: Վերանորոգման հարցը լուծելու համար դպրոցների տնօրենները դիմում են ոչ միայն ԿԳՆ, այլև՝ տարբեր դոնոր կազմակերպությունների:

Փորձագետների կարծիքով, ավագ դպրոցի շենքային պայմանները շատ կարևոր են, քանի որ ստեղծում են աշակերտների մոտ առաջին տպավորությունը և հետևաբար ձևավորում են ավագ դպրոցի հանդեպ վերաբերմունքը: Եթե երեխաները մտնում են աղքատիկ շենքային պայմաններ ունեցող դպրոց, միանգամից հիասթափվում են: Այնպես որ, շենքային պայմաններն ավագ դպրոցի հեղինակության համար կարևոր նշանակություն ունեն:

Օրինակ, Արտաշատի ավագ դպրոցի շենքային պայմանները բավարար չեն. դասասենյակները քիչ են, դասարանները կիսելու հնարավորություն չկա, այդ իսկ պատճառով չկա դասասենյակների օգտագործման հստակ գրաֆիկ՝ եթե մի դասարան գնում է ֆիզկուլտուրայի կամ մի այլ տեղ, մյուսն ուղարկում են այդ ազատ դասարան: Որոշ դպրոցներին հատկացվել է քիմիայի և ֆիզիկայի լաբորատորիաների համար գույք, սակայն դպրոցները չունեն պայմաններ դրանք օգտագործելու համար՝ կոյուղի, դասասենյակ, որ կարողանան հատկացնել ֆիզիկայի կամ քիմիայի լաբորատորիայի համար:

Օրվա ընթացքում երեխաները դպրոցում են անցկացնում շուրջ 6-7 ժամ, սակայն որոշ դպրոցներում չկա բուֆետ, երեխաները ստիպված են դրսում սնվել (օրինակ, Ապարանի, Մարտունիի ավագ դպրոցներում):

³⁷ Ապարանի ավագ դպրոցը կառուցվել է 2004 թվականին ՀՀ պետական բյուջեի միջոցներով:

Այցելած 18 ավագ դպրոցներից շենքային պայմանները կարելի է բավարար և լավ գնահատել Երևանի # 195, Արմավիրի, Գավառի, Հրազդանի, Ապարանի, Ձորագյուղի, Վարդենիկի դպրոցները:

Ավագ դպրոցների գույքային խնդիրները նույնպես շատ են: Շատ դպրոցներում գույքը հին է, կա սեղանների, աթոռների, նստարանների, գրատախտակների վերանորոգման կարիք:

Հետաքրքիր է, որ համակարգիչներով հագեցվածության խնդիրը ավագ դպրոցներում լուծված է: Օրինակ, Ձորագյուղի ավագ դպրոցում 2 համակարգչային սրահ է գործում, մեկում 20 նոութբուքեր են և էլեկտրոնային գրատախտակ, մյուսում՝ ստացիոնար համակարգիչներ: Որոշ դպրոցներում կան մի քանի (2-3) էլեկտրոնային գրատախտակներ: Օրինակ, Երևան քաղաքի # 190 դպրոցում կա 2 էլեկտրոնային գրատախտակ 560 աշակերտի համար:

Կենսաբանության, քիմիայի և ֆիզիկայի լաբորատորիաները լիարժեք չեն գործառնում դպրոցներում: Որոշ դպրոցներում չկա անգամ սենյակ, որտեղ կարելի է տեղավորել համապատասխան սարքավորումները և նյութերը: Որոշ դպրոցներում կան լաբորատորիաների համար հատկացված սենյակներ, բայց չկան սարքավորումներ և նյութեր: Որոշ դպրոցների տնօրեններ նշեցին, որ ապահովված են ամեն ինչով, սակայն աշակերտների պնդմամբ դրանք չեն օգտագործվում:

«Հանդիսությունների դահլիճ էլ ունենք, բայց առաջին դասարանից այստեղ եմ սովորում ու դեռ չեմ տեսել, հեսա ավարտում եմ» (Աբովյանի ավագ դպրոցի աշակերտ):

«Մենք ունենք մեկ սպորտդահլիճ, այն էլ վատ վիճակում, հատակը պոկված է, ու ունենք 2 ֆիզկուլտուրայի ուսուցիչ, ու ստիպված 2-3 դասարանով միշտ միասին ենք անում» (Արտաշատի ավագ դպրոցի աշակերտուհի):

«Մենք հանդերձարաններ չունենք, ու չենք էլ փոխվում ֆիզկուլտի համար» (Արտաշատի ավագ դպրոցի աշակերտուհի):

«Գոնե մի երեք հատ պատճենող սարք թող տան ուսուցիչներին: Օրինակ ես ինձ շատ վատ եմ զգում, որ թեստերն ուսուցիչներն են պատճենում, բերում: Որոշ ուսուցիչներ դնում են այնտեղ, ասում են գնացեք վճարեք, վերցրեք, գրեք, որոշ ուսուցիչներ էլ ամոթից չեն ասում, իրանք են մուծում» (Արմավիրի ավագ դպրոցի աշակերտուհի):

Ավագ դպրոցների ապահովվածությունը դասագրքերով

Ավագ դպրոցում դասագրքերը տրամադրվում են աշակերտներին վարձակալությամբ, անապահով ընտանիքների երեխաների համար դպրոցը զեղչեր է անում: Ավագ դպրոցի ծնողը տարեկան կտրվածքով շուրջ 8000 դրամ ծախսում է դասագրքերի վարձակալության համար, և մոտ նույնքան՝ 7600 դրամ, դասագրքերի գնման և պատճենման:

Աղյուսակ 11. Ղարոցի հետ կապված ի նշ ծախսեր եք անում:

	Տարեկան միջին ծախսը /ՀՀԴ/
Դասագրքերի վարձակալություն	8000
Դասագրքերի գնում և պատճենում	7600
Գրենական պիտույքներ	16600
Ֆոնդի գումար	2000
Միջոցառումներ (ղարոցական և արտաղարոցական)	12400
Դասարանի մաքրում	2700
Նվերներ ուսուցիչներին	4000
Այլ ծախսեր	1700
Ընդամենը	55000

Ծնողների 94.6% նշեցին, որ ղարոցը տրամադրել է երեխային բոլոր անհրաժեշտ դասագրքերը: Որոշ ղարոցներում դասագրքերի քանակը բավարար չէ, սակայն ղարոցներն աստիճանաբար ձեռք են բերում պակասող դասագրքերը (Օրինակ՝ Արտաշատի ավագ ղարոցում): Սակայն աշակերտներից շատերը նշեցին դասագրքերի պակասի մասին: Երբեմն ղարոցներում առաջանում է անհամաչափություն տարբեր հոսքերի դասագրքերի միջև, և հումանիտար հոսքի աշակերտներին տրամադրվում են բնագիտական հոսքի դասագրքեր:

Դասագրքերի տարբերությունն ըստ հոսքերի խառնաշփոթ է ստեղծում նաև քննությունների ժամանակ. երեխաներն ամբողջ տարի սովորում են հումանիտար հոսքի դասագրքով, իսկ քննության համար պետք է պատրաստվեն բնագիտական կամ ընդհանուր հոսքի դասագրքով. *«Մենք հասարակագիտական հոսքում ենք, պատմության դասագրքերը հումանիտարին են: Բայց հիմա քննություն տալու համար մեր դասագրքերը պիտի դնենք մի կողմ ու սովորենք բնագիտական հոսքինը, որ ընդունելության պատրաստվենք» (Արմավիրի ավագ ղարոցի աշակերտուհի):*

«Դասագրքերը քիչ են, համարյա չունենք, այսինքն մենք ենք առնում, չեն տալիս, օրինակ ես հումանիտար հոսքից եմ հայոց լեզվի, գրականության ու անգլերենի գրքեր չկան» (Աբովյանի ավագ ղարոցի աշակերտուհի):

«Ես դժգոհ եմ, հումանիտար հոսքում հայոց լեզուն խորացված ենք անցնում, ու դասարանում 5-6 հոգի գիրք ունեն, իսկ մնացածը կամ պետք է գնեն, կամ էլ ամբողջ տարին պետք է պատճենահանեն» (Արտաշատի ավագ ղարոցի աշակերտուհի):

«Մենք հումանիտար հոսքից ենք, մեր հայոց լեզվի և գրականության գրքերը պակասում են» (Մարտունու ավագ ղարոցի աշակերտուհի):

«Մեր բնագիտական հոսքի դասագրքերը չեն համապատասխանում մեր հոսքին, հումանիտարի գրքերն են, ու քննությունների նյութերը չեն համապատասխանում դասագրքերին» (Մարտունու ավագ ղարոցի աշակերտ):

«Ես հումանիտար հոսքից եմ, բայց հայոց լեզվի դասագրքերի կեսը մեր դասարանում հումանիտար հոսքի է, կեսը՝ բնագիտական: Բոլորին չի հասել: Մյուսները բնագիտականով են սովորում, դասարանում հումանիտարով քննարկում ենք» (Մարտունու ավագ ղարոցի աշակերտուհի):

Իսկ մանկավարժները դժգոհեցին դասագրքերի որակից: Հիմնական դժգոհությունը վերաբերում է նրան, որ դասագրքերում քիչ է քրեստոմատիկ նյութը, քիչ են վարժությունները, դասագրքերը պարունակում են տեսական նյութ, իսկ գործնական նյութը բավարար չէ, որպեսզի դյուրինացնի ընկալումը: Մա սահմանափակում է աշակերտի կողմից նյութն ինքնուրույն յուրացնելու հնարավորությունները: Այնինչ աշակերտը դպրոցում պետք է ուսուցչի հետ աշխատի դասագրքով, իսկ տանը դասագրքից սովորի, ամրապնդի դպրոցում ստացածը, որ դա դառնա գիտելիք: Մանկավարժների կարծիքով, եթե աշակերտը բացակայի շուրջ տաս օր և ինքնուրույն փորձի հասցնել բաց թողնվածը, նա չի կարողանա: Հոսքային դասարաններում ոչ բավարար դասագրքային նյութը մանկավարժները լրացնում են դասախոսություններով:

Հետազոտության ընթացքում շատ քննադատություն հնչեց հայոց լեզվի, գրականության, ֆիզիկայի, քիմիայի դասագրքերի վերաբերյալ: Մանկավարժները ցանկություն հայտնեցին, որ դասագրքերը վերանայվեն և լրամշակվեն, իսկ այդ գործընթացում դասագիրք մշակողները համագործակցեն և քննարկեն այն դպրոցի մանկավարժների հետ:

Շատ դպրոցներում 12-րդ դասարանի ուսուցիչները հիմնականում աշխատում են շտեմարաններով: 12-րդ դասարանի աշակերտները ցանկություն հայտնեցին, որ 2-րդ կիսամյակում, երբ ծրագրով նախատեսված է կրկնություն, նրանց տրամադրեն շտեմարաններ, որպեսզի նրանք չգնեն:

Դասագրքերին զուգահեռ, հարկ է վերանայել նաև ընթացիկ գնահատման, գործնական առաջադրանքների, թեմատիկ գրավոր աշխատանքների, կիսամյակային թեստերի տեսքերի բովանդակությունը:

Ավագ դպրոցի առարկայական ծրագրերը

Առարկայական ծրագրերի և դասագրքերի վերանայման անհրաժեշտության մասին խոսեցին բոլոր մանկավարժները: Եվ առանցքային խնդիրն այն է, որ ծրագրերի և շտեմարանների միջև շատ են տարբերությունները. հնարավոր չէ դպրոցական դասագրքերով լիարժեք պատրաստվել բուհական ընդունելության քննություններին:

Մանկավարժների կարծիքով, 12-րդ դասարանի առարկայական ծրագրերում կան կարևոր թեմաներ, սակայն մեկ տարի տրամադրել այդ թեմաների ուսումնասիրությանն անհիմաստ է, քանի որ ընդունելության քննություններն ավելի շատ նյութ են պարունակում նախորդ դասարանների ծրագրից: Դպրոցը դարձավ 12-ամյա՝ ունենալով ծրագրերի բեռնաթափման ու երեխաների ծանրաբեռնվածության թեթևացման նպատակ: 10-11-րդ դասարանների նյութը պետք է տարածվեր երեք տարվա: Այնինչ հակառակը տեղի ունեցավ: Հետազոտության ընթացքում ինֆորմացիայի բոլոր աղբյուրներից և բոլոր մեթոդներով ստացված տեղեկատվությունը վկայում է այն մասին, որ 12-րդ դասարանում ավագ դպրոցի դերը հստակ չէ ոչ աշակերտների, ոչ ուսուցիչների համար: Աշակերտները դպրոցում

կատարում են կրկնուսույցի հանձնարարությունները, իսկ ուսուցիչներն իրենց այդ հարցում երբեմն ընդառաջում են, իսկ երբեմն ոչ. «Օրինակ ես հումանիտար հոսքից եմ ու կարող է մաթեմատիկայի ժամին պատմություն անել, որն ինձ ավելի է պետք: Դասատուն տեսնում է, գիրքը, տետրը վերցնում-ձղում է» (Երևանի # 42 ավագ դպրոցի աշակերտ)

«10-րդ դասարանում դեռ ինչ-որ տեղ սովորում ենք, բայց 11-ում ու 12-ում արդեն դպրոցի դասերն այնքան էլ չենք սովորում, պարապմունքներ ենք անում դրա ժամանակ» (Աբովյանի ավագ դպրոցի աշակերտ):

Կա նաև տարբեր բարդության թեմաների համար տրամադրվող ժամաքանակի անհամաչափության խնդիր: Թեմաներ կան, որ ընդհանրապես կարելի է 1-2 ժամում անցնել, բայց 10-12 ժամ է տրված, և ընդհակառակը՝ բարդ թեմաները, որ երեխաները դժվարությամբ են յուրացնում, տեղավորել են 1-2 ժամվա մեջ: «Դերբայական դարձվածի կետադրությունը 3-4 ժամով արտուրդ է, այդ թեման լավ յուրացնելու համար մեկ ամիս է պետք: Չնարանությունը և շարահյուսությունը ծանր թեմաներ են, ամեն մեկը ավագ դպրոցում մեկական տարի պիտի ուսուցանվի: Փորձը ցույց է տալիս, որ ժամաքանակի, թեմաների ծավալի ու քննությանը նախապատրաստելու համար անհրաժեշտ նյութի միջև համապատասխանություն չկա» (Երևան # 83 դպրոցի մանկավարժ):

Կարգապահության պահպանումը ավագ դպրոցում

Ավագ դպրոցում կարգուկանոնի պահպանությունը ծնողները գնահատեցին «լավ»: «Վատ» և «շատ վատ» պատասխանները հնչել են համապատասխանաբար 5.9% և 2.2% դեպքերում (Տե՛ս Աղյուսակ 12):

Աղյուսակ 12. Ինչպե՞ս կգնահատեիք ավագ դպրոցի կարգուկանոնը/ դիսցիպլինան.

Պատասխան	%
Շատ լավ	20.2
Լավ	33.7
Նորմալ/ Բավարար	36.8
Վատ	5.9
Շատ վատ	2.2
Դժվարանում եմ պատասխանել	1.2
Ընդամենը	100.0

Երևան քաղաքի որոշ դպրոցներում մշակել են կանոնագրքեր, որոնց հետ ծանոթացնում են նոր ընդունված աշակերտներին, կանոններն ամրագրվում են նաև երեխայի հետ կնքվող պայմանագրում: Աշակերտներին զգուշացնում են, որ այդ կանոնների խախտման դեպքում նրանք կհեռացվեն դպրոցից:

Ավագ դպրոցում կարգուկանոնի պահպանումը կարևոր խնդիր է: Երբ 10-րդ դասարան է ձևավորվում, գալիս են երեխաներ տարբեր դպրոցներից, դասարաններից: Նրանք ունեն կայացման խնդիր, սկզբում խմբավորումներ են առաջանում: Այս տարիքի երեխաների հետ աշխատելը հատկապես բարդ է, որովհետև նրանք անցումային տարիքում են, տարբեր

բարդույթներ ունեն: Հատկապես ռիսկային են աշնանային ամիսները, երբ նոր 10-րդ դասարաններ են կազմավորվում: Ավագ դպրոցների մանկավարժները, փոխտնօրենները, ուստիկանության աշխատակիցները լուծում են ծառայած խնդիրները: Եվ այս գործում դպրոցը կարիք ունի օգնականների՝ ոչ միայն ուստիկանի, այլև հոգեբանի:

«Օրինակ հիմնական դպրոցում դռները միշտ բաց էր, իսկ սովորելու առումով շատ խիստ էր, մենք էլ նստում էինք դասի ու սովորում, իսկ այստեղ հակառակն է, փոխարենը ուսմանը ավելի շատ ուշադրություն դարձվի, դռներն են ամուր փակում: Գորիսի բերդից ավելի հեշտ է դուրս գալն ու փախչելը, քան այս դպրոցից» (Երևանի # 42 ավագ դպրոցի աշակերտ):

«Կարգուկանոնի առումով, ինչպես նաև դպրոցի խստության առումով հիմնական դպրոցն ավելի խիստ էր: Օրինակ երբեմն դպրոցի դռները ժամը 9:00-ից հետո փակում էին ու եթե ուշանում էինք, դրսում էինք մնում ու չէինք կարողանում առաջին ժամին գնալ, բայց այստեղ այդպես չէ» (Ձորագյուղի ավագ դպրոցի աշակերտ):

Շատ ավագ դպրոցներում «Ուստիկանական տեսուչ» ծրագրի շրջանակներում աշխատում են ուստիկաններ՝ օգնելու կարգ ու կանոնի ապահովման առումով, երեխաներին ավելորդ խնդիրներից զերծ պահելու համար: Ուստիկանները կազմակերպում են զրույցներ երեխաների հետ, հսկում են վարքը, պահպանում են կարգուկանոնը, վերահսկում են, որ միջանցքում դասի ժամին երեխաներ չլինեն, չփախչեն դասերից: Այն դպրոցներում, որտեղ ուստիկան չկա, ուստիկանության աշխատակիցները այցելում են շաբաթական մի քանի անգամ (օրինակ՝ Ձորագյուղի, Մարտունիի, Վեդիի ավագ դպրոցներում): 12-րդ դասարանցիների ծնողների հետ ուստիկանության աշխատակիցները հատուկ հանդիպումներ են կազմակերպում վերջին զանգի նախօրեին, որպեսզի կանխարգելեն տարբեր անցանկալի իրավիճակները:

Այլ օգնող մասնագետներ դպրոցում չկան: Միայն որոշ դպրոցներում կան սոցիալական մանկավարժներ: Տնօրենների և աշակերտների կարծիքով ավագ դպրոցում կա նաև հոգեբանի կարիք, ով կաշխատի և՛ երեխաների, և՛ ծնողների, և՛ ուսուցիչների հետ:

Կարգապահության պահպանման ևս մեկ ազդեցիկ միջոց է տեսախցիկների տեղադրումը, տնօրենը և փոխտնօրենը կարող են վերահսկել ամբողջ դպրոցը (օրինակ՝ Երևանի # 195 ավագ դպրոցում): Սակայն սա թանկարժեք միջոց է, և ոչ բոլոր դպրոցներն են ի վիճակի այն ձեռնարկել:

Ավագ դպրոցում կարևորվում է ծխելու դեմ պայքարը, քանի որ հենց այս տարիքն է ռիսկային՝ տղաները սկսում են ծխել:

Ավագ դպրոցում բացակայությունները կանխարգելվում են՝ որոշակի պահանջներ դնելով: Աշակերտները գիտեն, որ եթե բացակայեն, գրավորները չեն հասցնի, գնահատականը կիջնի, իսկ 120 ժամ բացակայությունների դեպքում վերաքննություն պետք է հանձնեն: Բացակայությունները կանխարգելելու համար ավագ դպրոցները ակտիվ աշխատում են ծնողների հետ՝ պահանջում են բացատրագրեր յուրաքանչյուր ուշացման ու


բացակայության համար: Երբեմն ծնողները հեռախոսազանգով զգուշացնում են դասղեկին երեխայի ուշացման կամ բացակայության պատճառի մասին:

Ծնողների պատասխանները վկայում են այն մասին, որ բացակայությունների քանակը աճում է դասարանից-դասարան: Եթե «ընդհանրապես չի բացակայում» պատասխանի տարբերակը 10-րդ դասարանցիների ծնողների կողմից նշվել է 23.6% դեպքերում, ապա 12-րդ դասարանցիների ծնողների կողմից այն նշվել է արդեն 14.7% դեպքերում: Եվ համապատասխանաբար՝ եթե ամսական մեկ-երկու օր բացակայում են 10-րդ դասարանցիների 18.2%, ապա 12-րդ դասարանցիների՝ 33.6% (Տե՛ս **Աղյուսակ 13** և **Գծապատկեր 4**): Նույնն են վկայում նաև վերջին մեկ ամսում աշակերտների բացակայությունների վերաբերյալ տվյալները: Վերջին մեկ ամսվա ընթացքում 10-րդ դասարանցիները միջինում բացակայել են 1.3 օր, 11-րդ դասարանցիները՝ 1.8, իսկ 12-րդ դասարանցիները՝ 2.7 (Տե՛ս **Գծապատկեր 5**):


Աղյուսակ 13. Որքա՞ն հաճախ է Ձեր երեխան բացակայում դպրոցից.

	10-րդ դասարան	11-րդ դասարան	12-րդ դասարան	Ընդամենը
Ընդհանրապես չի բացակայում	23.6%	25.8%	14.7%	23.2%
Տարին մեկ-երկու օր	20.0%	22.7%	21.6%	20.5%
Կիսամյակի ընթացքում մեկ-երկու օր	30.9%	22.7%	20.7%	23.7%
Ամսական մեկ-երկու օր	18.2%	18.0%	33.6%	23.4%
Շաբաթական մեկ-երկու օր	5.5%	6.2%	6.0%	6.3%
Ավելի հաճախ	1.8%	4.7%	3.4%	2.9%
Ընդամենը	100.0%	100.0%	100.0%	100.0%

Գծապատկեր 4. Որքա՞ն հաճախ է Ձեր երեխան բացակայում դպրոցից.



Գծապատկեր 5. Իսկ քանի՞ օր է բացակայել երեխան վերջին մեկ ամսվա ընթացքում.



Հարկ է նշել նաև այն փաստը, որ տղաները ավելի հաճախ են բացակայում, քան աղջիկները (Տե՛ս Աղյուսակ 14.):

Աղյուսակ 14. Որքա՞ն հաճախ է Ձեր երեխան բացակայում դպրոցից:

Պատասխան	Տղաներ	Աղջիկներ	Ընդամենը
Ընդհանրապես չի բացակայում	12.7%	30.2%	23.2%
Տարին մեկ-երկու օր	20.6%	20.4%	20.5%
Կիսամյակի ընթացքում մեկ-երկու օր	23.6%	23.7%	23.7%
Ամսական մեկ-երկու օր	29.7%	19.2%	23.4%
Շաբաթական մեկ-երկու օր	7.9%	5.3%	6.3%
Ավելի հաճախ	5.5%	1.2%	2.9%
Ընդամենը	100.0%	100.0%	100.0%

Բացակայությունները հիմնականում պայմանավորված են երեխաների հիվանդությամբ (74.1%): Սակայն նկատվում է դասարանից դասարան կրկնուսույցի մոտ պարապմունքներով պայմանավորված բացակայությունների թվի աճ. եթե կրկնուսույցի մոտ պարապելու պատճառով 10-րդ դասարանում բացակայում են երեխաների 3.5%, ապա 12-րդ դասարանում՝ արդեն 16.7% (Տե՛ս Աղյուսակ 15.): Ուշագրավ են նաև պատասխանի հետևյալ տարբերակները «երեխան քաղաքում/գյուղում չէր» (1.4%), «զինկոմիսարիատ պետք է ներկայանար» (0.6%):

Աղյուսակ 15. Ինչո՞ւ էն/էին պայմանավորված բացակայությունները.

	10-րդ դասարան	11-րդ դասարան	12-րդ դասարան	Ավարտել է	Ընդամենը
Հիվանդություններով	87.2%	76.4%	70.2%	63.8%	74.1%
Երեխան ժամանակ չունի/եր, ծանրաբեռնված է/ր կրկնուսույցի մոտ պարապմունքներով	3.5%	6.6%	16.7%	21.3%	10.9%

Երեխան ժամանակ չունի/եր, գրադվում է/ը սպորտով	5.8%	3.8%	2.6%	0.0%	3.9%
Երեխան ցանկություն չունի/եր դպրոց գնալ	1.2%	4.7%	4.4%	8.5%	4.2%
Երեխան փախչում է/ը դպրոցից	1.2%	1.9%	0.0%	4.3%	1.4%
Քաղաքում/գյուղում չէր	1.2%	2.8%	0.9%	0.0%	1.4%
Զինկոմիսարիտ պետք է ներկայանար	0.0%	0.0%	1.8%	0.0%	0.6%
Այլ հարգելի պատճառով	4.7%	3.8%	3.5%	2.1%	3.6%
Ընդամենը	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%

Հետազոտության արդյունքների համաձայն երեխաները հիմնականում բացակայել են և՛ հոսքային, և՛ ոչ հոսքային առարկաներից (65.5%): Ծնողների 25.9% դժվարացան պատասխանել այս հարցին: Միննույն ժամանակ հարկ է նշել, որ ոչ հոսքային առարկաներից բացակայելու միտումը նույնպես աճում է դասարանից դասարան. էթե 10-րդ դասարանցիների ընդամենը 3.6% է բացակայում ոչ հոսքային առարկաներից, ապա ավարտած երեխաների՝ 21.6% (Տե՛ս Աղյուսակ 16):

Աղյուսակ 16. Ո՞ր առարկաներից է/ը հիմնականում բացակայում երեխան.

	10-րդ դասարան	11-րդ դասարան	12-րդ դասարան	Ավարտել է	Ընդամենը
Հիմնականում հոսքային	1.2%	0.0%	1.0%	2.7%	0.9%
Հիմնականում ոչ հոսքային	3.6%	7.4%	6.0%	21.6%	7.6%
Եվ հոսքային, և ոչ հոսքային	72.6%	64.2%	66.0%	51.4%	65.5%
Դժվարանում են պատասխանել	22.6%	28.4%	27.0%	24.3%	25.9%
Ընդամենը	100%	100%	100%	100%	100%

«Հիմնականում գալիս ենք, ճիշտ է կարող է մինչև վերջին ժամը չնստենք, բայց փորձում ենք ամեն օր էլ գալ» (Արտաշատի ավագ դպրոցի աշակերտուհի):

«Եթե շատ ենք տնայիններ ունենում պարապմունքներից, բնականաբար դպրոց չենք գալիս» (Արտաշատի ավագ դպրոցի աշակերտ):

«Դասացուցակով ինֆորմատիկան 5-6-րդ ժամն է, էթե ուզում ես բուհ ընդունվել, պետք է գնաս տուն, պարապմունքներդ անես, դրա համար էլ չենք նստում ինֆորմատիկայի դասին» (Արմավիրի ավագ դպրոցի աշակերտ):

«Ուսուցիչների մեջ խղճի զգացում կա, ամեն օր յոթերորդ ժամ չենք կարող մնալ: Ամեն օր իմ պարապմունքները ժամը երեքին է սկսվում, իսկ դպրոցի դասերն ավարտվում են երեքից հինգ պակաս, ո՞նց հասցնեմ գնամ տուն, մի տաս րոպե հանգստանամ, հաց ուտեմ, ջուր խմեմ, չգիտեմ ոնց անեմ» (Արմավիրի ավագ դպրոցի աշակերտ):

«Առաջին երեք ժամը հոսքային առարկաներն են, հետո մյուսների համար մնանք ի՞նչ անենք: Պետք է գնանք, որ պարապենք» (Արմավիրի ավագ դպրոցի աշակերտուհի):

Ֆոկուս խմբերի ընթացքում աշակերտները քննարկեցին նաև հետևյալ վտանգավոր իրավիճակը: Կան մարդիկ, որոնք գնում են գյուղի միջնակարգ դպրոցներ, այնտեղ ֆիկտիվ գրանցվում են, դասի չեն գնում, որ կարողանան պարապել, ժամանակը միայն պարապելու վրա ծախսեն և ստանալ ատեստատ:


Ավագ դպրոցի աշակերտների բուհ ընդունվելու դիրքորոշումը և կրկնուսույցի մոտ պարապմունքները

Ավագ դպրոցի աշակերտների 90.5% պլանավորում է շարունակել կրթությունն ավագ դպրոցն ավարտելուց հետո, որից 96.2% պլանավորում է կրթությունը շարունակել բուհում, 3.8%՝ միջին մասնագիտական հաստատությունում:

Հարցված ծնողների 16.4% դժվարացավ պատասխանել, թե ինչ մասնագիտությամբ է երեխան շարունակելու կրթությունը բուհում, իսկ մյուսների կողմից նշվեց երեխաների նախընտրած բուհերի և մասնագիտությունների շատ ընդարձակ ցանկ: Առավել հաճախ նշվել են տնտեսագետի, լեզվաբան-բանասերի, բժշկի, ծրագրավորողի և իրավաբանի մասնագիտությունները (Տե՛ս **Հավելված**):

Ծնողների 24.3% կարծիքով, դպրոցում ստացած գիտելիքները բավարար են երեխայի նախընտրած բուհն ընդունվելու համար, 14.3% պատասխանեցին «ավելի շուտ այո», 31.8%՝ «ավելի շուտ ոչ», իսկ 29.6%՝ «ոչ»: Ինչպես երևում է, ծնողները հակված են այն կարծիքին, որ ավագ դպրոցում ստացած գիտելիքները բավարար չեն բուհ ընդունվելու համար (Տե՛ս **Գծապատկեր 6**):

Գծապատկեր 6. *Ձեր կարծիքով բավարար են/էին արդյոք դպրոցում ստացած գիտելիքները երեխայի նախընտրած բուհն ընդունվելու համար.*



Բացասական պատասխաններ տված հարցվածների 42.9% չցանկացավ բացատրել տրված պատասխանները, իսկ մնացածը հետևյալ կերպ հիմնավորեց իր կարծիքն այն մասին, որ ավագ դպրոցում ստացած գիտելիքները բավարար չեն բուհ ընդունվելու համար՝

1. Ավագ դպրոցի մակարդակը ցածր է – 14.9%
2. Առանց կրկնուսույցի հնարավոր չէ – 14.5%
3. Դպրոցում անցած նյութը չի համապատասխանում ընդունելության պահանջներին, շտեմարաններով չեն պարապում – 12.6%
4. Իրեն անհրաժեշտ առարկան երեխան չի անցնում (օրինակ՝ քիմիա) – 3.5%
5. Երեխաները շատ են, չտվորոդ երեխաները խանգարում են – 2.7%
6. Ուսուցիչների մակարդակը ցածր է – 2.7%
7. Դասաժամերը բավարար չեն նյութը մատուցելու համար – 2.6%
8. Կրթությունը նորմալ հիմք չունի, հիմնական դպրոցի մակարդակը ցածր է – 1.8%
9. Ուսուցիչները նորմալ չեն պարապում – 1.8%

Հետազոտության տվյալների համաձայն, ավագ դպրոցի աշակերտների 43.2% պարապում են կրկնուսույցի մոտ: Եվ տրամաբանական է, որ կրկնուսույցի մոտ պարապողների տոկոսն աճում է 10-րդից մինչև 12-րդ դասարան: 10-րդ դասարանցիների 18.2% է պարապում կրկնուսույցի մոտ, 11-րդ դասարանցիների՝ 37.5%, 12-րդ դասարանցիների՝ 60.3%, իսկ 2013 թվականի շրջանավարտների 69.6% (Տե՛ս Աղյուսակ 17):

Աղյուսակ 17. Պարապո՞ւմ է/ր արդյոք Ձեր երեխան որևէ առարկաներ կրկնուսույցի մոտ.

Պատասխան	10-րդ դասարան	11-րդ դասարան	12-րդ դասարան	Ավարտել է	Ընդամենը
Այո	18.2%	37.5%	60.3%	69.6%	43.2%
Ոչ	81.8%	62.5%	39.7%	30.4%	56.8%
Ընդամենը	100%	100%	100%	100%	100%

Որոշակի տարբերություն առկա է նաև Երևանի և մարզերի միջև: Եթե Երևան քաղաքում ավագ դպրոցների աշակերտների 56.2% է պարապում կրկնուսույց/ներ/ի հետ, ապա մարզում՝ 38.3% (Տե՛ս Աղյուսակ 18):

Աղյուսակ 18. Պարապո՞ւմ է/ր արդյոք Ձեր երեխան որևէ առարկաներ կրկնուսույցի մոտ.

Պատասխան	Երևան	Մարզեր	Ընդամենը
Այո	56.2%	38.3%	43.2%
Ոչ	43.8%	61.8%	56.8%
Ընդամենը	100.0%	100.0%	100.0%

Այսպիսով՝ ավագ դպրոցների աշակերտների 21% պարապում են անգլերեն լեզու առարկան, 20.7%՝ հայոց լեզու և գրականություն, 16.1%՝ մաթեմատիկա և այլն (Տե՛ս Աղյուսակ 19.): Հայոց լեզուն անվճար են պարապում 15.7%, անգլերեն լեզուն՝ 14.9%, մաթեմատիկա՝ 15.1%, քիմիա՝ 18.2%, ֆիզիկա՝ 7.1%: Աղյուսակում նշված են նաև յուրաքանչյուր առարկայի միջին ամսական վճարի չափը, գները տատանվում են 15000-50000 ՀՀԴ:

Աղյուսակ 19. Պարապո՞ւմ է՞ր արդյո՞ք Ձեր երեխան որևէ առարկաներ կրկնուսույցի մոտ.

Պատասխան	Պարապողների տոկոսը բոլոր հարցվածներից	Միջին ամսական վճարի չափը (ՀՀԴ)
Անգլերեն լեզու	21.0	22500
Հայոց լեզու և գրականություն	20.7	20400
Մաթեմատիկա	16.1	22200
Պատմություն	6.6	22300
Կենսաբանություն	5.1	27200
Քիմիա	4.1	26100
Ֆիզիկա	3.9	24600
Այլ լեզուներ	2.4	21900
Ռուսաց լեզու	2.2	20500
Աշխարհագրություն	1.2	37500
Նկարչություն	0.5	30000
Պար/ վոկալ	0.5	20000
Գծագրություն	0.2	25000

Պարապող աշակերտների 11% պարապում են դպրոցում նրանց դասավանդող ուսուցիչների մոտ, 2.4%՝ տվյալ ավագ դպրոցի այն ուսուցիչների հետ, որոնք երեխային չեն դասավանդում, 16.1%՝ այլ դպրոցում դասավանդող ուսուցիչի հետ: Ավագ դպրոցների աշակերտների միայն 7.3% են պարապում բուհի դասախոսների մոտ (Տե՛ս **Աղյուսակ 20**):

Աղյուսակ 20. Կրկնուսույցը.

Պատասխան	%
Երեխային ավագ դպրոցում դասավանդող ուսուցիչն է՞ր	11.0
Տվյալ ավագ դպրոցի ուսուցիչ է՞ր, որը երեխային չի՞չէր դասավանդում	2.2
Այլ դպրոցում դասավանդող ուսուցիչ է՞ր	16.0
Բուհի դասախոս է՞ր	7.2
Բարեկամ է, հարևան է	4.8
Այլ մասնավոր պարապող	1.6
Հատուկ կազմակերպություն է	0.4
Չեն պարապում	56.8
Ընդամենը	100.0

Հետազոտության արդյունքների համաձայն, 2013 թվականի շրջանավարտների 86% ընդունվել է բուհ, որոնցից 95.3%՝ իրենց ընտրած մասնագիտությամբ: Բուհ ընդունված շրջանավարտների 4.7% սովորում են անվճար, 95.3%՝ վճարովի: Կրկնուսույցի մոտ պարապողների 97.3% է ընդունվել բուհ, իսկ այն աշակերտներից, որոնք չեն պարապել կրկնուսույցի մոտ, բուհ են ընդունվել 53.8% (Տե՛ս **Աղյուսակ 21**):

Աղյուսակ 21. Ընդունվե՞ց արդյոք երեխան բուհ.

Պատասխան	Երեխան պարապում էր կրկնուսույցի մոտ	Երեխան չէր պարապում կրկնուսույցի մոտ	Ընդամենը
Այո	97.3% (36 հոգի)	53.8% (7 հոգի)	86.0% (43 հոգի)
Ոչ	2.7% (1 հոգի)	46.2% (6 հոգի)	14.0% (7 հոգի)
Ընդամենը	100.0% (37 հոգի)	100.0% (13 հոգի)	100.0% (50 հոգի)

2013 թվականի շրջանավարտների ծնողների միայն 10% կարծիքով ավագ դպրոցում ստացած գիտելիքները լիովին բավարար էին բուհ ընդունվելու համար, 18% կարծիքով՝ ավելի շուտ բավարար էին: Ծնողների մեծ մասը հակված է այն կարծիքին, որ ավագ դպրոցում ստացած գիտելիքները բավարար չեն բուհ ընդունվելու համար՝ 50% նշել են «ավելի շուտ բավարար չեին» պատասխանը, իսկ 16%՝ «բոլորովին բավարար չեին» (Տե՛ս Աղյուսակ 22):

Աղյուսակ 22. Բավարա՞ր էին արդյոք ավագ դպրոցում ստացած գիտելիքները բուհ ընդունվելու համար.

Պատասխան	%
Լիովին բավարար էին	10
Ավելի շուտ բավարար էին	18
Ավելի շուտ բավարար չեին	50
Բոլորովին բավարար չեին	16
Դժվարանում եմ պատասխանել	6
Ընդամենը	100

Հարցված մանկավարժների դիտարկումների համաձայն, վերջին չորս տարիների ընթացքում նկատվում է, որ կրկնուսույցների մոտ պարապող աշակերտների տոկոսը կրճատվում է:

Կրկնուսույցների մոտ պարապելու հիմնական պատճառը, ինչպես աշակերտների, այնպես էլ մանկավարժների կարծիքով, դպրոցական ծրագրերի և ընդունելության պահանջների անհամապատասխանությունն է. *«Քանի դեռ ծրագրերը ընդունելության հետ չի համընկնում, բոլորն էլ կդիմեն կրկնուսույցների» (Արտաշատի ավագ դպրոցի տնօրեն)*: Եվս մեկ պատճառ է դասարանների խտությունը. դասարանները մեծ են, և 45 բուհի ընթացքում 20-25 հոգուն հնարավոր չէ բավական ժամանակ տրամադրել: Երրորդ խնդիրը դասարանում չնոտիվացված երեխաների առկայությունն է, որոնք խանգարում են դասապրոցեսը: Հարցվածների կարծիքով, դպրոցի գիտելիքներով հնարավոր է ընդունելության քննություններին բավարար գնահատական ստանալ, սակայն բարձր գնահատական ստանալը և անվճար ընդունվելը գրեթե անհնարին է: Կան նաև առարկաներ, որոնք ավագ դպրոցում չեն անցնում, որպեսզի կարողանան հանձնել ընդունելության քննություն՝ անզլերեն բանավոր, գծագրություն և այլն:

Հատկանշական է, որ հայոց լեզվի և գրականության քննությունը բոլոր հարցվածների կողմից բնորոշվեց որպես շատ դժվար և առանց կրկնուսույցի այս առարկան հանձնել

հնարավոր չէ: Այնինչ այս առարկան անցնում են դպրոցական կրթության ողջ ընթացքում՝ 12 տարի:

Միևնույն ժամանակ, հարցված փորձագետները փաստում են, որ բուհ ընդունվելը շատ ավելի հեշտ է դարձել. *«Դե հիմա բուհ ընդունվելը խնդիր չէ: Ամեն օր Մանկավարժականից զանգում են, աշակերտ են ուզում առանց քննության ընդունեն» (Արտաշատի ավագ դպրոցի տնօրեն):*

«Կրթության համակարգը լավը չի, պետք է այնպես լինի, որ մենք ավելորդ գումարներ չծախսենք պարապելու վրա: Ավագ դպրոցները հենց դրա համար ստեղծվեցին, բայց հիմա մենք չենք կարող առանց պարապելու ընդունվել: Կարող է անցողիկ միավոր հավաքենք, բայց բարձր միավորներ չենք կարողանա հավաքել, որովհետև մեզ պետք են նաև շտեմարանային գիտելիքներ, որոնք դպրոցում չկան» (Երևանի # 65 ավագ դպրոցի աշակերտուհի):

12-րդ դասարանի 2-րդ կիսամյակը նախատեսված է կրկնողության համար: Սա դժվարացնում է սովորողների ներգրավումը ուսումնական գործընթացի մեջ, քանի որ երեխաները պարապում են կրկնուսույցների մոտ: Ստացվում է, որ երեխաներին արհեստականորեն պահում են դպրոցում. *«Գնահատականով վախեցնելով, պահում ենք» (Երևանի # 83 դպրոցի մանկավարժ):*

Հարցված փորձագետները կարծիք հայտնեցին այն մասին, որ ավելի ռացիոնալ է 12-րդ դասարանն ամբողջությամբ տրամադրել կրկնությանը: Մանկավարժը պարզապես չի կարող և կրկնուսույցի դեր կատարել դպրոցում, և ապահովել դպրոցական ծրագրի իրականացումը: Հնչեց նաև կարծիք, որ այսպիսի իրավիճակը ձեռնտու է կրկնուսույցներին, որոնց մի մասը նույն դպրոցի մանկավարժներն են:

Ավագ դպրոցի մասնագիտական կադրերը

Ավագ դպրոցներում հիմնականում աշխատում են նույն մանկավարժական կադրերը, որոնք աշխատում էին մինչ վերակազմավորումը միջնակարգ դպրոցում: Ավագ դպրոցների մանկավարժները պարբերաբար վերապատրաստումներ են անցնում և արժանանում տարակարգ աստիճանի: Հոսքային և ենթահոսքային դասարաններ կազմակերպելու համար դպրոցներում կան վերապատրաստված մասնագետներ:

Ավագ դպրոց դառնալուն պես բոլոր դպրոցները բախվեցին կրճատումների խնդրի հետ: Սակայն կրճատումների գործընթացը տեղի է ունենում աստիճանաբար, քանի որ տարրական և հիմնական դպրոցների աշակերտների թիվը դպրոցում կրճատվում է աստիճանաբար, տարեց տարի: Առաջիկայում կլինեն նաև կրճատումներ՝ կապված հիմնական դպրոցի դասարանների փակման հետ: Միայն հիմնական դպրոցում դասավանդող ուսուցիչները դուրս կմնան աշխատանքից:

Որոշ դպրոցներում աշակերտների կրճատման պատճառով կրճատում են հաստիքները: Օրինակ, Արմավիրի ավագ դպրոցում ուսուցիչների մեծամասնությունը

աշխատում են կես դրույքով: Իսկ Ձորագյուղի ավագ դպրոցում եղել են կրճատումներ և 2014թ. սեպտեմբերին դեռ սպասվում են: 2013-2014 ուս.տարվա մեջ 12 դասարան է եղել դպրոցում, իսկ 2014-2015 ուս. տարվա նախնական կումպլեկտավորմամբ լինելու է 8 կամ 9³⁸: Դա նշանակում է, որ մոտ 6 ուսուցչի կրճատման խնդիր է առաջանալու:

Կան առարկաներ, որոնք փոխակերպման ընթացքում ավագ դպրոցում աստիճանաբար դուրս են գալիս ծրագրից կամ կրճատվում են: Օրինակ, կրճատվում են հայ եկեղեցու պատմության և աշխարհագրության դասաժամերը, ինչը բերում է աշխատատեղի կրճատման: Իսկ, օրինակ, Արտաշատի դպրոցում ավագ դպրոցի փոխակերպման ընթացքում կրճատել են երգի և նկարչության ուսուցիչներին, թեև դպրոցում դեռևս կան 4-րդ և 5-րդ դասարաններ, որոնք մեկ կիսամյակ պետք է անցնեն այդ առարկաները: Այդ դասերը պարապում են դասվարները, որոնք իրավունք ունեն այդ դասը պարապելու:

Որոշ ավագ դպրոցներ ունեն դասապրոցեսում դասախոսների ներգրավման փորձ, որը սակայն այնքան էլ դրական չէ. աշակերտի հետ ավելի արդյունավետ է աշխատում ուսուցիչը, քան դասախոսը:

Փորձագիտական հարցազրույցների ընթացքում հաճախ հնչում էր այն միտքը, որ երիտասարդ մանկավարժներ ներգրավելը շատ դժվար է, քանի որ նրանք այնպիսի նվիրումով չեն աշխատում դպրոցում, ինչպես փորձառու ուսուցիչները, *«Տարեց ուսուցիչները պարտքի և պատասխանատվության գերազույն զգացումով են մտնում դասարան» (Արտաշատի ավագ դպրոցի տնօրեն):*

Ծնողների հետ կապի պահպանումը ավագ դպրոցում

Օրագիրը ոչ միայն հանդիսանում է աշակերտի համար դասացուցակի և հանձնարարությունների ֆիքսման հարմարավետ գործիք, այլև դպրոցի (ուսուցիչների, դասղեկի) և ծնողի միջև երեխայի կրթության վերաբերյալ հաղորդակցման կարևոր միջոց: Հետազոտության տվյալների համաձայն, ավագ դպրոցների աշակերտների 50.5% ունեն օրագիր: Հարկ է նշել, որ օրագիր ունեցող աշակերտների տոկոսը նվազում է դասարանից դասարան՝ եթե 10-րդ դասարանցիների 55.5% ունեն օրագիր, ապա 12-րդ դասարանում այդ տոկոսը նվազում է մինչև 44.8% (Տե՛ս **Աղյուսակ 23**): Ավագ դպրոցում սովորող աղջիկների 55.5% ունեն օրագիր, իսկ տղաների՝ 43%: Հետաքրքիր է նաև համեմատել օրագիր ունեցող աշակերտների տոկոսն ըստ դպրոցների: Աղյուսակ 24-ում բերված տվյալները վկայում են այն մասին, որ օրագրի առկայությունը աշակերտների մոտ տարբեր է դպրոցից դպրոց և պայմանավորված է դպրոցի պահանջով, այլ ոչ միայն աշակերտի պարտաճանաչությամբ: Ինչպես երևում է աղյուսակից, օրագիր ունեցող աշակերտների տոկոսը բարձր է Գավառի, Սևանի և Երևանի #195 դպրոցում, իսկ Աբովյանի, Ապարանի և Երևանի #190 դպրոցում՝ ծայրահեղ ցածր է:

³⁸ Աշակերտների թվի կրճատման նման տեմպը Ձորագյուղում պայմանավորված է արտագաղթով:

Երևան քաղաքի # 190 ավագ դպրոցում օրագրեր չեն պահում, երեխաներն ունեն ուսանողական ստուգման գրքույկների նման գրքույկներ, որտեղ գրանցվում են կիսամյակային գրավոր աշխատանքների արդյունքները, կիսամյակային գնահատականները և վերջնականը: Մասնագիտական փոխադրական քննությունների գնահատականները նշանակվում են մատյանում և ստուգման գրքույկում:

Աղյուսակ 23. Ունի՞/եր արդյոք երեխան օրագիր:

Պատասխան	Ավարտել է	10-րդ դասարան	11-րդ դասարան	12-րդ դասարան	Ընդամենը
Այո	50.0%	55.5%	51.6%	44.8%	50.5%
Ոչ	50.0%	39.1%	45.3%	51.7%	46.1%
Դժվարանում եմ պատասխանել	0.0%	5.5%	3.1%	3.4%	3.4%
Ընդամենը	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%

Աղյուսակ 24. Ունի՞/եր արդյոք երեխան օրագիր:

Պատասխան	Այո	Ոչ	Դժվարանում եմ պատասխանել	Ընդամենը
Գավառի ա/դ	95.5%	4.5%	0.0%	100.0%
Երևանի #195 ա/դ	88.0%	8.0%	4.0%	100.0%
Մեանի ա/դ	81.5%	18.5%	0.0%	100.0%
Արտաշատի ա/դ	72.0%	24.0%	4.0%	100.0%
Երևանի #42 ա/դ	72.0%	24.0%	4.0%	100.0%
Էջմիածնի ա/դ	68.4%	31.6%	0.0%	100.0%
Վարդենիկի ա/դ	62.5%	37.5%	0.0%	100.0%
Չորագյուղի ա/դ	58.3%	41.7%	0.0%	100.0%
Մարտունիի ա/դ	48.0%	52.0%	0.0%	100.0%
Երևանի # 83 ա/դ	47.4%	47.4%	5.3%	100.0%
Երևանի #65 ա/դ	47.1%	29.4%	23.5%	100.0%
Վեդիի ա/դ	45.8%	45.8%	8.3%	100.0%
Հրազդանի ա/դ	36.8%	63.2%	0.0%	100.0%
Արմավիրի ա/դ	34.8%	65.2%	0.0%	100.0%
Աշտարակի ա/դ	28.6%	52.4%	19.0%	100.0%
Աբովյանի ա/դ	5.3%	94.7%	0.0%	100.0%
Երևանի #190 ա/դ	3.8%	96.2%	0.0%	100.0%
Ապարանի ա/դ	3.8%	96.2%	0.0%	100.0%
Ընդամենը	50.5%	46.1%	3.4%	100.0%

Dasaran.am կայքը որոշ չափով իմաստագրվել է օրագրի կարևորությունը, քանի որ այնտեղ ամրագրվում են երեխայի գնահատականները և առաջադիմությունը, և ծնողները կարող են տեղեկանալ երեխայի առաջադիմության վերաբերյալ այդ կայքից: Dasaran.am համացանցային կայքը դպրոցի, ծնողի և աշակերտի միջև կապի պահպանման ևս մեկ ժամանակակից և հարմարավետ եղանակ է: Սակայն այն չի կարող լիովին փոխարինել օրագրին: Օրագիրն անհրաժեշտ միջոց է, որտեղ ֆիքսված է դասացուցակը, տնային հանձնարարությունները, այն նաև կարևոր գործիք է, որի շնորհիվ երեխան համակարգում է դասապատրաստումը, սովորում է պլանավորել իր ժամանակը և անելիքները: «Օրինակ, իմ

համար հեշտ ու հարմար է օրհագիր պահելը, գրում են բոլոր առաջադրանքները և վերջում հասկանում են, թե որ դասն են արել, որը՝ ոչ» (Աշտարակի ավագ դպրոցի աշակերտուհի):

Աղյուսակ 25. Օրագրի և *dasar.am* կայքի օգտագործումը.

Պատասխան	Երեխան ունի օրագիր	Ծնողներն ունեն <i>Dasaran.am</i> կայքի ծածկագիրն ու ծածկանունը	<i>Dasaran.am</i> կայքում գնահատականները տեղադրվում են
Գավառի ա/դ	95.5%	100.0%	100.0%
Երևանի #195 ա/դ	88.0%	68.0%	56.0%
Սևանի ա/դ	81.5%	100.0%	100.0%
Արտաշատի ա/դ	72.0%	52.0%	56.0%
Երևանի #42 ա/դ	72.0%	56.0%	64.0%
Էջմիածնի ա/դ	68.4%	100.0%	100.0%
Վարդենիկի ա/դ	62.5%	79.2%	87.5%
Ձորագյուղի ա/դ	58.3%	75.0%	83.3%
Մարտունիի ա/դ	48.0%	80.0%	88.0%
Երևանի # 83 ա/դ	47.4%	89.5%	78.9%
Երևանի #65 ա/դ	47.1%	52.9%	41.2%
Վեդիի ա/դ	45.8%	50.0%	58.3%
Հրազդանի ա/դ	36.8%	89.5%	100.0%
Արմավիրի ա/դ	34.8%	78.3%	100.0%
Աշտարակի ա/դ	28.6%	71.4%	52.4%
Աբովյանի ա/դ	5.3%	89.5%	89.5%
Երևանի #190 ա/դ	3.8%	92.3%	76.9%
Ապարանի ա/դ	3.8%	100.0%	100.0%
Ընդամենը	50.5%	79.0%	79.8%

Dasaran.am կայքի ծածկանունն ու ծածկագիրն ունեն հարցված ծնողների 79%: Այս տոկոսը նույնպես էապես տարբերվում է դպրոցից-դպրոց՝ Սևանի, Գավառի, Ապարանի և Էջմիածնի ավագ դպրոցներում սովորող աշակերտների ծնողների 100% ունեն կայքի ծածկանունն ու ծածկագիրը: Իսկ Վեդիի, Արտաշատի, Երևանի #65 և #42 ավագ դպրոցներում՝ 50-56%. այս ցուցանիշն ամենացածրն է: Տարբեր չափով են նաև դպրոցներն օգտվում *Dasaran.am* կայքից: *Dasaran.am* կայքի ծածկանունն ու ծածկագիրն ունեցող ծնողներից 100% նշեցին, որ գնահատականները տեղադրվում են կայքում Գավառում, Սևանում, Էջմիածնում, Հրազդանում, Արմավիրում, Ապարանում: Մնացած դպրոցներում այդ տոկոսն ավելի ցածր է (Տե՛ս Աղյուսակ 25.):

Սակայն ծնողների հարցման համաձայն, ավագ դպրոցում երեխայի առաջադիմության մասին ծնողները հիմնականում տեղեկանում են դաստեղից, ուսուցիչներից և ծնողական ժողովներից: Երկրորդ տեղում երեխան է՝ ծնողների 25% առաջադիմության մասին տեղեկանում են հենց երեխայից: *Dasaran.am* կայքից տեղեկանում են ծնողների ընդամենը 16.2%, իսկ օրագրից՝ 11% (Տե՛ս Աղյուսակ 26.):

Աղյուսակ 26. Ինչպե՞ս էք/էիք տեղեկանում ավագ դպրոցում երեխայի առաջադիմության վերաբերյալ:

Պատասխան	%
Դասղեկից, ուսուցիչներից, ծնողական ժողովներից	43.5
Երեխայից	25.0
Dasaran.am համացանցային կայքից	16.2
Օրագրից	11.0
Կիսամյակային գնահատականներից	4.3
Չեմ հետևում	0.1
Ընդամենը	100.0

Փորձագիտական հարցման տվյալների համաձայն, dasaran.am կայքը լրացուցիչ աշխատանք և դժվարություններ է ստեղծել ուսուցիչների համար: Ուսուցիչը նույն աշխատանքը մի քանի անգամ է կատարում. նույն գնահատականները պետք է նշանակի մատյանում, օրագրում, այնուհետև համակարգիչ անցկացնի: Քանի որ համակարգիչներ չկան բոլոր դասարաններում, իսկ մատյաններն անընդհատ դպրոցում գործածության մեջ են, ուսուցիչները լրացուցիչ արտագրում են գնահատականները թղթի վրա, որ հետո անցկացնեն Dasaran.am: Ուսուցիչն ամեն օր մի քանի դասարանի գնահատականները պետք է անցկացնի էլեկտրոնային մատյան, ու շփոթվելու հավանականությունը մեծ է: Իսկ դպրոցը չի ապահովում մանկավարժներին անհրաժեշտ պայմաններ, որ յուրաքանչյուր ուսուցիչ կարողանա հանգիստ աշխատել իր փաստաթղթերի և համակարգչի հետ: Հատկապես դժվարանում են այս աշխատանքը կատարել ավագ սերնդի ուսուցիչները, որոնք այնքան էլ հմուտ չեն աշխատում համակարգչով: Իսկ երիտասարդները այդ աշխատանքը հաճախ կատարում են իրենց անձնական համակարգիչների և հեռախոսների օգնությամբ: Շատերը նշեցին, որ Dasaran.am-ի հետ աշխատող-համակարգող է պետք դպրոցում, որ այդ ածանցյալ լրացուցիչ աշխատանքն ուսուցիչը չանի:

Տնօրենների գնահատմամբ, ծնողական համայնքն ակտիվ չէ: Ծնողները դասղեկի հետ հեռախոսով են կապը պահում, դպրոց են այցելում, գերադասում են շփվել ուսուցիչների հետ անմիջականորեն, քանի որ այդպես կարող են ավելի շատ ինֆորմացիա ստանալ, քան dasaran.am կայքով:

Շատ դպրոցներում ամեն ամսվա վերջին ուրբաթ օրը բոլոր ուսուցիչներին ժամ է նշանակված, որ լինեն դպրոցում՝ ծնողների հետ հանդիպելու: Բոլոր ցանկացող ծնողները կարող են գալ դպրոց և հանդիպել ցանկացած ուսուցչի հետ: Բացի այդ, կիսամյակի սկզբում և վերջում ծնողական ժողովներ են կազմակերպվում:

Ավագ դպրոցի ֆինանսավորումն ըստ աշակերտների թվի

«Ավագ դպրոցի կայացման հարցում ամենաահավոր հարցը աշակերտաթվով ֆինանսավորումն է» (Ձորագյուղի ավագ դպրոցի տնօրեն):

Հարցված տնօրենները բացասաբար գնահատեցին ավագ դպրոցների ըստ աշակերտների թվի ֆինանսավորումը: Նրանց կարծիքով, դպրոցի ֆինանսավորումը որևէ բանից պիտի կախված չլինի: Ներկայիս պահին ուսուցչի ոչ միայն աշխատավարձը, այլև զբաղվածությունը կախված է աշակերտների թվից:

Ըստ աշակերտների թվի ֆինանսավորման սկզբունքը ձևավորում է «**աշակերտաորս**» բոլոր դիմող աշակերտներին՝ անկախ նրանց կրթության մակարդակից, գիտելիքներից և կրթությունը շարունակելու դիրքորոշումից, դպրոցը ստիպված է ընդունել՝ հնարավորինս բարձր ֆինանսավորում ստանալու համար:

Ըստ աշակերտների թվի ֆինանսավորումը բացասաբար է անդրադառնում կրթության որակի վրա, քանի որ դպրոցը շահագրգռված է շատ աշակերտներ ունենալ: Արդյունքում ավագ դպրոցներում շատ են չսովորող աշակերտները, մեծ են դասարանները, անհնար է անհատական մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուր երեխային, ուսուցիչը շատ ժամանակ է ծախսում կարգապահության պահպանման վրա, տուժում է կրթության որակը:

Այն փոքր ու միջին քաղաքներում, որտեղ մի քանի ավագ դպրոց կա, առկա է դպրոցների միջև մրցակցության խնդիրը՝ առաջանում է աշակերտաքանակի և ֆինանսավորման խնդիր (օրինակ Աբովյանում և Արմավիրում):

Ավագ դպրոցների տնօրենները դասարանների թվով ֆինանսավորման կողմնակից են: Այս պարագայում պետք է հստակ սահմանվի դասարանում աշակերտների նվազագույն և առավելագույն քանակները: Մանկավարժների կարծիքով, ավագ դպրոցում օպտիմալ են 15-16-հոգանոց դասարանները:

Ֆինանսավորման գործող կարգը չի համապատասխանում դպրոցի շենքի պահպանման համար անհրաժեշտ ծախսերը հոգալու համար: Բոլոր դպրոցներում ձմեռվա ամիսներին դպրոցի ջեռուցման խնդիրն է շատ արդիական, որի ապահովման համար բոլոր դպրոցները պետք է գումար տնտեսեն: Իսկ կրճատվող աշակերտաքանակի պայմաններում յուրաքանչյուր տարի այդ խնդիրն ավելի և ավելի է բարդանում. *«2-3 տարի հետո դպրոցը պահելու խնդիր կունենանք, որովհետև շենքը մեծ է, շենքի ջեռուցման առումով խնդիրներ կարող են առաջանալ» (Ձորագյուղի ավագ դպրոցի տնօրեն)*

10, 11, 12-րդ դասարաններում աշակերտներին տրամադրվող ֆինանսավորումն ավելի բարձր է, քան հիմնական դպրոցում: Բայց շատ դպրոցներում կան դեռևս հիմնական դասարաններ, որոնք այլ սկզբունքով են ֆինանսավորվում՝ ավելի ցածր, ինչը որոշակի դժվարություններ է ստեղծում:

Ավագ դպրոցների տնօրենները յուրաքանչյուր տարի բախվում են վերակազմավորման և ֆինանսավորման խնդիրների հետ: Յուրաքանչյուր նոր ուսումնական տարի, մի կողմից, հիմնական դպրոցի աշակերտների թիվը կրճատվում է, իսկ մյուս կողմից, հիմնական դպրոցի ոչ բոլոր շրջանավարտներն են կրթությունը շարունակում ավագ դպրոցում: Արդյունքում կրճատվում է ավագ դպրոցներում աշակերտների թիվը և, հետևաբար, կրճատվում է նաև դպրոցի ֆինանսավորումը, առաջանում են ֆինանսական խնդիրներ:

Օրինակ, Արտաշատի ավագ դպրոցում, որտեղ կան ռուսերեն թեքումով դասարաններ՝ ինչպես ավագ, այնպես էլ հիմնական, առկա է ֆինանսավորման շարունակական խնդիր, որն անդրադառնում է նաև դասապրոցեսի կազմակերպման և կրթության որակի վրա: Օրինակ՝ 2-րդ և 3-րդ ռուսերեն թեքումով դասարաններում սովորում են 2-3-ական երեխա, նրանց կոմպլեկտավորում են իրար հետ, 4-րդը 5-րդի հետ են դասի նստեցնում, 7-ը 8-ի հետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ավագ դպրոցի համակարգի կայացման հիմնախնդիրը ՀՀ-ում

Հայեցակարգային անհամապատասխանություն

Հետազոտության ընթացքում ավագ դպրոցի գործառնման բոլոր մակարդակներում մի շարք հակասություններ բացահայտվեցին: Դրանցից կարևորագույնն ավագ դպրոցի նպատակի և դրան հասնելու համար գործող մեխանիզմների անհամապատասխանությունն է:

Հարցված փորձագետները՝ դպրոցի տնօրեններն ու մանկավարժները, սկզբունքորեն տարբեր են ընկալում ավագ դպրոցի նպատակն ու առաքելությունը: Հարցվածների մի մասը ավագ դպրոցի գերխնդիր է համարում կրթության բարձր որակի ապահովումը և բուհ ընդունվելու համար աշակերտների նախապատրաստումը: Ըստ այդմ՝ ավագ դպրոցում պետք է սովորեն միայն այն երեխաները, որոնք սովորելու ձգտում ունեն և բարձր առաջադիմություն, որպեսզի ավագ դպրոցը՝ աշխատելով աշակերտների փոքր թվի հետ, կարողանա ապահովել բուհ ընդունելություն առանց կրկնուսույցին դիմելու անհրաժեշտության: Սա ենթադրում է նաև ավագ դպրոցից ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների հեռացման մեխանիզմի առկայություն, որը բացակայում է: Մակայն այս տեսակետը սկզբունքորեն հակասում է ՀՀ կրթական համակարգի կողմից որդեգրված ներառականության սկզբունքին:

Հարցվածների մյուս մասն այս դիրքորոշման հետ համաձայն չէ՝ համարելով, որ ավագ դպրոցում պետք է սովորեն բոլոր երեխաները, որը համապատասխանում է սոցիալական հավասարության, արդարության և ներառականության սկզբունքներին:

Բացի այդ, ավագ դպրոցը՝ համարվելով «նախամասնագիտական» կրթություն ապահովող օղակ, չունի մասնագիտական կողմնորոշման որևէ մեխանիզմ:

Ըստ աշակերտների թվի ֆինանսավորման թեքությունները

Ըստ աշակերտների թվի ֆինանսավորումն անուղղակիորեն ձևավորում է «աշակերտաորս»՝ ավագ դպրոցների կողմից ամեն կերպ աշակերտների հնարավորինս մեծ քանակ դպրոց ներգրավելու միտում՝ ընդունել և չհեռացնել, ինչը բացասաբար է անդրադառնում կրթության որակի վրա:

Ավագ դպրոցի դասարանների խտությունը (մինչև 25 հոգի) հնարավորություն չի տալիս ապահովել անհատական մոտեցում և բարձր առաջադիմություն: Ավագ դպրոցների դասարանները չեն կիսվում, ինչը պայմանավորված է և ֆինանսավորման խնդիրներով, և շենքային պայմանների բացակայությամբ:

Հոսքային/ենթահոսքային դասարանների կազմակերպման դժվարությունները

Հոսքային/ենթահոսքային կրթության կազմակերպման հարցում դարձյալ առկա են մի շարք հակասություններ.

- առկա ենթահոսքերը չեն արտացոլում երեխաների կողմից պահանջարկված բոլոր մասնագիտությունները (հատկապես ռազմական, արվեստի և սպորտի ուղղությամբ), արդյունքում տուժում են այն երեխաները, որոնք ունեն հոսքերին չհամապատասխանող մասնագիտական կողմնորոշում,
- ենթահոսքերի բացումը կախված է ցանկացողների թվից, և եթե ցանկացողների թիվը բավարար չէ, ապա այս կամ այն ենթահոսքը կարող է չբացվել տվյալ դպրոցում,
- շատ հակասական է հոսքային դասարաններում հոսքային և ոչ հոսքային առարկաների հարաբերակցությունը, հատկապես այն պարագայում, երբ երեխաները ոչ հոսքային առարկաներից պետք է հանձնեն ավարտական քննություններ,
- հոսքային դասագրքերի միջև առկա տարբերությունները խառնաշփոթ են առաջացնում, նախ, հոսքային դասագրքերի քանակի և հոսքերում սովորող երեխաների թվի անհամապատասխանության պատճառով, ինչպես նաև բովանդակային առումով՝ երեխաներն ավարտական քննություններին պատրաստվելու համար ստիպված են օգտագործել նաև այլ հոսքերի դասագրքերը,
- ենթահոսքերում չկան լրացուցիչ պրոֆիլավորող առարկաներ,
- քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության լաբորատորիաներն ավագ դպրոցներում կամ բացակայում են, կամ էլ լիարժեք չեն գործում,
- ոչ հոսքային առարկաների մակերեսային ուսուցանումը սահմանափակում է հետագայում երեխայի վերակողմնորոշման հնարավորությունները, մյուս կողմից, հստակ մասնագիտական կողմնորոշում ունեցող երեխաները ոչ հոսքային առարկաների վրա ժամանակ ծախսել չեն ուզում,
- ընդհանուր հոսքի առկայությունն ավագ դպրոցում, մի կողմից, անհրաժեշտ է այն երեխաների համար, որոնք դեռևս չեն կողմնորոշվել, իսկ մյուս կողմից, հակասում է ավագ դպրոցի նպատակին,
- յուրաքանչյուր ուսումնական տարի բացվող հոսքերի և ենթահոսքերի քանակը անկանխատեսելի է, իսկ ավագ դպրոցը չունի բավական կադրային ճկունություն:

Դպրոցական ծրագրերի և բուհ ընդունելության պահանջների անհամապատասխանություն

Ավագ դպրոցի առարկայական ծրագրերը տարբերվում են բուհ ընդունվելության պահանջներից: Այս պատճառով երեխաները ստիպված են պարապել կրկնուսույցի մոտ շտեմարաններով: Կրկնուսույցի մոտ են պարապում 12-րդ դասարանցիների 60.3%: Հարկ է նշել, որ շատ դեպքերում կրկնուսույց են հանդիսանում հենց ավագ դպրոցի ուսուցիչները:

12-րդ դասարանի դասապրոցեսի կազմակերպման հիմնախնդիրները

Ավագ դպրոցների 12-րդ դասարանն արդարացված չէ: 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակը նախատեսված է կրկնության համար, այնինչ մեկ կիսամյակը բավարար չէ: Հետազոտության արդյունքների համաձայն, 12-րդ դասարանում աճում է կրկնուսույցների հետ պարապող աշակերտների թիվը, հետևաբար աճում է նաև բացակաների թիվը, նվազում է պայուսակով, դասագրքերով, տետրերով դպրոց հաճախող երեխաների թիվը:

Տղաների համար հատկապես անհանգստացնող է այն հարցը, որ 12-ամյա կրթության պարագայում նրանք դպրոցն ավարտում են 18 տարեկանում և անմիջապես մեկնում են բանակ:

Գնահատման համակարգ

Ավագ դպրոցում, ինչպես նաև հիմնական դպրոցում աշակերտների գիտելիքների գնահատման համար օգտագործվում է 10-բալային սանդղակ: Սակայն «10» երբեք չի նշանակվում, ինչը անհասկանալի է և երեխայի անձի ձևավորման տեսանկյունից բավական խնդրահարույց:

Հավելված

Ի՞նչ մասնագիտությամբ է/ը պլանավորո՞ւմ Ձեր երեխան շարունակել կրթությունը ավագ դպրոցն ավարտելուց հետո.

1. Տնտեսագետ – 13.5%
2. Լեզվաբան, բանասեր, թարգմանիչ – 11.8%
3. Բժիշկ – 9.8%
4. Ծրագրավորում – 5.4%
5. Իրավաբան, իրավագետ – 4.8%
6. Սպորտսմեն – 3.3%
7. Հաշվապահ – 3.0%
8. Միջազգային հարաբերություններ – 2.4%
9. Պատմաբան – 2.2%
10. Հոգեբան – 2.2%
11. Լրագրող – 2.2%
12. Կենսաքիմիա – 1.9%
13. Դիզայներ – 1.9%
14. Մանկավարժություն – 1.9%
15. Սոցիոլոգ – 1.3%
16. Հանրային կառավարում – 1.3%

17. Ճարտարապետ, ինժեներ - 1.1%
18. Տուրիզմ, սերվիս - 1.1%
19. Ոստիկան - 1.1%
20. Բուժ.քույր - 0.8%
21. Վարսավիր - 0.8%
22. Երգչուհի, վոկալիստ -0.8%
23. Պարուսույց-մանկավարժ, պարարվեստ - 0.8%
24. Արևելագետ, կովկասագետ - 0.6%
25. Սոց.աշխատող, սոց.մանկավարժ - 0.5%
26. Քաղաքագետ - 0.5%
27. Դերասան - 0.5%
28. Կիրառական մաթեմատիկա - 0.5%
29. Լուսանկարիչ - 0.5%
30. Արվեստի պատմություն, արվեստագետ - 0.5%
31. Էլեկտրամեխանիկ - 0.3%
32. Օդաչու - 0.3%
33. Ռադիոֆիզիկ - 0.3%
34. Բնապահպան - 0.3%
35. Շուկայագետ - 0.3%
36. Կիբերնետիկ - 0.3%
37. Էքսպերտիզա - 0.3%
38. Վարորդ - 0.3%
39. Ֆիզիկոս - 0.3%
40. Ավտոմեխանիկ - 0.3%
41. Վիճակագիր - 0.3%
42. Փրկարար - 0.3%
43. Էլեկտրաէներգետիկ - 0.3%
44. Նկարիչ - 0.3%
45. Զինվորական - 0.3%
46. Ապահովագրության մասնագետ - 0.3%